

ՀՀ ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈւՍՈՒՑՄԱՆ  
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՌՈՒԲԻԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ  
ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
2013

ՀՏԴ 330 (07)  
ԳՄԴ 65 ց 7  
Թ 794

Երաշխավորված է ՀՀ ԿԳ նախարարի՝  
03.10.2013թ. թիվ 1173 - Ա/Ք հրամանով

Թ 794

### Ռ. ԹՈՎԱՍԱՅԱԼ

Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ /Ռ. Թովմասյան, Գ. Թովմասյան; ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ; Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն. - Եր.: ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ, 2013. – 272 էջ:

*Սույն ձեռնարկը նախատեսված է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են հիմնարար գիտելիքներ ստանալ տնտեսագիտության վերաբերյալ:*

*Ձեռնարկը համապատասխանում է ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներին:*

ՀՏԴ 330 (07)  
ԳՄԴ 65 ց 7

ISBN 978 – 9939 – 806 – 80 – 8

© ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2013

---

## ԱՌԱՋԱԲԱՆ

Տնտեսագիտության տեսությունը ամենահին և ամենակարևոր հասարակական գիտություններից է: Այն ուսումնասիրում է տնտեսության կազմակերպման օրենքները, խնդիրներն ու առանձնահատկությունները: Տնտեսագիտության միջոցով մարդիկ հասկանում են հասարակական արտադրության գործընթացը, վերլուծում տնտեսության վիճակը, մշակում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ռազմավարություն և մարտավարություն:

Ուսումնական ձեռնարկում շարադրված են տնտեսագիտության տեսության հիմնական դրույթները, քննարկվել են մարդկանց միջև առաջացող տնտեսական հարաբերությունները՝ կապված նյութական բարիքների ու ծառայությունների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման հետ, տնտեսական երևույթներին և գործընթացներին բնորոշ օրինաչափությունները:

Տնտեսագիտության տեսության ուսումնասիրությունը թույլ կտա ձեռք բերել գիտելիքներ, ձևավորել տնտեսագիտական մտածելակերպ, ինչը հնարավորություն կընձեռի գնահատել տնտեսական իրավիճակը և ընտրել ճիշտ տնտեսական գործելակերպ:

Տնտեսագիտական գիտելիքները թույլ կտան պատասխանել այնպիսի հարցերի, թե ինչ է արտադրությունը, ապրանքը, փողը, շուկան, առաջարկն ու պահանջարկը, գինը, մրցակցությունը, տոկոսը, կապիտալը, ինֆլյացիան, բյուջեն, բանկը և վարկը, գործազրկությունը, ինչպես ստանալ առավելագույն արդյունք նվազագույն ծախսումներով, և այլն:

Ձեռնարկում լուսաբանվում են տնտեսագիտության տեսական և գործնական խնդիրները:

Յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ առկա համառոտ եզրակացությունները նպատակ ունեն ամրապնդելու, իսկ ինքնաստուգման հարցերը և թեստային առաջադրանքները՝ ստուգելու ուսանողի ստացած գիտելիքները:

Ձեռնարկը նախատեսված է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների համար և համապատասխանում է ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներին:

Կարող է օգտակար լինել նաև բոլոր նրանց, ովքեր ցանկանում են ձեռք բերել հիմնարար գիտելիքներ տնտեսագիտության վերաբերյալ:

**Պրոֆեսոր՝ Ի. Ե. Խլղաթյան**

---

## ԹԵՄԱ 1. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

*Թեմայի հիմնական նպատակն է՝ ներկայացնել տնտեսագիտության տեսության առարկայի էությունը և հիմնախնդիրները:*

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

ա. ճիշտ ներկայացնել տնտեսագիտության ուսումնասիրության առարկան, հիմնական գործառույթները, մեթոդները, ինչպես նաև տնտեսագիտության տեսության զարգացման պատմությունը,

բ. ճիշտ դասակարգել տնտեսական կատեգորիաները, իմանալ, թե ինչ է տնտեսական օրենքը,

գ. բացատրել տնտեսական պահանջմունքների համակարգը, տնտեսական շահերը և դրանց տեսակները,

դ. ճիշտ ներկայացնել տնտեսության 3 հիմնական հարցերը. ի՞նչ, ինչպե՞ս, ու՞մ համար արտադրել,

ե. ճիշտ ներկայացնել տնտեսական համակարգերի ձևերը,

զ. բացատրել մակրո և միկրո տնտեսագիտությունների միջև եղած տարբերությունը:

### Հարց 1. Տնտեսագիտության առարկան, գործառույթները և մեթոդները

Տնտեսագիտության տեսությունը հնագույն գիտություններից մեկն է: Տնտեսագիտության տեսության ուսումնասիրությունն անհրաժեշտ է տնտեսական գործունեության, տնտեսավարման օրենքների ճանաչման նպատակով, բոլոր ժամանակներում՝ սկսած Արիստոտելից, Քսենոֆոնից մինչև մեր օրերը: Տնտեսագիտական գիտելիքներն օգնում են մարդկանց ճիշտ ըմբռնելու տնտեսական կյանքի երևույթները, ճշգրտորեն բացատրելու տնտեսական երևույթների և պրոցեսների միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերը:

«Էկոնոմիկա» բառը հունական ծագում ունի (oikonomike-«տնային տնտեսություն վարելու արվեստ») և նշանակում է «տնտեսավարման օրենքներ»: «Տնտեսագիտություն» տերմինի տակ հասկանում են գիտություն տնտեսության և տնտեսավարման, ինչպես նաև տնտեսավարման ընթացքում մարդկանց միջև եղած հարաբերությունների մասին:

Գոյություն ունեն տնտեսագիտության տեսության մի շարք բնորոշումներ.

---

• Տնտեսագիտությունը տնտեսավարման համակարգ է, որն ապահովում է մարդկանց և ամբողջ հասարակության պահանջմունքները՝ ստեղծելով անհրաժեշտ բարիքներ:

• Տնտեսագիտությունը տնտեսական (արտադրական) հարաբերությունների ամբողջություն է, որը ստեղծվում է մարդկանց միջև նյութական բարիքների ու ծառայությունների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման ընթացքում:

• Տնտեսագիտությունը գիտություն է սահմանափակ տնտեսական ռեսուրսներով մարդկանց անսահմանափակ պահանջմունքների բավարարման առավել արդյունավետ (ռացիոնալ) եղանակների ընտրության մասին:

Առավել ամբողջական է հետևյալ սահմանումը.

**Տնտեսագիտության տեսությունը գիտություն է, որն ուսումնասիրում է բարիքների և ծառայությունների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման ընթացքում մարդկանց միջև ծագած հարաբերությունները՝ կապված սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման և մարդկանց անսահմանափակ պահանջմունքների բավարարման հետ:**

Տնտեսագիտության տեսությունն ընկած է մյուս տնտեսական գիտությունների հիմքում, ինչպիսիք են՝ ճյուղային տնտեսական գիտությունները, բանկային գործը, մեներջմենթը, մարքեթինգը, և այլն:

Տնտեսագիտության իմացությունը թույլ է տալիս խորությամբ հասկանալ տնտեսության գործունեության առանձնահատկությունները և դրանք կապել օբյեկտիվ տնտեսական օրենքների գործողության պահանջների հետ:

Տնտեսագիտությունը կատարում է հետևյալ գործառույթները.

**1. Մեթոդաբանական գործառույթ:** Տնտեսագիտությունը մեթոդաբանական տեսակետից սովորեցնում է, թե ինչը պետք է անել, և ինչը չի կարելի անել, օգնում է հասկանալ տնտեսական կյանքը, սովորեցնում է տնտեսական երևույթների ճանաչման նոր եղանակները, թույլ է տալիս կանխատեսել պրակտիկ գործողությունների որոշ հետևանքներ:

**2. Գիտաճանաչողական գործառույթ:** Ուսումնասիրվում են տնտեսական գործընթացները, նյութական բարիքների ու ծառայությունների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները, առանց որոնց անհնար է մարդկային հասարակության գոյությունը: Տնտեսական կյանքի իրական գործոնների տեսական ընդհանրացումների հիման վրա տնտեսագիտության գիտաճանաչողական գործառույթը թույլ է տալիս բացահայտել օրենքներ, որոնցով զարգանում է մարդկային հասարակությունը:

**3. Բննադատական գործառույթ:** Սրա էությունը կայանում է նրանում, որ այն հնարավոր է դարձնում տալ օբյեկտիվ քննադատական գնահա-

---

տական տնտեսական երևույթներին և տնտեսավարման տարբեր ձևերի գործընթացներին:

**4. Գործնական (երաշխավորական) գործառույթ:** Սրա էությունն այն է, որ տնտեսական երևույթների ու գործընթացների դրական գնահատականի հիման վրա տնտեսագիտությունը երաշխավորություններ (խորհուրդներ) է տալիս պետության, ձեռնարկությունների ղեկավարներին, ցանկացած այլ տնտեսավարող սուբյեկտներին՝ իրենց կոնկրետ գործերում առաջնորդվելու ռացիոնալ տնտեսավարման՝ իր սկզբունքներով և մեթոդներով: Այս գործառույթը սերտորեն կապված է պետության տնտեսական քաղաքականության հետ, այն մշակում է երկրի սոցիալ-տնտեսական ծրագրերը, անում է գիտական կանխատեսումներ երկրի տնտեսության մեջ այս կամ այն գործընթացների զարգացման վերաբերյալ:

**5. Կանխատեսման գործառույթ:** Տնտեսագիտության տեսությունը կատարում է հնարավոր կանխատեսումներ, որոնց հիման վրա էլ տնտեսավարող սուբյեկտները կազմում են ծրագրեր՝ կարճաժամկետ և երկարաժամկետ զարգացման համար:

#### **Տնտեսագիտության տեսության ուսումնասիրության մեթոդները**

Մեթոդը գործիք է, ճանաչողության ձեռք բերման համար անհրաժեշտ որոշակի քայլերի ամբողջություն:

Տնտեսագիտությունում օգտագործում են գիտական ճանաչողության մի շարք մեթոդներ: Դրանք են՝

**1. Գիտական վերացարկման (աբստրակցիայի) մեթոդը:** Այս մեթոդը հետազոտման օբյեկտում առանձնացնում է գլխավորը երկրորդականից (ոչ կարևորից): Գիտական վերացարկման արդյունքը նոր գիտական կատեգորիաների մշակումն է, որոնք արտահայտում են հետազոտվող օբյեկտների էական կողմերը, ինչպես նաև տնտեսական օրինաչափությունների բացահայտումը:

**2. Պատմական մեթոդը:** Տնտեսական երևույթները և գործընթացները ուսումնասիրվում են այն հաջորդականությամբ, ինչպես որ նրանք ծագել են իրական կյանքում, զարգացել, կատարելագործվել և ինչպիսին դարձել են ներկայումս:

**3. Տրամաբանական մեթոդը:** Այս մեթոդը թույլ է տալիս ճիշտ կիրառել մտավոր գործունեության օրենքները, որոնք հիմնավորում են մի տեսակի դատողություններից մյուսներին անցնելու կանոնները և անել հիմնավորված եզրակացություններ, ավելի խորը հասկանալ իրական տնտեսական կյանքի գործընթացների և երևույթների միջև ձևավորված պատճառահետևանքային կապերը:

**4. Վերլուծության և համադրության (անալիզի և սինթեզի) մեթոդը:** Վերլուծության մեթոդը ենթադրում է ամբողջի բաժանումը առանձին բաղ-

---

կացուցիչների և այդ մասերից յուրաքանչյուրի ուսումնասիրություն: Օրինակ՝ ինքնարժեքի ցուցանիշի վերլուծությունը ըստ ծախսերի տարրերի (հումք, նյութեր, աշխատավարձ, և այլն):

Համադրության մեթոդը հիմնված է վերլուծության ընթացքում ուսումնասիրվող երևույթների առանձին մասերի՝ մեկ ամբողջության մեջ միավորման վրա: Օրինակ՝ արտադրանքի ինքնարժեքի ցուցանիշի որոշումը որպես բոլոր ծախսերի հանրագումար:

**5. Արտածման և մակածման (ինդուկցիայի և դեդուկցիայի) մեթոդ:** Ինդուկցիան ուսումնասիրության շարժն է առանձին, մասնավոր գործոններից ընդհանուր եզրակացությունների, ընդհանրացումների (ամփոփման): Հետազոտությունը սկսվում է փաստերի ուսումնասիրությունից: Վերլուծելով, համակարգելով, ամփոփելով փաստերը՝ հետազոտողը հանգում է եզրակացության, որը փաստում է որոշակի կախվածության առկայությունը տնտեսական երևույթների միջև:

Դեդուկցիան ընդհանուր եզրակացությունից անցումն է առանձին դատողությունների:

**6. Այլ հավասար պայմանների մեթոդ:** Հետազոտվող տնտեսական երևույթների մեծության վրա ազդում են մի շարք գործոններ, և եթե անհրաժեշտ է որոշել նրանցից որևէ մեկի ազդեցության չափը, ապա ուսումնասիրությունը կատարում են մեկ գործոնի փոփոխության դեպքում՝ անփոփոխ թողնելով մնացած գործոնները:

**7. Ուղիղ և հակադարձ կապի մեթոդ:** Հասարակական տնտեսական կյանքում երևույթների միջև գոյություն ունի կապ, ազդեցություն, որոնք արտահայտվում են ֆունկցիոնալ կախվածությամբ՝ միմյանց վրա ազդելով ուղիղ կամ հակադարձ մեծությամբ:

**8. Տնտեսամաթեմատիկական մոդելավորում՝ համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ:** Այս մեթոդը նպաստում է տնտեսական մոդելների կառուցմանը, արտացոլում է հետազոտվող օբյեկտների գլխավոր տնտեսական ցուցանիշները և նրանց փոխադարձ կապը: Այսպիսի մոդելները թույլ են տալիս բացահայտել տնտեսական երևույթների և գործընթացների առանձնահատկությունները և օրինաչափությունները:

**9. Գրաֆիկական մեթոդ:** Սրա էությունն այն է, որ տնտեսական երևույթները և գործընթացները արտացոլվում են տարբեր սխեմաների, գրաֆիկների, դիագրամների օգնությամբ՝ ապահովելով բարդ տեսական նյութի համառոտ, սեղմ ներկայացումը:

**10. Տնտեսական փորձարկում (էքսպերիմենտ):** Այս մեթոդը ենթադրում է տնտեսական գործընթացների և երևույթների արհեստականորեն ստեղծում որոշակի պայմաններում (որոնք մասնավորապես նման են տնտե-

---

սական գործունեությանը՝ նրանց ուսումնասիրության և հետագա կիրառության նպատակով:

Տնտեսական գործընթացների ճիշտ գնահատման համար, կապված համապատասխան տնտեսական քաղաքականության կիրառման հետ, կարևորվում է պոզիտիվային և նորմատիվային տնտեսագիտության սկզբունքների կիրառումը:

Պոզիտիվ վերլուծությունը ենթադրում է տնտեսական երևույթների վերլուծություն այնպիսին, ինչպիսին նրանք իրականում գոյություն ունեն: Վիճակագրական տվյալների և տնտեսական փաստերի հավաքումը, նկարագրությունը և վերլուծությունը կատարվում է առանց դրանց գնահատականի (լավն են դրանք, թե վատը, բավարար են, թե ոչ):

Նորմատիվային վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչ պետք է լինի, ինչպես պետք է գործել, որ հասնեն ցանկալի արդյունքների:

## **Չարք 2. Տնտեսագիտության տեսության զարգացման հիմնական փուլերը**

Տնտեսագիտական միտքը ծագել է շատ հին ժամանակներում, անցել է զարգացման և կայացման երկար ու բարդ ճանապարհ: Սկզբում տնտեսագիտական գիտելիքները ձևավորվել են որպես փիլիսոփայության առանձին տարրեր: Տնտեսագիտության ինքնուրույն զարգացումը սկսվել է կապիտալիզմի սկզբնավորման դարաշրջանում: Տնտեսագետները տարբերում են բազում փուլեր և ուղղություններ այս զարգացման ընթացքում:

Տնտեսագիտության տեսության զարգացման փուլերը ներկայացնենք աղյուսակով.

**Աղյուսակ 1.** Տնտեսագիտության տեսության զարգացման հիմնական դպրոցների և ուղղությունների բնութագիրը

Դպրոցները, ուղղությունները և դրանց ներկայացուցիչները	Ձևավորման ժամանակաշրջանը	Հիմնական գաղափարները
1	2	3
Մերկանտիլիզմ - Թոմաս Մեն (1571-1641), Վիլյամ Ստաֆֆորդ (1554-1612), Ջոն Լո (1671-1729), Անտուան Մոնկրետիեն (1575-1621), Ժան Բատիստ Կոլբեր (1619-1683)	XVI-XVIIIդդ.	<ol style="list-style-type: none"> <li>1. Հասարակության գլխավոր հարստությունը փողն է (ոսկի և արծաթ):</li> <li>2. Հարստության աղբյուրը շրջանառության ոլորտն է (առևտուր և դրամաշրջանառություն):</li> <li>3. Հարստությունը կուտակվում է արտաքին առևտրի արդյունքում, ինչի պատճառով էլ պետք է ուսումնասիրել միայն շրջանառության ոլորտը:</li> <li>4. Պետությունը պետք է ակտիվ միջամտի տնտեսության գործերին:</li> </ol>
Ֆիզիոկրատների դպրոց (բնություն և իշխանություն) - Ֆրանսուա Քենե (1694-1774), Անն Ռոբեր Ժակ Թյուրգո (1727-1781)	XVIIIդ.	<ol style="list-style-type: none"> <li>1. Որպես ազգի ճշմարիտ հարստություն հանդես է գալիս գյուղատնտեսության մեջ արտադրված արդյունքը:</li> <li>2. Առաջինը փորձեցին հարստության հավելաճը դուրս բերել արտադրության պրոցեսից և ոչ թե շրջանառությունից:</li> </ol>
Անգլիական դասական քաղաքատնտեսություն- Վիլյամ Պետտի (1623-1687), Ադամ Սմիթ (1723 - 1790), Դավիդ Ռիկարդո	XVII-XIXդդ.	<ol style="list-style-type: none"> <li>1. Ազգի (ազգային) հարստությունը ստեղծվում է նյութական արտադրության մեջ, այլ ոչ թե շրջանառության ոլորտում:</li> <li>2. Հարստության գլխավոր աղբ-</li> </ol>

(1772-1823), Ջոն Սոյու-արտ Միլ (1806-1873)		<p>յուրը աշխատանքն է:</p> <p>3.Քաղաքատնտեսությունը բացահայտեց աշխատանքի նշանակությունը՝ որպես բոլոր ապրանքների արժեքի հիմքի և չափանիշի: Քաղաքատնտեսությունը դրել է արժեքի աշխատանքային տեսության հիմքերը:</p> <p>4. Պետությունը չպետք է խառնվի տնտեսության գործերին:</p>
Մարքսիզմ - Կարլ Մարքս (1818-1883), Ֆրիդրիխ Էնգելս (1820-1895)	XIXդ.կեսից	<p>1. Մշակվել են արժեքի տեսությունը և հավելյալ արժեքի տեսությունը:</p> <p>2. Հայտնագործվել է արժեքի օրենքը՝ որպես ապրանքային արտադրության զարգացման օրենք:</p> <p>3. Մշակվել է վերարտադրության և տնտեսական ճգնաժամի տեսությունը:</p> <p>4. Հայտանգործվել են կապիտալիստական արտադրաեղանակի տնտեսական օրենքները:</p>
Մարժինալիզմ - Յոհան Յենրիխ Ֆոն Տյունեն (1783 - 1850), Գերման Յենրիխ Հոսեն (1810-1858)	XIXդ. 60 - 70-ական թթ.	<p>1.Հասարակությունը ներկայացնում էին որպես անհատների մեխանիկական գումար:</p> <p>2.Նրանց հետաքրքրում էին տնտեսական համակարգերի ոչ թե դինամիկ, այլ ստատիկ իրավիճակները:</p> <p>3.Նրանց տեսության մեջ կենտրոնական տեղ են գրավում սահմանային մեծությունները:</p>
Ավստրիական դպրոց -	XIXդ. 80 -	1. Մշակեցին ապրանքի արժեքի և

<p>Կարլ Մենգեր (1840-1921), Ֆրիդրիխ Ֆոն Վիգեր (1851-1926), Օյգեն Ֆոն Բեմ-Բավերկ (1851-1914)</p>	<p>ական թթ.</p>	<p>գնի սուբյեկտիվ-հոգեբանական տեսությունը:</p> <p>2. Սահմանեցին սուբյեկտիվ օգտակարության հասկացությունը՝ դա բնութագրելով որպես գնագոյացման հիմք:</p> <p>3. Հրաժարվեցին տնտեսագիտական վերլուծությունների ժամանակ մաթեմատիկական մեթոդների օգտագործումից՝ գերադասելով տրամաբանական դատողությունները:</p> <p>4. Ընդունեցին տնտեսական լիբերալիզմը՝ ժխտելով տնտեսության մեջ ցանկացած պետական միջամտություն:</p>
<p>Ներդասական ուղղություն - Ալֆրեդ Մարշալ (1842-1924)</p>	<p>XIXդ.վերջից</p>	<p>1. Մասնավոր ձեռնարկատիրական շուկայական համակարգ, որն ընդունակ է ինքնակարգավորման և տնտեսական հավասարակշռության պահպանման:</p> <p>2. Պետությունը ստեղծում է նրպաստավոր պայմաններ շուկայական տնտեսության գործունեության համար:</p>
<p>Քեյնսականություն - Ջոն Մեյնարդ Թեյնս (1883 -1946)</p>	<p>1930-ական թթ. սկսած</p>	<p>1. Պետությունը պետք է ակտիվորեն կարգավորի տնտեսությունը, քանի որ շուկան ընդունակ չէ ապահովել հասարակության սոցիալ-տնտեսական կայունությունը:</p> <p>2. Պետությունը պետք է բյուջեի և վարկերի միջոցով կարգավորի</p>

		<p>տնտեսությունը՝ վերացնելով ճգնաժամերը, ապահովելով լրիվ զբաղվածությունը և արտադրության բարձր աճը:</p> <p>3. Մշակված են արդյունավետ պահանջարկի և արդյունավետ ներդրումների տեսությունները:</p>
<p>Նեոդասական սինթեզ - Ջոն Հիքս (1904-1989), Փոլ Սամուելսոն (1915),</p>	<p>1950-ական թթ. սկսած</p>	<p>1. Կախված տնտեսության զարգացման մակարդակից՝ առաջարկվում է կամ քննսակյան երաշխավորությունները՝ պետական կարգավորման գործում, կամ էլ այն տնտեսագետների առաջարկած միջոցառումները, որոնք պետության կողմից տնտեսությունը միջամտելու սահմանափակման դիրքերից են ելնում:</p> <p>2. Լավագույն կարգավորիչը դրամավարկային մեթոդներն են:</p> <p>3. Շուկայական մեխանիզմն ունակ է ինքը սահմանել հավասարակշռություն պահանջարկի և առաջարկի, արտադրության և սպառման միջև:</p>
<p>Մոնետարիզմ - Միլտոն Ֆրիդման (1912), Ա. Շվարց, Կ. Բրուներ, Ֆ. Կեյզան, Ա. Մելցեր</p>	<p>1970-ական թթ. սկսած</p>	<p>1. Առաջ է քաշել ազգային եկամտի մոնետար տեսությունը և փողի տեսության նոր, քանակական տարբերակը:</p> <p>2. Տնտեսության վրա ներգործելու գլխավոր եղանակը տնտեսության պետական կարգավորումն է՝ վարկային տոկոսի, հարկային դրույքի և մաքսատուրքերի միջոցով:</p>

---

### Հայր 3. Տնտեսական օրենքներ և տնտեսական կատեգորիաներ

Տնտեսական գործընթացները և երևույթները ցանկացած հասարակությունում կառավարվում են տնտեսական օրենքներով, որոնք համարվում են տնտեսագիտության ուսումնասիրության օբյեկտ:

**Տնտեսական օրենքները** առավել էական, կայուն և մշտապես կրկնվող օբյեկտիվ փոխկախվածությունն ու պատճառահետևանքային կապերն են տնտեսական գործընթացների և երևույթների միջև: Դրանք կրում են օբյեկտիվ բնույթ, գործում են պատմականորեն, մարդկանց կամքից և գիտակցությունից անկախ:

Այսպես օրինակ՝ շուկայի օրենքները, արժեքի օրենքը, պահանջարկի օրենքը, առաջարկի օրենքը, մրցակցության օրենքը, գործում են անկախ այն բանից, թե շուկայի մասնակիցները գիտեն դրա մասին, թե ոչ: Որքան խորությամբ են մարդիկ ճանաչում տնտեսական օրենքների գործողության բնույթը, այնքան ավելի արդյունավետորեն կարող են օգտագործել դրանք տնտեսական գործունեություն իրականացնելիս:

Տնտեսական օրենքները պայմանականորեն կարելի է բաժանել ընդհանուրի և հատուկի.

1. Ընդհանուր տնտեսական օրենքները գործում են բոլոր սոցիալ-տնտեսական համակարգերում, վերաբերում են տնտեսական կյանքի բոլոր ոլորտներին: Օրինակ՝ արժեքի օրենքը, կուտակման օրենքը, աշխատանքի արտադրողականության աճի օրենքը, ժամանակի խնայողության օրենքը, և այլն:

2. Հատուկ տնտեսական օրենքները գործում են մեկ հասարակական-տնտեսական համակարգում: Այդպիսի օրենք է համարվում, օրինակ՝ նյութական բարիքների բաշխման օրենքը ֆեոդալիզմի ժամանակ:

**Տնտեսական կատեգորիաները** առավել ընդհանուր հասկացություններ են, որոնք արտացոլում են տնտեսական երևույթների և գործընթացների էական հատկանիշները: Օրինակ՝ արժեքը, գինը, աշխատանքը, փողը, ինքնարժեքը, ապրանքը և այլն: Տնտեսական կատեգորիաները օբյեկտիվ են և ճշմարիտ, քանզի հանդիսանում են գիտական վերացարկումներ (աբստրակցիա), որոնք արտացոլում են իրականում գոյություն ունեցող տնտեսական կապերը:

Տնտեսական կատեգորիաները դասակարգվում են՝

1. Հանընդհանուր տնտեսական կատեգորիաներ, որոնք գոյություն ունեն հասարակության զարգացման բոլոր փուլերում, օրինակ՝ պահանջ-մուտք, բարիք տնտեսական կատեգորիաները:

2. Մասնակի տնտեսական կատեգորիաներ, որոնք գոյություն են ունեցել կամ գոյություն ունեն տնտեսական զարգացման մի շարք փուլերում, օրինակ՝ ապրանք, փող, գին, և այլն:

3. Առանձնահատուկ տնտեսական կատեգորիաներ, որոնք կարող են գոյություն ունենալ կոնկրետ տնտեսական զարգացման այս կամ այն փուլում, օրինակ՝ ռենտա, կապիտալ, ավելացված արժեք, մոնոպոլիա, և այլն:

#### **Հարց 4. Տնտեսական պահանջմունքներ և շահեր**

Տնտեսական պահանջմունքը որևէ բանի նկատմամբ եղած կարիքն է, որն օբյեկտիվորեն անհրաժեշտ է անձի, սոցիալական խմբի, ձեռնարկության, հասարակության կենսագործունեության պահպանման և զարգացման համար: Տնտեսությունում պահանջմունքները հանդես են գալիս որպես տնտեսական գործունեության ակտիվացման ներքին խթաններ:

Արտադրության անմիջական նպատակը մարդկային պահանջմունքների բավարարումն է: Պահանջմունքը անբավարարվածության վիճակ է, որից մարդը ձգտում է դուրս գալ, կամ բավարարվածության վիճակ, ինչը ձգտում է երկարեցնել:

Պահանջմունքը մարդու օբյեկտիվ վիճակն է, հակասությունը մարդու ունեցած և չունեցած բարիքների միջև, ինչը դրդում է մարդուն գործողության:

Արտադրությունը և պահանջմունքները գտնվում են սերտ կապի մեջ: Նախ՝ պահանջմունքները խթանում են արտադրությունը, իսկ արտադրությունը, ստեղծելով նոր արժեքներ, ազդում է պահանջմունքների վրա: Երկրորդ. արտադրության ծավալը սահմանափակվում է արտադրական ռեսուրսներով, իսկ մարդկային պահանջմունքներն աճում են անընդհատ:

Մարդկային քաղաքակրթության, գիտության և տեխնիկայի զարգացմանը զուգընթաց ի հայտ են գալիս նոր պահանջմունքներ, որոնց բավարարման համար անհրաժեշտ ռեսուրսները սահմանափակ են: Հետևաբար ցանկացած հասարակության խնդիրը ռեսուրսների արդյունավետ օգտագործումն է՝ անսահմանափակ պահանջմունքների բավարարման նպատակով:

Մարդկային պահանջմունքները բազմաբնույթ են: Դրանք կարելի է դասակարգել ըստ հետևյալ հատկանիշների.

##### **1. Ըստ սուբյեկտների (պահանջմունքների կրողների).**

ա) անձնական ձևով (անհատապես) բավարարվող պահանջմունքներ (սննդի, հագուստի, կացարանի նկատմամբ),

բ) կոլեկտիվ ձևով բավարարվող (խմբի, կոլեկտիվի, հասարակության) պահանջմունքներ (ջրամատակարարման, գազամատակարարման նկատմամբ),

2. Ըստ օբյեկտի (ըստ առարկաների, որոնց ուղղված են պահանջ-  
մունքները).

ա) նյութական պահանջմունքներ,

բ) հոգևոր պահանջմունքներ,

գ) էթիկական պահանջմունքներ (որոնք վերաբերում են բարոյականու-  
թյունը),

դ) էսթետիկական պահանջմունքներ (որոնք վերաբերում են արվեստին),

3. Ըստ պահանջմունքների բավարարման աստիճանի.

ա) վերջնական պահանջմունքներ,

բ) միջանկյալ պահանջմունքներ,

Վերջնական պահանջմունքները մարդու անձնական պահանջմունքներն  
են, որոնք ստացել են «սպառման առարկաներ» անվանումը (սնունդ, հա-  
գուստ, կոշիկ և այլն):

Միջանկյալ պահանջմունքները տնտեսավարող սուբյեկտների պա-  
հանջմունքներն են: Դրանց բավարարումը ծառայում է նոր բարիքների  
ստեղծմանը: Այդ պատճառով էլ դրանք համարվում են արտադրական,  
իսկ դրանց բավարարող բարիքները՝ արտադրության միջոցներ (հաս-  
տոցներ, սարքավորումներ, մեքենաներ, շենքեր և այլն):

4. Ըստ ծագման.

ա) առաջնային պահանջմունքներ,

բ) երկրորդային պահանջմունքներ,

Առաջնային պահանջմունքները իրենց բնույթով ֆիզիոլոգիական են և  
դրանց բավարարումն անհրաժեշտ է կենսապահովման համար (սննդի,  
հագուստի, օդի, ջրի, կացարանի և այլնի նկատմամբ պահանջները):

Երկրորդային պահանջմունքները կապված են մարդու հոգևոր և մտա-  
վոր գործունեության հետ (մշակույթի, կրթության, կինոյի, թատրոնի պա-  
հանջմունքները):

Պահանջմունքները լինում են նաև տնտեսական և ոչ տնտեսական: Տնտե-  
սական պահանջմունքները մարդկային կարիքների այն մասն են, որոնց բա-  
վարարման համար անհրաժեշտ է նյութական բարիքների և ծառայություննե-  
րի արտադրություն, բաշխում, փոխանակում և սպառում: Ոչ տնտեսական  
պահանջմունքները կարող են բավարարվել առանց հասարակական արտա-  
դրության առկայության (օրինակ՝ օդ շնչելու պահանջմունքը):

Բարիքը այն ամենն է, ինչն ընդունակ է բավարարելու մարդկանց  
ամենօրյա կենսական պահանջմունքները, նրանց օգտակար լինել, հա-  
ճույք պատճառել (ապրանքներ և ծառայություններ, ինչպես նաև բնու-  
թյան պարզակները):

---

Տնտեսական բարիքը մարդկանց տնտեսական գործունեության արդյունք է, որն օժտված է արժեքով (ապրանք): Տնտեսական բարիքներ ստանալու համար անհրաժեշտ են համապատասխան տնտեսական ռեսուրսներ:

Ոչ տնտեսական բարիքը բնության կողմից տրված պարզևն է: Ոչ տնտեսական բարիքը մարդը ստանում է պատրաստի՝ առանց ջանք թափելու: Դրանք գոյություն ունեն բնության մեջ, ազատ վիճակում, բավական քանակությամբ՝ մարդու որոշակի պահանջները մշտապես բավարարելու համար:

Նյութական բարիքներն ունեն նյութական-իրեղեն ձև (ապրանքներ՝ կոշիկ, հագուստ, սնունդ և այլն), իրենց մեջ ներառում են նաև արտադրության արդյունքները (շենքերը, կառույցները, մեքենաները և այլն):

Ոչ նյութական բարիքները չունեն նյութական-իրեղեն ձևեր (ծառայություններ, գիտական հայտնագործություններ, կրթություն և այլն), ներգործում են մարդու ընդունակությունների զարգացման վրա, ստեղծվում են ոչ արտադրական ոլորտում (առողջապահություն, կրթություն, արվեստ և այլն):

Ըստ օգտագործման տևողության՝ բարիքները բաժանվում են երկարաժամկետի, որոնք օգտագործվում են բազմակի անգամներ (շենքեր, սարքավորումներ, համակարգիչներ) և կարճաժամկետի, որոնք օգտագործվում են միանվագ սպառման ընթացքում (կաթնամթերք, հաց և այլն):


Եվ այսպես՝ միջոցները, որոնց օգնությամբ բավարարվում են մարդկանց պահանջմունքները, կոչվում են բարիքներ:

Ամերիկացի գիտնական-տնտեսագետ Ա.Մասլոուն մշակել է պահանջմունքների հիերարխիա, որտեղ նա դրանք բաժանել է հինգ խմբի (գծանկար 1).

1. Ֆիզիոլոգիական պահանջմունքներ, որոնց բավարարումն անհրաժեշտ է մարդուն՝ նրա գոյատևման համար: Դրանք ներառում են սննդի, հագուստի, բնակարանի նկատմամբ ունեցած պահանջմունքները և այլն:

2. Ապահովության և անվտանգության պահանջմունքներ, որոնք ներառում են արտաքին աշխարհի կողմից ֆիզիկական և հոգեբանական վտանգներից պաշտպանված լինելու պահանջմունքները:

3. Սոցիալական պահանջմունքներ, որոնք կապված են որևէ բանին կամ որևէ մեկին պատկանելու, նրա հետ կապվածության և նրա կողմից աջակցություն ստանալու զգացողության հետ:



**Գծանկար 1. Պահանջմունքների հիերարխիան ըստ Ա.Մասլոուի**

4. Հարգանքի արժանանալու պահանջմունք, այսինքն մարդը ցանկանում է ճանաչում ունենալ, հարգված լինել այլ մարդկանց կողմից:

5. Ինքնաարտահայտման պահանջմունք, որը մարդու՝ որպես անհատի, սեփական պոտենցիալ կարողությունները իրացնելու և աճելու ձգտումն է:

Ըստ Մասլոուի՝ հիերարխիայով անցումը յուրաքանչյուր հաջորդ մակարդակի հնարավոր է, երբ որոշ չափով բավարարվել են նախորդ մակարդակները (այսինքն՝ առանց ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարվածության որոշակի աստիճանի մարդը չի մտածի իր հարգանքի կամ ինքնաարտահայտման պահանջմունքների մասին):

Տնտեսական պահանջմունքներն իրենց ամբողջության մեջ կյանքի ընթացքում անսահման են: Իսկ դա նշանակում է, որ նյութական (ֆիզիոլոգիական), հոգևոր և սոցիալական պահանջմունքները ապրանքերով և ծառայություններով լիովին բավարարել հնարավոր չէ:

XIX դարում գերմանացի տնտեսագետ և վիճակագիր Էռնեստ Էնգելը սահմանեց, որ սննդամթերքի սպառման չափը կախված է ընտանիքի եկամտի մակարդակից, համաձայն որի, եկամտի բացարձակ չափի ավելացման հետ մեկտեղ, առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսերի բաժինը փոքրանում է, իսկ ավելի պակաս անհրաժեշտություն ունեցող, ինչպես նաև և երկարաժամկետ օգտագործման ապրանքների վրա կատարվող ծախսերն ավելանում են:

---

## *Տնտեսական շահեր*

Յուրաքանչյուր անհատ կամ սոցիալական խումբ, ձեռնամուխ լինելով որևէ գործունեության իրականացմանը, հետապնդում է որոշակի նպատակ՝ ակնկալելով ստանալ օգուտ կամ շահույթ: Այդ գործունեությունը իրականացնելիս անհատը կամ սոցիալական խումբը մտնում է որոշակի արտադրական կամ տնտեսական հարաբերությունների մեջ: Այդ բարդ փոխհարաբերությունների կրողները հանդես են գալիս իրենց կոնկրետ նպատակներով ու շահերով, այլ կերպ ասած, տնտեսավարող սուբյեկտներն ու սոցիալական խմբերը իրենց փոխհարաբերությունների իրականացման պրոցեսում գործում են որպես կոնկրետ շահերի կրողներ, որոնց հիմքում ընկած են նրանց պահանջմունքները: Հետևաբար, շահը որպես արտադրական հարաբերությունների դրսևորման միջոց և ձև, արտահայտում է պահանջմունքների բավարարման անհրաժեշտ պայմանները: Փաստորեն, պահանջմունքը հանդես է գալիս որպես գործունեության ամբողջական էություն և շարժիչ ուժ, իսկ շահը՝ այդ պահանջմունքի կոնկրետ դրսևորում և իրացում:

Այսպիսով, ցանկացած տնտեսական գործունեություն հանդես է գալիս որպես շահերի իրականացման կամ բավարարման միջոց:

Պահանջմունքները որպես անբավարարվածության զգացմունք, բայց բավարարման համար պարտադիր անհրաժեշտություն, ստիպում են մարդկանց գործել, արարել, ստեղծել: Դրա համար էլ տնտեսական պահանջմունքների արտահայտման ձևը համարվում են տնտեսական շահերը, այսինքն գործունեության խթանները ու մոտիվները, որոնք ուղղված են տնտեսավարող սուբյեկտների պահանջմունքների բավարարմանը:

Շահերն ու խթանները նպաստում են տնտեսավարող սուբյեկտների մոտ գործունեություն իրականացնելիս նյութական շահագրգռվածության առաջ գալուն:

Ըստ շահերը կրող սուբյեկտի՝ շահերը լինում են անձնական, կոլեկտիվ և հասարակական:

Անձնական շահը ձևավորվում է անհատների կոնկրետ պահանջմունքների ներգործությամբ: Այսպես, յուրաքանչյուր անհատ, ելնելով իր կոնկրետ պահանջմունքներից, ձեռնարկում է որևէ գործունեություն, մտնում է որոշակի արտադրական հարաբերությունների մեջ, որտեղ դրանք ի հայտ են գալիս շահերի ձևով: Յուրաքանչյուր անհատ, ելնելով իր նախասիրություններից, ընտրում է գործունեության այս կամ այն ձևը և ոլորտը, գործում է մարդկանց որոշակի խմբի միջոցով, որոնք կարող են ի հայտ գալ որոշակի կոլեկտիվների ձևով, որտեղ էլ հենց ձևավորվում է կոլեկտիվ շահը, որը բխում է տվյալ խմբի անդամների կոնկրետ շահերից: Բա-


---

ցի դրանից, ցանկացած անհատ կամ կոլեկտիվ կամ էլ սոցիալական խումբ գործում է որոշակի հասարակական ընդհանրական հարաբերությունների շրջանակում, որտեղ էլ ձևավորվում է հասարակական շահը, որն արտահայտում է տարբեր անհատների, սոցիալական խմբերի, կոլեկտիվների ընդհանրական պահանջունքները և այդ ընդհանրական պայմանների գոյության անհրաժեշտությունը, առանց որոնց չեն կարող իրականացվել և իրացվել անհատների և կոլեկտիվների շահերը: Փաստորեն հասարակական շահը այն անհրաժեշտ փոխհարաբերություններն են, որոնք ունեն և՛ տնտեսական և՛ բարոյական, և՛ իրավական կողմեր: Առանց այդ անհրաժեշտ պայմանների առկայության՝ ցանկացած սուբյեկտ, լինի դա անհատ կամ սոցիալական խումբ, չի կարող իրացնել իր շահերը: Այսպիսով, հասարակական շահը արտահայտում է անձնական շահի իրացման պայմանները:

Բնականաբար հարց է առաջանում, թե նշված շահերից ո՞րն է առաջնայինը կամ, ի վերջո, որպես գործունեության առաջին ազդակ և շարժիչ ուժ որն է հիմնական դերակատարը: Այդ կապակցությամբ ժամանակին Ադամ Սմիթը արտահայտել է հետևյալ խորհմաստ տեսակետը. «Յուրաքանչյուր անհատ, հետապնդելով իր անձնական շահը, ավելի գործում ձևով է ծառայում հասարակության շահերին, քան այն դեպքում, երբ նա դա փորձում է կատարել գիտակցաբար»: Իրոք ընդունելի է սմիթյան մոտեցումը կապված անձնական, կոլեկտիվ և հասարակական շահերի փոխհարաբերության գործում անձնական շահին կարևոր դեր հատկացնելու հանգամանքի հետ: Անշուշտ, դա չի նշանակում, թե մյուս շահերը պասիվ դեր ունեն, ընդհակառակը, հատկապես հասարակական շահը որպես համընդհանուր շահերի ամբողջություն, արտահայտում է այն անհրաժեշտ պայմաններն ու սկզբունքները, որոնք կարգավորվում են համապատասխան տնտեսական ու իրավական օրենքների միջոցով, առանց որոնց անձնական շահերը չեն կարող իրացվել: Հետևաբար, անձնական և հասարակական շահերի փոխհարաբերության ժամանակ անձնական շահը հանդես է գալիս որպես գործունեության առաջին ազդակ, իսկ հասարակական շահը արտահայտում է այն անհրաժեշտ փոխհարաբերություններն ու սկզբունքները, որոնց առկայության պայմաններում անհատական շահերը կարող են իրացվել: Ցանկացած գործունեության արդյունքում անհատական պահանջունքների բավարարումը առաջին հերթին արտաքին ձևով հանդես է գալիս որպես անձնական շահ, իսկ հասարակությանը տված իր օգուտով՝ որպես հասարակության շահ:

## Հարց 5. Տնտեսության երեք հիմնահարցերը. ի՞նչ արտադրել, ինչպե՞ս արտադրել, ո՞ւմ համար արտադրել

Ցանկացած հասարակություն լուծում է տնտեսության երեք հարց. ի՞նչ ապրանքներ և ծառայություններ արտադրել, ինչպե՞ս և ու՞մ համար: Տնտեսության այս երեք հիմնախնդրային հարցերը համարվում են որոշիչ (գծանկար 2):



Գծանկար 2. Տնտեսության հիմնահարցերը

**Ի՞նչ արտադրել:** Յուրաքանչյուր մարդ կարող է ապահովել իրեն ապրանքներով և ծառայություններով տարբեր ճանապարհներով՝ արտադրել դրանք ինքնուրույն, փոխանակել ուրիշ ապրանքների հետ, նվեր ստանալ ուրիշից: Հասարակությունը չի կարող ամբողջությամբ վերցրած ստանալ ամեն ինչ և անմիջապես: Այդ պատճառով հասարակությունը պետք է որոշի, թե ինչ է ուզում ունենալ անմիջապես, ինչին մի քիչ սպասել և ինչից հրաժարվել ընդհանրապես:

Պատասխանը միանշանակ է. կարտադրվեն միայն այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք որոշակի շահույթ կապահովեն, իսկ այն ապրանքներն ու ծառայությունները, որոնց արտադրությունը վնասաբեր է, չեն արտադրվի:

**Ինչպե՞ս արտադրել:** Գոյություն ունեն բարիքների ամբողջ հավաքածուի, ինչպես նաև յուրաքանչյուր առանձին տեսակի բարիքի արտադրու-

---

թյան զանազան տարբերակներ: Սակայն հիմնահարցը հետևյալն է. ու՞մ կողմից, ինչպիսի՞ ռեսուրսներով, ի՞նչ տեխնոլոգիաներով պետք է արտադրվեն, արտադրության կազմակերպման ի՞նչ եղանակով պետք է դա իրականացվի:

***Ո՞ւմ համար արտադրել:*** Հայտնի է, որ արտադրված ապրանքների քանակը և ծառայությունները սահմանափակ են, առաջանում է նրանց բաշխման խնդիրը: Որպեսզի բավարարվեն բոլոր պահանջմունքները, անհրաժեշտ է հասկանալ արդյունքի բաշխման մեխանիզմը: Ո՞վ պետք է օգտվի այդ ապրանքից և ծառայություններից: Հասարակության բոլո՞ր անդամները պետք է ստանան հավասար բաժին, թե ոչ:

Հիմնական տնտեսական խնդիրները զարգացած սոցիալ-տնտեսական համակարգերում լուծվում են տարբեր կերպ: Օրինակ՝ շուկայական տնտեսության մեջ բոլոր պատասխանները հիմնական տնտեսական խնդիրներին (ի՞նչ, ինչպե՞ս, ու՞մ համար արտադրել), որոշում է շուկան՝ պահանջարկը, առաջարկը, գինը, շահույթը, մրցակցությունը: «Ի՞նչ արտադրել» հարցը որոշվում է վճարունակ պահանջարկով, փողի քանակությամբ: Այս ամենը որոշում է ինքը՝ սպառողը, ինչի համար նա պատրաստ է փող վճարել: Արտադրողն էլ պետք է ձգտի բավարարել սպառողի պահանջները:

«Ինչպե՞ս արտադրել» հարցը լուծվում է արտադրողի կողմից, որը ձգտում է ստանալ մեծ շահույթ: Քանի որ գների սահմանումը կախված է ոչ միայն իրենից, ուստի մրցակցության պայմաններում իր նպատակին հասնելու համար, արտադրողը պետք է թողարկի և վաճառի որքան հնարավոր է շատ ապրանքներ և ավելի ցածր գներով, քան մրցակիցները:

«Ու՞մ համար արտադրել» հարցը լուծվում է հոգուտ սպառողների տարբեր խմբերի՝ նրանց եկամուտների չափերի հաշվառումով:

Ավանդական տնտեսության պայմաններում ի՞նչ, ինչպե՞ս և ու՞մ համար արտադրել հարցերի պատասխանները տալիս են երկրում ձևավորված ավանդույթները և սովորույթները, իսկ վարչահրամայական տնտեսության պայմաններում այս հարցերի պատասխանները տալիս է պետությունը:

---

## Չարք 6. Տնտեսական համակարգերի տեսակները

Տնտեսական համակարգը նյութական բարիքներ արտադրողների և սպառողների միջև որոշակի ձևով կարգավորված հարաբերությունների համակարգ է:

Տնտեսական համակարգը փոխկապակցված տնտեսական տարրերի համախումբ է, որը ձևավորում է հասարակության տնտեսական կառուցվածքը:

Տնտեսական համակարգերի դասակարգումն իրականացվում է ըստ հետևյալ չափանիշների.

- արտադրության միջոցների հանդեպ սեփականության տիրապետող ձևը,

- տնտեսական գործունեության կառավարման և վերահսկման համակարգը:

Առանձնացնում են ավանդական, վարչահրամայական և շուկայական տնտեսություններ, որոնք տարբերվում են տնտեսական հիմնախնդիրների լուծման մեթոդներով:

**Ավանդական տնտեսությունը** հիմնված է բնական, որպես կանոն, գյուղատնտեսական արտադրության վրա: Այստեղ գիտատեխնիկական առաջընթացը թափանցում է մեծ դժվարություններով, այսինքն՝ հակասության մեջ է մտնում սովորույթների հետ: Բոլոր տնտեսական խնդիրները լուծվում են սովորույթներին և ավանդույթներին համապատասխան:

Ավանդական տնտեսության հիմնական գծերն են.

1. արտադրության միջոցների նկատմամբ մասնավոր սեփականությունը և սեփականատիրոջ անձնական աշխատանքը,

2. պարզունակ տեխնոլոգիան՝ կապված բնական ռեսուրսների նախնական վերամշակման հետ,

3. տնտեսության համայնավարություն, բնահրային փոխանակություն,

4. ձեռքի աշխատանքի գերակշռություն:

**Վարչահրամայական տնտեսությունը** (կենտրոնացված-պլանային տնտեսություն) տնտեսական համակարգ է, որտեղ հիմնական տնտեսական որոշումներն ընդունվում են պետության կողմից, որն իր վրա է վերցնում հասարակության տնտեսական գործունեության կազմակերպչի գործառույթը:

---

Բոլոր բնական ծագում ունեցող տնտեսական ռեսուրսները համարվում են պետական սեփականություն: Վարչահրամայական տնտեսությանը հատուկ է կենտրոնացված պլանավորումը, ձեռնարկությունները գործում են կառավարման կենտրոնից տրված պլանային առաջադրանքներին համապատասխան:

Վարչահրամայական տնտեսության հիմնական գծերն են.

- պետության բացարձակ սեփականությունը տնտեսական և բնական ռեսուրսների վրա,

- տնտեսական ռեսուրսների բաշխման և տնտեսական գործունեության արդյունքների խիստ կենտրոնացում:

Վարչահրամայական տնտեսության դրական կողմերն են.

- Ռեսուրսների կենտրոնացման ճանապարհով նա կարող է ապահովել գիտության և տեխնիկայի ամենաառաջավոր նվաճումները:

- Վարչահրամայական տնտեսությունն ի վիճակի է ապահովել տնտեսական և սոցիալական կայունություն, յուրաքանչյուր մարդուն՝ երաշխավորված աշխատանք, կայուն և մշտապես աճող աշխատավարձ, անվճար կրթություն և բժշկական ծառայություն, վստահություն ապագայի նկատմամբ և այլն:

- Վարչահրամայական տնտեսությունն ապացուցել է իր կենսունակությունը մարդկային պատմության ճգնաժամային ժամանակահատվածներում:

Վարչահրամայական տնտեսության բացասական կողմերն են.

- Բացառում է տնտեսական ռեսուրսների նկատմամբ մասնավոր սեփականությունը:

- Թողնում է շատ նեղ շրջանակներ մասնավոր տնտեսական նախա:եռնության համար, բացառում է ազատ ձեռներեցությունը:

- Պետությունը լիովին վերահսկում է արդյունքի արտադրությունը և բաշխումը, ինչի արդյունքում բացառվում են փոխադարձ ազատ կապերը առանձին ձեռնարկությունների միջև:

**Շուկայական տնտեսությունը** տնտեսական համակարգ է, որը հիմնված է ազատ ձեռներեցության, արտադրության միջոցների նկատմամբ սեփականության ձևերի բազմազանության, շուկայական գնագոյացման, տնտեսավարող սուբյեկտների միջև պայմանագրային հարաբերությունների վրա:

---

Մաքուր շուկայական տնտեսությունը բացառում է պետության միջամտությունը և պետական կարգավորումը և ենթադրում է շուկայական ուժերի լրիվ ազատություն: Շուկայական տնտեսության պայմաններում **ի՞նչ, ինչպե՞ս և ու՞մ համար արտադրել** հարցերի պատասխանը որոշում է շուկան՝ գները, ծախսերը և շահույթը:

Շուկայական տնտեսության դրական կողմերն են.

- Խթանում է արտադրության բարձր արդյունավետությունը:
- Արդարացիորեն բաշխում է եկամուտներն ըստ աշխատանքի արդյունքների:

Շուկայական տնտեսության բացասական կողմերն են.

- Շուկայական մեթոդներով հնարավոր չէ լուծել հասարակության սոցիալական հիմնախնդիրները (քաղաքացիների սոցիալական ապահովություն, կենսաթոշակային ապահովություն, կրթություն, առողջապահություն):

- Բնական ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործում և շրջակա միջավայրի պաշտպանության մեխանիզմի բացակայություն:

Այսօր դժվար է խոսել այս կամ այն երկրում նշված երեք տնտեսական համակարգերից որևէ մեկի՝ մաքուր ձևով առկայության մասին:

Ջարգացած երկրների մեծ մասում գոյություն ունի խառը տնտեսություն, որն իր մեջ միավորում է մյուս երեք համակարգերի տարրերը:

**Խառը** տիպի տնտեսությունում շուկայական մեխանիզմները լրացվում են պետության ակտիվ գործունեությամբ, ինչպես նաև որոշակի աստիճանի ավանդույթներով: Պետությունը որոշում է հարկային և մաքսային քաղաքականությունը, իրականացնում է հակամենաշնորհային քաղաքականություն, ունի իր հատվածը տնտեսությունում, արտադրում և բաշխում է ապրանքներ և ծառայություններ, կարգավորում որոշակի գներ (օրինակ՝ էլեկտրաէներգիայի), և այլն:

Յուրաքանչյուր տնտեսական համակարգի համար բնորոշ են տնտեսության կազմակերպման իր ազգային մոդելները: Դիտարկենք տնտեսական համակարգերի առավել հայտնի մի քանի ազգային մոդելներ:

**Ամերիկյան մոդելը** կառուցված է ձեռնարկատիրական ակտիվության խրախուսման, կրթության և մշակույթի զարգացման, հասարակության առավել ակտիվ մասի հարստացման համակարգի վրա: Բնակչության անապահով խավերին տրամադրվում են զանազան նպաստներ և արտոնություններ՝ նվազագույն կենսամակարդակ ապահովելու համար: Այս

---

մոդելը հիմնված է աշխատանքի արտադրողականության բարձր մակարդակի և անհատական հաջողության հասնելու՝ զանգվածային կողմնորոշման վրա: Սոցիալական հավասարության խնդիր այստեղ ընդհանրապես չի դրվում:

**Շվեդական մոդելը** տարբերվում է խիստ սոցիալական ուղղվածությամբ, որը միտված է գույքային անհավասարության կրճատմանը՝ ազգային եկամտի վերաբաշխման հաշվին, հոգուտ բնակչության առավել անապահով խավերի: Այս մոդելը նշանակում է, որ արտադրության գործառույթն ընկնում է մասնավոր ձեռնարկությունների վրա, որոնք գործում են շուկայական մրցակցության հիման վրա, իսկ բարձր կենսամակարդակ ապահովելու գործառույթը (ներառյալ զբաղվածությունը, կրթությունը սոցիալական ապահովագրությունը) և ենթակառուցվածքների շատ տարրեր (այդ թվում՝ տրանսպորտը)՝ պետության վրա:

Այս մոդելի հիմքը սոցիալական քաղաքականությունն է: Պետությունն ապահովում է տնտեսական կայունությունը և եկամուտների վերաբաշխումը:

Շվեդական մոդելի արժանիքը տնտեսական աճի համեմատաբար բարձր տեմպի զուգակցումն է լրիվ զբաղվածության բարձր մակարդակի հետ, որն ապահովում է բնակչության բարեկեցությունը: Երկրում նվազագույնի է հասցված գործազրկությունը, մեծ չեն բնակչության եկամուտների տարբերությունները, բարձր է քաղաքացիների սոցիալական ապահովության մակարդակը:

**Ճապոնական մոդելը** բնութագրվում է նրանով, որ բնակչության կենսամակարդակը որոշ չափով հետ է մնում (այդ թվում՝ աշխատավարձի մակարդակը) աշխատանքի արտադրողականության աճից: Դրա հաշվին հասնում են արտադրանքի ինքնարժեքի իջեցմանը և մրցունակության կտրուկ բարձրացմանը համաշխարհային շուկայում: Այսպիսի մոդելը հնարավոր է միայն բացառապես ազգային գիտակցության բարձր զարգացման դեպքում, երբ անհատի շահերը ստորադասվում է հասարակության շահերին, երբ բնակչությունը պատրաստ է գնալ որոշ զոհողությունների՝ հանուն ամբողջ երկրի բարգավաճման: Ճապոնական մոդելի ևս մեկ առանձնահատկությունն էլ այն է, որ նրա զարգացումը կապված է պետության ակտիվ դերի հետ՝ տնտեսության մոդելավորման գործում:

Տնտեսության ճապոնական մոդելը տարբերվում է զարգացած պլանավորմամբ և կառավարության ու մասնավոր հատվածի համագործակցու-

---

թյամբ: ճապոնական մոդելին հատուկ է իրենց ավանդույթների պահպանումը և դրա հետ մեկտեղ ակտիվորեն այն ամենի փոխառումը ուրիշ երկրներից, ինչն անհրաժեշտ է իրենց երկրի զարգացման համար:

**Գերմանական մոդելի** բնութագրիչ գիծը դրա սոցիալական կողմնորոշումն է, սոցիալական և տնտեսական քաղաքականությունների տարանջատումը: Բնակչության սոցիալական պաշտպանության աղբյուրը ոչ թե ձեռնարկությունների շահույթն է, այլ հատուկ բյուջետային և արտաբյուջետային ֆոնդերը:

**Իտալական մոդելը** բնութագրվում է պետական մեծ բաժնեմասով, բարձր զարգացած մասնավոր ձեռնարկատիրությամբ, փոքր բիզնեսի մեծ տեսակարար կշռով, զարգացող կոոպերատիվ հատվածով, զարգացած սոցիալական ենթակառուցվածքով և սոցիալական պաշտպանության բարձր աստիճանով:

## **Չարք 7. Միկրո և մակրո տնտեսագիտություն**

Տնտեսագիտությունը վերլուծության է ենթարկում տնտեսական գործունեությունը հիմնականում երկու տարբեր մակարդակներում՝ միկրոտնտեսական և մակրոտնտեսական:

**Միկրոտնտեսագիտությունը** տնտեսագիտության հատուկ բաժին է, որն ուսումնասիրում է տնտեսական հարաբերությունները տնտեսվարող սուբյեկտների միջև, նրանց գործունեությունը և ազդեցությունը ազգային տնտեսության վրա:

Միկրոտնտեսագիտության տնտեսվարող սուբյեկտներին են վերաբերում սպառողները, աշխատողները, կապիտալի տերերը, ձեռնարկությունները, տնային տնտեսությունները, ձեռներեցները: Միկրոտնտեսագիտության ուշադրության կենտրոնում են արտադրողները և սպառողները, որոնք որոշումներ են կայացնում արտադրանքի ծավալի, վաճառքի, գնումների, սպառման, գների, ծախսերի և շահույթի վերաբերյալ:

Միկրոտնտեսագիտությունը տալիս է այն հարցերի պատասխանները, թե ինչպես են սահմանվում առանձին ապրանքների գները, ինչպիսի միջոցներ են ներդրվում ազգային տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացման մեջ, ինչպես են սպառողները որոշում ընդունում ապրանքի գնման վերաբերյալ, ինչպես են նրանց որոշման վրա ազդում գների փոփոխությունը, նրանց եկամուտները և այլն: Միկրոտնտեսագիտությունը ուսումնասիրում է

---

սուբյեկտների շուկայական վարքագիծը, հարաբերությունները նրանց միջև՝ նյութական բարիքների և ծառայությունների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման ընթացքում, ինչպես նաև հարաբերությունները արտադրողների, սպառողների և պետության միջև:

Միկրոտնտեսագիտությունը որպես տնտեսական վերլուծության մեթոդ հիմնվում է տնտեսական գործընթացի անհատական միավորների՝ ձեռներեցների գնահատականների և վարքագծի ուսումնասիրության վրա:

**Մակրոտնտեսագիտությունը** (ազգային տնտեսություն) ուսումնասիրում է տնտեսական գործընթացները և երևույթները, որոնք ընդգրկում են ազգային տնտեսությունը որպես միասնական համակարգ, որում միավորվում են նյութական և ոչ նյութական արտադրության բոլոր օղակները:

Մակրոտնտեսագիտության հիմնախնդիրներն են՝ արժեզրկումը, գործազրկությունը, տնտեսական աճը, համախառն ազգային արդյունքը, համախառն ներքին արդյունքը, ազգային եկամուտը, բնակչության կենսամակարդակը, զբաղվածությունը, դրամական միջոցները, տոկոսադրույքները, ներդրումները, բյուջետային դեֆիցիտը, հարկերը, պետական կարգավորման մեթոդները և այլն:

Մակրոտնտեսագիտությունը որպես տնտեսական վերլուծության մեթոդ, հիմնված է մակրոտնտեսական ցուցանիշների գնահատման վրա, այնպիսիք, ինչպիսիք են՝ համախառն ներքին արդյունքը, համախառն ազգային արդյունքը, ազգային եկամուտը և այլն:

Այսպիսով, եթե միկրոտնտեսագիտությունն ուսումնասիրում է առանձին տնտեսավարող սուբյեկտների վարքագիծը որպես տնտեսական համակարգի տարր շուկայական տնտեսության պայմաններում, ապա մակրոտնտեսագիտությունը ուսումնասիրում է տնտեսական համակարգն ամբողջությամբ:

Միկրո և մակրո տնտեսագիտություններից բացի առանձնացնում են նաև **մեզոտնտեսագիտությունը**, որն ուսումնասիրում է բոլոր միջանկյալ համակարգերը կամ ազգային տնտեսության ճյուղերն ընդգրկող տնտեսական երևույթները և գործընթացները (ագրոարդյունաբերական համալիրը, ռազմարդյունաբերական համալիրը, առողջապահությունը, առևտուրը, այսինքն՝ ազգային տնտեսության առանձին ճյուղերի և ոլորտների էկոնոմիկան):

**Չամաշխարհային տնտեսագիտությունը** ուսումնասիրում է համաշխարհային տնտեսությունը՝ որպես ազգային տնտեսությունների գումար, որոնք միմյանց հետ կապված են աշխատանքի միջազգային բաժանու-

---

մով, համաշխարհային շուկայով, միջազգային տնտեսական կապերի համակարգով:

### **Համառոտ եզրակացություններ**

1. Տնտեսագիտության տեսությունը գիտություն է, որն ուսումնասիրում է բարիքների և ծառայությունների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման ընթացքում մարդկանց միջև ծագած հարաբերությունները՝ կապված սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման և մարդկանց անսահմանափակ պահանջմունքների բավարարման հետ:

2. Տնտեսագիտությունը կատարում է հետևյալ գործառույթները՝ մեթոդաբանական, գիտաճանաչողական, քննադատական, գործնական, կանխատեսման:

3. Տնտեսագիտության տեսության ուսումնասիրության մեթոդներն են՝ գիտական վերացարկման (աբստրակցիայի), պատմական, տրամաբանական, վերլուծության և համադրության (անալիզի և սինթեզի) մեթոդը, արտածման և մակածման (ինդուկցիայի և դեդուկցիայի), այլ հավասար պայմանների, ուղիղ և հակադարձ կապի մեթոդ, տնտեսամաթեմատիկական մոդելավորում՝ համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ, գրաֆիկական մեթոդ, տնտեսական փորձարկում (էքսպերիմենտ):

4. Պոզիտիվ վերլուծությունը ենթադրում է տնտեսական երևույթների վերլուծությունն այնպիսին, ինչպիսին նրանք իրականում գոյություն ունեն: Նորմատիվային վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչ պետք է լինի, ինչպես պետք է գործել, որ հասնեն ցանկալի արդյունքների:

5. Տնտեսական օրենքները առավել էական, կայուն և մշտապես կրկնվող օբյեկտիվ փոխկախվածությունն ու պատճառահետևանքային կապերն են տնտեսական գործընթացների և երևույթների միջև:

6. Տնտեսական կատեգորիաները առավել ընդհանուր հասկացություններ են, որոնք արտացոլում են տնտեսական երևույթների և գործընթացների էական հատկանիշները: Օրինակ՝ արժեքը, գինը, աշխատանքը, փողը, ինքնարժեքը, ապրանքը և այլն:

7. Արտադրության անմիջական նպատակը մարդկային պահանջմունքների բավարարումն է: Պահանջմունքը անբավարարվածության վիճակ է,

---

որից մարդը ձգտում է դուրս գալ, կամ բավարարվածության վիճակ, ինչը ձգտում է երկարացնել:

8. Բարիքն այն ամենն է, ինչն ընդունակ է բավարարելու մարդկանց ամենօրյա կենսական պահանջմունքները, նրանց օգտակար լինել, հաճույք պատճառել (ապրանքներ և ծառայություններ, ինչպես նաև բնության պարզևները):

9. Պահանջմունքները որպես անբավարարվածության զգացմունք, բայց բավարարման համար պարտադիր անհրաժեշտություն, ստիպում են մարդկանց գործել, արարել, ստեղծել: Դրա համար էլ տնտեսական պահանջմունքների արտահայտման ձևը համարվում են տնտեսական շահերը, այսինքն՝ գործունեության խթաններն ու մոտիվները, որոնք ուղղված են տնտեսավարող սուբյեկտների պահանջմունքների բավարարմանը: Շահերն ու խթանները նպաստում են տնտեսավարող սուբյեկտների մոտ գործունեություն իրականացնելիս նյութական շահագրգռվածության առաջ գալուն: Ըստ շահերը կրող սուբյեկտի՝ շահերը լինում են անձնական, կոլեկտիվ և հասարակական:

10. Ցանկացած հասարակություն լուծում է տնտեսության երեք հարց. ի՞նչ ապրանքներ և ծառայություններ արտադրել, ինչպե՞ս և ու՞մ համար:

11. Տնտեսական համակարգը նյութական բարիքներ արտադրողների և սպառողների միջև որոշակի ձևով կարգավորված հարաբերությունների համակարգ է: Առանձնացնում են ավանդական, վարչահրամայական, շուկայական և խառը տնտեսական համակարգեր, որոնք տարբերվում են տնտեսական հիմնախնդիրների լուծման մեթոդներով:

12. Միկրոտնտեսագիտությունն ուսումնասիրում է առանձին տնտեսավարող սուբյեկտների վարքագիծը որպես տնտեսական համակարգի տարր շուկայական տնտեսության պայմաններում, իսկ մակրոտնտեսագիտությունն ուսումնասիրում է տնտեսական համակարգն ամբողջությամբ:

## **Ինքնաստուգման հարցեր**

1. Ի՞նչ է ուսումնասիրում տնտեսագիտության տեսությունը:
2. Որո՞նք են տնտեսագիտության տեսության գործառույթները:
3. Որո՞նք են տնտեսագիտության տեսության ուսումնասիրության մեթոդները:
4. Ինչպե՞ս էք բացատրում արտածման և մակածման մեթոդի էությունը:
5. Ինչպե՞ս էք բացատրում գիտական արստրակցիայի և այլ հավասար պայմանների մեթոդները:
6. Ի՞նչ է տնտեսական օրենքը:
7. Ի՞նչ է տնտեսական կատեգորիան:
8. Ինչպիսի՞ տնտեսական կատեգորիաներ գիտեք:
9. Ինչպիսի՞ տնտեսական օրենքներ գիտեք:
10. Տնտեսագիտության տեսության ի՞նչ դպրոցներ և ուղղություններ գիտեք:
11. Որո՞նք են մերկանտիլիզմի և ֆիզիոկրատիզմի հիմնական դրույթները:
12. Որո՞նք են դասական դպրոցի հիմնական դրույթները:
13. Որո՞նք են մոնետարիզմի և քեյնսականության հիմնական դրույթները:
14. Ի՞նչ տարբերություն կա պոզիտիվ և նորմատիվ վերլուծության սկզբունքների միջև:
15. Ի՞նչ է պահանջմունքը:
16. Պահանջմունքների ի՞նչ տեսակներ գիտեք:
17. Ինչպիսի՞ն է պահանջմունքների հիերարխիան ըստ Մասլոուի:
18. Ի՞նչ է բարիքը:
19. Բարիքների ի՞նչ տեսակներ գիտեք:
20. Ի՞նչ է շահը: Շահերի ի՞նչ տեսակներ գիտեք:
21. Որո՞նք են տնտեսության 3 հիմնահարցերը:
22. Ի՞նչ է տնտեսական համակարգը:
23. Տնտեսական համակարգերի ի՞նչ տեսակներ գիտեք:
24. Ինչպե՞ս է բնութագրվում շուկայական տնտեսական համակարգը:
25. Ինչպե՞ս է բնութագրվում վարչահրամայական տնտեսական համակարգը:
26. Ինչպե՞ս է բնութագրվում ավանդական տնտեսական համակարգը:
27. Ինչպե՞ս է բնութագրվում խառը տնտեսական համակարգը:
28. Տնտեսական ի՞նչ ազգային մոդելներ գիտեք:
29. Ի՞նչ է միկրոտնտեսագիտությունը:
30. Ի՞նչ է մակրոտնտեսագիտությունը:

---

## ԹԵՄԱ 2. ԱՊՐԱՆՔԱԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ներկայացնել ապրանքադրամական հարաբերությունների հիմունքները:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

*ա. ներկայացնել բնատնտեսային և ապրանքային արտադրության էությունը,*

*բ. սահմանել ապրանքը,*

*գ. ներկայացնել փողի ծագման նախադրյալները և գործառույթները:*

### **Հարց 1. Բնատնտեսային և ապրանքային արտադրության ծագման պայմանները, հիմնական գծերը և տեսակները**

Պատմականորեն տնտեսության կազմակերպման առաջին տիպը եղել է բնատնտեսային (նատուրալ) տնտեսությունը: Բնատնտեսային արտադրության պայմաններում մարդիկ բարիքներ են արտադրել անձնական պահանջմունքների բավարարման համար՝ առանց շուկային դիմելու, ավելի ճիշտ՝ շուկա չկար և փոխանակության սովորություն էլ ընդունված չէր: Արտադրությունը հիմնված էր անձնական աշխատանքի վրա, երբ աշխատանքի հասարակական բաժանումն ու արտադրության մասնագիտացումը բացակայում էին, և մարդը կարող էր կատարել, լավ թե վատ, բոլոր աշխատանքները և ստացված արդյունքներով բավարարել իր և իր ընտանիքի պահանջմունքները (ինչը մաքուր տեսքով հանդես է եկել նախնադարյան ազգերի մոտ): Այդ պայմաններում արտադրողական ուժերի կազմն ու մակարդակը և արտադրության կազմակերպումը շատ պարզունակ (պրիմիտիվ) էին, ցածր էր աշխատանքի արտադրողականությունը, իսկ արտադրվող արդյունքների տեսականին դարերի ընթացքում փոփոխության չէր ենթարկվում:

Եռահարցի խնդիրների՝ **ի՞նչ, ինչպե՞ս և ո՞ւմ համար արտադրել**, լուծումը տալիս էին տնտեսության սեփականատերերը (հենց իրենք՝ աշխատողները)՝ ելնելով ընտանեկան պահանջմունքներից: Բնատնտեսության մեջ մեծ դեր էին խաղում ստեղծված ավանդույթներն ու առաջնորդի կամքը:

---

Որպես տիրապետող ձև՝ բնատնտեսությունը շատ վաղուց է անցել պատմությամբ որոշված իր ժամանակը: Սակայն «արտադրել-սպառել» կապը (առանց փոխանակման և հասարակական բաշխման) շատ կայուն է մնացել. դրա տարրերը կարելի է տեսնել և ժամանակակից հասարակության մեջ միկրո և մակրո մակարդակներում: Բնատնտեսության օրինակ է աշխատանքը սեփական հողամասում, որը խրախուսվում է պետության կողմից, հատկապես՝ տնտեսական ցնցումների ժամանակ: Մակրոմակարդակում բնատնտեսության օրինակ է ինքնամփոփ (ավտարկիա) քաղաքականությունը, որն ինքնաբավարարող տնտեսության ստեղծում է ենթադրում մեկ երկրի սահմաններում: Նման քաղաքականությունը հանգեցնում է ինքնամփոփման, համաաշխարհային շուկայից կտրվածության, տնտեսական աճի դանդաղեցման և չի ապահովում տնտեսական անկախություն, դրա համար էլ համարվում է հետադիմական:

Բնատնտեսության համեմատ առավել բարդ է ապրանքային տնտեսությունը:

Ապրանքային արտադրությունը հասարակական արտադրության կազմակերպման այնպիսի ձև է, որի դեպքում բոլոր արդյունքները թողարկվում են մասնագիտացված արտադրողների կողմից և սպառվում են փոխանակության միջոցով:

Ապրանքային արտադրության առաջացման և գոյության համար անհրաժեշտ է երկու պայման: Առաջինը աշխատանքի հասարակական բաժանումն է, որի դեպքում առանձին արտադրողներ մասնագիտանում են որոշակի ապրանքների արտադրության մեջ: Դա հանգեցրել է այն բանին, որ բոլոր արտադրողները դարձել են միմյանցից անկախ. մարդը պետք է բավարարի իր պահանջմունքների ողջ համալիրը, մինչդեռ նա արտադրում է միայն մեկ ապրանք: Այդ պատճառով էլ թողարկված արտադրանքի մի մասը նա ստիպված փոխանակում է այլ ապրանքներով: Աշխատանքի հասարակական բաժանման խորացումը հանգեցրեց նրան, որ, փաստորեն, բոլոր արտադրողները սկսեցին փոխանակություն կատարել: Աշխատանքի հասարակական բաժանումը պարտադիր, բայց ոչ բավարար պայման է ապրանքային արտադրության առաջացման համար:

Երկրորդ պայմանը արտադրողների տնտեսական առանձնացումն է: Այն արտադրողին թույլ է տալիս սեփական հայեցողությամբ տնօրինել

---

արտադրած արտադրանքը, այսինքն՝ լինել այդ ապրանքի սեփականատեր: Նման առանձնացումն անխզելիորեն կապված է արտադրության միջոցների և արտադրված ապրանքի նկատմամբ սեփականության հարաբերությունների հետ: Հենց այդ պատճառով էլ մասնավոր սեփականությունը, որը հանգեցրեց արտադրողների տնտեսական առանձնացման, ապրանքային արտադրության առաջացման հիմք ծառայեց:

Ապրանքային արտադրության զարգացման փուլերը կապված են շուկայի զարգացման հետ: Առանձնացնում են շուկայի հետևյալ տեսակները՝ թերզարգացած, ազատ, կարգավորվող և խեղաթյուրված: Շուկայի յուրաքանչյուր տեսակին համապատասխանում է ապրանքային արտադրության մի հատուկ մոդել:

1. թերզարգացած շուկայական ապրանքային արտադրություն,
2. ազատ շուկայական ապրանքային արտադրություն,
3. կարգավորվող շուկայական ապրանքային արտադրություն,
4. խեղաթյուրված շուկայական ապրանքային արտադրություն:

**1. Թերզարգացած շուկայական ապրանքային արտադրությունը** (պարզ ապրանքային արտադրությունը) հիմնված է աշխատանքի հասարակական բաժանման, արտադրամիջոցների մասնավոր սեփականության և անձնական աշխատանքի վրա: Պարզ ապրանքային արտադրության պայմաններում շուկա էր մտնում թողարկված արդյունքի միայն մի մասը: Այդ իսկ պատճառով էլ այն չէր ընդգրկում ողջ տնտեսությունը, այսինքն՝ համընդհանուր չէր:

**2. Ազատ շուկայի ապրանքային արտադրությունը** (շուկայական տնտեսությունը) համընդհանուր բնույթ է կրում:

Ապրանքային արտադրությունն այս փուլում բնութագրվում է ազատ մրցակցությամբ, ինչի պատճառով էլ երբեմն անվանում են ազատ մրցակցության դարաշրջանի կապիտալիզմ կամ «ազատ տնտեսություն»: Տնտեսական կյանքում պետական միջամտության գրեթե իսպառ բացակայությունը թույլ է տալիս այն անվանել «զուտ» կապիտալիզմ, ինչը նշանակում է, որ տնտեսության զարգացումը՝ «թող ընթանա այնպես, ինչպես ընթանում է»:

Գործունեության կոորդինացման համար շուկաների և գների համակարգի օգտագործումը հիմք ծառայեց ապրանքային արտադրության այս

---

տեսակը կապիտալիստական (շուկայական) տնտեսություն անվանելու համար:

Շուկայական տնտեսությունը ձևավորվեց մեքենայական արտադրության փուլում:

**3. Կարգավորվող շուկայի ապրանքային արտադրությունն** աչքի է ընկնում տնտեսության մեջ երկու ոլորտների՝ պետականի և մասնավորի առկայությամբ: Պետությունն ակտիվ միջամտություն է ցուցաբերում շուկայական կյանքին: Կարգավորվող շուկան ձևավորվում է տնտեսության մենաշնորհման պայմաններում, երբ կառավարության առջև խնդիր է ծագում՝ սահմանափակել մենատիրությունը: Պետական կարգավորման կարևոր լծակներն են՝ օրենսդրությունը, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը:

Կարգավորվող շուկայի ապրանքային արտադրությունն ունի մի քանի մոդել՝

1. սոցիալական շուկայական տնտեսություն,
2. խառը տնտեսություն,
3. կորպորատիվ տնտեսություն:

Դրանք միմյանցից տարբերվում են նախ և առաջ պետական ծրագրերի նպատակաուղղվածությամբ: Սոցիալական տնտեսության գլխավոր նպատակն է քաղաքացիների շահերի պաշտպանությունը, խառը տնտեսության նպատակն է ձեռներեցության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, կորպորատիվ տնտեսության նպատակն է խոշոր բիզնեսի շահերի պաշտպանությունը: Առաջին մոդելը հատուկ է Գերմանիային, երկրորդը՝ ԱՄՆ-ին, երրորդը՝ Ճապոնիային և Շվեդիային:

4. Խեղաթյուրված շուկայի ապրանքային արտադրությանը բնորոշ է վարչահրամայական տնտեսություն և աշխատանքի հասարակական բաժանման զարգացած համակարգ: Այն հիմնված է մեքենայական արտադրության, ազգային տնտեսության անընդհատ կարգավորման և ազատ շուկայական հարաբերությունների վրա: Վարչահրամայական տնտեսությունն ունի երկու մոդել՝ պլանային դիրեկտիվ և նորմատիվ:

Վարչահրամայական համակարգը հիմնված է տնտեսական գործունեության լրիվ կենտրոնացման վրա, ինչպես ռեսուրսների բաշխման, այնպես էլ գների սահմանման հարցում: Նորմատիվ մոդելը թույլ է տալիս

---

ընդլայնել ապրանքարտադրողների ինքնուրույնությունը, պլան-դիրեկտիվը փոխարինվում է նորմատիվների համակարգով և ավելի «մեղմ» պլանավորումով:

Հայաստանի տնտեսությունը ձեռնամուխ է եղել վարչահրամայական համակարգից շուկայական համակարգին անցմանը, որը երկընտրանք չունի: Բայց հարցն այն է, թե ինչ համակարգ ենք մենք ուզում ստեղծել և ինչ մոդել ընտրել:

## **Հարց 2. Ապրանքը և նրա հատկությունները. արժեքի այլընտրանքային տեսությունները**

Ապրանքն ապրանքային արտադրության ելակետային կատեգորիան է: Գոյություն ունեն ապրանքի էության մեկնաբանման տարբեր մոտեցումներ: Դիտարկենք դրանցից երկուսը:

1. Մարքսիզմն ապրանքը դիտարկում է որպես այն աշխատանքի արդյունքը, որը մարդու համար ունի օգտակարություն և նախատեսված է փոխանակման համար: Այս ձևակերպումից հետևում է, որ.

ա) ապրանք համարվելու համար իրը պետք է բավարարի մարդկանց պահանջմունքները,

բ) պետք է ստեղծված լինի աշխատանքի միջոցով. օրինակ՝ անտառում հատապտուղ հավաքողի համար հատապտուղը ապրանք չէ,

գ) նախատեսված է վաճառքի կամ փոխանակման համար:

2. Ավստրիական դպրոցը, որի խոշոր ներկայացուցիչն է Մենգերը, ապրանքը բնութագրում է որպես փոխանակման համար արտադրված առանձնահատուկ տնտեսական բարիք: Կ. Մենգերը տնտեսական բարիք է համարում այն բարիքները, որոնք տնտեսական գործունեության արդյունք են, և որոնց քանակը, պահանջմունքների համեմատ, սահմանափակ է:

Չնայած մոտեցումների տարբերություններին՝ և՛ առաջինը, և՛ երկրորդն ընդունում են, որ ապրանք կարող են լինել աշխատանքի միջոցով ստեղծված իրերը, ծառայությունները:

Ծառայությունների առանձնահատկությունն այն է, որ իրային տեսք չունեն, բայց մարդու աշխատանքի արդյունք են:

---

Ապրանքն օժտված է երկու հատկությամբ՝

1. մարդկային այս կամ այն պահանջմունքը բավարարելու ունակությամբ,

2. փոխանակվելու ունակությամբ:

Ապրանքի՝ մարդկային այս կամ այն պահանջմունքը բավարարելու հատկությունը կոչվում է սպառողական արժեք:

Ամեն մի ապրանք օժտված է սպառողական արժեքով: Այն բավարարում է ոչ միայն արտադրողի պահանջմունքները, այլև ուրիշների, այսինքն՝ հասարակական սպառարժեք է: Իսկ ապրանք արտադրողին դա հետաքրքրում է այնքանով, որքանով «օժտված» է այլ ապրանքների հետ փոխանակվելու համար:

Ապրանքի՝ այս կամ այն համամասնությամբ այլ ապրանքների հետ փոխանակվելու հատկությունը կոչվում է փոխանակային արժեք:

Տարբեր տնտեսագետներ տարբեր ձևով են պատասխանում այն հարցին, թե ի՞նչն է ընկած փոխանակման հիմքում, և ինչո՞վ է պայմանավորված փոխանակման քանակական հարաբերակցությունը:

Աշխատանքային տեսության կողմնակիցներն այն կարծիքին են, որ բոլոր ապրանքներն ունեն մի ընդհանուր հիմք՝ աշխատանքային ծախսումներ, որն էլ հենց որոշում է արժեքի մեծությունը և ծառայում որպես փոխանակման հիմք:

Սահմանային օգտակարության տեսության կողմնակիցները փոխանակման հիմքում դնում են օգտակարությունը:

Աշխատանքային տեսությունը ձևավորվել է 18-19-րդ դարերում: Քաղաքատնտեսության դասականներն արժեքը որոշում էին ծախսված աշխատանքի քանակով: Մարքսն ու Էնգելսը գտնում էին, որ արժեքի հիմքում հասարակական վերացական (աբստրակտ) աշխատանքն է: Ըստ Մարքսի՝ ապրանք արտադրողի աշխատանքը երկակի բնույթ ունի: Մի կողմից դա որոշակի օգտակար ձևի աշխատանք է, ինչը բնութագրվում է որոշակի աշխատանքի գործիքների, աշխատողի մասնագիտական հմտությունների կիրառմամբ և որոշակի սպառարժեքի ստացմամբ: Այդ աշխատանքը նա անվանել է կոնկրետ աշխատանք, ինչը ստեղծում է ապրանքի սպառողական արժեքը: Մյուս կողմից՝ աշխատանքը աշխատուժի ծախսումներն են ընդհանրապես՝ անկախ դրա կոնկրետ ձևից: Սա կոչ-

---

վում է վերացական (աբստրակտ) աշխատանք: Հենց վերացական աշխատանքն է արժեք ստեղծում, քանի որ թույլ է տալիս միմյանց հետ համեմատել տարբեր մասնագետների աշխատանքների արդյունքները:

Տարբեր ձևերով է որոշվում նաև արժեքի չափը: Սնիթն արժեքի չափ էր ընդունում աշխատաժամանակը, Ռիկարդոն՝ արտադրության վատագույն պայմաններում ստեղծված ապրանքի վրա կատարված աշխատաժամանակի ծախսումները, Մարքսն արժեքը որոշում էր հասարակայնորեն նորմալ արտադրության պայմաններում՝ աշխատանքի հմտության և ինտենսիվության միջին մակարդակում, ապրանքի արտադրության վրա ծախսված հասարակայնորեն անհրաժեշտ աշխատաժամանակի ծախսումներով:

Սահմանային օգտակարության տեսության կողմնակիցներն արժեքը բխեցնում էին սպառողների սուբյեկտիվ գնահատականներից: Իսկ ապրանքի սուբյեկտիվ արժեքավորումը կախված է 2 գործոնից՝ տվյալ բարիքի պաշարի մեծությունից և պահանջումների հագեցվածության աստիճանից: Օրինակ, եթե մենք ծարավ ենք, գտնվում ենք անապատում, ապա ջրի առաջին միավորը մեզ համար անգին է: Ծարավի հագեցվածությանը զուգընթաց, յուրաքանչյուր հաջորդ լրացուցիչ միավորի օգտակարությունը նվազելու է: Ջրի վերջին միավորը մեզ համար ունի նվազագույն օգտակարություն:

Այսպիսով, սահմանային օգտակարությունը լրացուցիչ օգտակարությունն է, որը սպառողը «վերցնում» է ապրանքի կամ ծառայության սահմանային միավորից: Այն հավասար է օգտակարության ընդհանուր քանակի և սպառման ծավալի փոփոխության հարաբերակցությանը:

Ծախսային հայեցակետը ներկայացված է Ջեյմս Մակ-Կուլոխի աշխատություններում, որտեղ նույնացվում էին արժեքն ու արտադրության ծախքերը:

Այդ տեսությունների միավորման փորձ կատարեցին Ե. Բեն-Բավերկը, Ա. Մարշալը, Ջ. Կլարկը, Պ. Սամուելսոնը:

Առավել հաջող էր Մարշալի փորձը. նա հրաժարվեց արժեքի միակ աղբյուր փնտրելուց (մոնիզմ) և միացրեց սահմանային օգտակարության տեսությունն առաջարկի ու պահանջարկի և արտադրության ծախքերի տեսությունների հետ: Մարշալը քննարկում է օգտակարության, առաջարկի-պահանջարկի, ծախքերի և գների փոխկապվածությունը:

---

### Չարց 3. Փողի ծագումը և ելթյունը

Մարդու մեծագույն հայտնագործություններից մեկը փողն է: Փողի կատարած դերը մարդկային հասարակության զարգացման գործում միշտ էլ հետաքրքրել է տնտեսագետներին:

Գոյություն ունի փողի ծագման հետազոտության երկու մոտեցում՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ: Սուբյեկտիվ մոտեցման դեպքում փողը համարվում է մարդկանց միջև համաձայնության, պայմանավորվածության արդյունք: Օբյեկտիվ մոտեցման պարագայում ապացուցվում է, որ փողն ապրանքափոխանակային հարաբերությունների զարգացման արդյունք է, որի ընթացքում ապրանքների հոծ զանգվածից առանձնացել է մեկը, ինչին էլ ամրագրվել է համընդհանուր համարժեքի դերը: Բոլոր քաղաքակրթություններում ապրանքն իրացվում է փողով, իսկ ստացված գումարով գնվում է մեկ այլ ապրանք, որն անհրաժեշտ է արտադրության կազմակերպման կամ անձնական սպառման համար:

Այսօրվա հասկացողությամբ փողը համընդհանուր արժեք է, բայց քանի որ փողն իր բնույթով ապրանք է, ապա ասում են, որ փողը համընդհանուր համարժեքի գործառույթ կատարող յուրահատուկ ապրանք է:

Փողն առաջացել է ապրանքային արտադրության, փոխանակային հարաբերությունների և արժեձևերի՝ պարզ կամ պատահական, լրիվ կամ ծավալուն, ընդհանրական և դրամական դրսևորումների զարգացման արդյունքում: Տարբեր ազգեր փողի փոխարեն կիրառել են տարբեր ապրանքներ՝ կացինը, կտորեղենը, կաշին, մորթեղենը, անասունը, արծաթը, ոսկին:

Աստիճանաբար ընդհանրական համարժեքի դերը սկսեց կատարել ոսկին՝ հետևյալ հատկությունների շնորհիվ՝

1. որակական միատարրությունը,
2. քանակական բաժանելիությունը,
3. ոսկու փոքր քանակի մեջ առարկայացած է աշխատանքի մեծ քանակություն և հարմար է տեղափոխման համար,
4. կոռոզիայի չենթարկվելը:

Ոսկու մասին խոսելիս չպետք է մոռանալ արծաթի մասին: Արծաթը, նույնպես կայուն է ժանգոտման նկատմամբ, բայց փափուկ մետաղ է, այդ պատճառով էլ դրամահատման համար օգտագործվում է պղնձի հետ հա-

---

նաձուլվածքում: Որպես սովորական ապրանքներ՝ ոսկին և արծաթն օժտված են սպառողական արժեքով և արժեքով: Ոսկու սպառողական արժեքը նրանում է, որ օգտագործվում է որպես հումք, աշխատանքի առարկա՝ զարդեր պատրաստելու և արդյունաբերության մեջ՝ ճշգրիտ սարքավորումներ արտադրելու համար և այլն:

Ոսկին՝ որպես ընդհանրական համարժեք, ունի յուրահատուկ սպառողական արժեք. փոխանակվում է այլ ապրանքների հետ և արտահայտում դրանց արժեքի մեծությունը:

Փողի ժամանակակից տեսությունները ելնում են 17-18-րդ դարերում ծագած տեսությունների հիմնական դրույթներից: Դա վերաբերում է փողի ինչպես մետաղական, այնպես էլ անվանական (նոմինալիստական) և քանակական տեսություններին:

Իր զարգացման ընթացքում փողն ունեցել է դրսևորման մի քանի ձևեր: Սկզբում գոյություն է ունեցել ապրանքների տեսքով, այնուհետև՝ մետաղադրամների, իսկ ավելի ուշ՝ դրանց փոխարինեցին թղթադրամները: Ներկայումս թանկարժեք մետաղադրամները շրջանառության մեջ բացակայում են, հիմնականում շրջանառվում են թղթադրամները և ոչ թանկարժեք մետաղադրամները, բայց առաջացել են նաև սկզբունքորեն նոր վճարման միջոցներ՝ չեկեր, վարկային կտրոններ և այլն:

Ներկա փուլում ոսկին դադարել է շրջանառության մեջ դրամական զանգվածի կարգավորման դեր կատարելուց, քանի որ բացակայում է դրամանիշների ազատ փոխանակումը ոսկով: Սակայն ոսկին շարունակում է գանձի գործառույթ կատարելը, բայց սահմանափակ մասշտաբներով՝ որպես պետության և մասնավոր անհատների ապահովագրական ֆոնդ: Թղթադրամը գանձ լինել չի կարող, քանի որ զուրկ է սեփական արժեքից, բայց հանդես է գալիս կուտակման միջոցի տեսքով:

**Մուրհակը** գրավոր պարտավորություն է, որտեղ նշված են դրամական գումարի մեծությունն ու պարտապանի վճարման ժամկետը: Շրջանառության մեջ գտնվող մուրհակը կատարում է փողի դեր:

Մուրհակները լինում են **հասարակ և փոխանցվող: Հասարակ** մուրհակը մեկ անձի գրավոր պարտավորությունն է երկրորդ անձին՝ վճարել որոշակի գումար՝ ըստ պահանջի կամ հաստատագրված ժամկետում, կամ էլ՝ ըստ ներկայացման:

---

**Փոխանցվող** մուրհակները գրավոր հրաման են՝ ուղղված մեկ անձից (մուրհակատուից) մյուս անձին (վճարողին) և ստորագրված մուրհակը տվող անձի կողմից՝ երրորդ անձին (բենեֆիցիարին) որոշակի գումար վճարելու վերաբերյալ:

**Բանկնոտները** բանկի մուրհակներն են: Բանկնոտը թղթադրամից տարբերվում է.

ա) բանկնոտն ունի երկակի ապահովում՝ վարկային (առևտրական մուրհակ) և մետաղական (բանկի ոսկու պաշար),

բ) թղթադրամը բաց է թողնվում պետության կողմից,

գ) թղթադրամը շրջանառության միջոցի գործառույթ է կատարում, բանկնոտը՝ վճարման միջոցի:

**Չեկը** ընթացիկ հաշիվ ունեցող անձի գրավոր կարգադրությունն է բանկին՝ գումարի վճարման կամ այլ հաշվի փոխանցման մասին:

Գոյություն ունի չեկի երեք տեսակ՝

1. անվանական («վճարել չեկում նշված անձնավորությանը»),

2. օրդերային («վճարել չեկում նշված անձնավորությանը կամ նրա հրամանով՝ այլ անձի»),

3. ներկայացուցչական («վճարել չեկը ներկայացնողին»):

Չեկի և փոխանցվող մուրհակի հիմնական տարբերություններն են՝

➤ չեկը վճարվում է ըստ ներկայացման, իսկ մուրհակը՝ նաև ըստ ժամկետի,

➤ գրվում է բանկին, իսկ մուրհակը՝ ոչ,

➤ չեկը երբեք չի ակցեպտավորվում բանկի կողմից, իսկ մուրհակը պետք է ակցեպտավորվի վճարողի կողմից:

Անկանխիկ հաշվարկների իրականացման գործիքներ են նաև վճարման պահանջագիր-հանձնարարագիրը, փաստաթղթային ակրեդիտիվը, ճանապարհային չեկերը, պլաստիկ քարտերը, էլեկտրոնային փողերը և այլն:

**Վճարման պահանջագիր-հանձնարարագիրը** իրենից ներկայացնում է մատակարարի պահանջը գնորդին՝ հաշվարկային և ապրանքատրանսպորտային փաստաթղթերի հիման վրա մատակարարված ապրանքի արժեքի վճարման համար: Վճարողը (ապրանքի գնորդը) ակցեպտավորում է

---

այդ փաստաթուղթը և հանձնարարում բանկին՝ իրականացնելու այդ վճարումն իր հաշվարկային հաշվից:

**Փաստաթղթային ակրեդիտիվը** միակողմանի պարտավորություն է, որն իր վրա է վերցնում բանկը՝ հաճախորդ-հրամանագրողի (գնորդի) հանձնարարությամբ՝ հօգուտ բենեֆիցիարի (վաճառողի), և վճարումն իրականացվում է միայն բենեֆիցիարի կողմից՝ իր բանկի միջոցով ակրեդիտիվով նախատեսված առևտրային և ֆինանսական փաստաթղթերի ներկայացման դեպքում:

**Ճանապարհային չեկը** դրամական պարտավորություն է՝ սահմանված գումարը վճարել չեկատիրոջը, որի ստորագրության նմուշը դրվում է ճանապարհային չեկի վրա՝ վաճառքի պահին: Կախված մեկնելու վայրից՝ ճանապարհորդները հնարավորություն ունեն գնել մեկնելու երկրի արժույթով արտահայտված չեկեր, ինչը թույլ է տալիս խուսափելու ավելորդ փոխարկումներից: Գնման ժամանակ ճանապարհային չեկեր ձեռք բերող անձը ստորագրում է դրանք: Որոշ երկրներում ճանապարհային չեկերը՝ որպես վճարման միջոց, ընդունվում են խանութներում, հյուրանոցներում, այլ երկրներում դրանք փոխանակվում են տեղական արժույթով՝ բանկերում կամ փոխանակման կետերում: Չեկերը վճարումներում օգտագործելիս կամ կանխիկով փոխանակելիս չեկատերը դնում է չեկի վրա երկրորդ ստորագրություն, որը պետք է նույնանման լինի առաջին ստորագրությանը, և որով հաստատվում է չեկի օրինականությունը:

Ճանապարհային չեկերը բավականին լայնորեն կիրառվում են տարբեր երկրների ճանապարհորդների կողմից, ինչը բացատրվում է դրանց համատարած վճարունակությամբ, չեկերի հարմարավետությամբ և օգտագործման անվտանգությամբ, ինչպես նաև կորստի դեպքում երաշխավորված փոխհատուցման հնարավորությամբ և անժամկետությամբ:

**Պլաստիկ քարտը** անձնավորված վճարային գործիք է, որը քարտատիրոջը տալիս է առևտրի և սպասարկման կետերից ապրանքների և ծառայությունների վճարման, ինչպես նաև բանկի կառուցվածքային ստորաբաժանումներից և բանկոմատներից կանխիկ միջոցների ստացման հնարավորություն:

**Էլեկտրոնային փողը** վճարային գործիք է, որն իրենից ներկայացնում է էլեկտրոնային եղանակով գրառված դրամական արժեք: Հաճախորդը

---

գնում է էլեկտրոնային արժեք, որը պակասեցվում է յուրաքանչյուր էլեկտրոնային գործարքի ժամանակ:

#### Հարց 4. Փողի գործառույթները

Մի շարք տնտեսագետներ, այդ թվում նաև Մարքսը առանձնացնում են փողի 5 գործառույթ՝

1. արժեչափի,
2. շրջանառության միջոցի,
3. կուտակման միջոցի,
4. վճարման միջոցի,
5. համաշխարհային փողի:

Այլ տնտեսագետներ դիտարկում են փողի 2 գործառույթ՝ որպես շրջանառության միջոցի և հաշվարկման միջոցի, ինչպես նաև՝ 2 լրացուցիչ գործառույթ՝ կուտակման միջոցի և «հետաձգված վճարման» միջոցի (Սամուելսոն):

Տնտեսագետների մի մասն էլ առանձնացնում է փողի 3 գործառույթ՝ արժեչափի, շրջանառության և խնայողության միջոցի (Մակկոնեյ):

**Փողը՝ որպես արժեչափ:** Բոլոր ապրանքների արժեքն արտահայտվում է փողի միջոցով: Փողն ապրանքների արժեքների ընդհանրական չափանիշն է: Այս գործառույթն են իրականացնում իդեալական, այսինքն՝ մտովի պատկերացվող, այլ ոչ թե իրական փողերը: Այսինքն՝ ապրանքի արժեքը կարող է արտահայտվել փողի միջոցով՝ առանց տվյալ պահին փողի առկայության: Ապրանքներն իրացվում են ոչ թե արժեքով, այլ՝ գնով: Գինն արժեքի դրամական արտահայտությունն է: Ապրանքների գների համեմատման համար օգտագործվում է գների մասշտաբը: Գների մասշտաբը փողի միավորի՝ ոսկու պարունակությունն է, որը տվյալ երկրում ընդունվում է որպես դրամական միավոր: Հետևաբար, գինը կախված է՝

1. ապրանքի արժեքից,
2. փողի արժեքից:

Ինչքան փոքր է ապրանքի արժեքը, այնքան ցածր է ապրանքի գինը: Ինչքան փոքր է փողի արժեքը, այնքան բարձր է ապրանքի գինը:

---

**Փողը՝ որպես շրջանառության միջոց:** Փողի շրջանառության գործառույթն իրականացնում են ոչ թե իդեալական, այլ իրական փողերը: Ապրանքաշրջանառության գործընթացն ունի հետևյալ տեսքը՝ Ա-Փ-Ա, այսինքն՝ (Ա-Փ) ապրանքի վաճառքը հետագա գնման նպատակով (Փ-Ա): Այդ գործընթացում փողը միջնորդի դեր է խաղում ապրանքների փոխանակության ժամանակ:

**Փողը՝ որպես կուտակման միջոց:** Փողը հարստության համընդհանուր մարմնացում է: Դա է ստիպում մարդկանց փող կուտակել: Այս դեպքում փողը դուրս է գալիս շրջանառությունից և վերածվում է խնայողության կամ գանձի: Գանձի դերում փողերը պետք է լինեն լիարժեք և իրական:

**Փողը՝ որպես վճարման միջոց:** Ապրանքները միշտ չէ, որ իրացվում են կանխիկ վճարումով: Դրանք կարող են վաճառվել վճարման հետաձգումով, և այդ դեպքում շրջանառության միջոցի դեր են խաղում պարտքային պարտավորությունները, օրինակ՝ մուրհակը: Պարտավորությունները մարելիս փողը վճարման միջոցի գործառույթ է կատարում:

**Համաշխարհային փող:** Համաշխարհային փողի գործառույթը դրսևորվում է միջազգային առևտրում և ֆինանսական գործարքներում: Փողն այս դեպքում իրականացնում է վերը նշված բոլոր գործառույթները, բայց՝ համաշխարհային ոլորտում:

**Շրջանառության մեջ փողի քանակը և պետությունը:** Շրջանառության մեջ փողի քանակը վերահսկում է պետությունը, որը փողի արժեքի հարաբերական կայունության գլխավոր երաշխավորն է: Շրջանառության մեջ փողի քանակի ավելացումը կարող է նվազեցնել նրա միավորի գնողունակությունը: Դա վերաբերում է փողի բոլոր տեսակներին: Քանի որ մասնավոր բանկերի ապակենտրոնացված համակարգն ապահովագրված չէ չեկային փողերի մեծ քանակի թողարկումից, գոյություն ունի պետական վերահսկողություն: Ինֆլացիայի հիմնական պատճառներից է փողի առաջարկի անհիմն մեծացումը: Դա կանխելու համար անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ դրամավարկային և ֆիսկալ քաղաքականություններ:

**Շրջանառության մեջ փողի քանակը (Մարքսի տեսություն):** Փողի քանակը պայմանավորող գործոններն են՝

1. շուկայում իրացված ապրանքների քանակը,

2. ապրանքների գների մակարդակը,
3. փողի շրջանառության արագությունը:

Առաջին երկու գործոնները կարելի է արտահայտել որպես «ապրանքների գների գումար». այն իրենից ներկայացնում է թողարկված ապրանքների քանակի և դրանց գների արտադրյալների գումարը: Երրորդ գործոնը՝ փողի շրջապտույտի արագությունը, չափվում է միանիշ դրամական միավորների պտույտների թվով՝ որոշակի ժամանակահատվածում, սովորաբար՝ մեկ տարում: Քանի որ միևնույն փողը սպասարկում է շատ ապրանքների առք ու վաճառքը, ապա շրջանառության մեջ փողի քանակն ավելի քիչ է, քան ապրանքների գների գումարը:

Շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակը հավասար է ապրանքների գների գումարի և փողի միավորի՝ 1 տարվա ընթացքում կատարած պտույտի քանակի հարաբերությանը:

Ասվածից հետևում է, որ շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակն ուղիղ համեմատական է իրացված ապրանքների քանակին ու գնին և հակադարձ համեմատական է փողի շրջանառության արագությանը: Երբ ապրանքները վաճառվում են ապառիկ, ապա շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակը կնվազի: Այս դեպքում շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակը հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$\Phi P = \frac{(ԻԱԳ-Ա+Վ-ՓՄ)}{V}, \text{ որտեղ՝}$$

ՓՔ-ն՝ շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակն է,  
 ԻԱԳ-ն՝ իրացված ապրանքների և ծառայությունների գների գումարն է,  
 Ա-ն՝ ապառիկ վաճառված ապրանքների գների գումարն է,  
 Վ-ն՝ վճարումների գումարն է (այն ապրանքների, որոնց վճարման ժամկետն արդեն լրացել է),

ՓՄ-ն՝ փոխադարձաբար մարվող վճարումներն են,

V-ն՝ փողի շրջանառության արագությունն է:

***Ի. Ֆիշերի՝ փողի քանակական տեսությունը:***

Ի. Ֆիշերի՝ փողի քանակական տեսության հիմնական գաղափարն այն է, որ փողի արժեքը հակադարձ կախվածության մեջ է դրա քանակից, այ-

---

սինքն՝ ինչքան շատ է փողի քանակը շրջանառության մեջ, այնքան փողը է դրանց արժեքը:

Ի. Ֆիշերը փորձեց մաթեմատիկորեն հիմնավորել փողի քանակական տեսությունը «փոխանակության հավասարման» միջոցով  $MV=PQ$ , որտեղ՝  $M$ -ը շրջանառող փողի քանակն է,  $V$ -ն՝ փողի միավորի շրջանառության արագությունն է,  $P$ -ն՝ ապրանքային գների մակարդակն է,  $Q$ -ն՝ ապրանքների ծավալը: Այստեղից՝  $M=PQ/V$ :

Այս տեսության կողմնակիցների կարծիքով՝ շրջանառության մեջ կարող է ընդգրկվել ցանկացած քանակի փող. ինչքան մեծ լինի փողի քանակը, այնքան ցածր կլինի դրա գնողունակությունը: Քանակական տեսությունը պնդում է, որ գների մակարդակը որոշվում է փողի քանակով: Իրականում պատճառահետևանքային կապը հակառակն է. ապրանքների արժեքների տվյալ մակարդակի դեպքում գների մակարդակը հակադարձ կապի մեջ է փողի արժեքից, իսկ փողի քանակը շրջանառության մեջ ուղղակի կախվածության մեջ է ապրանքների գներից:

***Փողի կանոնն է՝ լինել շարժման մեջ:***

Փողը պետք է գտնվի անընդհատ շարժման մեջ, իսկ շարժումը միշտ տեղի է ունենում ժամանակի և տարածության մեջ: Այստեղից էլ այն թևավոր արտահայտությունը, որ «ժամանակը փող է»: Երկար ժամանակ անգործ պահել փողը՝ կնշանակի զրկվել լրացուցիչ եկամտից, տոկոսից, շահաբաժնից: Խնայողություն կարելի է կատարել միայն կայուն տնտեսության պայմաններում: Եթե գները կայուն չեն, ապա ձեռնտու չէ դրամը «բարձի տակ» պահելը: Այս դեպքում փողը չի իրականացնում իր գործառույթները: Դրամական համակարգի գործունեությունը շուկայական տնտեսության հետազոտողների ուշադրության կենտրոնում է:

**Համառոտ եզրակացություններ**

1. Բնատնտեսային արտադրության պայմաններում մարդիկ բարիքներ են արտադրել անձնական պահանջումների բավարարման համար՝ առանց շուկային դիմելու, ավելի ճիշտ՝ շուկա չկար, և փոխանակության սովորություն էլ ընդունված չէր: Արտադրությունը հիմնված էր անձնական աշխատանքի վրա, երբ աշխատանքի հասարակական բաժանումն ու ար-

---

տաղիության մասնագիտացումը բացակայում էին, և մարդը կարող էր կատարել, լավ թե վատ, բոլոր աշխատանքները և ստացված արդյունքներով բավարարել իր և իր ընտանիքի պահանջմունքները (ինչը մաքուր տեսքով հանդես է եկել նախնադարյան ազգերի մոտ):

2. Ապրանքը աշխատանքի արդյունքն է, որը մարդու համար ունի օգտակարություն և նախատեսված է փոխանակման համար:

3. Ապրանքի՝ մարդկային այս կամ այն պահանջմունքը բավարարելու հատկությունը կոչվում է սպառողական արժեք:

4. Ապրանքի՝ այս կամ այն համամասնությամբ այլ ապրանքների հետ փոխանակվելու հատկությունը կոչվում է փոխանակային արժեք:

5. Փողը հանընդհանուր համարժեքի գործառույթ կատարող յուրահատուկ ապրանք է:

6. Փողի գործառույթներն են՝ արժեչափի, շրջանառության միջոցի, կուտակման միջոցի, վճարման միջոցի, համաշխարհային փողի:

### ***Ինքնաստուգման հարցեր***

- 1. Ինչպե՞ս է բնութագրվում բնատնտեսային արտադրությունը:*
- 2. Ինչպե՞ս է բնութագրվում ապրանքային արտադրությունը:*
- 3. Ի՞նչ է ապրանքը:*
- 4. Ի՞նչ հատկություններ ունի ապրանքը:*
- 5. Ի՞նչն է ընկած ապրանքի արժեքի հիմքում:*
- 6. Ի՞նչ է փողը:*
- 7. Փողի ի՞նչ տեսակներ կան:*
- 8. Ի՞նչ գործառույթներ է կատարում փողը:*

---

### ԹԵՄԱ 3. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* բնութագրել արտադրության ռեսուրսները, գործոնները և հասարակական արտադրության փուլերը:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

- ա. ներկայացնել տնտեսական ռեսուրսները,
- բ. բնութագրել արտադրության էությունը,
- գ. ներկայացնել արտադրության ռեսուրսներ-գործոններ-եկամտի տեսակներ կապը,
- դ. մեկնաբանել արտադրությունը բնութագրող հասկացությունները,
- ե. սահմանել, թե ինչ է աշխատանքի արտադրողականությունը,
- զ. բնութագրել հասարակական արտադրության փուլերը,
- է. բնութագրել վերարտադրության էությունը և տեսակները,
- ը. բացատրել արտադրական հնարավորությունների կորի էությունը:

#### Հարց 1. Տնտեսական ռեսուրսները և դրանց տեսակները

Տնտեսական ռեսուրսները հազվագյուտ են և սահմանափակ: Տնտեսական ռեսուրսների սուղ լինելը նշանակում է, որ որոշ ռեսուրսների պաշարն ավելի քիչ է, քան պահանջվում է տնտեսական բարիք արտադրելու համար:

**Տնտեսական ռեսուրսներն** այն պոտենցիալ հնարավորություններն են, որոնք հասարակությունն ունի իր տրամադրության տակ տվյալ պահին, այսինքն՝ արտադրության ապահովման բոլոր միջոցները, որոնք օգտագործվում են նոր բարիքների և ծառայությունների ստեղծման ընթացքում:

Տնտեսական ռեսուրսները ստորաբաժանվում են հետևյալ տեսակների՝ բնական, աշխատանքային, նյութական, ֆինանսական և տեղեկատվական:

**Բնական ռեսուրսներն** են՝ հողը, նրա ընդերքը, անտառները, ջուրը, օդը, օգտակար հանածոները, և այլն:

---

**Աշխատանքային ռեսուրսները** մարդկանց ֆիզիկական և մտավոր ունակություններն են, որոնք նրանք օգտագործում են նյութական բարիքներ և ծառայություններ ստեղծելիս:

**Նյութական ռեսուրսները** (ներդրումային ռեսուրսներ, իրական կապիտալ) արտադրության միջոցներն են (մեքենաներ, հաստոցներ, սարքավորումներ, շենքեր, հումք, նյութեր և այլն), որոնք օգտագործվում են ապրանքների և ծառայությունների արտադրության մեջ: Իրական կապիտալն իր մեջ ներառում է հիմնական և շրջանառու միջոցները: Հիմնական միջոցներն օգտագործվում են մի քանի արտադրական պարբերաշրջանների ընթացքում, իսկ շրջանառու միջոցները՝ մեկ արտադրական պարբերաշրջանում:

**Ֆինանսական ռեսուրսները** դրամական ռեսուրսների այն ամբողջությունն են, որոնք կարող են օգտագործվել որևէ խնդիր լուծելու և ապրանքների ու ծառայությունների արտադրության կազմակերպման համար:

**Տեղեկատվական ռեսուրսները** գիտատեխնիկական հեղափոխության ծնունդ են: Դրանք ձեռնարկություններին ապահովում են արժեքավոր տեղեկատվությամբ, որն օգտագործվում է արտադրական գործունեությունում՝ համակարգչային տեխնոլոգիաների օգնությամբ:

## **Հարց 2. Արտադրության հիմնական գործոնները**

Մարդկանց տնտեսական պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ է արտադրություն, իսկ արտադրական գործընթացի համար անհրաժեշտ են արտադրության գործոններ:

**Արտադրության գործոնները** արտադրության միջոցներն են, որոնք օգտագործվում են տնտեսական բարիքների հասարակական արտադրության մեջ:

Արտադրության գործոնները տնտեսական ռեսուրսների մի մասն է, որն իրականում ներգրավված է տնտեսական բարիքների արտադրության մեջ:

Ժամանակակից տնտեսագետների կարծիքով՝ գոյություն ունի արտադրության 4 հիմնական գործոն՝ հող, աշխատանք, կապիտալ, ձեռնարկատիրություն:

---

**Յոդ** ասելով, որպես արտադրության գործոն, նկատի են առնվում բնական ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են տնտեսական բարիքների (ապրանքների և ծառայությունների) արտադրության համար:

**Աշխատանքը** մարդու նպատակասլաց գործունեությունն է՝ ուղղված տնտեսական բարիքների ստեղծմանը: Աշխատանքը, որպես արտադրության գործոն, մարդու ընդունակությունների իրացումն է՝ ուղղված արտադրական գործունեությանը, որի ժամանակ նա ֆիզիկական և մտավոր ուժեր է ծախսում, որպեսզի գործողության մեջ դնի արտադրության մյուս գործոնները:

**Կապիտալը**՝ որպես արտադրական գործոն, հիմնական և շրջանառու կապիտալի հանրագումարն է: Հիմնական կապիտալը արտադրական կապիտալի մի մասն է, որը բազում անգամներ է մասնակցում ապրանքների արտադրությանը և իր արժեքը փոխանցում է պատրաստի արդյունքին մասնա (իր մաշվածության չափով) մի շարք շրջապտույտների ընթացքում (շենք, շինություններ, մեքենաներ, սարքավորումներ): Շրջանառու կապիտալը արտադրական կապիտալի մի մասն է, որի արժեքը ամբողջովին փոխանցվում է արտադրված ապրանքին և դրամական ձևով վերադառնում՝ դրա իրացումից հետո (դրամական միջոցներ, հումք, նյութեր և այլն):

**Ձեռներեցությունը** հանդես է գալիս որպես աշխատանքային ռեսուրսների մի տարատեսակ՝ արտադրության մեջ ունեցած իր հատուկ՝ ռեսուրսային դերի պատճառով: Ձեռներեցն իր վրա է վերցնում բոլոր 3 գործոնների (հող, կապիտալ, աշխատանք) միացումը մեկ միասնական արտադրության գործընթացի մեջ: Ձեռներեցն իր վրա է վերցնում տնտեսական բարիքների արտադրության գործընթացում որոշումներ ընդունելու խնդիրը: Նա համարվում է նորարար: Արտադրություն է ներմուծում նոր, ժամանակակից տեխնոլոգիաներ, արտադրության կազմակերպման նոր ձևեր: Ձեռներեցը ռիսկի է դիմում շուկայական տնտեսության պայմաններում:

Արտադրության գործոն են նաև տեղեկատվությունը և գիտությունը:

**Տեղեկատվությունը**՝ որպես արտադրության գործոն, յուրաքանչյուր ռեսուրսի ստեղծման, պահպանման, փոխանցման, օգտագործման և՛ պրոցեսն է, և՛ օբյեկտը, որը նպաստում է համապատասխան տնտեսական որոշումների մշակմանը:

---

**Պիտությունը**՝ որպես արտադրության գործոն, ստեղծում է նորամուծություններ:

Ոչ մի գործոն առանձին վերցրած չի կարող արտադրանք ստեղծել և եկամուտ բերել: Այսինքն, արտադրության գործընթացը ենթադրում է բոլոր գործոնների փոխներգործություն: Մաթեմատիկորեն այդ կախվածությունն արտահայտվում է հետևյալ կերպ՝

$$Q=f(a_1a_2...a_n),$$

որտեղ  $Q$  - թողարկված արտադրանքի ծավալն է,

$f$  - ֆունկցիա է,

$a_1a_2...a_n$  - արտադրության գործոններն են:

Թողարկված արտադրանքի ծավալը կախված է արտադրության համար օգտագործված գործոններից և դրանց համադրությունից: Քանի որ հնարավոր է գործոնների տարբեր համակցությունների օգտագործումը, կնշանակի, որ կա մի տարբերակ, որի դեպքում կարելի է հասնել դրանց օպտիմալ համամասնությանը: Հետևաբար՝ արտադրական ֆունկցիան մի տեխնիկական հարաբերակցություն է, որն արտահայտում է արտադրության ամբողջական ծախքերի և առավելագույն թողարկման միջև եղած կապը:

Պետք է նշել նաև, որ արտադրության գործոններից յուրաքանչյուրը բերում է եկամուտ: Այսպես՝ աշխատանք գործոնի բերած եկամուտը կոչվում է աշխատավարձ, հողը բերում է եկամուտ ռենտայի, կապիտալը՝ տոկոսի, իսկ ձեռնարկատիրությունը՝ շահույթի տեսքով:

### **Հարց 3. Հասարակական արտադրությունը և նրա փուլերը**

**Արտադրությունը** մարդու և հասարակության գոյության ու զարգացման համար անհրաժեշտ բարիքների (ապրանքներ և ծառայություններ) ստեղծման գործընթացն է:

Արտադրության գործընթացը ներառում է մի քանի հիմնական տարրեր՝ աշխատանք, աշխատանքի միջոցներ, աշխատանքի առարկաներ:

Ցանկացած հասարակության մեջ արտադրության գործընթացի հիմքը կազմում է աշխատանքը: Տնտեսական բարիքների ստեղծումը, որը կոչված է բավարարելու մարդու բազմաբնույթ պահանջումները, ենթա-

---

դրում է արտադրական գործունեություն, որի ընթացքում ձևափոխվում են բնության առարկաները (իրերը): Բնությունը պատրաստի վիճակում չի տալիս այն ամենը, որն անհրաժեշտ է մարդու պահանջներին անմիջական բավարարման համար: Այդ ամենը մարդը ձեռք է բերում արտադրության գործընթացում:

Աշխատանքը մարդու գիտակցված, նպատակաուղղված գործունեությունն է, որի ընթացքում մարդիկ ձևափոխում են բնության առարկաները և հարմարեցնում դրանք իրենց պահանջներին բավարարմանը:

Աշխատանքի առարկան այն է, ինչին ուղղված է մարդու աշխատանքը: Աշխատանքի միջոցները այն իրերն են կամ իրերի համակցությունը, որոնց օգնությամբ մարդն ազդում է աշխատանքի առարկաների վրա (աշխատանքի գործիքներ, մեքենաներ, սարքավորումներ և այլն, ինչպես նաև շենքեր և շինություններ):

Հասարակության համար օրինաչափ են համարվում մարդկանց համատեղ գործունեությունը և այդ գործունեության արդյունքների փոխանակումը նրանց միջև՝ տնտեսական բարիքների արտադրության բաշխման, փոխանակման և սպառման ընթացքում: Հասարակական արտադրության գործընթացը կատարում է շրջապտույտ, որը ստորաբաժանվում է փուլերի՝ *արտադրություն, բաշխում, փոխանակում և սպառում*:

Ելակետային է հանդիսանում արտադրությունը, որի ընթացքում տեղի է ունենում տնտեսական բարիքների (նյութական բարիքների ու ծառայությունների) անմիջականորեն ստեղծումը, որն անհրաժեշտ է մարդու գոյության և զարգացման համար: Արտադրությունը ցանկացած տնտեսության հիմնաքարն է:

Բաշխումը որոշում է յուրաքանչյուր մարդու փայաբաժինը արտադրված արդյունքի մեջ: Այն կախված է ստեղծված բարիքների ընդհանուր քանակությունից և առանձին տնտեսավարող սուբյեկտի կոնկրետ ներդրումից արտադրության մեջ:

Բաշխման ձևերն են՝ աշխատավարձը, ռենտան, տոկոսը, շահույթը, և այլն:


Շրջապտույտի երրորդ փուլը փոխանակությունն է, որն ընդգրկում է կապերի և հարաբերությունների համակարգ, որը թույլ է տալիս արտադրողներին միմյանց հետ փոխանակել իրենց աշխատանքի արդյունքները:

րը, այսինքն՝ տնտեսական բարիքների և ծառայությունների՝ մի սուբյեկտից մյուսին շարժման գործընթացն է:

Սպառումը ստեղծված տնտեսական բարիքների օգտագործումն է՝ մարդկանց և հասարակության տարբեր պահանջմունքների բավարարման համար: Այն կարող է լինել անձնական (սնունդ, հագուստ, կոշիկ և այլն) և արտադրական (հաստոցներ, մեքենաներ, սարքավորումներ և այլն):

Սպառումը տնտեսական բարիքների շրջապտույտի եզրափակիչ փուլն է: Այդ ժամանակ օգտակար իրերը անհետանում են սպառման ընթացքում և անհրաժեշտ է դրանք նորից արտադրել: Այսպիսով, տնտեսական բարիքների շրջապտույտը, որն սկսվում է արտադրությունից, անխուսափելիորեն վերադառնում է ելման դիրքին:

Տնտեսական բարիքների շրջապտույտի բոլոր փուլերը հասարակական արտադրության մեջ փոխգործակցության մեջ են և փոխադարձաբար կախված են միմյանցից (գծանկար 3):



**Գծանկար 3. Տնտեսական բարիքների շրջապտույտի հիմնական փուլերը**

Ցանկացած սոցիալ-տնտեսական համակարգում ողջ հասարակական արտադրությունը բաժանվում է նյութական և ոչ նյութական արտադրության:

**Նյութական արտադրություն** ասելով հասկանում ենք արտադրություն, որի արդյունքը նյութական հիմք ունի:

Նյութական բարիքների արտադրությանն են վերաբերում հետևյալ ճյուղերը՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, շինարարությունը, ջրային տնտեսությունը: Նյութատեխնիկական ծառայությունների

---

ուղորտին են վերաբերում էներգատնտեսությունը, տրանսպորտը, կապը, առևտուրը, կոմունալ տնտեսությունը, կենցաղ-սպասարկումը:

Արտադրության միջոցներ և սպառման առարկաներ արտադրող ճյուղերը համարվում են բազային: Դրանց զարգացումից են կախված ազգային տնտեսության բոլոր ճյուղերը:

***Ոչ նյութական արտադրությունը*** (ոչ արտադրական ուղորտը) ճյուղերի խումբ է (համակցություն), որը, որպես կանոն, չի արտադրում անմիջականորեն շոշափելի նյութական արժեքներ:

Ոչ արտադրական ծառայությունների արտադրությունը տեղեկատվական նյութերի հավաքումն ու մշակումն է, արտադրության կառավարումը, արտադրության ֆինանսական սպասարկումը, առողջապահությունը, կրթությունը, մշակույթը, արվեստը, գիտությունը, թատրոնը, բնակ-կենցաղային սպասարկումը:

***Վերարտադրությունը*** արտադրության գործընթացի կրկնությունն է: Տարբերում են վերարտադրության երկու տեսակ՝ պարզ (արտադրության ամենամյա կրկնությունը անփոփոխ չափերով) և ընդլայնված (թողարկվող բարիքների ծավալի մեծացում):

Պարզ վերարտադրությունը տնտեսական բարիքների արտադրության անընդմեջ կրկնվող գործընթացն է՝ անփոփոխ չափերով: Այն բնորոշ է մինչևինդուստրիալ տնտեսությանը, որտեղ գերակշռում էր ձեռքի աշխատանքի վրա հիմնված գյուղատնտեսական և արհեստավորական արտադրությունը:

Ընդլայնված վերարտադրությունը տնտեսական բարիքների անընդմեջ արտադրության գործընթացն է՝ ավելացված (մեծացված) չափերով: Ընդլայնված վերարտադրությունը բնորոշ է ինդուստրիալ արտադրությանը, որը հիմնված է գիտատեխնիկական առաջընթացի անընդմեջ ներդրման վրա:

Ժամանակակից աշխարհում գոյություն ունի ընդլայնված վերարտադրություն՝ արտադրության տնտեսական աճի 2 տիպերով՝ ինտենսիվ և էքստենսիվ:

Արտադրության տնտեսական աճի ինտենսիվ տիպը ենթադրում է նյութական բարիքների և ծառայությունների իրական արդյունքների ավելացում՝ արտադրության բոլոր գործոնների որակական կատարելագործման հաշվին:

---

Արտադրության ընդլայնումը հիմնված է արտադրության միջոցների առավել արդյունավետ օգտագործման վրա՝ ի հաշիվ գիտատեխնիկական նորագույն նվաճումների ներդրման:

Արտադրության զարգացման էքստենսիվ տիպն ընթանում է արտադրության իրային և անձնական գործոնների (արտադրության միջոցների և աշխատողների) ուղղակի ավելացման ուղիով:

Վերարտադրության այդպիսի տիպին բնորոշ են տեխնիկական լճացումը, արտադրության աճի ծախսումային բնույթը և դրա արդյունքում՝ բոլոր ռեսուրսների դեֆիցիտը: Էքստենսիվ վերարտադրության դեպքում արտադրության չափերը մեծանում են ի հաշիվ արտադրության աշխատանքային և նյութաիրային լրացուցիչ գործոնների ներգրավման, այսինքն՝ նախկին տեխնիկական հիմքով և աշխատողների նախկին որակավորման մակարդակը պահպանելով: Այլ կերպ՝ ապրանքների և ծառայությունների ամբողջ հավելածը ապահովվում է ծախսերի ավելացման հաշվին: Տնտեսությունը կրում է ծախսային բնույթ, իսկ վերարտադրությունը դառնում է ֆոնդատար և ռեսուրսատար:

Գործնականում արտադրության էքստենսիվ զարգացումը զուտ (մաքուր) ձևով օգտագործվում է շատ հազվադեպ: Որպես կանոն, այն զուգակցվում է ինտենսիվացման հետ՝ ապահովելով տնտեսության համակողմանի զարգացում:

Արտադրության արդյունավետությունը հարաբերակցությունն է արտադրությունից ստացված արդյունքների (ապրանքներ և ծառայություններ) և արտադրության միջոցների ծախսերի միջև:

$$\text{Տնտեսական արդյունավետությունը} = \frac{\text{Արտադրության վերջնական արդյունք}}{\text{Արտադրական գործոնների ծախսեր}}$$

Նյութական արտադրության արդյունավետության մակարդակը որոշվում է աշխատանքի արտադրողականությամբ, ֆոնդիատույցով, շահույթով, եկամտաբերությամբ, ծախսերի հետզնունով և այլ ցուցանիշներով:

Հասարակական արտադրության տնտեսական արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշ է ծառայում հասարակական աշխատանքի արտադրողականության մակարդակը:

---

Աշխատանքի արտադրողականությունը չափվում է տարեկան համախառն ներքին արդյունքի և նյութական արտադրության ճյուղում զբաղված աշխատողների միջին տարեկան թվաքանակի հարաբերությամբ.

$$\text{Աշխատանքի արտադրողականությունը} = \frac{\text{ՀՆԱ}}{\text{աշխատողների միջին տարեկան թվաքանակ}}$$

Հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման արդյունավետության բնութագրման համար ամփոփիչ ցուցանիշ է ծառայում ֆոնդահատույցը: Այն որոշվում է որպես համախառն ներքին արդյունքի և հիմնական արտադրական ֆոնդերի միջին տարեկան արժեքի հարաբերություն:

Շահութաբերության ցուցանիշները բնութագրում են ամբողջ ձեռնարկության աշխատանքի արդյունավետությունը, գործունեության տարբեր ուղղություններից ստացված հասույթը (արտադրական, ձեռնարկատիրական, ներդրումային): Դրանք, ավելի քան շահույթը, լայնորեն են բնութագրում տնտեսության վերջնական արդյունքները, որովհետև իրենց մեծությունը ցույց է տալիս արդյունքի և առկա կամ օգտագործված ռեսուրսների հարաբերակցությունը:

Արտադրական գործունեության շահութաբերությունը համախառն կամ զուտ շահույթի հարաբերությունն է իրացումից ստացված զուտ հասույթի զուևարին:

#### **Հարց 4. Արտադրական հնարավորությունների սահմանները**

Հասարակությունը ձգտում է օգտագործել իր սահմանափակ ռեսուրսներն արդյունավետորեն, այսինքն՝ նա ցանկանում է ստանալ իրեն անհրաժեշտ ապրանքների ու ծառայությունների անհրաժեշտ քանակությունը՝ իր սահմանափակ ռեսուրսների հաշվին: Դրան հասնելու համար հասարակությունը պետք է ապահովի լրիվ զբաղվածություն և արտադրության լրիվ ծավալ:

**Լրիվ զբաղվածություն** իրենից ներկայացնում է բոլոր տնտեսական ռեսուրսների լրիվ օգտագործում: Չպետք է պարապուրդի մատնվեն կապիտալ սարքավորումները: Անհրաժեշտ է ապահովել բոլոր աշխատողների զբաղվածությունը, ով ուզում է և ընդունակ է աշխատելու, և այլև:

---

**Արտադրության լրիվ ծավալը** նշանակում է, որ ռեսուրսները պետք է արդյունավետորեն բաշխել, այսինքն՝ օգտագործել այնպես, որպեսզի դրանք առավել արժեքավոր ավանդ ներդնեն արդյունքի ընդհանուր ծավալի մեջ:

Խնայողության խնդիրը վերլուծելու համար անենք հետևյալ ենթադրությունները.

1. **Արդյունավետություն:** Տնտեսությունը գործում է լրիվ զբաղվածության պայմաններում և հասնում է արտադրության լրիվ ծավալի ապահովման: Տնտեսական արդյունավետությունը համակարգի կողմից իր գործունեության ընթացքում տնտեսական արդյունք ստեղծելու հատկությունն է:


2. **Ռեսուրսների հաստատուն (անփոփոխ) քանակությունը:** Արտադրության եղած գործոնները հաստատուն են:

3. **Անփոփոխ տեխնոլոգիա:** Տեխնոլոգիան արտադրության մեջ կիրառվում է մշտապես, այսինքն՝ վերլուծական աշխատանքների ամբողջ ընթացքում այն մնում է անփոփոխ:

4. **Երկու արդյունք:** Տնտեսությունն արտադրում է միայն երկու տեսակի արդյունք՝ սառնարաններ և հագուստ (զծանկար 4):

5. **Արտադրական հնարավորությունները** դրսևորվում են ապրանքների և ծառայությունների այն առավելագույն քանակով, որը կարող է արտադրվել տվյալ ժամանակահատվածում, տվյալ ռեսուրսներով և տեխնոլոգիաներով: Ընդ որում, եղած ռեսուրսներն օգտագործվում են ամբողջությամբ և արդյունավետ (աղյուսակ 2):

Արտադրական կարողությունների սահմանը (AF) ցույց է տալիս կոնկրետ ապրանքի կամ ծառայության արտադրության առավելագույն կարողությունը՝ տվյալ ռեսուրսների քանակի պայմաններում, որն իր տրամադրության տակ ունի տնտեսությունը: Արտադրական կարողությունների կորի յուրաքանչյուր կետ ներկայացնում է երկու ապրանքների արտադրության ինչ-որ առավելագույն ծավալ: Արտադրական կարողությունների կորից դուրս գտնվող N կետը անհասանելի է ռեսուրսների տվյալ քանակության պայմաններում և արտադրության տվյալ տեխնոլոգիայով: Արտադրական կարողությունների կորից ներս գտնվող M կետը ցույց է տալիս, որ ռեսուրսները թերի են օգտագործվում:



Գծանկար 4. Արտադրական հնարավորությունների կորը

**Աղյուսակ 2.** Հագուստի և սառնարանների արտադրության այլընտրանքային կարողությունները

Հնարավորություն, տարբերակներ	Հագուստ	Սառնարաններ
A	20	0
B	19	1
C	18	2
D	16	3
E	13	4
F	0	5

Աղյուսակից երևում է, որ երկիրը կարող է արտադրել հագուստի և սառնարանների հետևյալ համակցություններից որևէ մեկը՝ 20 միավոր հագուստ և 0 միավոր սառնարան (A կետ), 19 միավոր հագուստ և 1 միավոր սառնարան (B կետ), 18 միավոր հագուստ և 2 միավոր սառնարան (C

---

կետ) և այլն: Համակցությունների այս տարբերակները արտացոլվում են արտադրական հնարավորությունների կորի վրա և ցույց են տալիս արտադրության կազմակերպման հնարավոր սահմանները՝ տրված ռեսուրսների պայմաններում:

Միայն արտադրական կարողությունների կորի վրայի կետերն են առավել արդյունավետ տարբերակները որոշակի ապրանքների և ծառայությունների արտադրության համար՝ առկա ռեսուրսների պայմաններում:

Ցանկացած այլ համակցություն կնշանակի կամ ռեսուրսների թերի օգտագործում (եթե կետն ընկած է կորից ձախ), կամ էլ՝ տրված ռեսուրսներով այդ արդյունքներին հասնելու անհնարինություն (եթե կետը գտնվում է կորից աջ):

Արտադրական հնարավորությունների կորի վերլուծությունից հետևում է, որ ռեսուրսների լրիվ օգտագործման և անփոփոխ տեխնոլոգիայի պայմաններում մի ապրանքի արտադրության ավելացումը բերում է մեկ այլ (ուրիշ) ապրանքի արտադրության չափի կրճատմանը:

Հասարակությունը միայն պետք է ընտրի իրեն անհրաժեշտ համակցությունը: Այդ թվում հարկ կլինի «վճարել» կատարված ընտրության համար՝ չիրականացված (թաքնված) ծախքերի միջոցով:

**Չիրականացված (բաց թողնված) ծախքերն** այն ծախքերն են, որից մենք հրաժարվել ենք երկուսից առավել ցանկալի տարբերակի ընտրություն կատարելիս: Որպեսզի դա ավելի հասկանալի լինի, դիմենք հասարակ օրինակի: Ենթադրենք, թե ուզում էինք ձեռք բերել հեծանիվ, համակարգիչ և Մադրիդ ուղևորվել: Սակայն դրանք բավականացնում է մեկ ցանկություն իրականացնելու համար: Հետաձգելով Մադրիդ ուղևորվելու երազանքը՝ մենք կենտրոնանում ենք հեծանիվ և համակարգիչ ձեռք բերելու միջև կատարվող ընտրության վրա: Եթե որոշենք ձեռք բերել հեծանիվ, ապա համակարգիչն էլ կլինի նրան փոխարինող ծախսը:

Հետևաբար, փոխարինող ծախքերը ընտրության գինն է, կամ բաց թողնված հնարավորության օգուտն է՝ արտադրական այլընտրանքը փոխելու դեպքում: Դա որոշվում է այն բարիքների արժեքով կամ քանակով, որոնք զոհաբերվել են ուրիշ (այլընտրանքային) բարիքներ ընտրելու համար: Վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր հաջորդ ապրանք արտադրելու համար անհրաժեշտ է լինում գնալով ավելի մեծ թվով ուրիշ

---

ապրանքներ զոհաբերել, այսինքն՝ սկսում է գործել փոխարինող ծախքերի աճման օրենքը:

Այստեղից էլ բխում է փոխարինող ծախքերի օրենքը (բաց թողնված հնարավորությունների, լրացուցիչ ծախսերի), որն արտացոլում է շուկայական տնտեսության հատկանիշը, համաձայն որի որևէ ապրանքի յուրաքանչյուր լրացուցիչ միավոր ստանալու համար հարկ է լինում վճարել ավելի ու ավելի մեծ թվաքանակով ուրիշ ապրանքների կորստի գնով, այսինքն՝ բաց թողնված (կորցրած) հնարավորությունների ավելացումով:

Սրա հետ մեկտեղ գործում է արտադրության գործոնների նվազող հատույցի օրենքը, ըստ որի՝ մի ռեսուրսի անընդմեջ ավելացումը (մեծացումը), մյուս ռեսուրսների անփոփոխ քանակության զուգակցումով, որոշակի փոխում հանգեցնում է դրա հատույցի աճի դադարեցմանը, իսկ այնուհետև՝ դրա կրճատմանը:

Օրենքը հիմնվում է առանձին գործոնների միջև որոշակի համամասնությունների պահպանման անհրաժեշտության վրա, որոնք առաջացել են արդյունքի արտադրության ընթացքում՝ դրանց փոխադարձ փոխարինելիության բացակայության հիմքի վրա: Համամասնությունների խախտումը, որն արտահայտվում է ռեսուրսներից որևէ մեկի չափից ավելի կիրառման աճով, կարող է բավականին արագ կերպով ջնջել ռեսուրսների փոխադարձ փոխարինելիության սահմանները և վերջին հաշվով կբերի դրա օգտագործման արդյունավետության վերացմանը:

### **Համառոտ եզրակացություններ**

1. Տնտեսական ռեսուրսներն այն պոտենցիալ հնարավորություններ են, որոնք հասարակությունն ունի իր տրամադրության տակ տվյալ պահին, այսինքն՝ արտադրության ապահովման բոլոր միջոցները, որոնք օգտագործվում են նոր բարիքների և ծառայությունների ստեղծման ընթացքում: Տնտեսական ռեսուրսները ստորաբաժանվում են հետևյալ տեսակների՝ բնական, աշխատանքային, նյութական, ֆինանսական և տեղեկատվական:

2. Արտադրության գործոնները արտադրության միջոցներն են, որոնք օգտագործվում են տնտեսական բարիքների հասարակական արտադրու-

---

թյան մեջ: Արտադրության գործոնները տնտեսական ռեսուրսների մի մասն է, որն իրականում ներգրավված է տնտեսական բարիքների արտադրության մեջ:

3. Արտադրության հիմնական գործոններն են՝ հող, աշխատանք, կապիտալ, ձեռնարկատիրություն, տեղեկատվություն, գիտություն:

4. Հասարակական արտադրության գործընթացը կատարում է շրջապտույտ, որը ստորաբաժանվում է փուլերի՝ արտադրություն, բաշխում, փոխանակում և սպառում:

5. Վերարտադրությունը արտադրության գործընթացի կրկնությունն է: Տարբերում են վերարտադրության երկու տեսակ՝ պարզ (արտադրության ամենամյա կրկնությունը՝ անփոփոխ չափերով) և ընդլայնված (թողարկվող բարիքների ծավալի մեծացում):

6. Աշխատանքի արտադրողականությունը չափվում է տարեկան համախառն ներքին արդյունքի և նյութական արտադրության ճյուղում զբաղված աշխատողների միջին տարեկան թվաքանակի հարաբերությամբ:

7. Արտադրական հնարավորությունների կորը ցույց է տալիս կոնկրետ ապրանքի կամ ծառայության արտադրության առավելագույն կարողությունը տվյալ ռեսուրսների քանակության պայմաններում, որն իր տրամադրության տակ ունի տնտեսությունը: Արտադրական կարողությունների կորի յուրաքանչյուր կետ ներկայացնում է երկու ապրանքների արտադրության ինչ-որ առավելագույն ծավալ: Արտադրական կարողությունների կորից դուրս գտնվող կետը անհասանելի է ռեսուրսների տվյալ քանակության պայմաններում և արտադրության տվյալ տեխնոլոգիայով: Արտադրական կարողությունների կորից ներս գտնվող կետը ցույց է տալիս, որ ռեսուրսները թերի են օգտագործվում:

---

### *Ինքնաստուգման հարցեր*

- 1. Ի՞նչ է տնտեսական ռեսուրսը: Տնտեսական ի՞նչ ռեսուրսներ գիտեք:*
- 2. Ի՞նչ է արտադրության գործոնը:*
- 3. Որո՞նք են արտադրության հիմնական գործոնները:*
- 4. Ի՞նչ է արտադրությունը:*
- 5. Որո՞նք են հասարակական արտադրության հիմնական փուլերը:*
- 6. Ի՞նչ է վերարտադրությունը:*
- 7. Ի՞նչ տարբերություն կա պարզ և ընդլայնված վերարտադրության միջև:*
- 8. Ի՞նչ է աշխատանքի արտադրողականությունը:*
- 9. Ինչո՞ւ է արտադրության ինտենսիվ աճը տարբերվում էքստենսիվ աճից:*
- 10. Ի՞նչ է ցույց տալիս արտադրական հնարավորությունների կորը:*
- 11. Ո՞րն է բաց թողնված ծախսերի էությունը:*

---

## ԹԵՄԱ 4. ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

ա. ներկայացնել շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալները և շուկայի հիմնական տարրերը,

բ. ներկայացնել շուկայի գործառույթները հասարակական կյանքում և հիմնական սկզբունքները,

գ. բացատրել շուկայական տնտեսության առավելությունները և թերությունները,

դ. ներկայացնել շուկայական ենթակառուցվածքը և դրա տարրերը,

ե. ներկայացնել սեփականության ձևերը և դերը տնտեսական հարաբերությունների համակարգում,

զ. ներկայացնել պետության դերը շուկայական կառուցվածքի ձևավորման և զարգացման գործում:

### **Չարք 1. Շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալները և շուկայի հիմնական տարրերը**

Շուկան հարաբերությունների այն ոլորտն է, որտեղ ծավալվում է տնտեսավարող սուբյեկտների և հասարակության անդամների գործունեությունը՝ կապված ապրանքների և ծառայությունների արտադրության և իրացման հետ:

Շուկան բազմակողմ է, ուստի պետք է ուսումնասիրել տարբեր տեսանկյունից: Քննարկենք մի քանիսը.

1. Առք ու վաճառքի տեսանկյունից՝ շուկան դիտարկվում է որպես առաջարկի և պահանջարկի, արտադրողի և սպառողի փոխներգործության բնագավառ:

2. Տնտեսության կազմակերպման տեսանկյունից՝ շուկան տնտեսագիտության գործունեության հասարակական ձև է:

3. Շուկայի մասնակիցների տեսանկյունից՝ շուկան բնորոշվում է որպես տնտեսավարող սուբյեկտների հասարակական հարաբերության ձև:

---

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ շուկան կազմակերպատնտեսական հարաբերությունների ամբողջություն է, որն իրականացվում է վերարտադրության բոլոր փուլերում՝ արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման, առք ու վաճառքի միջոցով:

Շուկայական հարաբերությունների ծագման **առաջին** պայմանն աշխատանքի հասարակական բաժանումն ու մասնագիտացումն է:

Մարդկանց առանձին խմբեր զբաղվում են տնտեսական գործունեության ամենաբազմազան ձևերով, այսինքն՝ մասնագիտանում են այս կամ այն ապրանքի, ծառայության արտադրության մեջ, որը վաղուց դուրս է եկել մեկ երկրի սահմաններից և վերածվել համաշխարհային տնտեսության զարգացման օբյեկտիվ օրինաչափության, ինչը աստիճանաբար ավելի է խորանում և դառնում բազմաձև: Դա բացատրվում է համեմատական առավելության օրենքի գործողության պահանջներով, ինչի շնորհիվ փոխանակությունը, ինչպես երկրի ներսում, այնպես էլ համաշխարհային մասշտաբով, դառնում է փոխշահավետ:

Շուկայական հարաբերությունների **երկրորդ** պայմանը սեփականության տարբեր ձևերի կամ բազմասեփականության առկայությունն է: Բազմասեփականությունը ձևավորում է շուկայական հարաբերությունների գոյության **երրորդ** անհրաժեշտ պայմանը՝ տնտեսավարող սուբյեկտների ինքնավարությունն ու ազատությունը: Ազատ տնտեսական գործունեությունն ու ինքնուրույնությունը ենթադրում են շուկայական հարաբերություններ, քանի որ ազատ գործող տնտեսական սուբյեկտների միջև կապի այլ հնարավորություն չի կարող:

Շուկայական հարաբերությունների անհրաժեշտ պայման է նաև մրցակցությունը, որը ոչ թե հետևանք է, այլ շուկայական հարաբերությունների ծավալման և զարգացման շարժիչ խթան: Մրցակցության դերն ավելի մեծ է համաշխարհային տնտեսության մասշտաբով, որտեղ ավելի ուժգին են բախվում խոշոր միավորումները կամ երկրները, և դրանցից յուրաքանչյուրը ձգտում է ընդգծել իր դերը միջազգային շուկայում:

Շուկայական գործընթացի կամ տնտեսավարման տարրերն են *պահանջարկը, առաջարկը, գինը և ազատ մրցակցությունը*, որոնք գործում են փոխադարձ կապի և միասնության մեջ: Համառոտ ներկայացնենք դրանց էության և գործողության մեխանիզմը:

---

Պահանջարկ է կոչվում վճարունակ պահանջումները, այսինքն՝ այն պահանջումները, որոնց դիմաց սպառողը կարող է վճարել: Այլ խոսքով՝ պահանջարկն ապրանքների այն քանակությունն է, որը սպառողները պատրաստ են ձեռք բերել որոշակի գնով:

Առաջարկն ապրանքների այն քանակությունն է, որը վաճառողները պատրաստ են վաճառել որոշակի գնով:

Ըստ արժեքի աշխատանքային տեսության՝ գինն ապրանքի արժեքի դրամական արտահայտությունն է: Գնի կառուցվածքում գլխավոր տարրը արտադրության ծախքերն են, իսկ մյուս տարրը շահույթն է:

Շուկայում տվյալ պահին ծախսերը կայուն մեծություն են, իսկ շահույթը տատանվող է՝ կախված սահմանված գնի մեծությունից, ինչը ձևավորվում է պահանջարկի և առաջարկի փոխհարաբերակցությունից: Շուկայում ձևավորվում է հավասարակշռված գին, որի դեպքում ապրանքի նկատմամբ առաջարկը հավասար է դրա նկատմամբ պահանջարկին: Հավասարակշռված գնի դեպքում ողջ ապրանքը վաճառվում է՝ բավարարելով ընթացիկ պահանջարկը:

Մրցակցությունը շուկայական տնտեսավարման մասնակիցների միջև առաջացած այն տնտեսական հարաբերություններն են, որոնք ցույց են տալիս շուկայում առք ու վաճառքի բարենպաստ պայմաններ ձեռք բերելու և մրցակիցներին հաղթելու նպատակով տվյալ սուբյեկտի դրսևորած վարքագիծը:

Տնտեսական շահույթը հուշում է արտադրողներին, թե հասարակությունն ավելի շատ որ արտադրանքից է պահանջում: Հենց մրցակցությունն է նպաստում արտադրության ընդլայնմանը և գների իջեցմանը մինչև այն մակարդակը, որը համապատասխանում է արտադրության ծախքերի և շահույթի մակարդակին:

Շուկայի ինքնակարգավորման մեխանիզմը գործում է գների փոփոխման միջոցով: Հավասարակշռված մակարդակից գների բարձրացումը հանգեցնում է շուկայի՝ ապրանքներով գերհագեցման, ապրանքային պաշարների ավելացման և չիրացված արտադրանքի կուտակման: Սա ստիպում է վաճառողներին իջեցնել գինը մինչև հավասարակշռված մակարդակ, որի դեպքում ապրանքն ամբողջությամբ կարող է իրացվել: Ապրանքի գնի իջեցումը հանգեցնում է գնորդների թվի ավելացման: Այդ դեպքում

---

առաջանում է ապրանքների դեֆիցիտ, վաճառողը բարձրացնում է գինը և ավելացնում եկամուտը: Այսպիսով, շուկայի տարերային ուժերն, ազդելով վաճառողների և գնորդների մասնավոր շահերի վրա, ճշգրտում են շուկայական ուժերը՝ մոտեցնելով դրանք հավասարակշռված վիճակի: Շուկայական մեխանիզմը, որը հավասարակշռում է առաջարկը և պահանջարկը, սահմանում է գների հավասարակշռություն, դառնում է զարգացման մեթոդ՝ հիմնված ինքնակարգավորման վրա:

Անհրաժեշտ է նշել, որ այդ մոդելը տիրապետող էր վերջին 200 տարիների ընթացքում, բայց 20-րդ դարում անհրաժեշտություն առաջացավ որոշ չափով միջամտել տնտեսական համակարգի գործունեությանը, և որպես կարգավորիչ հանդես եկավ պետությունը:

## **Չարգ 2. Շուկայի էությունը. շուկաների դասակարգումը**

Շուկան մի վայր է, որտեղ վաճառում և գնում են ապրանքներ (ծառայություններ): Սա շուկայի ամենապարզ և, միաժամանակ, ամենամակերեսային բացատրությունն է: Ներկայումս գոյություն ունեն շուկայի բնորոշման բազմաթիվ ձևեր: Հասարակական արտադրության զարգացմանը զուգընթաց «շուկա» հասկացությունը գնալով ավելի ու ավելի տարողունակ է դառնում և ընկալվում է, ըստ էության, որպես շրջանառության ոլորտի հոմանիշ:

**Շուկան** ապրանքային արտադրության և շրջանառության օրենքներով կազմակերպված փոխանակում է:

Շուկան գիտականորեն բնորոշվում է որպես պայմանների ամբողջություն, որոնց շնորհիվ վաճառվում և գնվում են ապրանքներ (ծառայություններ), միմյանց հետ շփման մեջ են մտնում վաճառողներն ու գնորդները: Մեկ այլ բնորոշման համաձայն՝ շուկան մի իսկական տարածք է, որտեղ փոխգործակցում են այս կամ այն բարիքի (ապրանքներ և ծառայություններ) առաջարկն ու պահանջարկը, և գոյություն ունեն այդ փոխգործակցության տարբեր ձևեր: Մի շարք տնտեսագետներ շուկան դիտարկում են որպես մրցակցային մեխանիզմ, որը կարգավորում է պահանջարկի ու առաջարկի շարժը և արտացոլում դրանց փոխգործակցությունը գների համակարգի միջոցով: Ավելի լայն իմաստով՝ շուկան հասա-

---

րական արտադրության կազմակերպման այնպիսի ձև է, երբ ապրանք արտադրողները կողմնորոշվում են դեպի գնորդի պահանջարկը:

Այսպիսով, շուկան տնտեսական հարաբերությունների ամբողջություն է՝ կապված ապրանքների և ծառայությունների առք ու վաճառքի հետ:

Շուկաները դասակարգվում են ըստ հետևյալ հիմնական հատկանիշների.

**1. *Ըստ առք ու վաճառքի օբյեկտի՝***

- ապրանքների ու ծառայությունների շուկա,
- աշխատուժի շուկա,
- կապիտալի շուկա,
- փողի և արժեթղթերի շուկա,
- ԳՅՓԿԱ և արտոնագրերի շուկա,
- տեղեկատվության շուկա:

**2. *Ըստ սուբյեկտի՝***

- գնորդների շուկա,
- վաճառողների շուկա,
- միջնորդների շուկա,
- պետական կազմակերպությունների շուկա:

**3. *Ըստ տարածքային հայտանիշի՝***

- տեղական,
- տարածաշրջանային,
- ներքին,
- արտաքին,
- ազգային,
- համաշխարհային:

**4. *Ըստ մրցակցության բնույթի՝***

- ազատ մրցակցային,
- մոնոպոլիստական,

- 
- օլիգոպոլիստական:

**5. Ըստ վաճառքների բնույթի՝**

- մանրածախ,
- մեծածախ:

**6. Ըստ շուկայի հագեցվածության՝**

- ավելցուկային,
- հավասարակշռված,
- պակասուրդային,

**7. Ըստ օրինականության աստիճանի՝**

- օրինական,
- անօրինական:

**Չարք 3. Շուկայի գործառույթները**

Շուկան իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.

**1. Միջնորդական գործառույթ:** Շուկան միավորում է տնտեսապես առանձին ապրանք արտադրողներին և սպառողներին միասնական համակարգի մեջ: Տնտեսապես առանձնացված արտադրողները աշխատանքի խորը հասարակական բաժանման պայմաններում պետք է գտնեն իրար, որպեսզի փոխանակեն իրենց գործունեության արդյունքները: Հենց շուկան է համարվում այն վայրը, որի միջնորդությամբ արդյունքը արտադրողից սպառողին է անցնում «արտադրություն-շուկա-սպառող» սխեմայով:

**2. Կարգավորող գործառույթ:** Շուկան հետևում է տնտեսությունում իրականացող փոփոխություններին: Եթե ապրանքի պահանջարկն աճում է, ապա արտադրողները կսկսեն շատ արտադրել, որի արդյունքում գինը կբարձրանա: Շուկայի հագեցումն ապրանքներով կիջեցնի պահանջարկը և համապատասխանաբար՝ գինը: Շուկան իր կարգավորող գործառույթով ազդում է տնտեսության բոլոր ոլորտների վրա, ապահովում է համա-

---

պատասխանություն արտադրության և սպառման, առաջարկի և պահանջարկի միջև ըստ գնի, ծավալի և կառուցվածքի:

**3. Գնագոյացման գործառույթ:** Արտադրողների և սպառողների, այսինքն՝ ապրանքների ու ծառայությունների նկատմամբ պահանջարկի և առաջարկի փոխգործակցության արդյունքում, շուկայում ձևավորվում է այն գինը, որն արտացոլում է ապրանքի օգտակարությունը և արտադրության վրա կատարված ծախքերը:

**4. Տեղեկատվական գործառույթ:** Մշտապես փոփոխվող գների, վարկերի տոկոսադրույքների միջոցով շուկան օբյեկտիվ տեղեկատվություն է տալիս արտադրողներին մատակարարվող ապրանքների ու ծառայությունների որակի, քանակի և տեսականու մասին:

**5. Սանիտարական գործառույթ:** Մրցակցության օգնությամբ շուկան մաքրում է հասարակական արտադրությունը տնտեսապես անկայուն միավորներից և, ընդհակառակը, ակտիվորեն նպաստում է արդյունավետ արտադրությունների զարգացմանը:

**6. Խթանող գործառույթ:** Շուկան դրդում է արտադրողներին ստեղծել նոր արտադրանք, իջեցնել ծախքերը, կատարելագործել արտադրությունը:

**7. Բաշխման գործառույթ:** Շուկայի սուբյեկտների ստացած եկամուտներն իրենց արտադրության գործոնների դիմաց վճարն է: Եկամտի մեծությունը կախված է իրացված ապրանքի քանակից և որակից, շուկայում ձևավորված գնից:

**8. Երաշխավորական գործառույթ:** Շուկան երաշխավորում է արտադրողների աշխատանքի արդյունքների հասարակական գնահատականը: Եթե ապրանքը վաճառվել է, ուրեմն տեղի է ունեցել դրա հասարակական ճանաչումը, և հակառակը, եթե առք ու վաճառքը չի կայացել, նշանակում է հասարակությունն այդ ապրանքի կարիքը չունի:

**9. Կրթող, դաստիարակող գործառույթ:** Շուկայական համակարգը ձևավորում և կրթում է «տնտեսական մարդու», ում բնորոշ են նախաձեռնությունը, ստեղծագործական մտածելակերպը, ռիսկի դիմելու պատրաստակամությունը, անձնական պատասխանատվությունը:

---

**10. Տարբերակման գործառույթ:** Շուկան շերտավորում է արտադրողներին ըստ եկամուտների: Մրցակցության արդյունքում հաղթում է այն ֆիրման, որի արտադրության ծախսերը ցածր են շուկայական գնից, այդ դեպքում ֆիրման շահույթ է ստանում: Եթե արտադրության ծախսերը բարձր են գնից, ապա ֆիրման վնաս կկրի: Հետևաբար, արտադրողների տարբերակում նշանակում է արդյունավետ ֆիրմաների զարգացում և հակառակը:

**11. Ինտեգրող գործառույթ:** Շուկան միավորում է բոլոր առանձին, ինքնուրույն, մեկուսացված շուկայական սուբյեկտներին արդյունավետ շուկայական օրենքներով:

#### **Հարց 4. Շուկայի գործառույթյան սկզբունքները, շուկայի դրական և բացասական կողմերը**

Շուկան գործում է որոշակի սկզբունքներով: Դրանք են.

1. Տնտեսավարող սուբյեկտների իրավահավասարության սկզբունք: Սա նշանակում է, որ նրանց իրավունքները նույնն են արտոնությունների, սահմանափակումների, պատիժների, հարկերի, ռեսուրսներից օգտվելու, գործունեության ձև ընտրելու հարցերում:

2. Տնտեսական գործունեության ինքնակարգավորման սկզբունք: Շուկայական տնտեսակարգն առաջին հերթին հենվում է ինքնակարգավորման, այլ ոչ թե պետական կարգավորման մեխանիզմի վրա: Ինքնակարգավորումն իրականացվում է տնտեսական մեթոդներով, այլ ոչ թե վարչական կարգով:

3. Գների ազատականացման սկզբունք: Շուկայում գնագոյացումը ձևավորվում է պետական հսկողությունից դուրս՝ ապրանքային առաջարկի և վճարունակ պահանջարկի հարաբերակցության արդյունքում:

4. Պայմանագրային հարաբերությունների սահմանման սկզբունք: Տնտեսավարող սուբյեկտներն իրենց հարաբերությունները կարգավորում են միմյանց հետ կնքած պայմանագրերի հիման վրա, որտեղ դարձյալ բացակայում է հարկադրանքը:

5. Ինքնաձախաժառնկման սկզբունք: Տնտեսավարող սուբյեկտը ծախսերը կատարում է եկամտից, իր բյուջեից, իր գրպանից:

---

6. Տնտեսական պատասխանատվության սկզբունք: Տնտեսավարող սուբյեկտներն իրենց տրամադրության տակ եղած նյութական արժեքների համար կրում են պատասխանատվություն, որը լինում է և՛ անհատական, և՛ կոլեկտիվ: Այս սկզբունքի մեջ է մտնում նաև տնտեսավարող սուբյեկտի մեղքով գործընկերոջը պատճառած վնասների փոխհատուցումը կամ իրական և տնտեսական երաշխիքների ապահովումը:

7. Սպառողի գերակայության սկզբունք: Շուկայական տնտեսության մեջ այն ապրանքը կամ ծառայությունը, որը չի գտնում իր սպառողին, դուրս է գալիս արտադրությունից: Դա կախված է սպառողների նախասիրություններից և ընտրությունից:

Շուկան ունի և՛ առավելություններ, և՛ թերություններ: Շուկայի **դրական** կողմերն են.

1. Ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը,
2. Ճկունությունը և բարձր հարմարվողականությունը փոփոխվող պայմաններին,
3. Նոր տեխնոլոգիայի առավել արդյունավետ կիրառումը և օգտագործումը՝ արտադրության ծախքերի կրճատման և շահույթի բարձրացման նպատակով,
4. Որոշումներ ընդունելիս, պայմանագրեր կնքելիս արտադրողների և սպառողների անկախությունը:

Շուկայի **բացասական** կողմերն են.

1. Շուկան չի նպաստում չվերարտադրվող ռեսուրսների պահպանմանը,
2. Բացասաբար է անդրադառնում շրջակա միջավայրի վրա:
3. Չի նպաստում և խթաններ չի ստեղծում կոլեկտիվ սպառման ապրանքների և ծառայությունների (կրթություն, առողջապահություն, սպորտ) արտադրության համար:
4. Չի երաշխավորում աշխատելու, հանգստի և եկամուտ ստանալու իրավունքը, ավելին, ծնում է էական անհավասարություն:
5. Չի ստեղծում գիտության, կրթության զարգացման համար անհրաժեշտ պայմաններ:
6. Չի երաշխավորում լրիվ զբաղվածություն և գների կայուն մակարդակ:

Այս ամենը թույլ է տալիս անելու հետևյալ կարևոր հետևությունները:

---

1. Շուկան տնտեսության կազմակերպման առավել արդյունավետ ձև է, բայց միշտ չէ, որ կարողանում է տնտեսական համակարգի հավասարակշռություն ապահովել:

2. Շուկայի անկատարությունը պետք է փոխհատուցվի պետության համապատասխան գործառույթներով:

Պետության կարևոր խնդիրն է շուկայի իրավական կարգավորումը, քանի որ շուկայական հարաբերությունները, առանց օրենքի գերակայության, վերափոխվում են անկառավարելի կառույցների:

Իրավական կարգավորման ձևերն են.

ա) Տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ազատության իրավական ապահովումը:

բ) Շուկայական կապերի նորմատիվ օրենսդրական դաշտի ապահովումը:

Իսկ կարգավորման նպատակներն են.

ա) Պայքար կոռուպցիայի դեմ,

բ) Պայքար պարտավորությունների չկատարման դեմ:

Պետության կարգավորիչ դերը սոցիալական ճիշտ քաղաքականության իրականացումն է՝ ստեղծելով անհրաժեշտ պայմաններ սոցիալական երաշխիքների ապահովման համար:

1. Անաշխատունակ և սոցիալապես անապահով մարդկանց աջակցում:

2. Գործազուրկների սոցիալական աջակցում:

3. Հավասար հնարավորությունների ստեղծում բոլորի համար:

## **Հարց 5. Շուկայի ենթակառուցվածքի էությունը**

Շուկայի ենթակառուցվածքը 3 հիմնական շուկաների՝ ապրանքային, ֆինանսական և աշխատուժի ներքին կառուցվածքն է, որն ապահովում է շուկայական հարաբերությունների արդյունավետ գործունեությունը:

Ապրանքային շուկայի ենթակառուցվածքը հանդես է գալիս ապրանքային բորսաներով, մեծածախ և մանրածախ առևտրի կազմակերպություններով, աճուրդներով, տոնավաճառներով, միջնորդ ֆիրմաներով:

Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքը ընդգրկում է ֆոնդային և արժույթային բորսաները, բանկերը, ապահովագրական ֆոնդերը:

---

Աշխատուժի շուկայի ենթակառուցվածքը ընդգրկում է աշխատուժի բորսան, զբաղվածության և կադրերի վերապատրաստման կենտրոնը, աշխատուժի միգրացիայի կարգավորումը:

Առևտուրը բնութագրում են ոչ թե նրանով, թե ինչ է վաճառվում, այլ՝ ինչպես: Կազմակերպման եղանակից կախված՝ տարբերում են՝

- ա) կանխիկ վաճառք
- բ) ապառիկ վաճառք
- գ) անկանխիկ վաճառք
- դ) հիպոթեքային վաճառք
- ե) բարտեր

Ըստ իրացման ծավալների՝ տարբերում են մանրածախ և մեծածախ առևտուր:

Մեծածախ առևտրի դեպքում գներն ավելի ցածր են, քան մանրածախ առևտրի դեպքում:

Եկամտի ստացման նպատակով իրականացվող (եկամուտ հետապնդող) առևտրական գործունեությունը կոչվում է կոմերցիա: Կոմերցիայի էությունը ապրանքների վերավաճառքն է: Հաջող կոմերցիոն գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ են 2 կարևոր պայմաններ:

1) Ապրանքի գնման գինը ցածր պետք է լինի վաճառքի ենթադրվող գնից:

2) Տվյալ ապրանքատեսակի նկատմամբ գնողունակ պահանջարկը պետք է ապահովի դրա լրիվ իրացումը:

Առևտուրն իրականացվում է խանութներում, աճուրդներում և տոնավաճառներում:

**Աճուրդը** (հրապարակային վաճառք) ապրանքների վաճառքն է գնորդների մրցակցության պայմաններում: Ներքին աճուրդի հետ մեկտեղ անց են կացվում նաև միջազգային աճուրդներ: Օրինակ՝ Սանկտ Պետերբուրգում մորթեղենի, Մոսկվայում՝ ցեղային ձիերի, Լոնդոնում՝ արվեստի ստեղծագործությունների աճուրդը:

**Տոնավաճառները** կանոնավոր ձևով կազմակերպված շուկաներն են, որոնք գործում են որոշակի տարածքում, սահմանված ժամկետում: Տարբերվում են ճյուղային, տարածաշրջանային և միջազգային տոնավաճառ-

---

ներ, որտեղ անցկացվում են միաժամանակ գիտատեխնիկական գիտա-  
ժողովներ:

**Բորսան** ստանդարտ ապրանքատեսակների մեծածախ առևտրի շուկա է կամ տարադրամի, արժեթղթերի և աշխատուժի առք ու վաճառքի շուկա: Բորսաներն այն միջնորդ օղակներն են, որոնք ապահովում են տարբեր արդյունքների իրացումն ըստ դրանց պահանջարկի:

Բորսաներն այս տեսանկյունից յուրահատուկ տեղեկատվական ծառայություններ են, որոնք նպաստում են տարբեր տնտեսավարող սուբյեկտների միջև անհրաժեշտ փոխհարաբերությունների հաստատմանը: Կախված առևտրի օբյեկտից՝ տարբերվում են ապրանքային, ֆոնդային (տարադրամի) և աշխատանքային բորսաներ:

**Ապրանքային բորսան** նյութական օբյեկտների՝ հումքի, սարքավորումների կազմակերպված շուկան է: Այն բորսաները, որտեղ ներկայացված են տարբեր ապրանքատեսակներ, կոչվում են ունիվերսալ բորսաներ:

**Ֆոնդային բորսան** արժեթղթերի շուկան է: Արժեթղթերի վաճառքն իրականացվում է աճուրդի սկզբունքով: Ֆոնդային բորսաներում սահմանվում է արժեթղթերի շուկայական գինը, այսինքն՝ դրանց կուրսը:

**Աշխատանքի բորսաներն** իրականացնում են աշխատուժ ապրանքի առք ու վաճառք: Դրանք գործատուների և աշխատանք փնտրողների միջև միջնորդի դեր են կատարում: Դրանց գործառույթներն են՝ գործազուրկների հաշվառումը, նյութական օգնություն կամ նպաստ տրամադրելը, աշխատողների որակավորման կազմակերպումը:

## **Չարց 6. Սեփականության հասկացությունը և նշանակությունը տնտեսական համակարգում**

Սեփականության հարաբերությունները միշտ էլ էական դեր են խաղացել հասարակության կյանքում: Սեփականությունը՝ որպես տնտեսական կատեգորիա, օբյեկտիվ հարաբերությունների համակարգ է՝ կապված արտադրության միջոցների և արդյունքների յուրացման հետ: Սեփականությունն ընդգրկում է ամբողջ տնտեսական գործընթացը և թափանցում է արտադրության, բաշխման և սպառման փուլերը:

---

Սեփականությունն արտահայտում է սուբյեկտի իրավունքները: Սեփականության սուբյեկտներն են մասնավոր անձինք, ֆիրմաները, հասարակական կազմակերպությունները և պետությունը: Սեփականության հիմնական օբյեկտներն են հողը, շենքերը, կառույցները, նյութական և հոգևոր մշակույթի ստեղծագործությունները և այլն:

Սեփականության հարաբերություններն ընդգրկում են սեփականության օբյեկտների տիրապետման (յուրացման), օգտագործման ու տնօրինման ժամանակ առաջացող հարաբերությունները: Ենթադրենք՝ արտադրության միջոցների սեփականատերը չի զբաղվում արտադրական գործունեությամբ: Նա ուրիշներին իր իրերի տիրապետման հնարավորություն է ընձեռում՝ որոշակի պայմաններով: Այս դեպքում սեփականատիրոջ և ձեռներեցի միջև հարաբերություններ են առաջանում: Ձեռներեցը ժամանակավորապես սեփականության տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունք է ստանում: Նման հարաբերությունների օրինակ է վարձակալությունը:

Ժամանակակից պայմաններում ձևավորվել է սեփականության մի ձև, որը մասնավոր և պետական սեփականության յուրահատուկ համադրություն է: Դա, այսպես կոչված, խառը սեփականությունն է, որտեղ իրենց մասնաբաժինն ունեն և՛ մասնավոր ընկերությունները, և՛ պետությունը:

Սեփականության հարաբերություններից կախված՝ որոշվում է.

- ա) մարդու տեղը հասարակության մեջ,
- բ) մարդու բաժինը հասարակական արդյունքի մեջ,
- գ) մարդու դերը հասարակական կյանքում և այլն:

Սեփականության ձևերը տարբեր կերպ են ազդում գործարար ակտիվության վրա: Մասնավոր սեփականությունը նպաստում է առավել նախաձեռնողական, արդյունավետ աշխատանքին: Սակայն սոցիալական տեսանկյունից առաջ է բերում շերտավորում:

Ժամանակակից տնտեսական համակարգերում գործում են սեփականության հետևյալ ձևերը.

1. Մասնավոր սեփականություն, որը տնօրինվում է առանձին անհատի կողմից և հասարակական սեփականության մյուս օբյեկտներից առանձնացված է:

---

2. Անձնական սեփականություն, որը կարող է դրսևորվել սպառման առարկաների անձնական տնօրինման, անհատական աշխատանքային գործունեության ձևով: Անձնական սեփականության հիմքն անձնական աշխատանքն է:

3. Կոլեկտիվ սեփականություն, որի դեպքում արտադրության միջոցների և ստեղծված արդյունքի յուրացումն ունի կոլեկտիվ, խմբային ձև:

4. Մունիցիպալ սեփականություն, որը տեղական ինքնակառավարման մարմինների կամ համայնքների սեփականությունն է:

5. Պետական սեփականություն, որի դեպքում սեփականատեր համարվում է պետությունը:

Այս հիմնական ձևերի հետ մեկտեղ գոյություն ունեն նաև սեփականության այլ ձևեր, որոնք կարելի է համարել դրանց ածանցյալը: Օրինակ, հասարակական կազմակերպությունների (արհմիությունների), կրոնական հաստատությունների, օտարերկրյա քաղաքացիների և պետության համատեղ կամ խառը ձևերը:

### **Սեփականության իրավունքը տնտեսական համակարգում**

Տնտեսական երևույթների մակերեսի վրա սեփականությունը հանդես է գալիս որպես գույքային հարաբերություն՝ հաստատելով կամ ժխտելով ուն և ինչ քանակով են պատկանում, կամ չեն պատկանում տվյալ գույքը, հարստությունը և այլն: Սեփականության իրավաբանական բովանդակությունը նկարագրված է դեռևս հռոմեական օրենսգրքերում՝ օգտագործելով հետևյալ տերմինները՝ «օգտագործում», «տիրապետում», «տնօրինում», «կարգադրում»: Իրավունքի նորմերը մի կողմից հաստատում են ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի առկայությունը, որոշում գույքի պատկանելության օրինական հիմքերը և նրա երաշխիքները: Մյուս կողմից, իրավունքը կարգավորում է գույքի շարժունակությունը, այսինքն՝ մեկից մյուսին անցնելը:

Ժամանակակից տնտեսագիտական տեսության մեջ լայն զարգացում է ստացել սեփականության իրավունքի տնտեսագիտական ուսումնասիրությունը:

---

Ըստ ամերիկացի հեղինակների՝ պետք է ուսումնասիրել ոչ թե «սեփականություն» հասկացությունը, այլ «սեփականության իրավունքը»:

Այսպես, ոչ թե հումքն է սեփականություն, այլ դրանից բխող իրավունքների «փունջը»: Սեփականության իրավունքի լիակատար փունջ կոչվում է Ա. Օնորեի թվարկումը, որը և ներառում է հետևյալ 11 տարրերը՝

1. տիրապետման իրավունք (բարիքների վրա բացարձակ հսկողություն սահմանելու ազատություն),

2. օգտագործման իրավունք (բարիքի սպառման կամ օգտակար հատկություններից օգտվելու ազատություն),

3. կառավարման իրավունք (այն որոշման ընդունման իրավունքը, թե ով և ինչպես պետք է ապահովի բարիքի օգտագործումը),

4. եկամտի ստացման իրավունք (բարիքների օգտագործումից ստացված արդյունքներին տիրապետելու ազատություն),

5. ինքնուրույնության իրավունք (բարիքի օտարման, սպառման, փոփոխման կամ ոչնչացման վերաբերյալ որոշումների ընդունման ազատություն),

6. անվտանգության իրավունք (բարիքների՝ բռնագրավումից և արտաքին միջավայրի վնասակար ազդեցությունից պաշտպանվածության երաշխիք),

7. բարիքները ժառանգություն տալու իրավունք,

8. բարիքների տիրապետման անժամկետայնության իրավունք,

9. բարիքի՝ արտաքին միջավայրին վնաս բերող օգտագործման ձևի արգելում,

10. հատուցման ձևով իրավունք (բարիքով հատուցում պարտքի դիմաց),

11. մնացորդային բնույթի իրավունք (գործողությունների հետագա շարունակության իրավունք):

Այս հարաբերությունները ներկայացնում են բարիքի նկատմամբ վարքագծի այն նորմերը, որոնք յուրաքանչյուր անձ պետք է պահպանի հասարակության մյուս անդամների հետ շփումների ժամանակ, իսկ հակառակ դեպքում՝ կկրի համապատասխան տույժեր: Այլ կերպ՝ սեփականության իրավունքը ոչ այլ ինչ է, քան հասարակության կողմից ընդունված որոշակի «խաղի» կանոններ:

---

## **Չարց 7. Շուկայական տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը, նպատակը, մեթոդները և պետության գործառույթները**

Շուկան, չնայած իր տարրերային բնույթին, կենսունակ մեխանիզմ է և ունակ է լուծել հասարակության առջև ծառայած հիմնական տնտեսական խնդիրները: Սակայն երբեմն դա չի հաջողվում, և այդպիսի դեպքերում առաջանում են ոչ ցանկալի տնտեսական իրավիճակներ, որոնց ընդունված է անվանել շուկայի ֆիասկո (փլուզումներ, անկայունություն, չկայացված վիճակ): Դրանք հիմնականում առաջանում են այն ժամանակ, երբ շուկայական մեխանիզմն ի վիճակի չի լինում արդյունավետ կերպով բաշխել ռեսուրսները:

Ինչպես արդեն նշել ենք, շուկան ունի բացասական կողմեր՝ չի նպաստում չվերարտադրվող ռեսուրսների և շրջակա միջավայրի պահպանմանը, չի նպաստում և խթաններ չի ստեղծում կոլեկտիվ սպառման ապրանքների և ծառայությունների (կրթություն, առողջապահություն, սպորտ) արտադրության համար, չի երաշխավորում աշխատելու, հանգստի և եկամուտ ստանալու իրավունքը, գիտության, կրթության զարգացման համար չի ստեղծում անհրաժեշտ պայմաններ, չի երաշխավորում լրիվ զբաղվածություն և գների կայուն մակարդակ, դեռ ավելին՝ ծնունդ է էական անհավասարություն՝ նշված բոլոր բնագավառներում: Շուկան չի լուծում նաև գլոբալ խնդիրներ, օրինակ, չի կարող կարգավորել այն ռեսուրսների օգտագործումը, որոնք պատկանում են ամբողջ մարդկությանը և հաջորդ սերունդներին (օվկիանոսի ձկնային հարստությունը և այլն):

Որպես կանոն, նշված ձախողումների հետևանքով առաջանում են ոչ արդյունավետ իրավիճակներ, որոնք վկայում են շուկայի ֆիասկոյի մասին.

1. Մենաշնորհային իշխանություն,
2. Ոչ լիարժեք (ոչ սիմետրիկ) տեղեկատվություն,
3. Արտաքին էֆեկտներ,
4. Հասարակական բարիքների սահմանափակություն:

Նշված իրավիճակների դեպքում օգնության է գալիս պետությունը: Շուկայի «փլուզումները» ուղղվում և վերացվում են պետության կողմից: Այսպիսով, պետությունը կոչված է կարգավորելու (շտկելու) այն թերությունները,

---

որոնք հատուկ են շուկայական մեխանիզմին: Դրա հետ կապված պետության գործունեության ոլորտներ համարվում են՝

1. Հասարակական բարիքների արտադրությունը,
2. Բացասական ազդակների նվազեցումը և դրական ազդակների խրախուսումը,
3. Ոչ ճիշտ կամ անհամաչափ (ասիմետրիկ) տեղեկատվության կանխումը,
4. Մրցակցության դաշտի ստեղծումը և պաշտպանումը,
5. Մակրոտնտեսական տատանումների մեղմումը (հանդարտեցումը),
6. Եկամուտների սոցիալապես արդարացի բաշխման աջակցման քաղաքականությունը:

Շուկան հիմնականում կողմնորոշված է ոչ թե սոցիալապես անհրաժեշտ ապրանքների արտադրությունը, այլ բավարարում է նրանց պահանջմունքները, ովքեր կարող են վճարել:

Շուկան, հետապնդելով իր գերագույն նպատակը՝ առավելագույն շահույթի ստացումը, կարող է բավարարել այն պահանջմունքները, ինչը արտահայտվում է գնողունակ պահանջարկի միջոցով և ուղղվում է անհատական սպառմանը: Կան նաև այնպիսի պահանջմունքներ, որոնք հնարավոր չէ հաշվարկել փողով, վերածել վճարունակ պահանջարկի և շուկան նման պահանջմունքների կողքով անտարբեր է անցնում: Խոսքը գնում է կոլեկտիվ օգտագործման ապրանքների և ծառայությունների մասին, որոնցից օգտվում են հասարակության բոլոր անդամները: Այդ բարիքները համաշխարհային տնտեսագիտական գրականության մեջ կոչվում են հասարակական ապրանքներ կամ բարիքներ: Այդպիսի բարիքներ են համարվում երկրի պաշտպանությունը, հասարակական կարգ ու կանոնի պահպանումը, պետական կառավարումը, փողոցների լուսավորությունը և այլն: Դրանց առանձնահատկությունն այն է, որ այդ ապրանքները հասանելի են հասարակության բոլոր անդամներին (սպառողներին) հավասարապես և հաճախ օգտագործվում են կոլեկտիվ կերպով, ինչպես նաև այդ ապրանքները սպառման ընթացքում ընտրության ենթակա չեն: Ահա ինչու նման ապրանքներն այդ տեսակետից մրցակցային չեն, քանի որ լրացուցիչ օգտագործման ժամանակ սահմանային ծախսերը հավասար են գրոյի:

---

Տնտեսության պետական կարգավորման նպատակների մեջ կարելի է առանձնացնել տնտեսական և սոցիալական կայունության հասնելը, ազգային արտադրության մրցունակության ապահովումը, տնտեսական անվտանգությունը, շուկայական մեխանիզմի հարմարեցումը (ադապտացիան) տարբեր իրավիճակներին:

Պետական կարգավորման նպատակները կյանքի են կոչվում որոշակի մեթոդների միջոցով: Տնտեսության պետական կարգավորման մեթոդների համակարգի մեջ կենտրոնական տեղը գրավում են տնտեսական մեթոդները, որոնք բաժանվում են երկու խմբի.

1. պետական կարգավորման ուղղակի մեթոդ,
2. պետական կարգավորման անուղղակի մեթոդ:

Ուղղակի մեթոդները հանդես են գալիս հետևյալ ձևերով՝

1. Պետության նպատակային ֆինանսավորում (ձեռնարկությունների դոտացիա, գիտատեխնիկական, էկոլոգիական ծրագրերի ֆինանսավորում, սոցիալական ոլորտի ֆինանսավորում)

2. Պետական գնումներ

3. Տնտեսության պետական սեկտորի ֆինանսավորում:

Անուղղակի մեթոդները հանդես են գալիս հետևյալ հիմնական ձևերով՝

1. Դրամավարկային մեթոդներ (հաշվարկային դրույք, արժեթղթերի բաց շուկայի գործառնություններ, պարտադիր պահուստային նորմաների սահմանում),

2. Հարկաբյուջետային մեթոդներ (հարկադրույքների և հարկային զեղչերի սահմանում, հարկային արտոնությունների տրամադրում),

3. Արագացված ամորտիզացիա (ամորտիզացիայի նորմա, ամորտիզացիոն դուրսգրումների կարգ),

4. Արտաքին տնտեսական մեթոդներ (արտահանման խթանում, ներմուծման վարկավորում, օտարերկրյա կապիտալի սահմանափակում կամ ներգրավում):

Տնտեսության պետական կարգավորման մեջ օգտագործվում են վարչական մեթոդներ, որոնց հիմնական ձևերն են՝

1. հակամոնոպոլային միջոցառումները (մոնոպոլային պայմանավորվածության մասնաբաժանում, դոմինանտացող արտադրողների գործունեության հսկում),

---

2. պարտադիր ստանդարտների ներդրումը (էկոլոգիական, սանիտարական, սոցիոլոգիական ստանդարտներ),

3. բնակչության կյանքի նվազագույն թույլատրելի չափորոշիչների սահմանում (նվազագույն աշխատավարձ, գործազրկության նպաստներ):

Ժամանակակից պետության տնտեսական գործառույթները բազմազան են և բարդ: Կարելի է առանձնացնել պետության կողմից կատարվող տնտեսական գործառույթների հետևյալ խմբերը՝

1. շուկայական համակարգի գործունեությանը օժանդակելը, նպաստելը, իրավական բազայի ապահովումը և մրցակցային միջավայրի ստեղծումը, մրցակցության պահպանումը հակամենաշնորհային օրենսդրության միջոցով,

2. եկամուտների և հարստության վերաբաշխումը, ռեսուրսների բաշխման ճշտումը՝ ՀՆԱ-ի կառուցվածքի փոփոխման նպատակով, տնտեսության կայունացումը՝ զբաղվածության և ինֆլյացիայի մակարդակների հսկման միջոցով,

3. շուկայական մեխանիզմի որոշ տարրերի գործունեության սահմանափակումը,

4. համաշխարհային տնտեսության մեջ ազգային տնտեսության մրցակցային առավելությունների ստեղծումն ու պահպանումը,

5. վերջին ժամանակներում լայնորեն օգտագործվում է հասարակական ընտրության տեսության գործառույթը կառավարչական որոշումներ ընդունելու ժամանակ, երբ ճշտվում է, թե կառավարությունն ինչ գնի, ինչպես արտադրի ապրանքը, ում համար է նախատեսված պետական ծախսերը, ում վրա են տարածվում արտոնությունները և այլն:

Մակրոտնտեսական քաղաքականության իրականացման ընթացքում կարևոր է հիշել, որ և՛ պետությունը, և՛ շուկան քաղաքակրթության մեծ նվաճումներն են: Շուկան չի կարող նորմալ գործել առանց պետության, որը սահմանում և պահպանում է «խաղի կանոնները»: Շուկան և պետությունը երկու հզոր ուժեր են, որոնք կանգնած չեն դեմ առ դեմ, այլ ընդհակառակը՝ փոխլրացնում են միմյանց տնտեսական զարգացման ընթացքում:

---

## Համառոտ եզրակացություններ

1. Շուկան հարաբերությունների այն ոլորտն է, որտեղ ծավալվում է տնտեսավարող սուբյեկտների և հասարակության անդամների գործունեությունը՝ կապված ապրանքների և ծառայությունների արտադրության և իրացման հետ:

2. Շուկայական հարաբերությունների ծագման նախադրյալներն են՝ աշխատանքի հասարակական բաժանումն ու մասնագիտացումը, սեփականության տարբեր ձևերի կամ բազմասեփականության առկայությունը, տնտեսավարող սուբյեկտների ինքնավարությունն ու ազատությունը:

3. Շուկայի հիմնական տարրերն են՝ առաջարկը, պահանջարկը, գինը և մրցակցությունը:

4. Շուկան իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝ միջնորդական, կարգավորող, գնազոյացնող, սանիտարական, խթանման, բաշխման, ինտեգրող, երաշխավորող, տարբերակման և այլն:

5. Շուկան գործում է որոշակի սկզբունքներով: Դրանք են՝ տնտեսավարող սուբյեկտների իրավահավասարության սկզբունք, տնտեսական գործունեության ինքնակարգավորման սկզբունք, գների ազատականացման սկզբունք, պայմանագրային հարաբերությունների սահմանման սկզբունք, ինքնաձախսածածկման սկզբունք, տնտեսական պատասխանատվության սկզբունք, սպառողի գերակայության սկզբունք:

6. Շուկայի ենթակառուցվածքը 3 հիմնական շուկաների՝ ապրանքային, ֆինանսական և աշխատուժի ներքին կառուցվածքն է, որն ապահովում է շուկայական հարաբերությունների արդյունավետ գործունեությունը:

7. Ապրանքային շուկայի ենթակառուցվածքը հանդես է գալիս ապրանքային բորսաներով, մեծածախ և մանրածախ առևտրի կազմակերպություններով, աճուրդներով, տոնավաճառներով, միջնորդ ֆիրմաներով:

8. Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքը ընդգրկում է ֆոնդային և արժույթային բորսաները, բանկերը, ապահովագրական ֆոնդերը:

9. Աշխատուժի շուկայի ենթակառուցվածքը ընդգրկում է աշխատուժի բորսան, զբաղվածության և կադրերի վերապատրաստման կենտրոնը, աշխատուժի միգրացիայի կարգավորումը:

---

10. Սեփականությունն արտահայտում է սուբյեկտի իրավունքները: Սեփականության սուբյեկտներն են մասնավոր անձինք, ֆիրմաները, հասարակական կազմակերպությունները և պետությունը: Սեփականության հիմնական օբյեկտներն են հողը, շենքերը, կառույցները, նյութական և հոգևոր մշակույթի ստեղծագործությունները և այլն:

11. Սեփականության հարաբերություններն ընդգրկում են սեփականության օբյեկտների տիրապետման (յուրացման), օգտագործման ու տնօրինման ժամանակ առաջացող հարաբերությունները:

12. Պետությունը կոչված է կարգավորելու այն թրությունները, որոնք հատուկ են շուկայական մեխանիզմին: Դրա հետ կապված պետության գործունեության ոլորտներ համարվում են՝ հասարակական բարիքների արտադրությունը, բացասական ազդակների նվազեցումը և դրական ազդակների խրախուսումը, ոչ ճիշտ կամ անհամաչափ (ասիմետրիկ) տեղեկատվության կանխումը, մրցակցության դաշտի ստեղծումը և պաշտպանումը, մակրոտնտեսական տատանումների մեղմումը (հանդարտեցումը), եկամուտների սոցիալապես արդարացի բաշխման աջակցման քաղաքականությունը:

13. Տնտեսության պետական կարգավորման նպատակներից են՝ տնտեսական և սոցիալական կայունության հասնելը, ազգային արտադրության մրցունակության ապահովումը, տնտեսական անվտանգությունը, շուկայական մեխանիզմի հարմարեցումը (ադապտացիան) տարբեր իրավիճակներին:

### ***Ինքնաստուգման հարցեր***

1. Ի՞նչ է շուկան:
2. Որո՞նք են շուկայի ձևավորման նախադրյալները:
3. Որո՞նք են շուկայի հիմնական տարրերը:
4. Ինչպե՞ս են դասակարգվում շուկաները:
5. Որո՞նք են շուկայի հիմնական գործառույթները:
6. Որո՞նք են շուկայի գործառնության հիմնական սկզբունքները:
7. Որո՞նք են շուկայի դրական կողմերը:
8. Որո՞նք են շուկայի բացասական կողմերը:

- 
9. Որո՞նք են շուկայական ենթակառուցվածքի հիմնական բաժինները:
  10. Ի՞նչ է աճուրդը:
  11. Ի՞նչ է բորսան:
  12. Ի՞նչ է սեփականությունը:
  13. Սեփականության ի՞նչ ձևեր կան:
  14. Ներկայացրե՛ք սեփականության իրավունքների փունջը:
  15. Ո՞րն է շուկայի պետական կարգավորման անհրաժեշտությունը:
  16. Որո՞նք են պետական գործունեության հիմնական ոլորտները:
  17. Որո՞նք են պետական կարգավորման տնտեսական մեթոդները:
  18. Որո՞նք են պետական կարգավորման վարչական մեթոդները:
  19. Որո՞նք են պետության հիմնական տնտեսական գործառույթները:

---

## ԹԵՄԱ 5. ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՅԱՆՋԱՐԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ներկայացնել պահանջարկի և առաջարկի էությունը:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

ա. ներկայացնել պահանջարկի օրենքի էությունը,

բ. բացատրել պահանջարկի փոփոխությունը, ոչ գնային գործոնները,

գ. ներկայացնել առաջարկի օրենքը,

դ. բացահայտել առաջարկի մեծության վրա ազդող գործոնները,

ե. ներկայացնել առաջարկի և պահանջարկի կապը,

զ. բացատրել առաջարկի և պահանջարկի ճկունության էությունը:

### Հարց 1. Պահանջարկի էությունը

Պահանջարկը ապրանքների և ծառայությունների այն քանակությունն է, որը գնորդը պատրաստ է ձեռք բերել տվյալ գնով և տվյալ պահին:


Անհրաժեշտ է սահմանազատել երկու տնտեսական հասկացություն՝ «պահանջարկ» և «պահանջմունքներ»:

Պահանջմունքը մարդու ունեցած կարիքն է ինչ-որ բանի նկատմամբ, իսկ պահանջարկը վճարունակ պահանջմունքն է, այսինքն՝ պահանջմունքների այն մասը, որոնց դիմաց սպառողը պատրաստ է և կարող է վճարել: Պահանջարկը կարող է քանակապես չհամընկնել պահանջմունքների հետ, քանի որ գինը և եկամուտը միշտ սահմանափակում են գնումների ծավալը:

Ապրանքի պահանջարկը կախված է մի շարք գործոններից՝ գնից, եկամուտներից, սպառողի նախասիրություններից և այլն:

Ըստ պահանջարկի օրենքի՝ ինչքան բարձր է ապրանքի գինը, այնքան ցածր է (այլ հավասար պայմաններում) պահանջարկը, և հակառակը:

Գրաֆիկորեն դա ունի հետևյալ տեսքը (գծանկար 5)



Գծանկար 5. Պահանջարկի կորը

$D = f(P)$ , որտեղ  $f'(P) < 0$ ,  
 $D$ –ն պահանջարկն է,  
 $P$  – ընդհանուր գինն է,  
 $P$  – ն գինը:

Գրաֆիկորեն պահանջարկի ծավալի մեծությունը, կախված գնի փոփոխությունից, արտահայտվում է  $D$  կորագծի վրա տեղաշարժով ներքև կամ վերև, իսկ պահանջարկի բնույթի փոփոխությունը, կախված մյուս գործոններից, արտահայտվում է պահանջարկի կորագծի տեղաշարժով աջ կամ ձախ՝ ընդունելով  $D_1$  կամ  $D_2$  դիրքերը: Ոչ գնային գործոնները տեղաշարժում են պահանջարկի կորը աջ, եթե պահանջարկն ավելանում է, ձախ՝ եթե նվազում:

Ոչ գնային գործոններն են.

1. Բնակչության եկամուտները: Որպես կանոն, եկամուտների ավելացման դեպքում մեծանում է թանկ, որակյալ ապրանքների նկատմամբ պահանջարկը: Այն ապրանքները, որոնց նկատմամբ պահանջարկը փոփոխվում է եկամուտների փոփոխության հետ մեկտեղ, անվանում են բարձր մակարդակի կամ նորմալ ապրանքներ: Դրա հետ մեկտեղ, գոյություն ունեն այնպիսի ապրանքներ, որոնց սպառումը, եկամուտների ավելացմանը զուգընթաց, նվազում է: Սրանք անվանվում են ցածր կարգի ապրանքներ: Դրանց նկատմամբ պահանջարկը եկամուտների ավելացման դեպքում փոխվում է հակառակ ուղղությամբ՝ եկամտի ավելացման դեպքում նվազում է դրանց սպառումը, և հակառակը:

---

2. Նույնանման ապրանքների պահանջարկը և գինը: Երբ մի ապրանքի գինը բարձրանում է, ապա դրա նկատմամբ պահանջարկը նվազում է, բայց միաժամանակ բարձրանում է մեկ այլ՝ փոխարինող ապրանքի նկատմամբ պահանջարկը: Օրինակ, եթե բարձրացել է կարագի գինը, դրա նկատմամբ պահանջարկը կնվազի, բայց միաժամանակ կբարձրանա բուսական յուղի նկատմամբ պահանջարկը: Փոխլրացնող ապրանքներն ուղեկցում են միմյանց սպառման կամ օգտագործման ընթացքում: Այս դեպքում մի ապրանքի նկատմամբ պահանջարկի փոփոխությունը հանգեցնում է մյուսի պահանջարկի փոփոխությանը: Այսպես, եթե մեծանում է հեծանիվների նկատմամբ պահանջարկը, ապա մեծանում է նաև մարզական հագուստի նկատմամբ պահանջարկը:

3. Շուկայի չափերը: Որպես կանոն, որքան մեծ են ապրանքի առաջարկի ծավալները, այնքան ցածր է դրա գինը և, հետևաբար, մեծ է դրա նկատմամբ պահանջարկը:

4. Գնորդների թիվը: Այստեղ գոյություն ունի ուղիղ կախվածություն՝ որքան շատ են սպառողները, այնքան մեծ է պահանջարկը:

5. Գնորդների ճաշակը, նախասիրությունները և ազգային առանձնահատկությունները: Սպառողների նախասիրությունները և ճաշակը ձևավորվում են հասարակության, ավանդույթների, գովազդի և այլնի ազդեցությամբ: Հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները՝ պետք է ելնել այն հանգամանքից, որ պահանջարկը չի փոխվի կամ կփոխվի աննշան, եթե փոխվի այն ապրանքի գինը, որը հանդիսանում է տվյալ տարածաշրջանում ապրող բնակչության ամենօրյա պահանջարկի առարկան:

6. Սպասումները: Սպառողական սպասումները կապված են ապրանքների և ծառայությունների նկատմամբ գների փոփոխության կամ էլ եկամուտների փոփոխության հետ: Եթե սպասվում է, որ ապագայում ապրանքների գները բարձրանալու են, ապա դա ստիպում է սպառողներին ներկայումս ձեռք բերել ավելի շատ ապրանքներ: Եվ հակառակը՝ գների իջեցման սպասումները կարող են կրճատել ներկայիս ծախսերը:

7. Գովազդը: Սա հաճախ ձևավորում է պահանջարկը, հատկապես, երբ խոսքն այն ապրանքների մասին է, որոնց դեռևս սպառողը ծանոթ չէ: Ինչպես ցույց է տալիս փորձը, լավ կազմակերպված գովազդը նպաստում է պահանջարկի մեծացմանը, որը պահանջարկի կորը տեղաշարժում է աջ:

---

Պահանջարկի մեծության վրա ազդում են նաև եկամտի և փոխարինման էֆեկտները: Եկամտի էֆեկտը ցույց է տալիս, թե ինչպես է փոփոխվում սպառողի իրական եկամուտը և պահանջարկը՝ ապրանքների գների փոփոխման դեպքում: Օրինակ, 1 կգ խնձորի գնի՝ երեք անգամ իջեցման դեպքում (300 դր-ից մինչև 100 դր), 30000 դրամ եկամտով կարող եք գնել ոչ թե 100 կգ, այլ 300 կգ խնձոր:

Եթե ցանկանաք խնձորի սպառման մակարդակը պահպանել նախկին մակարդակին, այսինքն՝ 100 կգ, ապա «ազատված» գումարով կարելի է գնել ուրիշ ապրանքներ:

Ապրանքի գնի իջեցումը ձեզ դարձրեց իրականում ավելի հարուստ և թույլ տվեց ընդլայնել պահանջարկի ծավալը, ինչն էլ եկամտի էֆեկտի իմաստն է: Փոխարինման էֆեկտը ցույց է տալիս փոխկապակցությունը ապրանքների հարաբերական գների և սպառողի պահանջարկի ծավալի միջև: Խնձորի գների իջեցումը, ինչպես մեր օրինակում, մյուս ապրանքների գների անփոփոխ մակարդակի դեպքում, նշանակում է նրանց հարաբերական էժանացումը՝ համեմատած տանձի, սալորի հետ: Սպառողը սկսում է փոխարինել հարաբերականորեն ավելի թանկ տանձը՝ գնելով ավելի էժան խնձոր, և կգնի ոչ թե 100 կգ, այլ 150 կամ 200 կգ:

Եկամտի էֆեկտը և փոխարինման էֆեկտը գործում են ոչ թե մեկուսացած, այլ մեկը մյուսի հետ փոխկապակցված և տարբեր իրավիճակներում կարող են ուժեղ ազդեցություն ունենալ մեկը մյուսի վրա:

Տնտեսագիտության տեսության մեջ գոյություն ունի և այնպիսի «տարօրինակ ապրանքների» իրավիճակի նկարագրում, երբ գների անկումը բերում է պահանջարկի իջեցմանը, իսկ գների բարձրացումը՝ ապրանքների պահանջարկի բարձրացմանը. դա կոչվում է Գիֆենի էֆեկտ, իսկ այն ցածրորակ ապրանքները, որոնք նշանակալից տեղ են գրավում պահանջարկի կառուցվածքում, կոչվում են Գիֆենի ապրանքներ՝ անգլիացի տնտեսագետ Գիֆենի անունով (1837-1910): Ենթադրվում է, որ Գիֆենն այդ էֆեկտը նկարագրել է այն ժամանակ, երբ տեսնում էր, որ աղքատ բանվորական ընտանիքներն ընդլայնում են կարտոֆիլի սպառումը՝ չնայած դրա թանկացմանը:

Գիֆենի էֆեկտից բացի, կան և ուրիշ բացառություններ պահանջարկի օրենքի գործողության պահանջներից: Այսպես, մի կողմից որոշ սպառող-

---


ներ կարող են կրճատել իրենց պահանջարկը ապրանքի գնի անկման դեպքում, քանի որ այդ ապրանքը դառնում է առավել մատչելի, դրա օգտագործման մասշտաբներն աճում են, իսկ սպառողների տվյալ կատեգորիան չի ուզում լինել «ինչպես բոլորը» (այսպես կոչված՝ Սնոբի էֆեկտ - պճնամոլներ, գոռոզամիտներ): Մյուս կողմից՝ թանկարժեք ապրանքների պահանջարկը կարող է մեծանալ, եթե դրանց գներն աճում են, քանի որ հարուստ գնորդները ձեռք են բերում այդ ապրանքները՝ առաջին հերթին իրենց հեղինակությունը, վարկը պահպանելու համար (այսպես կոչված՝ Վեբլենի էֆեկտ):

## Չափ 2. Առաջարկի էությունը

Առաջարկ է կոչվում ապրանքների և ծառայությունների այն քանակը, որը պատրաստ են վաճառել արտադրողները որոշակի գնով, որոշակի ժամկետով, որոշակի ժամանակահատվածի ընթացքում:

Առաջարկի ծավալը կախված է ապրանքի գնից, նրա արտադրության վրա ծախսվող արտադրական ռեսուրսների գներից և այլ գործոններից: Կարևոր է տարբերել առաջարկի ծավալը արտադրության ծավալից: Արտադրողի ստեղծած արտադրանքի ոչ ամբողջ ծավալն է, որն առաջարկվում է վաճառքի, ինչպես նաև պարտադիր չէ, որ վաճառվի այն ամբողջ ծավալը, որն առաջարկված է շուկայում:

Ըստ առաջարկի օրենքի՝ ինչքան բարձր է գինը, այնքան մեծ է արտադրության ծավալը: Գրաֆիկորեն դա արտահայտվում է հետևյալ կերպ (գծանկար 6):



**Գծանկար 6. Առաջարկի կորը**

Օրդինատների առանցքի վրա ցույց է տրվում գների տարբեր մակարդակները (P), իսկ աբսցիսների առանցքի վրա՝ տվյալ ապրանքի առաջարկի մեծությունը (Q):

Առաջարկի մեծության ուղղակի կախվածությունը գների մակարդակից արտահայտվում է հետևյալ բանաձևով.  $S=f(P)$ : Դա նշանակում է, որ ապրանքների առաջարկի ծավալը մեծանում է գների բարձրացման և փոքրանում՝ դրանց նվազման դեպքում:

Առաջարկի արձագանքը գնին բացատրվում է նրանով, որ գնի բարձրացման դեպքում ձեռնարկությունները գործի են դնում պահուստային հզորությունները, որը բերում է առաջարկի բարձրացման: Գնի շարունակական և կայուն բարձրացման դեպքում դեպի այդ ճյուղ ձգտում են նաև ուրիշ արտադրողներ, որն ավելի է բարձրացնում արտադրության մակարդակը և մեծացնում է առաջարկը:


Առաջարկի վրա ազդող ոչ գնային գործոններն են.

1. արտադրության ծախսերի փոփոխությունը՝ տեխնիկական նորամուծությունների, ռեսուրսների աղբյուրների, հարկային քաղաքականության, արտադրության գործոնների արժեքի փոփոխության արդյունքում,
2. ուրիշ ապրանքների գների փոփոխությունը,
3. արտադրության տեխնոլոգիական կարողությունները,
4. հարկերի և դոտացիաների (լրավճարների) մակարդակը,
5. ճյուղի զարգացման հեռանկարները,
6. բնական աղետների, քաղաքական գործողությունների, պատերազմների ազդեցությունը առաջարկի կրճատման վրա:

### Ֆարց 3. Շուկայական հավասարակշռություն

Շուկայում տնտեսավարող երկու սուբյեկտների (արտադրող-վաճառողների և գնորդ-սպառողների) փոխհարաբերությունից ձևավորվում է այն փաստացի գինը, ինչն այլ հավասար պայմաններում նպատակահարմար է և՛ արտադրողների, և՛ սպառողների համար: Անշուշտ, սպառողը չի կարող անվերջ նվազեցնել պահանջարկի գինը, որովհետև որոշակի սահմանից հետո այն կարող է ձեռնտու չլինել արտադրողներին, և հակառակը՝ արտադրողն անընդհատ չի կարող բարձրացնել առաջարկի գինը, քանի որ որոշակի սահմանից հետո այն կարող է չիրացվել: Ելնելով երկկողմանի առաջարկություններից՝ շուկայական հարաբերությունների պայմաններում արտադրողի և սպառողի միջև ձևավորվում է որոշակի համաձայնություն՝ տվյալ արդյունքի գնի մակարդակի որոշման հարցում: Այս ճանապարհով շուկայում ձևավորվում է մի նոր գին, ինչը տնտեսագիտական գրականության մեջ ներկայացված է տարբեր հասկացություններով: Որոշ հեղինակներ այն անվանում են հավասարակշռված գին, այլ հեղինակներ՝ շուկայական գին, իսկ երրորդ խումբ հեղինակներն էլ՝ օպտիմալ գին:

Այն կարելի է ներկայացնել գրաֆիկորեն:



Գծանկար 7. Հավասարակշռված գին

Առաջարկի և պահանջարկի կորերի հատման կետը (E) ցույց է տալիս առք ու վաճառքի այն իրական գինը ( $OP_1$ ), որն անվանում են «հավասարակշռված գին»: Միայն այդ գնի դեպքում է շուկա դուրս բերված ապրանքների քանակը համընկնում գնումների քանակին, կամ՝ պահանջարկն ու առաջարկը հավասար են ( $D=S$ ):

Հավասարակշռված շուկայական գինը հարմար է և՛ գնորդին, և՛ վաճառողին: Հավասարակշռված գնի պայմաններում առաջարկը համապա-

---

տասխանում է պահանջարկին, և շուկայում ստեղծվում է հավասարակշռված իրավիճակ:

Եթե շուկայական գինը հավասար չէ հավասարակշռված գնին, ապա արտադրող-վաճառողների և գնորդ-սպառողների գործողությունները (մրցակցությունը) երկու կողմին էլ մղում են դեպի հավասարակշռված գինը:

Հավասարակշռված գին սահմանելու՝ մրցակցային ուժերի ունակությունը կոչվում է գների հավասարակշռող ֆունկցիա: Գնի իջեցումը հանգեցնում է պակասուրդի, իսկ բարձրացումը՝ ավելցուկի:


Ապրանք արտադրողների կամ վաճառողների միջև մրցակցությունը հանգեցնում է գների իջեցման, իսկ մրցակցությունը գնորդների կամ սպառողների միջև՝ գների բարձրացման: Ուրեմն հավասարակշռված է այն գինն, երբ առաջարկը շուկայում համապատասխանում է պահանջարկին, և գինն էլ գտնվում է դրանց կորագծերի հատման կետում: Երևան են գալիս ապրանքների պակասուրդ կամ ավելցուկ, բայց երկար տևել չեն կարող: Մրցակցության և գների ազատ ձևավորման պայմաններում այն միշտ հասնում է հավասարակշռված մակարդակի:

Հավասարակշռված գինը օժտված է հետևյալ հատկություններով.

1. Շուկայում առաջարկված ապրանքների քանակը հավասար է գնորդների ներկայացրած պահանջին, հետևաբար ստեղծված հավասարակշռությունը վկայում է շուկայական իրավիճակի առավելագույն տնտեսական արդյունավետության մասին: Նորբյան մրցանակի դափնեկիր ֆրանսիացի տնտեսագետ Մ. Ալենն առաջ քաշեց մի դրույթ՝ «Շուկայական տնտեսության յուրաքանչյուր հավասարակշռված իրավիճակը հանդիսանում է առավելագույն արդյունավետության իրավիճակ», և հակառակը:

2. Հավասարակշռության կետում արտահայտված է նաև առավելագույն սոցիալական էֆեկտ: Հավասարակշռության գնի դեպքում սպառողը ձեռք է բերում բարիքների սահմանային քանակություն: Սա սոցիալական էֆեկտ է, երբ սպառողն իր պահանջմունքները բավարարում է արդյունավետորեն:


Որոշ դեպքերում պետությունը կարող է սահմանել ապրանքների գների վերին և ստորին մակարդակներ: Գների վերին սահմանն իրենից ներկայացնում է առավելագույն գին, որից բարձր արտադրողն իրավունք չունի վաճառելու: Դա սպառողներին հնարավորություն է տալիս որոշ ապրանքներ գնել ցածր գնով:



Գծանկար 8. Գների վերին սահմանումը հանգեցնում է պակասուրդի:

Գների վերին մակարդակի սահմանումը լուրջ խնդիր է առաջացնում. այն խոչընդոտում է գների ազատ տատանմանը, ինչի արդյունքում ռեսուրսներն սկսում են անարդյունավետ բաշխվել:

Գների ստորին սահմանը այն նվազագույն գինն է, որը սահմանում է պետությունը. այն բարձր է հավասարակշռված գնից: Սովորաբար դա կիրառվում է այն դեպքերում, երբ շուկայական տնտեսությունը չի ապահովում ռեսուրսներ մատակարարողների որոշ խմբի եկամուտների նորմալ մակարդակ: Գնային սահմանները խոչընդոտում են առաջարկի և պահանջարկի օրենքի գործողության մեխանիզմը:



Գծանկար 9. Ստորին գնի սահմանումն ավելցուկ է առաջացնում:

Գների պետական կարգավորումն ունենում է հակասական հետևանքներ: Վարվող քաղաքականությունից ենթադրվող օգուտները պետք է համեմատել կորուստների հետ:

Պետական գները զրկում են գներն իրենց հավասարակշռող գործառույթից: Գնային սահմանների հաստատումն առաջացնում է պակասուրդ

կան ավելցուկ: Ստորին սահմանի հաստատունը հանգեցնում է ավելցուկի, և պետությունը պետք է գնի այդ ավելցուկը՝ խթանելու համար սպառողական պահանջարկը:

#### Հարց 4. Առաջարկի և պահանջարկի գնային ճկունություն

Ճկունություն տերմինն օգտագործվում է չափելու համար, թե ինչպես է մի փոփոխական մեծությունն ազդում մյուսի փոփոխության վրա: Գոյություն ունի պահանջարկի և առաջարկի ճկունություն՝ ըստ գնի, ըստ եկամտի և խաչաձև ճկունություն:

Թե ինչ չափով է շուկայում պահանջարկի ծավալը մեծանում գնի տվյալ անկման դեպքում կամ կրճատվում է գնի տվյալ աճի դեպքում, բնութագրում է պահանջարկի ճկունության աստիճանը՝ կախված գնից: Պահանջարկի ճկունության գործակիցը՝ կախված գնից ( $E_D^P$ ), իրենից ներկայացնում է պահանջարկի տոկոսային փոփոխության հարաբերությունը գնի տոկոսային փոփոխությանը, որն արտահայտվում է՝

$$E_D^P = \frac{\Delta Q}{Q} : \frac{\Delta P}{P} \text{ որտեղ՝}$$

$E_D^P$  –  $E$ ՝ պահանջարկի գնային ճկունությունն է,

$Q$  –  $Q$ ՝ գնվող ապրանքների քանակն է,

$\Delta Q$  –  $\Delta Q$ ՝ գնվող ապրանքների քանակի աճն է,

$P$  –  $P$ ՝ գնվող ապրանքների գինն է,

$\Delta P$  –  $\Delta P$ ՝ գնվող ապրանքների գնի փոփոխությունն է:

Ճկունության գործակիցը ցույց է տալիս, թե քանի տոկոսով է փոխվում ապրանքի պահանջարկի չափը՝ այդ ապրանքի գնի մեկ տոկոսով փոխվելու դեպքում:

Տնտեսագետները գների փոփոխության հետևանքով սպառողների վարքագծի փոփոխությունը չափում են գնային ճկունության միջոցով: Գնային ճկունության էությունը հետևյալն է.

1. Եթե գնի չնչին փոփոխությունը հանգեցնում է գնվող ապրանքի ծավալի մեծ փոփոխության, ապա այդ ապրանքների պահանջարկն ընդունված է ճկուն համարել ( $E_D > 1$ ):

2. Եթե գնի էական փոփոխությունը հանգեցնում է գնվող ապրանքի ծավալի չնչին փոփոխության, ապա այդ ապրանքների պահանջարկը ոչ ճկուն է ( $E_D < 1$ ):

3. Եթե գնի տոկոսային փոփոխությունը ճշտորեն (նույն չափով) փոխհատուցվում է պահանջարկի համապատասխան փոփոխությամբ, ապա գործ ունենք պահանջարկի միավոր (մեկական) ճկունության հետ ( $E_D=1$ ):

4. Բացարձակ ոչ ճկուն պահանջարկը նշանակում է, որ գնի ցանկացած փոփոխության չի հանգեցնում պահանջարկի ծավալի փոփոխության, այսինքն՝ 0-ական ճկունություն է ( $E_D=0$ ):

Պահանջարկի ճկունության գործակիցը՝ ըստ գնի, որպես կանոն, համարվում է բացասական մեծություն: Բայց և այնպես, տնտեսագիտության տեսության մեջ ընդունված է հաշվի առնել այդ ցուցանիշի բացարձակ մեծությունը՝ առանց ուշադրություն դարձնելու «մինուս նշանին»: Օրինակ, շաքարի 1 կգ-ի գնի 10%-ով բարձրացումը առաջ է բերում շաքարի պահանջարկի 5%-ով նվազում: Ճկունության գործակիցը հավասար է՝

$$E_D^P = \frac{-5\%}{10\%} = -\frac{1}{2}$$

Բայց մեզ հետաքրքրում է բացարձակ մեծությունը, որը հավասար է 0,5-ի (առանց մինուս նշանի):

Պահանջարկի գնային ճկունության վրա ազդող գործոններն են.

1. Փոխարինող ապրանքների (ապրանք սուբստիտուտների) առկայությունը, օրինակ՝ թեյը փոխարինում է սուրճին: Ինչքան դրանք շատ են, այնքան ճկուն է տվյալ ապրանքի պահանջարկը:

2. Սպառողների եկամուտների մեծությունը:

3. Տվյալ ապրանքի տեսակարար կշիռը սպառողի բյուջեում. եթե մեծ տեսակարար կշիռ ունի տվյալ ապրանքը սպառողի եկամտի մեջ, այլ հավասար պայմանների դեպքում, բարձր կլինի այդ ապրանքի պահանջարկի ճկունությունը:

4. Ապրանքների որակը:

5. Պերճանքի ապրանքների և առաջին անհրաժեշտության սպառման առարկաների պահանջարկը. սովորաբար առաջին անհրաժեշտության սպառման առարկաների պահանջարկը ճկուն է, իսկ պերճանքի և երկարատև օգտագործման ապրանքների պահանջարկը ճկուն է:

6. Ժամանակի տևողությունը, որի ընթացքում ընդունվում է ապրանքը գնելու որոշումը: Կարճ ժամանակահատվածում պահանջարկն ավելի ճկուն է, քան երկարում: Սա կապված է սպառողների (մարդկանց) դանդաղ և մշտական հարմարվողականության հետ:

7. Սպառողների սպասումները և այլն:

Տվյալ ապրանքի պահանջարկը, ինչպես արդեն նշվել է, կախված է ոչ միայն իր, այլև մյուս ապրանքների գներից: Այստեղ պետք է նշել, որ բացի ապրանք-սուբստիտուտներից, գոյություն ունեն ապրանք-կոմպլե-

մենտներ (փոխլրացնող ապրանքներ, օրինակ՝ ֆոտոապարատը և ֆոտո-  
ծապավենը): Բացի ապրանքների այդ խմբերից, գոյություն ունեն նաև  
անկախ ապրանքներ (օրինակ՝ կոշիկը և հացը):

Մի ապրանքի պահանջարկի ճկունության հարաբերությունը մյուս ապ-  
րանքի գնի փոփոխությանը, կոչվում է խաչաձև ճկունություն:

Պահանջարկի խաչաձև ճկունության գործակիցն իրենից ներկայաց-  
նում է  $k$  ապրանքի պահանջարկի փոփոխությունների հարաբերությունը  
 $n$  ապրանքի գնի առաջ եկած փոփոխությանը:

$$E_{k,n}^P = \frac{\Delta Q_k}{Q_k} : \frac{\Delta P_n}{P_n}$$

Սուբստիտուտ ապրանքների գնի փոփոխման դեպքում ճկունության  
խաչաձև գործակիցը  $0$ -ից բարձր է (սուբճի գնի բարձրացումն առաջ է բե-  
րում թեյի պահանջարկի աճ):

Փոխլրացնող ապրանքների գնի փոփոխման դեպքում ճկունության  
խաչաձև գործակիցը  $0$ -ից փոքր է (ֆոտոծապավենի գնի աճը առաջ է բե-  
րում ֆոտոապարատների պահանջարկի իջեցում):

Անկախ ապրանքների գնի փոփոխման դեպքում ճկունության խաչաձև  
գործակիցը հավասար է  $0$ -ի (կոշիկի գնի աճը չի փոփոխում հացի պա-  
հանջարկը):

Երբ խոսում ենք պահանջարկի մասին, ապա, իհարկե, ենթադրում ենք  
վճարունակ պահանջարկ: Դրա համար էլ, ինչպես նախկինում ցույց է  
տրված, կարևորագույն գործոններից մեկը, ինչն ազդում է պահանջարկի  
վրա, համարվում է եկամուտների մակարդակը: Եկամուտների փոփոխ-  
ման դեպքում ապրանքների պահանջարկը տարբեր ձևով է փոփոխվում:  
Դրա հետ կապված՝ խոսում ենք եկամտով պայմանավորված պահան-  
ջարկի ճկունության մասին:

Եկամտի ազդեցությունը պահանջարկի վրա որոշում են ճկունության  
գործակցի միջոցով.

$$E_D^R = \frac{\Delta Q}{Q} : \frac{\Delta R}{R}, \text{ որտեղ՝}$$

$E_D^R$  – ը՝ պահանջարկի ճկունության գործակիցն է՝ կախված եկամտից,

$Q$  –  $n$  պահանջարկի ծավալն է,

$R$  – ը՝ գնորդի եկամուտը:

Ապրանքների մեծ մասի համար եկամտի և պահանջարկի կախվածու-  
թյունը ուղղակի է, այսինքն՝ եկամտի աճի հետ մեծանում է պահանջարկը:  
Սակայն որոշ դեպքերում կախվածությունը կարող է լինել հակադարձ:

---

Սովորաբար դա վերաբերում է ցածր որակի ապրանքներին, ցածր սպառողական հատկություններով, ինչը օգտագործում են բնակչության աղքատ խավերը:

Գնային ճկունության գաղափարը կիրառելի է նաև առաջարկի համար: Էությունը հետևյալն է. եթե արտադրողները զգայուն են գների փոփոխության նկատմամբ, ապա առաջարկը ճկուն է, և հակառակը:

Պահանջարկի ճկունության բանաձևն ընդունելի է նաև առաջարկի ճկունության որոշման համար: Միակ տարբերությունն այն է, որ «գնվող ապրանքի ծավալի» փոխարեն պետք է օգտագործել «առաջարկվող ապրանքի քանակ» կատեգորիան:

Առաջարկի ճկունության գործակիցը ( $E_S^P$ ) իրենից ներկայացնում է առաջարկի փոփոխման հարաբերությունը գների փոփոխությունը:

$$E_S^P = \frac{\Delta Q}{Q} : \frac{\Delta P}{P}$$

Եթե առաջարկի մեծությունը փոխվում է միևնույն ուղղությամբ, ապա առաջարկի ճկունությունը համարվում է դրական:

Ապրանքի առաջարկի ճկունությունը կախված է բազմաթիվ գործոններից. տարբեր ձեռնարկություններում ծախքերի կառուցվածքից, արտադրական հզորությունների ծանրաբեռնման աստիճանից, ազատ բանվորական ուժի առկայությունից, աշխատուժի որակավորման բարձրացումից, մեկ ճյուղից մյուս ճյուղ կապիտալի հոսքի արագությունից և այլն: Ընդ որում, ժամանակի գործոնը ավելի մեծ դեր է խաղում առաջարկի, քան պահանջարկի դեպքում, քանի որ առաջարկը ավելի քիչ փոփոխվող է, քան պահանջարկը: Ակնհայտ է, որ ժամանակահատվածի սահմանների մեծացման հետ մեկտեղ առաջարկի ճկունությունը, որպես կանոն, բարձրանում է:

Պահանջարկի և առաջարկի ճկունության հասկացությունը ըստ գնի, ունի մեծ գործնական նշանակություն ոչ միայն շուկայում սպառողի վարքագիծը կամ ֆիրմայի գնային ռազմավարությունը հասկանալու, այլև պետության տնտեսական քաղաքականության վերլուծության համար, մասնավորապես՝ հարկադրույքների որոշման քաղաքականության համար: Կարևորը այստեղ համարվում է հարկային բեռի բաշխումը:

## Համառոտ եզրակացություններ

1. Պահանջարկը ապրանքների և ծառայությունների այն քանակությունն է, որը գնորդը պատրաստ է ձեռք բերել տվյալ գնով և տվյալ պահին:
2. Ըստ պահանջարկի օրենքի՝ ինչքան բարձր է ապրանքի գինը, այնքան ցածր է պահանջարկը և հակառակը:
3. Առաջարկ է կոչվում ապրանքների և ծառայությունների այն քանակը, որը պատրաստ են վաճառել արտադրողները որոշակի գնով, որոշակի ծավալով, որոշակի ժամանակահատվածի ընթացքում:
4. Ըստ առաջարկի օրենքի՝ ինչքան բարձր է գինը, այնքան մեծ է արտադրության ծավալը:
5. Հավասարակշռված գնի պայմաններում առաջարկը համապատասխանում է պահանջարկին, և շուկայում ստեղծվում է հավասարակշռված իրավիճակ:
6. Պահանջարկի ճկունության գործակիցը՝ կախված գնից, իրենից ներկայացնում է պահանջարկի տոկոսային փոփոխության հարաբերությունը գնի տոկոսային փոփոխությանը:
7. Առաջարկի ճկունության գործակիցն իրենից ներկայացնում է առաջարկի փոփոխման հարաբերությունը գների փոփոխությունը:

### *Ինքնաստուգման հարցեր*

1. *Ի՞նչ է պահանջարկը:*
2. *Ի՞նչ է ցույց տալիս պահանջարկի օրենքը:*
3. *Ի՞նչ տեսք ունի պահանջարկի կորը:*
4. *Ի՞նչ գործոններ են ազդում պահանջարկի վրա:*
5. *Բացատրե՛ք եկամտի և փոխարինման էֆեկտները:*
6. *Բացատրե՛ք Գիֆենի, Վեբլենի և Սնոբի էֆեկտները:*
7. *Ի՞նչ է առաջարկը:*
8. *Ի՞նչ է ցույց տալիս առաջարկի օրենքը:*
9. *Ի՞նչ տեսք ունի առաջարկի կորը:*
10. *Ի՞նչ գործոններ են ազդում առաջարկի վրա:*
11. *Ինչպե՞ս է ձևավորվում հավասարակշռված գինը:*
12. *Ի՞նչ է ցույց տալիս պահանջարկի ճկունությունը ըստ գնի:*
13. *Ի՞նչ է ցույց տալիս առաջարկի ճկունությունը ըստ գնի:*
14. *Ի՞նչ գործոններ են ազդում պահանջարկի գնային ճկունության վրա:*
15. *Ի՞նչ գործոններ են ազդում առաջարկի ճկունության վրա:*

---

**ԹԵՄԱ 6. ԳՆԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ԵՎ  
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ. ԳՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ներկայացնել գնի էությունը, տեսակները և գնագոյացման սկզբունքները:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

ա. բնութագրել գին հասկացությունը, բացատրել շուկայական գների ձևավորումը և կարգավորումը,

բ. մեկնաբանել շուկայական տնտեսության պայմաններում գների հիմնական գործառույթները,

գ. ներկայացնել գների համակարգի 3 հիմնական ձևերը,

դ. ներկայացնել գների տեսակները,

ե. սահմանել մեծածախ և մանրածախ գների հասկացությունները և ձևավորման եղանակը:

**Հարց 1. Գնի էությունը և գնագոյացման հիմնական սկզբունքները**

Գինը փողի այն քանակությունն է, որի դիմաց վաճառողը պատրաստ է վաճառել տվյալ ապրանքը, և որով գնորդը պատրաստ է գնել այն:

Գինը ապրանքի արժեքի դրամական արտահայտությունն է:

Տնտեսագետների մի մասը գնի ձևավորման հիմքում դնում է ապրանքի արժեքի մեծությունը, մյուս մասը՝ սահմանային օգտակարությունը, ոմանք էլ՝ արտադրության ծախսերը:

Ժամանակակից տնտեսագիտության տեսության մեջ լայն տարածում է ստացել Ա. Մարշալի հայեցակետը, որը փորձում է միացնել այդ տեսությունները՝ ավելացնելով պահանջարկի և առաջարկի փոխհարաբերությունները:

Շուկայական գինը այն փաստացի գինն է, որը ձևավորվում է ապրանքների առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ:

Մարշալը շուկայական գնի ձևավորումը դիտարկում էր կարճ, միջին և երկար ժամանակահատվածների կտրվածքով:

Կարճ ժամանակահատվածում ապրանքների առաջարկը կայուն է, հետևաբար գնի մեծության վրա ազդում է միայն պահանջարկը:

Միջին ժամանակահատվածում առաջարկը աստիճանաբար մոտենում է պահանջարկին, և դրան համապատասխան՝ գները տատանվում են:

Երկար ժամանակահատվածի համար առաջարկը հարմարվում է պահանջարկին, և սահմանվում է կայուն գին:

---

Գնի ձևավորման վրա ազդում են երկու խումբ գործոններ՝ ներքին և արտաքին:

Ներքին կամ միկրոտնտեսական գործոնները կախված են ձեռնարկության գործունեությունից: Ներքին գործոններ են ապրանքի հատկությունները, արտադրության եղանակը, ապրանքի կենսապարբերաշրջանը և այլն:

Արտաքին կամ մակրոտնտեսական գործոնները կախված չեն ձեռնարկության գործունեությունից և հաշվի են առնում ընդհանուր տնտեսական փոփոխությունները երկրում և դրա սահմաններից դուրս: Դրանցից են՝ տնտեսական և քաղաքական կայունությունը երկրում, տնտեսության պետական կարգավորման աստիճանը, ինֆլացիայի մակարդակը և այլն:

## **Չափ 2. Գնի գործառույթները**

Շուկայական տնտեսության մեջ գինը կատարում է հետևյալ գործառույթները՝

1. Չաշվառման. այդ գործառույթի օգնությամբ գինը ցույց է տալիս, թե տվյալ ապրանքը, ծառայությունը արտադրելիս ինչքա՞ն ծախսեր են կատարվում, այսինքն՝ հասարակությունը իր պահանջունքները բավարարելու համար ինչքա՞ն ծախսեր է կատարում, որքանո՞վ են դրանք կարևոր, արդյունավետ և հիմնավորված, իսկ դրանց պատասխանը բացահայտվում է շուկայում, երբ տեղի է ունենում գործարք գնորդների և վաճառողների միջև: Բացի դրանից, գնի օգնությամբ են հաշվառվում տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունքները: Օրինակ՝ պետությունը հաշվառել չի կարող ՀՆԱ-ն՝ առանց գնի օգնության, կամ ֆիրման չի կարող իր շահույթը հաշվառել դարձյալ առանց գնի օգնության:

2. Կողմնորոշման:

3. Բաշխման:

4. Չավասարակշռության. այս գործառույթը սկսում է գործել պահանջարկի և առաջարկի փոխազդեցությամբ, ներգործությամբ, և դրանց շնորհիվ կարգավորվում է տնտեսությունը: Գինը բարոմետր է և ստեղծում է հավասարակշռված վիճակ, ինչը հուշում է տնտեսավարող սուբյեկտներին տվյալ գնի՝ հավասարակշռված կամ փաստացի, միջոցով պարզել՝ իր գործունեությունը ձեռնտու՞ է, թե՞ ոչ: Գնի օգնությամբ իրենց գործունեությունն են կարգավորում ոչ միայն առանձին ֆիրմաները, այլև ամբողջ հասարակությունը, երբ այն հաստատում է համապատասխանություն արտադրության և սպառման միջև:

5. Խթանման: Գինը դրդում է ձեռնարկություններին՝ մեծացնել արտադրության ծավալները, իջեցնել ծախքերը՝ բարձր շահույթ ստանալու

---

նպատակով, ինչն անմիջականորեն կապված է արտադրության գործոնների գների հետ:

6. Տեղեկատվական գործառույթի միջոցով տեղեկություններ են հաղորդում այն մասին, թե շուկայում ինչ փոփոխություններ են կատարվել արտադրության և սպառման բնագավառում, որը հուշում է տնտեսավարող սուբյեկտներին՝ ընտրել արդյունավետ և ճիշտ վարքագիծ:

Այս գործառույթների իրականացումը ենթադրում է գների ազատ սահմանում, իհարկե առանց մոնոպոլիաների և ինֆլյացիայի գոյության, որոնք խեղաթյուրում են գների իրական դինամիկան:

### **Հարց 3. Գների համակարգը**

Գների համակարգը, իր բազմազանությամբ հանդերձ, կարելի է դասակարգել երեք տեսակի՝ պետական, պայմանագրային և համաշխարհային:

Պետական գները կարող են սահմանվել մոնոպոլիաների թողարկած արտադրանքի վրա՝ հաշվի առնելով երկրի բազային ռեսուրսները:

Պետական գների համակարգը բաղկացած է՝

ա) հաստատագրված գներից, որոնք խստորեն հաստատված են կառավարության կողմից,

բ) կարգավորվող գներից, երբ հաշվի է առնվում առաջարկի և պահանջարկի փոխհարաբերության փոփոխությունը շուկայում:

Պայմանագրային գներն այն գներն են, որոնք ձևավորվում են գնորդների և վաճառողների փոխհամաձայնությամբ: Պայմանագրային գների տեսակարար կշիռը տվյալ երկրի գների համակարգում արտահայտում է այդ երկրի տնտեսական «ազատականացման» աստիճանը:

Համաշխարհային գները կիրառվում են միջազգային առևտրում՝ արտահանման և ներմուծման գործարքներն իրականացնելիս:

Շուկայական գները, ըստ ձևավորման պայմանների, լինում են ազատ, մենաշնորհային և դեմպինգային:

Ազատ գները ձևավորվում են առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ՝ ազատ մրցակցության պայմաններում:

Մենաշնորհային գները ձևավորվում են մեկ կամ մի քանի տնտեսավարող սուբյեկտների մենաշնորհային իշխանության պայմաններում:

Դեմպինգային գները մեկ կամ մի քանի տնտեսավարող սուբյեկտների կողմից շուկայական գնի համեմատ սեփական արտադրանքի ցածր գնի սահմանումն է՝ մրցակիցներին շուկայից դուրս մղելու և վաճառքի ծավալների մեծացման նպատակով:

Անհրաժեշտ է տարբերել մանրածախ և մեծածախ գները:

---

Մանրածախ գինը այն գինն է, որով սպառման առարկաներն անմիջապես վաճառվում են սպառողներին, բնակչությանը: Այս գնով վաճառքի դեպքում ապրանքը դուրս է գալիս շրջանառության ոլորտից և անցնում է սպառման ոլորտ:

Մեծածախ գինն այն գինն է, որով ռեսուրսները, միջոցները, ապրանքները վաճառվում կամ փոխանակվում են տնտեսավարող սուբյեկտների միջև, բայց դուրս չեն գալիս շրջանառության ոլորտից: Մեծածախ գինն իր մակարդակով ավելի փոքր է (ցածր է), քան մանրածախ գինը:

Գոյություն ունի նաև տարիֆային գին, որը սահմանվում է որոշակի ծառայությունների համար վճարումներ իրականացնելիս:

Գների մակարդակը տվյալ երկրում արտադրված ապրանքների և ծառայությունների միջին կշռված գինն է:

Գների մակարդակն արտահայտվում է ինդեքսի միջոցով:

Գների ինդեքսը տվյալ ժամանակահատվածի ապրանքների և ծառայությունների ամբողջական գնի և համանման ապրանքների ու ծառայությունների ամբողջական գնի (բազիսային ժամանակահատվածի) հարաբերությունն է:

### **Համառոտ եզրակացություններ**

1. Գինը փողի այն քանակությունն է, որի դիմաց վաճառողը պատրաստ է վաճառել տվյալ ապրանքը, և որով գնորդը պատրաստ է գնել այն: Գինը ապրանքի արժեքի դրամական արտահայտությունն է:

2. Տնտեսագետների մի մասը գնի ձևավորման հիմքում դնում է ապրանքի արժեքի մեծությունը, մյուս մասը՝ սահմանային օգտակարությունը, ոմանք էլ՝ արտադրության ծախսերը:

3. Շուկայական տնտեսության մեջ գինը կատարում է հետևյալ գործառույթները՝ հաշվառման, կողմնորոշման, բաշխման, հավասարակշռության, խթանման, տեղեկատվական:

4. Գների համակարգն, իր բազմազանությամբ հանդերձ, կարելի է դասակարգել երեք տեսակի՝ պետական, պայմանագրային և համաշխարհային:

5. Շուկայական գները, ըստ ձևավորման պայմանների, լինում են ազատ, մենաշնորհային և դեմպինգային:

6. Մանրածախ է այն գինը, որով սպառման առարկաներն անմիջապես վաճառվում են սպառողներին, բնակչությանը: Այս գնով վաճառքի դեպքում ապրանքը դուրս է գալիս շրջանառության ոլորտից և անցնում է սպառման ոլորտ:

7. Մեծածախ գինն այն գինն է, որով ռեսուրսները, միջոցները, ապրանքները վաճառվում կամ փոխանակվում են տնտեսավարող սուբյեկտ-

---

Ների միջև, բայց դուրս չեն գալիս շրջանառության ոլորտից: Մեծածախ գինն իր մակարդակով ավելի փոքր է (ցածր է), քան մանրածախ գինը:

***Ինքնաստուգման հարցեր***

- 1. Ի՞նչ է գինը:*
- 2. Ի՞նչն է ընկած գնի ձևավորման հիմքում:*
- 3. Որո՞նք են գնի ձևավորման վրա ազդող ներքին և արտաքին գործոնները:*
- 4. Ի՞նչ գործառույթներ է կատարում գինը:*
- 5. Ի՞նչ է շուկայական գինը:*
- 6. Գնի ի՞նչ տեսակներ գիտեք:*
- 7. Ի՞նչ է դեմպինգային գինը:*
- 8. Ի՞նչ տարբերություն կա մանրածախ և մեծածախ գների միջև:*
- 9. Ի՞նչ է գների ինդեքսը:*

---

## ԹԵՄԱ 7. ՄՊԱՌՈՐԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ներկայացնել օգտակարության և սպառողական վարքագծի էությունը:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

- ա. բնութագրել օգտակարությունը և դրա տեսակները,
- բ. ներկայացնել սահմանային օգտակարության անկման օրենքը,
- գ. ներկայացնել սպառողի վարքի տեսությունը որպես պահանջարկի տեսության հիմք,
- դ. մեկնաբանել անտարբերության կորերը և բյուջետային սահմանափակման էությունը,
- ե. բնութագրել արտադրողի և սպառողի ավելցուկը:

### Չարգ 1. Օգտակարություն. էությունը և տեսակները


Յուրաքանչյուր ապրանք պետք է օժտված լինի որևէ օգտակարությամբ: Օգտակարությունն ապրանքի կամ ծառայության ունակությունն է՝ բավարարելու մարդկային այս կամ այն պահանջմունքը, և դրանց սպառումից ստացված սուբյեկտիվ բավարարվածությունն է: «Բարիքի օգտակարության էֆեկտ» ասելով հասկացվում է բավարարվածությունը, որ մարդիկ ստանում են դրանց սպառումից, այսինքն՝ բարիքի օգտակարությունը որոշվում է մարդու որևիցե պահանջմունք բավարարելու ունակությամբ: Դա ընդունված է նշանակել  $U$  (յուտիլ) սիմվոլով:

Սահմանային օգտակարության տեսությունը դիտարկում է ընդհանուր և սահմանային օգտակարություն հասկացությունները:

Ընդհանուր օգտակարությունը սպառված բոլոր բարիքների օգտակարությունն է:

Սահմանային օգտակարությունը յուրաքանչյուր հաջորդ լրացուցիչ միավոր բարիքի սպառումից ստացված օգտակարությունն է: Օրինակ, ենթադրենք՝ Դավիթը ձեռք է բերում  $X$  ապրանք՝ իր ինչ-որ կարիքի բավարարման համար, այսինքն՝  $X$  ապրանքն ունի որոշակի օգտակարություն նրա համար: Եթե Դավիթը գնում է  $X$  ապրանքի հաջորդ միավորը (օրինակ՝ խնձոր), ապա յուրաքանչյուր նոր գնում կմեծացնի օգտակարությունը, որ ստանում է Դավիթը  $X$  ապրանքից:  $X$  ապրանքի ձեռք բերված բոլոր միավորների օգտակարության գումարը (ընդունենք՝ 5 կգ խնձոր) կոչվում է  $X$  ապրանքի «ընդհանուր կամ համախառն օգտակարություն» ՏՆ-տեսագիտական գրականության մեջ դա ընդունված է նշանակել  $TU$  տառով (total utility -  $TU$ ):

Ընդհանուր օգտակարությունը կարելի է ներկայացնել հետևյալ գծանկարի միջոցով.



**Գծանկար 10. Ընդհանուր օգտակարություն**

Աբսցիսների առանցքը ցույց է տալիս սպառվող բարիքի քանակությունը, իսկ օրդինատների առանցքը՝ ընդհանուր օգտակարությունը: Բարիքի քանակության աճին զուգընթաց՝ ընդհանուր օգտակարությունն աճում է, բայց դրա աճի տեմպն աստիճանաբար նվազում է, և բարիքի որոշակի քանակության պայմաններում ընդհանուր օգտակարությունը հասնում է իր առավելագույն մակարդակին:

Եթե Դավիթը ձեռք է բերում X ապրանքի ևս մեկ միավոր (1 կգ խնձոր), ապա ընդհանուր օգտակարությունն ավելանում է մի մեծությամբ, որն անվանում են «սահմանային օգտակարություն» (marginal utility - MU): Այսինքն, սահմանային օգտակարությունը հավասար է ընդհանուր օգտակարության այն աճին, ինչը բերում է X ապրանքի յուրաքանչյուր լրացուցիչ միավորի սպառումը:

Այսպիսի սահմանազատումը թույլ տվեց գիտականորեն բացատրել «Սմիթի պարադոքսը», որի էությունը հետևյալն է՝ եթե արժեքի մեծությունը պայմանավորված է օգտակարության էֆեկտով, ապա ինչու այն բարիքները, որոնք մարդու կյանքում ունեն առավել բարձր օգտակարության էֆեկտ (օրինակ՝ ջուրը, հացը), որպես կանոն, ունեն փոքր արժեք, այն դեպքում, երբ բարիքները, որոնց օգտակարությունն անհատի բնական պահանջումների տեսանկյունից այնքան էլ էական չէ (ադամանդ և այլն), ունեն շատ բարձր արժեք: Սմիթը չկարողացավ գտնել այդ պարադոքսի լուծումը և այդ իսկ պատճառով դիմեց ծախսերին: Նրան հետևեցին նաև Ռիկարդոն, Մարքսը, Միլլը և այլք:

Այդ հակասությունը Բեմ-Բավերկը (ավստրիացի հայտնի տնտեսագետ) բացատրեց հետևյալ կերպ. «Արժեքը (զնահատականը) ենթադրում է

---

առարկաների քանակի ուղղակի սահմանափակություն, և արժեքի (գնահատականի) բացակայությունը ենթադրում է դրանց առատություն»:


Այսպիսով, գնահատականը որոշվում է վերջին միավորում առկա սուբյեկտիվ սահմանային օգտակարությամբ, որն ունի սուբյեկտիվ բնույթ: Եթե առկա է բարիքի շատ մեծ քանակություն, ապա որքան էլ մեծ լինի դրա համախառն օգտակարությունը, վերջին միավորի օգտակարությունը հավասար կլինի զրոյի, և քանի որ միևնույն է, թե հատկապես որ միավորը կհամարվի վերջին, այդ իսկ պատճառով զրոյի հավասար կլինի ցանկացած միավորի օգտակարությունը: Տվյալ բարիքը, ըստ Մենգերի, կոչվում է ոչ տնտեսական: Եթե բարիքի (օրինակ՝ ադամանդի) ամբողջ քանակության համախառն օգտակարությունն այնքան էլ մեծ չէ, ապա դրա քանակության սահմանափակությունը հանգեցնում է այն բանին, որ վերջին միավորը գնահատվում է բավականին բարձր. այդ բարիքը ձեռք է բերում տնտեսական բնույթ և գնահատական (արժեք):

Մարդը, սովորաբար, զգում է տվյալ բարիքի ոչ թե ամբողջ քանակության, այլ նրա որոշակի մասի կարիքը: Բարիքի յուրաքանչյուր նոր միավորի օգտակարությունը կախված է արդեն նրա մոտ ունեցած միավորներից: Բարիքի նոր միավորի պահանջը, դրանց թվի ավելացման հետ մեկտեղ, աստիճանաբար նվազում է: Այդ իսկ պատճառով, բարիքի յուրաքանչյուր նոր միավորի օգտագործումից մեծանում է բավարարվածության աստիճանը, իսկ բարիքի յուրաքանչյուր հաջորդ միավորի օգտակարությունը նվազում է, ինչը հենց համարվում է նվազող սահմանային օգտակարության օրենք:

Սկզբում այդ օրենքը գերմանացի տնտեսագետ Գոսսենի (1810-1858) կողմից իր «Մարդկային փոխազդեցության օրենքների զարգացում» աշխատությունում ձևակերպվել է որպես «պահանջմունքների բավարարման օրենք»: Տնտեսագիտական գրականության մեջ այն ստացել է «Գոսսենի առաջին օրենք» անվանումը: Մեծաթիվ ապրանքների համար այդ օրենքը գործում է ապրանքի երկրորդ կամ երրորդ միավորից: Առանձին դեպքերում ինչ-որ ապրանքի սպառման սկզբնական փուլում սահմանային օգտակարությունը կարող է աճել: Օրինակ, շոգ ժամանակ երկրորդ և նույնիսկ երրորդ պաղպաղակից ստացված հագեցվածությունը, որպես բացառություն, կարող է գերազանցել առաջինից ստացված հագեցվածությանը: Այս օրենքը չի ասում, որ մեզ դուր չի գալիս մի քանի անգամ կինո գնալ: Այն պարզապես պնդում է, որ սպառողն ավելի բարձր է գնահատում առաջին անգամը, քան երկրորդը: Դրա հետ մեկտեղ, նման գնահատման մեջ իր ուրույն տեղն ունի ժամանակի գործոնը. եթե առաջին այցելությունը եղել է անցյալ տարի, ապա այս տարի այն ևս նույն չափով

կարժևորվի: Այս օրենքը կիրառելի է հիմնականում կարճ ժամանակահատվածի համար:

Սահմանային օգտակարությունը կարելի է ներկայացնել հետևյալ գծանկարի տեսքով.



Գծանկար 11. Սահմանային օգտակարություն

Աբսոլյուտ արժեքի վրա պատկերված է սպառվող բարիքի քանակությունը, իսկ օրդինատների արժեքի վրա՝ սահմանային օգտակարությունը: Գծանկարից երևում է, որ սպառվող բարիքի քանակության աճին զուգընթաց՝ դրա վերջին միավորի օգտակարությունը (MU) նվազում է:

Այսպիսով, ինչպես երևում է ընդհանուր և սահմանային օգտակարության կորերից, բարիքի քանակության աճին զուգընթաց ընդհանուր օգտակարությունն աճում է, իսկ սահմանային օգտակարությունը՝ նվազում:

Օգտակարության չափման հետ կապված բոլոր տեսակետները կարելի է միավորել երկու խմբում: Որոշ տնտեսագետներ կիրառում են, այսպես կոչված՝ «կարդինալիստական մոտեցում»: Նրանք փորձում են ներմուծել օգտակարության չափման տարբեր քանակական չափանիշներ՝ դրամական և այլն: Մյուս տնտեսագետները կիրառում են օրդինալիստական մոտեցում (Die Ordnung գերմաներեն թարգմանաբար նշանակում է կարգ ու կանոն, կարգապահություն): Նրանք ենթադրում են՝ քանի որ *սահմանային օգտակարություն* կատեգորիան կրում է խիստ սուբյեկտիվ բնույթ, այսինքն՝ յուրաքանչյուր առանձին սպառողի համար ցանկացած

ապրանքի օգտակարությունը տեսականորեն միշտ անհատական է, այն անհնար է չափել: Նրանց տեսանկյունից նպատակահարմար է ներմուծել օգտակարության «օրդինալ, այսինքն՝ դասական» մեծություններ, որոնց օգնությամբ կարելի է որոշել, թե ինչպես է փոփոխվել պահանջմունքի բավարարման աստիճանը: Դիտարկենք օգտակարության քանակական չափման օրինակ՝ կիրառելով միավորներ, որոնք կոչվում են «յուտիլներ»: Օգտակարության քանակական չափման համար ենթադրվում է, որ յուրաքանչյուր սպառող իր գլխում ունի օգտակարությունը չափող ինչ-որ մի սարք, որը թույլ է տալիս չափել, թե որքանով է սպառողը բավարարված: Աղյուսակ 3-ում ներկայացված է խնձորի օգտակարությունը X սպառողի համար: Համախառն օգտակարությունը որոշվում է՝ գումարելով առաջին միավորի (այնուհետև երկրորդ և այլն) համախառն օգտակարությունը և հաջորդ միավորի սահմանային օգտակարությունը:

Ապրանքի միավոր	Սահմանային օգտակարություն – MU (յուտիլ)	Համախառն օգտակարություն –TU (յուտիլ)
Առաջին	10	10
Երկրորդ	6	16
Երրորդ	2	18
Չորրորդ	0	18
Հինգերորդ	-5	13

Այսպիսով, 3 խնձորի համախառն օգտակարությունը որոշվում է այսպես՝  $10+6+2=18$  յուտիլ կամ երկրորդ խնձորի համախառն օգտակարությանն ավելացրած երրորդ խնձորի սահմանային օգտակարությունը, այսինքն՝  $16+2=18$  յուտիլ:

Տվյալ օրինակում դիտարկվում է նվազող սահմանային օգտակարության օրենքը: Այն սկսում է գործել առաջին խնձորից. յուրաքանչյուր հաջորդ միավոր, նախորդի համեմատ, օժտված է ավելի փոքր օգտակարությամբ:

20-րդ դարի սահմանային օգտակարության տեսությունում տիրապետող դարձավ օրդինալիստական ուղղությունը: Նրա հիմնադիրներից մեկը իտալացի տնտեսագետ Վ. Պարետոն է:

---

Վ. Պարետոն սահմանային օգտակարության պրոբլեմն ուսումնասիրեց այլ տեսանկյունից, քան ավստրիական դպրոցի ներկայացուցիչներն ու տնտեսագետ-մաթեմատիկոսները: Նա սահմանային օգտակարությունն ընդունեց ոչ որպես գնի միակ հիմք, այլ որպես մեկն այն գործոններից, որը պահանջարկի վրա ազդելու միջոցով ներգործում է գների փոփոխության վրա: Սահմանային օգտակարության մասին ուսմունքում Պարետոն մի շարք նորանուծություններ կատարեց: Եթե Ա. Մարշալը հնարավոր էր համարում սահմանային օգտակարության չափումը, ապա Պարետոն առաջ քաշեց սահմանային օգտակարության ճշգրիտ չափման անհնարինության թեզը և առաջարկեց անցնել մի ապրանքի՝ մյուսի նկատմամբ ունեցած նախապատվության գնահատմանը: Որպես վերլուծության միջոց՝ նրանց կողմից առաջարկվել են «անտարբերության կորեր»:

Օրդինալիստների գաղափարները քննարկել է նաև Պ. Հիքսը: Նա, ինչպես և Պարետոն, անհրաժեշտ համարեց հրաժարվել սահմանային օգտակարության ճշգրիտ չափումից և ուշադրությունը կենտրոնացնել սպառողի նախապատվության վրա:

## **Հարց 2. Սպառողական վարքագիծ. անտարբերության կորեր Բյուջետային սահմանափակությունը և սպառողի հավասարակշռությունը**

Արտադրության զարգացման համար մեծ նշանակություն ունի սպառողի վարքագիծը: Սպառողական վարքը տարբեր ապրանքների և ծառայությունների նկատմամբ մարդկանց պահանջարկի ձևավորման գործընթացն է: Ցանկացած տնտեսավարող սուբյեկտ և անհատ ունի սպառման իր նախասիրությունները: Այդ նախասիրություններն ունեն ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հիմքեր:

Օբյեկտիվ հիմքն արտահայտվում է տվյալ հասարակության զարգացման մակարդակով կամ քաղաքակրթության աստիճանով: Այն ընդգրկում է տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային զարգացման մակարդակների ամբողջությունը, ինչպես նաև ազգային, տեղային սովորույթներն ու ավանդույթները, ինչի հիմքի վրա էլ ձևավորվում է ազգային մտածողությունը:

Սուբյեկտիվ հիմքը պայմանավորված է տվյալ անհատի սուբյեկտիվ ընկալումներով, նրա անհատականությամբ: Մարդկանց վարքագիծը սպառման բնագավառում կախված է նրանց նախապատվություններից և շատ հաճախ էլ անկանխատեսելի է, ինչը կարող է լինել հանգամանքների

ազդեցությամբ, այսպես կոչված՝ «գնորդական փոխազդեցությունների էֆեկտների» պատճառով: Օրինակ, սպառողների վարքում երբեմն տեղի ունի «թանկացման էֆեկտ», երբ գնումը կատարվում է միայն այն պատճառով, որ այն արդեն կատարել են հարևանները, ուրիշները: Պակաս դեր չունի նաև «բացառիկության ցուցադրման էֆեկտը», այսինքն՝ սպառողները ցուցադրական ձևով կատարում են թանկարժեք ապրանքների գնումներ ոչ թե գործածության համար, այլ որպեսզի ցույց տան սեփական կարողությունների բացառիկությունը: Սակայն կարելի է նշել մի քանի գործոններ, որոնք ընդհանրական են սպառողական վարքագծի ձևավորման ժամանակ.

1. եկամտի մեծությունը կամ բյուջետային սահմանափակությունը,
2. գների մակարդակը,
3. փոխարինող և լրացնող ապրանքները,
4. միջին վիճակագրական սպառողն ունի նախընտրությունների հատուկ համակարգ, ճաշակ:

Յուրաքանչյուր սպառող իր գումարի դիմաց ձգտում է ստանալ «այն ամենը, ինչ հնարավոր է»: Այս օրինաչափությունները նշում էին դեռևս դասական քաղաքատնտեսության ներկայացուցիչները: Ժամանակակից գիտությունը սպառողի վարքագիծը բացատրում է սահմանային օգտակարության և անտարբերության կորերի միջոցով:

Յուրաքանչյուր սպառող ձգտում է այնպես տնօրինել իր դրամական եկամուտը, որ դրանից ստանա մաքսիմալ օգտակարություն: Նա չի կարող գնել այն ամենը, ինչ ցանկանում է, քանի որ նրա եկամուտը սահմանափակ է: Դրա համար էլ սպառողն ընտրություն է կատարում տարբեր ապրանքների միջև, որպեսզի սահմանված եկամտով ձեռք բերի իր համար նախընտրելի ապրանքներ և ծառայություններ:

Սպառողական վարքագծի էությունն այն է, որ ապրանքի ձեռքբերման համար ծախսված գումարից ստացվող օգտակարությունը հավասար լինի ապրանքի վրա կատարված ծախսումից ստացվող օգտակարությանը:

Սա կոչվում է օգտակարության մաքսիմալացման օրենք կամ Գոսսենի երկրորդ օրենք:

Եթե սպառողը «հավասարակշռի սահմանային օգտակարությունները», ապա ոչ մի բան չի ստիպի նրան փոխել իր ծախսերի կառուցվածքը: Սպառողը կհայտնվի հավասարակշռված իրավիճակում:

Մաթեմատիկորեն դա կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝

$$\frac{A(MU)}{A(P)} = \frac{B(MU)}{B(P)} = \frac{B(MU)}{B(P)}$$

Սպառողի վարքագծի ավելի խոր ուսումնասիրության համար օգտագործվում է անտարբերության կորերի և բյուջետային սահմանափակության մեթոդը:


Բյուջետային գիծը ցույց է տալիս երկու ապրանքների տարբեր համակցություն, որոնք կարող են ձեռք բերվել որոշակի դրամական եկամտով:

Օրինակ՝ եթե A ապրանքն արժե 15000 դրամ, իսկ B-ն՝ 10000 դրամ, ապա 120000 եկամտի դեպքում սպառողը կարող է ձեռք բերել նշված ապրանքների հետևյալ համակցություններից որևէ մեկը (տես՝ աղյուսակ 4):

*Աղյուսակ 4*

A ապրանքի քանակ (գինը 15000 դրամ)	B ապրանքի քանակ (գինը 10000 դրամ)	Ընդհանուր ծախսը (հազար դրամ)
8	0	120(120+0)
6	3	120(90+30)
4	6	120(60+60)
2	9	120(30+90)
0	12	120(0+120)

Բյուջետային գիծը կարելի է պատկերել գրաֆիկորեն.



**Գծանկար 12.** Բյուջետային սահմանափակության գիծ

AB բյուջետային գծի թեքությունը կախված է B ապրանքի գնի հարաբերությունից A ապրանքի գնին:

$$Bq_{ին}/Aq_{ին}=10000\eta/15000\eta=2/3$$


Բյուջետային գծի թեքությունը հավասար է 2/3, ինչը վկայում է, որ սպառողը պետք է հրաժարվի A ապրանքի 2 միավոր սպառելուց՝ B ապրանքի 3 միավոր ստանալու համար:

Փոխարինման առավելագույն չափը (Marginal rate of substitution - MRS) որոշվում է փոխարինվող ապրանքների գների հարաբերությամբ: Այսպես, եթե A-ն և B-ն փոխարինող ապրանքներ են, ապա սպառողն իր դրամական ծախսերով առավելագույն օգտակարություն ձեռք բերելու համար պետք է ղեկավարվի փոխարինման նորմայով, որը կարելի է արտահայտել՝

$$MRS_{AB} = \frac{MU_A}{MU_B} = \frac{P_A}{P_B}$$

Բյուջետային գծի տեղադիրքը կախված է մի շարք գործոններից, որոնցից կարևոր են դրամական եկամտի և գնի մեծությունը, և երկու արտադրատեսակների գնի իջեցումը նպաստում է կորի տեղաշարժին դեպի աջ: Այժմ դիտարկենք անտարբերության կորերը:


Անտարբերության կորն արտահայտում է 2 այնպիսի արտադրատեսակների համակցություն, որոնք սպառողի համար միևնույն օգտակարությունն ունեն: Եթե ենթադրենք, որ սպառողի համար միևնույն է, թե հնարավոր համակցություններից որը նախընտրի (12A 2B, 6A 4B, 4A 6B, 2A 8B), ապա գրաֆիկորեն արտահայտված դա կունենա հետևյալ տեսքը՝



**Գծանկար 13. Անտարբերության կոր**

Բայց կարող են գոյություն ունենալ անտարբերության կորերի այնպիսի համակցություններ, որոնք միմյանցից տարբերվում են օգտակարու-


թյան աստիճանով: Այդ համակցությունը կոչվում է անտարբերության կորերի քարտեզ: Անտարբերության կորերի քարտեզն անտարբերության կորերի ամբողջությունն է:



**Գծանկար 14. Անտարբերության կորերի քարտեզ**

Ինչքան բարձր է անտարբերության կորը, այնքան մեծ օգտակարություն է ներկայացնում սպառողի համար: 3-րդ կորի վրա գտնվող ցանկացած համակցություն սպառողի համար ավելի մեծ օգտակարություն ունի, քան 1-ին կամ 2-րդ կորերի վրա գտնվող ցանկացած համակցություն:

Ինչպես գիտենք, սպառողի համար եկամուտը սահմանափակ է, դրա համար էլ նա կփնտրի մի այնպիսի համակցություն, որի օգտակարությունն առավելագույնը կլինի իր բյուջեի մեծության սահմաններում: Դրա համար անհրաժեշտ է միացնել անտարբերության կորի և բյուջետային սահմանափակման գրաֆիկները:




**Գծանկար 15. Անտարբերության կորի և բյուջետային սահմանափակման գծի հատումը**

Անտարբերության 3-րդ կորն անհասանելի է սպառողի համար, քանի որ բյուջետային գծից բարձր է գտնվում:  $M$  և  $K$  հատման կետերը մատչելի են սպառողի համար, բայց ունեն ավելի քիչ օգտակարություն, քանի որ բյուջետային գծից ցածր են գտնվում:

Սպառողի հավասարակշռված վիճակն արտացոլում կամ արտահայտում է  $D$  կետը: Հասնելով այդ կետին՝ սպառողը գտնում է ամենաբարձր օգտակարությունը և կորցնում գնումների կառուցվածքը փոխելու անհրաժեշտությունը:

### Հարց 3. Սպառողի և արտադրողի ավելցուկը

Գործարքի արդյունքում հաղթում են երկուսը՝ և՛ գնորդը, և՛ վաճառողը (և՛ սպառողը, և՛ արտադրողը), այսինքն՝ փոխանակումը փոխադարձ շահավետ է: Այս օգուտը կոչվում է ավելցուկ կամ սպառողի ռենտա և արտադրողի ռենտա: Քննարկենք շուկայական հավասարակշռության հայտնի գծապատկերը:



Գծանկար 16. Սպառողի և արտադրողի ավելցուկը

$P_D$  – ն՝ պահանջարկի այն առավելագույն գինն է, որը գնորդը պատրաստ է վճարել:

$P_S$  – ը՝ առաջարկի այն նվազագույն գինը, որը վաճառողը պատրաստ է ստանալ: Սակայն գործարքը կատարվում է  $P_E$  գնով: Սպառողը պատրաստ էր վճարել ապրանքի  $Q_E$  միավորի համար գումար, որը հավասար է  $OP_DEQ_E$  ֆիգուրայի մակերեսին, իսկ գործնականում վճարում է գումար, որը հավասար է  $OP_EEQ_E$ -ի մակերեսին: Հետևաբար,  $P_E P_DE$ -ն կազմում է սպառողի ռենտան (կամ ավելցուկը):

Վաճառողը պատրաստ էր  $Q_E$  ծավալի համար ստանալ գումար, որը հավասար է  $OP_SEQ_E$ -ին, սակայն ստացավ գումար՝ հավասար  $OP_EEQ_E$ -

ին: Հետևաբար, վաճառողի (արտադրողի) ավելցուկը կազմում է այն գումարը, ինչը հավասար է  $P_S P_E E$ -ի մակերեսին:

### **Համառոտ եզրակացություններ**

1. Օգտակարությունն ապրանքի կամ ծառայության ունակությունն է՝ բավարարելու մարդկային այս կամ այն պահանջունքը և դրանց սպառումից ստացված սուբյեկտիվ բավարարվածությունն է:
2. Ընդհանուր օգտակարությունը սպառված բոլոր բարիքների օգտակարությունն է:
3. Սահմանային օգտակարությունը յուրաքանչյուր հաջորդ լրացուցիչ միավոր բարիքի սպառումից ստացված օգտակարությունն է:
4. Սպառողական վարքը տարբեր ապրանքների և ծառայությունների նկատմամբ մարդկանց պահանջարկի ձևավորման գործընթացն է:
5. Բյուջետային գիծը ցույց է տալիս երկու ապրանքների տարբեր համակցություն, որոնք կարող են ձեռք բերվել որոշակի դրամական եկամտով:
6. Անտարբերության կորն արտահայտում է 2 այնպիսի արտադրատեսակների համակցություն, որոնք սպառողի համար միևնույն օգտակարությունն ունեն:

### ***Ինքնաստուգման հարցեր***

1. *Ի՞նչ է ընդհանուր օգտակարությունը:*
2. *Ինչպիսի՞ն է ընդհանուր օգտակարության կորը:*
3. *Ի՞նչ է սահմանային օգտակարությունը, և ի՞նչ տեսք ունի դրա գծանկարը:*
4. *Ո՞րն է նվազող սահմանային օգտակարության օրենքի էությունը:*
5. *Ի՞նչ տարբերություններ կան օգտակարության չափման կարդինալիստական և օրդինալիստական մոտեցումների միջև:*
6. *Ի՞նչ է սպառողի վարքագիծը:*
7. *Ի՞նչ գործոններ են ազդում սպառողի վարքագծի ձևավորման վրա:*
8. *Ո՞րն է Գոսսենի երկրորդ օրենքի էությունը:*
9. *Ի՞նչ է իրենից ներկայացնում բյուջետային գիծը:*
10. *Ի՞նչ է անտարբերության կորը և անտարբերության կորերի քարտեզը:*
11. *Ի՞նչ ենք ստանում բյուջետային գծի և անտարբերության կորերի միացումից:*
12. *Ինչպե՞ս է ձևավորվում սպառողի և արտադրողի ավելցուկը:*

## ԹԵՄԱ 8. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՔԵՐ ԵՎ ՇԱՀՈՒՅԹ

*Թեմայի հիմնական նպատակն է՝ ներկայացնել ծախքերի և շահույթի ելությունը:*

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

ա. բնութագրել արտադրական ծախքերի տնտեսագիտական բովանդակությունը, արտադրության ծախքերը,

բ. ներկայացնել արտադրության հաստատուն և փոփոխական ծախսերը, ընդհանուր, միջին ու սահմանային ծախսերը, դրանց կորերը և փոխկապակցությունները,

գ. բնութագրել համախառն եկամուտը և շահույթը, շահույթի գործառույթները:

### Հարց 1. Ծախքերի ելությունը, կառուցվածքը և դասակարգումը

Ծախքերը արտադրության գործոնների ձեռքբերման համար կատարված վճարումների գումարներն են:

Ժամանակակից արևմտյան տնտեսագետներն արտադրության ծախքերը դիտարկում են տնտեսավարող սուբյեկտի տեսանկյունից: Նրանք ենթադրում են, որ ձեռներեցն արտադրության բոլոր գործոններից եկամուտ է ակնկալում: Սրա հիման վրա էլ արտադրության ծախքերի մեջ են ընդգրկում նաև ձեռներեցի եկամուտը (նորմալ շահույթը): Այս տեսության համաձայն՝ արտադրության ծախքերն ու նորմալ շահույթը կոչվում են տնտեսական ծախքեր:

Արտասահմանյան գրականության մեջ գոյություն ունի ծախքերի հետևյալ բարդ դասակարգումը:

Արտադրության ծախքերն այն բոլոր ծախքերն են, որոնք անհրաժեշտ են ապրանքների և ծառայությունների արտադրության համար: Դրանք կախված են Q թողարկումից՝ հետևյալ ֆունկցիոնալ կախվածությամբ.

$$C=f(Q)$$


Բայց ծախքերի տարբեր տարրերը տարբեր ձևով են կախված Q թողարկված արտադրանքից:

Ծախքերը, որոնք չեն փոփոխվում Q-ի աճի հետ կապված, համարվում են հաստատուն (FC - fixed costs), այսինքն՝ հաստատուն ծախքերը կախված չեն թողարկվող արտադրանքի ծավալից: Դրանց են վերաբերում ամորտիզացիոն հատկացումները, վարձավճարները, վարչակառավարչական ծախսերը և այլն: Այդ ծախսերը պետք է վճարվեն նույնիսկ ֆիրմայի աշխատանքի դադարեցման դեպքում: Փոփոխուն ծախքերը (VC - variable costs) կախված են թողարկվող արտադրանքի ծավալից: Դրանցից են՝ հում-

քի, նյութերի ձեռքբերման ծախսերը, բանվորների աշխատավարձը և այլն: Դրանք, արտադրանքի ծավալի աճից կախված, մեծանում են:

Արտադրության ծախքերի նման դասակարգումը ժամանակագրական առումով պայմանական բնույթ է կրում, քանի որ երկար ժամանակահատվածի համար հաստատուն ծախքերն էլ կարող են փոփոխությունների ենթարկվել:

Հաստատուն և փոփոխուն ծախքերի գումարը կազմում են համախառն կամ ընդհանուր ծախքերը՝ TC (total cost): Նշված ծախքերը հնարավոր է ներկայացնել գրաֆիկի օգնությամբ (գծանկար 17):



Գծանկար 17.  $TC = TFC + TVC$

Միավոր արտադրանքի վրա կատարված ծախքերի չափման համար օգտագործվում է միջին ծախքեր (ATC) կատեգորիան, որը հավասար է միջին փոփոխուն և միջին հաստատուն ծախքերի գումարին ( $AVC + AFC$ ):

Միջին ծախքերը շատ կարևոր են ֆիրմայի շահութաբերության որոշման համար: Եթե ապրանքի գինը հավասար է միջին ծախքերին, ապա ֆիրման շահույթ չի ապահովում:

Եթե գինը ցածր է միջին ծախքերից, ապա ֆիրման վնաս է կրում:

Եթե գինը բարձր է միջին ծախքերից, ապա ֆիրման շահութաբեր է:

Միջին ծախքերը հավասար են ընդհանուր ծախքերի և արտադրանքի ընդհանուր ծավալի հարաբերությանը:

$$ATC = \frac{TC}{Q} = AFC + AVC, \text{ այնպես, ինչպես } TC = FC + VC$$

Միջին հաստատուն ծախքերը որոշվում են՝ հարաբերելով ընդհանուր հաստատուն ծախքերը թողարկված արտադրանքի ծավալին:

$$AFC = \frac{TFC}{Q}$$

Միջին փոփոխուն ծախքերը գոյանում են՝ հարաբերելով ընդհանուր փոփոխուն ծախքերը թողարկված արտադրանքի ծավալին:

$$AVC = \frac{TVC}{Q}$$

Ըստ ծախքերի գնահատման մեթոդի՝ տարբերվում են հաշվապահական և այլընտրանքային ծախքեր կատեգորիաները:

Հաշվապահական ծախքերը ֆիրմայի փաստացի ծախսերն են՝ դրսից արտադրության գործոնների կամ պաշարների ձեռքբերման համար:

Արտադրության գործոնները տնտեսավարող սուբյեկտը կարող է օգտագործել տարբեր նպատակներով: Դրա համար էլ գոյություն ունեն բաց թողնված հնարավորությունների ծախքեր, կամ այլ կերպ՝ այլընտրանքային ծախքեր:

Այլընտրանքային ծախքերը արդյունքի արտադրության վրա կատարվող այն ծախսերն են, որոնք կարող էին օգտագործվել մի այլ արդյունքի ստեղծման համար: Այլընտրանքային ծախքերն այն գումարներն են, որը կարելի է ստանալ ռեսուրսների օգտագործման բոլոր հնարավոր տարբերակներից ամենաշահավետի ընտրության դեպքում:

Միջոցների ստացման տեսանկյունից՝ ծախքերը լինում են ներքին և արտաքին (ոչ ակնհայտ և ակնհայտ):

Արտաքին ծախքերը դրամական այն միջոցներն են, որոնք ֆիրման վճարում է մատակարարներին՝ հումքի, նյութերի և այլնի ձեռքբերման համար:

Ներքին ծախքերը ֆիրմայի սեփական և ինքնուրույն օգտագործվող ռեսուրսների դիմաց չվճարվող գումարներն են:

Օրինակ, հացահատիկի բերքի մի մասը ֆիրման օգտագործում է որպես սերմացու: Դա համարվում է սեփական ռեսուրս, օգտագործվում է ներքին կարիքների համար, և դրա դիմաց չի վճարվում:

Արտադրանքի առավելագույն թողարկման մակարդակի որոշման համար հաշվարկում են սահմանային ծախքերը: Սահմանային ծախքերը MC (marginal cost) յուրաքանչյուր հաջորդ լրացուցիչ միավոր արտադրանքի թողարկման վրա կատարված ծախսերն են:


Սահմանային ծախքերը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով՝

$$MC = \frac{\Delta TC}{\Delta Q}$$

այսինքն՝ ընդհանուր ծախքերի աճը ( $\Delta TC$ ) մեկ միավոր լրացուցիչ արտադրանքի թողարկման դեպքում ( $\Delta Q=1$ ):

Միջին ընդհանուր, միջին հաստատուն, միջին փոփոխական և սահմանային ծախքերը կարելի է ներկայացնել հետևյալ գծանկարի միջոցով.

Ինչպես երևում է գծանկարից, միջին հաստատուն ծախքերը (AFC) անընդհատ նվազում են, միջին փոփոխական ծախքերը (AVC) աճում են, միջին ընդհանուր ծախքերը (ATC) սկզբում նվազում են, հետո՝ աճում, իսկ սահմանային ծախքերը (MC) սկզբնական շրջանում նվազում են (մինչև N կետը), հետո՝ սկսում աճել:



Գծանկար 18. Միջին հաստատուն, փոփոխական, ընդհանուր և սահմանային ծախքերի կորերը.

**Հարց 2. Շահույթի տնտեսագիտական էությունը և գործառույթները**

Շահույթի հիմնախնդիրը տնտեսագիտության մեջ համարվում է ամենաբարդն ու վիճելին:

- Քննարկվում են հարցեր՝ կապված շահույթի աղբյուրի և նրա դերի մասին:
- Տարբեր դպրոցներ այդ հարցին տարբեր ձևով են պատասխանում:
- Մերկանտիլիստները գտնում էին, որ շահույթը ստեղծվում է շրջանառության մեջ, և դրա աղբյուրն էին համարում արտաքին առևտուրը:
- Սմիթն ու Ռիկարդոն շահույթը դիտարկում էին որպես պահում՝ բանվորի աշխատանքի արդյունքից:
- Մարքսը շահույթը դիտարկում էր որպես հավելյալ արժեքի ածանցյալ, ձևափոխված ձև, որը ստեղծվում է միայն վարձու աշխատանքով:
- Ժամանակակից արևմտյան տնտեսագետների կողմից այդ կատեգորիայի բնորոշումն իրենից ներկայացնում է տարբեր մոտեցումների սինթեզ, որոնցից կարևորներն են՝

- շահույթն արտադրության բոլոր գործոնների բերած եկամուտն է, այսինքն՝ ռենտան, տոկոսը, աշխատավարձը,

---

- շահույթը տեխնիկական նորարարությունների և ձեռնարկատիրական գործունեության փոխհատուցումն է,

- շահույթը վճար է ռիսկի և անորոշության դիմաց:

Ժամանակակից պատկերացումները շահույթի մասին մշակվում են երեք հիմնական ուղղություններով՝ քեյնսական, ինստիտուցիոնալ-սոցիոլոգիական և նորդասական:

Քեյնսականները առաջ են քաշում ամբողջական շահույթի տեսությունը մակրոտնտեսական մակարդակով:

Ինստիտուցիոնալ-սոցիոլոգիական տեսությունը շահույթը մեկնաբանում է սոցիալական, արտատնտեսական գործոնների տեսանկյունից: Օրինակ՝ հասարակության բոլոր անդամների բարօրության փորձերը և այլն:

Նորդասական տեսությունը շահույթը հետազոտում է առանձին ֆիրմայի մակարդակով, որը կարող է գործել և՛ կատարյալ, և՛ ոչ կատարյալ մրցակցության պայմաններում:

Ֆիրման հաշվում է համախառն, միջին և սահմանային եկամուտները: Համախառն եկամուտը հավասար է ողջ արտադրանքի իրացումից ստացված հասույթին՝  $TR = P \times Q$ , որտեղ՝  $TR$ -ը համախառն (ընդհանուր) եկամուտն է,  $P$ -ն՝ միավոր արտադրանքի գինն է,  $Q$ -ն՝ թողարկված արտադրանքի քանակն է: Միջին եկամուտը հաշվարկվում է միավոր արտադրանքի հաշվով:  $AR = TR/Q$ , որտեղ՝  $AR$ -ը միջին եկամուտն է: Սահմանային եկամուտը հաշվարկվում է յուրաքանչյուր հաջորդ լրացուցիչ միավոր արտադրանքի համար:  $MR = TR_n - TR_{(n-1)}$ , որտեղ՝  $MR$ -ը սահմանային եկամուտն է, որը հավասար է  $TR_n - TR_{(n-1)} = \Delta TR$ , այսինքն՝ համախառն եկամտի աճին, ինչը ստացվում է լրացուցիչ միավորի իրացումից:

Քանակական տեսանկյունից շահույթը դիտարկվում է որպես արտադրության իրացումից ստացված համախառն եկամտի և արտադրության ծախքերի տարբերություն՝  $P = TR - TC = PQ - TC$

Տնտեսագետները տարբերում են հաշվապահական և տնտեսական շահույթ կատեգորիաները:

Հաշվապահական շահույթը համախառն եկամտի և արտադրության հաշվապահական (արտաքին) ծախքերի տարբերությունն է:

Տնտեսական շահույթը համախառն եկամտի և տնտեսական ծախքերի տարբերությունն է, որն էլ տնտեսագիտության ուսումնասիրության առարկան է: Եթե ֆիրմայի համախառն եկամուտները հավասար են ծախքերին, ապա տնտեսական շահույթը «զրոյական» է կամ ասում են՝ «նորմալ»: Նշենք, որ տնտեսական ծախքերի մեջ է մտնում ձեռներեցի եկամուտը: Նորմալ շահույթը հիմնական հասկացությունն է «կապիտալ մրցակցության» դասական մոդելի մեջ:

---

Համարվում է, որ «նորմալ» (Մարքսի մոտ՝ միջին) շահույթը շահույթի այն մակարդակն է, որ թույլ է տալիս ֆիրմային մնալ «գործի մեջ»:

Ոչ կատարյալ մրցակցության պայմաններում ֆիրման ստանում է մոնոպոլ շահույթ:

Ֆիրմայի համար եկամտի կարևոր աղբյուր է համարվում հիմնադրական շահույթը, որը ձևավորվում է որպես բաժնետոմսի կուրսի և անվանական արժեքի տարբերություն:

Ֆիրմայի եկամտի հարաբերական մեծությունը բնութագրվում է շահույթի նորմայով:

Շահույթի նորման եկամտի և արտադրության ծախսերի հարաբերությունն է՝ արտահայտված տոկոսներով:

Շահույթը մի շարք գործառնություններ է կատարում.

1. Տնտեսական շահույթ ստանալու, մրցակիցներից առաջ անցնելու, շուկայում սեփական դիրքերն ամրապնդելու ձգտումը ձեռնարկատիրական գործունեության շարժիչ խթանն է: Տնտեսական շահույթի ակնկալիքը (սպասումը) խթանում է ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործմանը: Հույս ունենալով ստանալ շահույթ՝ ձեռնարկատերը ձգտում է այնպես կազմակերպել արտադրությունը, որ հասնի ծախսերի նվազեցման, և այդ նպատակով նա իրականացնում է տեխնիկական նորամուծություններ: Արդյունքում դա բերում է տնտեսական աճի և պահանջմունքների ավելի ամբողջական բավարարման:

2. Տնտեսական շահույթի գոյությունը նպաստում է ռեսուրսների ավելի արդյունավետ բաշխմանը՝ դրանց օգտագործման այլընտրանքային եղանակների միջև: Որոշակի ոլորտում միջին մակարդակից բարձր շահույթի առկայությունը վկայում է այդ ոլորտում ռեսուրսների ներդրման բարձր գրավչության մասին: Հետևաբար, ոչ շահութաբեր ոլորտներից ռեսուրսներն ուղղվում են դեպի շահութաբեր ոլորտներ, և արդյունքում մեծանում է տնտեսական համակարգի գործառնության արդյունավետությունը:

3. Շահույթը ոչ միայն խթանում է պահանջարկ ունեցող ապրանքների արտադրության ընդլայնմանը, այլև ֆինանսավորման աղբյուր է արտադրության ընդլայնման համար: Բարձր շահույթ ունեցող ձեռնարկությունները հնարավորություն ունեն այդ շահույթի մի մասը նորից ուղղել արտադրությանը՝ ներդրումների տեսքով, ընդ որում՝ ոչ միայն արտադրության մասշտաբների ընդլայնման, այլև դրա կատարելագործման, նոր տեխնիկայի մշակման և ներդրման նպատակով: Այլ կերպ ասած, տնտեսական շահույթի ստացումը ոչ միայն խթաններ է ստեղծում ձեռնարկատիրոջ համար, այլև իրական հնարավորություններ է ընձեռում՝ ապագայում ևս շահույթ ստանալու:

## **Համառոտ եզրակացություններ**

1. Ծախքերը արտադրության գործոնների ձեռքբերման համար կատարված վճարումների գումարներն են:

2. Հաստատուն ծախքերը կախված չեն թողարկվող արտադրանքի ծավալից: Դրանց են վերաբերում՝ ամորտիզացիոն հատկացումները, վարձավճարները, վարչակառավարչական ծախսերը և այլն:

3. Փոփոխուն ծախքերը կախված են թողարկվող արտադրանքի ծավալից: Դրանցից են՝ հումքի, նյութերի ձեռքբերման ծախսերը, բանվորների աշխատավարձը և այլն: Դրանք, արտադրանքի ծավալի աճից կախված, մեծանում են:

4. Հաշվապահական ծախքերը ֆիրմայի փաստացի ծախսերն են՝ դրսից արտադրության գործոնների կամ պաշարների ձեռքբերման համար:

5. Այլընտրանքային ծախքերը արդյունքի արտադրության վրա կատարվող այն ծախսերն են, որոնք կարող էին օգտագործվել մի այլ արդյունքի ստեղծման համար: Այլընտրանքային ծախքերն այն գումարներն են, որը կարելի է ստանալ ռեսուրսների օգտագործման բոլոր հնարավոր տարբերակներից ամենաշահավետի ընտրության դեպքում:

6. Միջոցների ստացման տեսանկյունից՝ ծախքերը լինում են ներքին և արտաքին (ոչ ակնհայտ և ակնհայտ): Արտաքին ծախքերը դրամական այն միջոցներն են, որոնք ֆիրման վճարում է մատակարարներին՝ հումքի, նյութերի և այլնի ձեռքբերման համար: Ներքին ծախքերը ֆիրմայի սեփական և ինքնուրույն օգտագործվող ռեսուրսների դիմաց չվճարվող գումարներն են:

7. Քանակական տեսանկյունից շահույթը դիտարկվում է որպես արտադրության իրացումից ստացված համախառն եկամտի և արտադրության ծախքերի տարբերություն:

### ***Ինքնաստուգման հարցեր***

- 1. Ի՞նչ են արտադրության ծախքերը:*
- 2. Որո՞նք են հաստատուն և փոփոխուն ծախքերը և ինչպե՞ս են պատկերվում գծանկարի տեսքով:*
- 3. Ինչպե՞ս են որոշվում միջին ծախքերը:*
- 4. Ինչպե՞ս են որոշվում սահմանային ծախքերը:*
- 5. Որո՞նք են հաշվապահական և այլընտրանքային ծախքերը:*
- 6. Ի՞նչ է շահույթը, և ինչպե՞ս է այն որոշվում:*
- 7. Ինչպե՞ս է որոշվում համախառն, միջին և սահմանային եկամուտը:*
- 8. Ո՞րն է «նորմալ» շահույթը:*
- 9. Որո՞նք են շահույթի գործառույթները:*

---

**ԹԵՄԱ 9. ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ.  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՆՈԴՈՒԼԻԱ**

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ներկայացնել մրցակցության էությունը և տեսակները:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

ա. ներկայացնել մրցակցության էությունը, կատարյալ և ոչ կատարյալ մրցակցությունը,

բ. ներկայացնել մոնոպոլիան, մոնոպոլիստական մրցակցությունը և օլիգոպոլիան շուկայական տնտեսությունում,

գ. բնութագրել մոնոպոլիաների իշխանության աստիճանի որոշումը:

**Չարդ 1. Մրցակցությունը և դրա տարատեսակները**

Շուկայական տնտեսության գլխավոր առանձնահատկություններից է ընտրության ազատությունը. արտադրողն ազատ է արտադրել այն, ինչ ցանկանում է, իսկ սպառողը՝ սպառել այն, ինչ ցանկանում է, իսկ աշխատողը՝ աշխատել այնտեղ, որտեղ ցանկանում է: Բայց ընտրության ազատությունն ինքնաբերաբար տնտեսական հաջողություն ապահովել չի կարող, քանի որ ձեռք է բերվում մրցակցային պայքարում:

Մրցակցությունը (լատիներեն՝ *concurrere*-բախվել) շուկայական տնտեսության մասնակիցների միջև մրցում է արտադրության, առք ու վաճառքի լավագույն պայմանների համար:

Մրցակցությունը շուկայական հարաբերությունների ելակետային կատեգորիաներից է:

Այն հանդես է գալիս տարբեր ձևերով:

Կարող է լինել միջճյուղային (տարբեր ճյուղերի արտադրողների միջև) և ներճյուղային (միևնույն ճյուղի արտադրողների միջև): Կարող է լինել գնային և ոչ գնային:

Գնային մրցակցությունը ենթադրում է ապրանքների և ծառայությունների վաճառք՝ մրցակցի գներից ցածր գներով: Գնի իջեցումը հնարավոր է ապահովել կամ ծախքերի կրճատման, կամ շահույթի կրճատման հաշվին, ինչն իրենց կարող են թույլ տալ միայն խոշոր ֆիրմաները:

Ոչ գնային մրցակցությունը հիմնված է ավելի բարձր որակի և հուսալիության ապրանքների արտադրության վրա՝ շնորհիվ տեխնիկական առավելության:

Կախված այն բանից, թե ինչ ձևով են միմյանց հետ մրցում շուկայական հարաբերությունների մասնակիցները՝ տարբերում են կատարյալ և ոչ կատարյալ մրցակցության տիպերը և դրանց համապատասխանող շու-

---

կաների ձևերը՝ կատարյալ մրցակցային շուկա և ոչ կատարյալ մրցակցային շուկա:

Ինչքան քիչ է առանձին ֆիրմաների ազդեցության չափը գնի վրա, այնքան մրցակցային է համարվում շուկան:

Կատարյալ մրցակցության դեպքում իրարից անկախ գործում են բազմաթիվ վաճառողներ և գնորդներ՝ հավասար իրավունքներով ու հնարավորություններով:

Կատարյալ մրցակցության կարևոր հատկանիշն այն է, որ ոչ մի ֆիրմա չի կարող ազդել մանրածախ գնի վրա, քանի որ յուրաքանչյուրի բաժինը արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ աննշան է: Կատարյալ մրցակցությունն անհասանելի է, դրան կարելի է միայն մոտենալ: Հարաբերական առումով ազատ մրցակցությունն առկա է եղել մինչև 19-րդ դարի կեսերը:

19-րդ դարի կեսից ԳՏԱ ազդեցությամբ արտադրության կենտրոնացման գործընթաց սկսվեց, ինչը հանգեցրեց խոշոր և գերխոշոր ձեռնարկությունների, այսինքն՝ մոնոպոլիաների մենաշնորհների առաջացման:

Մենաշնորհը (հունարեն՝ *monos*-միակ, *poleo*-վաճառել) ծագում է այն ժամանակ, երբ մեկ արտադրողը իշխող դիրք է ձեռք բերում շուկայում և վերահսկում է տվյալ ապրանքի շուկան:

Մենաշնորհի նպատակն է՝ գերշահույթի ստացումը՝ գնի կամ արտադրության ծավալների վրա վերահսկողության իրականացման միջոցով: Նպատակին հասնելու միջոց է գինը:

Մոնոպոլիաները ձևավորվում են մի քանի ֆիրմաների միավորման ճանապարհով և ձեռք են բերում որոշակի կազմակերպական ձևեր:

Կարտելը համաձայնություն է թողարկվող արտադրանքի քանակի և իրացման շուկաների բաժանման մասին:

Սինդիկատը արտադրանքի համատեղ իրացման նպատակով ձևավորված միավորումն է:

Տրեստը մենատիրություն է, որտեղ միավորվում են և՛ սեփականությունը, և՛ արտադրությունը, և՛ արտադրանքի իրացումը:

Կոնգլոմերատը հիմնված է խոշոր կորպորացիաների ներթափանցման վրա այն ոլորտները, որոնց հետ նրանք ոչ տեխնոլոգիական, ոչ էլ արտադրական կապ չունեն:

Մենաշնորհի առաջացումը հանգեցնում է ոչ կատարյալ մրցակցության:

Ոչ կատարյալ մրցակցության դեպքում շուկայում չի իրագործվում կատարյալ մրցակցության գոնե մեկ պայման:

Ոչ կատարյալ մրցակցությունը բաժանում են երեք տիպի՝ մոնոպոլիստական մրցակցություն, օլիգոպոլիստ և զուտ մոնոպոլիստ:

Մոնոպոլիստական մրցակցության դեպքում շուկայում առկա են մեծ թվով ֆիրմաներ, որոնք արտադրում են դիֆերենցված ապրանքներ: Օրի-

---

նակ, օճառի շուկայում գործում են մի շարք ֆիրմաներ, որոնցից յուրաքանչ-յուրի արտադրանքը մյուսից տարբերվում է բուրմունքով, բաղադրիչներով, անուրով, փաթեթավորումով: Այնուամենայնիվ, նրանց արտադրածը օճառ է: Նշված տարբերությունները կոչվում են արտադրանքի դիֆերենցիա: Ունենալով նման առավելություններ՝ դիֆերենցված ապրանք արտադրողը որոշ իմաստով մոնոպոլիստ է դառնում: Բայց քանի որ շուկայում յուրաքանչյուր վաճառողի իրացման ծավալը շատ մեծ չէ, և մոնոպոլիստ ֆիրմաները բավականին շատ են, ապա դրանցից յուրաքանչյուրը շուկայական գնի վրա ազդելու սահմանափակ հնարավորություն ունի: Մրցակից մոնոպոլիստները գերշահույթ չեն ստանում այն պատճառով, որ ոլորտ մտնելու ճանապարհին արգելքներ գրեթե չկան, և նրանց միջև առկա է մրցակցություն: Հենց դա է մոնոպոլիստական մրցակցության տարբերիչ գիծը:

Օլիգոպոլիստական մրցակցության դեպքում շուկայում իշխող դիրք են գրավում մի քանի խոշոր ֆիրմաներ: Շուկայի այդ մոդելին հատուկ է միատարր կամ աննշան դիֆերենցված ապրանքների առկայությունը, իսկ ընդգծված տարբերիչ գիծը գնի սահմանումն է՝ առաջնորդության սկզբունքով: Այսինքն՝ ֆիրմաների մեծ մասը ձգտում է սահմանել այն շուկայական գինը, որը սահմանել է առաջատար ֆիրման:

Օլիգոպոլիստի հակառակ երևույթը կոչվում է օլիգոպսոնիա, երբ շուկայում գործում են մի քանի գնորդներ:

Ձուտ մոնոպոլիան տվյալ արտադրանքի շուկայում մեկ արտադրողի առկայությունն է, և նա չունի այլ մրցակիցներ: Գները շուկայում սահմանվում են մենաշնորհի կողմից, իսկ ամենաբարձր գինը պայմանավորված է գնողունակ պահանջարկով: Պատահում է, որ շուկայում հանդես է գալիս միայն մեկ գնորդ: Այս երևույթը կոչվում է մոնոպսոնիա:

Շուկայական մրցակցության մոդելների հատկանիշները ներկայացված են աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5. Շուկայական մրցակցության մոդելների հատկանիշները**

Շուկայի հատկանիշները / Մրցակցային շուկայի մոդելները	Ճյուղում ֆիրմաների քանակությունը	Արտադրանքի բնույթը	Մուտքի արգելքները	Հսկողություն գնի վրա
Ջուտ մոնոպոլիա	մեկ ֆիրմա	միատեսակ արտադրանք (փոխարինող չունի)	բարձր	բացարձակ
Օլիգոպոլիա	ֆիրմաների քիչ քանակություն	միատեսակ կամ աննշան դիֆերենցված	բարձր	մասնակի
Մոնոպոլիստական մրցակցություն արտադրանքի դիֆերենցումով	ֆիրմաների բազմաքանակություն	տարատեսակ արտադրանք	ցածր	թույլ
Կատարյալ մրցակցային շուկա	շատ	միատեսակ	չկա	ընդհանրապես չկա

**Հարց 2. Մոնոպոլիաների իշխանության աստիճանի որոշումը**

Մոնոպոլիաների իշխանության աստիճանը տնտեսության մեջ որոշում են ինդեքսով: Անգլիացի տնտեսագետ Արթուր Լերները առաջարկեց հետևյալ բանաձևը՝

$$L = \frac{P - MC}{P}, \text{ որտեղ՝}$$

L – Գ՝ ինդեքսն է,

P – Գ՝ մոնոպոլ գինն է,

MC – Գ՝ սահմանային մոնոպոլ ցածր ծախսը:

Եթե ազատ մրցակցություն է, ապա L-ը ձգտում է 0-ի, իսկ բացարձակ իշխանության դեպքում դա պետք է ձգտի 1-ի:

Ա. Լերներից բացի, այդ հարցով զբաղվել է նաև ամերիկացի տնտեսագետ Հերֆինդալը, որն, ի տարբերություն նախորդի, վերցնում է ճյուղում

գործող ֆիրմաների արտադրանքի տեսակարար կշիռը: Նա առաջարկում է հետևյալ բանաձևը՝

$$H = S_1^2 + S_2^2 + \dots + S_n^2, \text{ որտեղ՝}$$

$H$  – ը՝ ինդեքսն է, որը ցույց է տալիս ճյուղի համակենտրոնացման աստիճանը,

$S_n$  – ը՝  $n$ -րդ ֆիրմայի արտադրանքի տեսակարար կշիռն է տվյալ ճյուղում:

Եթե ճյուղում կա միայն մեկ բնական մոնոպոլիա, ապա նրա արտադրանքի ծավալը 100% է կազմում, իսկ  $H$  (ինդեքսը) հավասար կլինի 10000 ( $H 100^2 = 10000$ ):

Ընդունենք, որ ճյուղում կան երկու արտադրանքի հավասար ծավալ ունեցող մոնոպոլիաներ:

$$H = 50^2 + 50^2 = 5000,$$

իսկ երբ հասնում ենք կատարյալ մրցակցության, և ճյուղում գործում են 100 ֆիրմա, և յուրաքանչյուրի բաժնեչափը ( $S$ -ը) հավասար է 1%- ի, ապա այդ դեպքում՝

$$H = 1_1^2 + 1_2^2 + 1_3^2 + \dots + 1_{100}^2 = 100:$$

Հերֆինդալի ինդեքսը զգայուն է, ինչպես յուրաքանչյուր ֆիրմայի բաժնեչափի նկատմամբ, այնպես էլ ճյուղում ֆիրմաների քանակի նկատմամբ: Այսպես, եթե չկիրառենք  $H$  ինդեքսը և կողմնորոշվենք միայն ֆիրմաների քանակով, ապա առաջին հայացքից կարելի է կարծել, որ այն ճյուղում, որտեղ գործում են 5 ֆիրմա, ավելի համակենտրոնացված է, քան այն, որտեղ գործում են 6-ը: Սեր ենթադրությունը թերի է, քանի դեռ չենք քննարկել  $S$ (ինդեքս)-ի կատարած դերը: Օրինակ, ճյուղում գործում են 6 ֆիրմա, որից մեկի բաժնեչափը (տեսակարար կշիռը,  $S$ -ը) հավասար է 50%- ի, մնացած 5-ի բաժնեչափը՝ յուրաքանչյուրին 10%- ի, ապա այդ դեպքում՝

$$H = (50)^2 + (10^2 \times 5) = 2500 + 500 = 3000,$$

իսկ երբ ճյուղում կա 5 ֆիրմա՝ հավասար բաժնեչափերով ( $S_1 = S_2 = S_3 = S_4 = S_5 = 20\%$ -ի), ապա  $H = 20^2 \times 5 = 2000$ , ինչպես տեսնում ենք 6 ֆիրմայով ճյուղը ավելի համակենտրոնացված է, քան 5 ֆիրմաներից բաղկացած ճյուղը, որը չունի դոմինանտ (մեծ բաժնեչափ ունեցող ֆիրմա):

Գիտականորեն հաշվարկված է, որ շուկայի համակենտրոնացումը, որտեղ  $H$  ինդեքսը չի գերազանցում 1000-ը, համարվում է ցածր, իսկ երբ  $H = 1800$  և ավելի, ապա համակենտրոնացման աստիճանը բարձր է:

## Համառոտ եզրակացություններ

1. Մրցակցությունը շուկայական տնտեսության մասնակիցների միջև մրցում է՝ արտադրության, առք ու վաճառքի լավագույն պայմանների համար:

2. Մրցակցությունը կարող է լինել միջճյուղային (տարբեր ճյուղերի արտադրողների միջև) և ներճյուղային (միևնույն ճյուղի արտադրողների միջև): Կարող է լինել գնային և ոչ գնային:

3. Կատարյալ մրցակցության դեպքում իրարից անկախ գործում են բազմաթիվ վաճառողներ և գնորդներ՝ հավասար իրավունքներով ու հնարավորություններով: Կատարյալ մրցակցության կարևոր հատկանիշն այն է, որ ոչ մի ֆիրմա չի կարող ազդել մանրածախ գնի վրա, քանի որ յուրաքանչյուրի բաժինը արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ աննշան է:

4. Մենաշնորհը ծագում է այն ժամանակ, երբ մեկ արտադրողը իշխող դիրք է ձեռք բերում շուկայում և վերահսկում է տվյալ ապրանքի շուկան:

5. Օլիգոպոլիստական մրցակցության դեպքում շուկայում իշխող դիրք են գրավում մի քանի խոշոր ֆիրմաներ: Շուկայի այդ մոդելին հատուկ է միատարր կամ աննշան դիֆերենցված ապրանքների առկայությունը, իսկ ընդգծված տարբերիչ գիծը գնի սահմանումն է՝ առաջնորդության սկզբունքով:

6. Ջուտ մոնոպոլիան տվյալ արտադրանքի շուկայում մեկ արտադրողի առկայությունն է, և նա չունի այլ մրցակիցներ: Գները շուկայում սահմանվում են մենաշնորհի կողմից, իսկ ամենաբարձր գինը պայմանավորված է գնողունակ պահանջարկով:

### *Ինքնաստուգման հարցեր*

1. *Ի՞նչ է մրցակցությունը:*
2. *Ո՞րն է գնային և ոչ գնային մրցակցությունը:*
3. *Ո՞րն է կատարյալ և ոչ կատարյալ մրցակցությունը:*
4. *Ի՞նչ է մոնոպոլիան:*
5. *Ի՞նչ է օլիգոպոլիան:*
6. *Ի՞նչ է մոնոպսոնիան:*
7. *Ի՞նչ է ցույց տալիս Լերների ինդեքսը:*
8. *Ի՞նչ է ցույց տալիս Չերֆինդալի ինդեքսը:*

---

## ԹԵՄԱ 10. ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ներկայացնել աշխատանքի էությունը և վարձատրման սկզբունքները:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

- ա. ներկայացնել աշխատանքի էությունը,
- բ. մեկնաբանել աշխատանքի շուկայի էությունը,
- գ. ներկայացնել աշխատանքի առաջարկի և պահանջարկի էությունը,
- դ. ներկայացնել աշխատավարձի էությունը և տեսակները,
- ե. բացատրել աշխատավարձի ձևավորման շուկայական մեխանիզմը,
- զ. մեկնաբանել «նվազագույն աշխատավարձ» հասկացությունը,
- է. ներկայացնել գործազրկության էությունը և տեսակները. Օուկենի օրենքը:

### Չարդ 1. Աշխատանքի էությունը

Աշխատանքն արտադրության գործոններից մեկն է:

Աշխատանք կրողը, այսինքն՝ աշխատուժը, կոչվում է մարդկային գործոն:

Ազգաբնակչության այն մասը, որն օժտված է աշխատելու ունակությամբ և հնարավորություններով, կազմում է աշխատանքային ռեսուրսները:

Աշխատանքային ռեսուրսին մոտ, բայց ավելի լայն հասկացություն է «աշխատանքային ներուժը»:

Աշխատանքային ներուժը ազգաբնակչության այն մասն է, որը ներառում է աշխատանքային ռեսուրսները՝ ներառյալ այն մարդկանց, ովքեր կարող են փոփոխել աշխատանքային ռեսուրսների քանակը:

Թվարկված երեք կատեգորիաները տարբեր կողմերից բնութագրում են երկրի աշխատանքային գործոնը:

Ի տարբերություն արտադրության մյուս գործոնների՝ աշխատանքն ունի իր առանձնահատկությունները: Կարևորն այն է, որ աշխատանքն անբաժան է մարդուց և դրա համար էլ ունի սոցիալական ու քաղաքական ասպեկտ: Չենց այս հանգամանքն էլ պայմանավորում է տնտեսագետների տարբեր մոտեցումն այդ հարցին: Այսպես, արևմտյան տնտեսագիտական գրականության մեջ աշխատանքը համարվում է ապրանք՝ ի տարբերություն մարքսյան տեսության, որտեղ ապրանք է ոչ թե աշխատանքը, այլ աշխատուժը:

---

## Հարց 2. Աշխատանքի շուկա. աշխատանքի առաջարկ և պահանջարկ

Աշխատանքի շուկան տնտեսական մեխանիզմների, նորմերի և ինստիտուտների համակարգ է, որն ապահովում է աշխատուժի վերարտադրությունը և աշխատանքի օգտագործումը:

Ինչպես ցանկացած շուկայում, այստեղ նույնպես ձևավորվում է կոնկրետ տեսակի աշխատանքի առաջարկ և պահանջարկ:

Աշխատանքի պահանջարկը կախված է տնտեսության կառուցվածքից և զարգացածության աստիճանից, արտադրության մյուս գործոնների առկայությունից, աշխատուժի որակից, արտադրական և անձնական սպառման ապրանքների և ծառայությունների նկատմամբ եղած պահանջարկի մեծությունից:

Աշխատանքի առաջարկը կախված է աշխատունակ բնակչության թվից, աշխատողների որակավորումից, աշխատանքային օրվա տևողությունից, և այլն:

Աշխատանքի շուկան իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. համաձայնեցնում է աշխատանքային հարաբերությունների սուբյեկտների տնտեսական շահերը,

2. ապահովում է աշխատուժի բաշխման համամասնությունը՝ հասարակական պահանջմունքների կառուցվածքին և տեխնիկական հիմքի զարգացմանը համապատասխան,

3. պահպանում է հավասարակշռություն աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև,

4. ձևավորում է աշխատանքային ռեսուրսների ռեզերվ հասարակական արտադրության պրոցեսի նորմալ ընթացքի ապահովման համար, և այլն:


Աշխատանքի շուկան կարող է գործել ցանկացած պայմաններում: Պարզագույնը կատարյալ մրցակցային շուկան է: Այս շուկային բնորոշ են.

- միմյանց հետ մրցող ձեռնարկությունների մեծ քանակություն,
- որոշակի որակավորման բանվորների մեծ քանակություն,
- ո՛չ որևէ ձեռնարկություն, ո՛չ էլ որևէ աշխատող չեն կարող ազդել աշխատանքի շուկայի վրա:

Աշխատանքի ամբողջական պահանջարկը կատարյալ մրցակցության շուկայում որոշվում է առանձին ֆիրմաների պահանջարկի հանրագումարով: Իսկ ֆիրման, որոշելով, թե ինչքան աշխատող է իրեն անհրաժեշտ, պետք է որոշի նաև աշխատավարձի մեծությունը: Աշխատանքի պահանջարկի գինը կախված է աշխատանքի սահմանային արտադրողականությունից, այսինքն՝ յուրաքանչյուր հաջորդ լրացուցիչ բանվորի ներգրավումից ստացված լրացուցիչ արտադրանքի քանակից:


Լրացուցիչ աշխատողի ներգրավումից ստացված լրացուցիչ արտադրանքը կոչվում է սահմանային արդյունք: Սահմանային արդյունքից ստացված եկամուտը կարելի է որոշել միավոր արտադրանքի գնի և սահմանային արտադրանքի արտադրյալի միջոցով: Այս եկամուտը կոչվում է սահմանային եկամուտ: Սահմանային արդյունքը ցույց է տալիս, թե ինչպես է փոփոխվում թողարկման ծավալը լրացուցիչ աշխատող ներգրավելիս: Քանի դեռ սահմանային եկամուտը բարձր է աշխատավարձի մակարդակից, ձեռներեցը շարունակելու է աշխատողներ վարձել:

Այսպիսով, աշխատանքի պահանջարկը կատարյալ մրցակցային շուկայում որոշվում է երկու ցուցանիշներով՝ աշխատավարձի և սահմանային արդյունքի մեծությամբ: Կախվածությունը աշխատավարձի և աշխատանքի պահանջարկի միջև կարելի է պատկերել հետևյալ կերպ՝



**Գծանկար 19. Աշխատանքի պահանջարկի կոր**

Աշխատանքի ամբողջական առաջարկը որոշվում է ազգաբնակչության թվաքանակով, աշխատունակ բնակչության տեսակարար կշռով, աշխատած ժամերի քանակով, աշխատանքի որակով և բանվորի որակավորմամբ:



**Գծանկար 20. Աշխատանքի առաջարկի կոր**

---

Աշխատանքի առաջարկը, ինչպես պահանջարկը, կախված է աշխատավարձի մակարդակից: Բայց կախվածությունն այս դեպքում այլ է: Առաջարկի կորը ցույց է տալիս, որ աշխատավարձի բարձրացման դեպքում աշխատանքի առաջարկը մեծանում է:

Աշխատանքի առաջարկին բնորոշ են «եկամտի էֆեկտը» և «փոխարինման էֆեկտը»:

Դրանք դրսևորվում են առանձին աշխատողների վարքագծում: Աշխատավարձի բարձրացումը մինչև որոշակի մակարդակը հանգեցնում է առաջարկի մեծացման: Բայց աշխատավարձի հետագա աճը նպաստում է առաջարկի կրճատմանը: Փաստորեն աշխատավարձի բարձրացումը բերում է առաջարկի բարձրացման և կրճատման:

Բանն այն է, որ մարդը ընտրություն է կատարում աշխատանքի և հանգըստի միջև: Աշխատանքը եկամուտ ստանալու հնարավորություն է տալիս, բայց այս դեպքում կրճատվում է հանգստի ժամանակը: Աշխատավարձի բարձրացման դեպքում իմաստ ունի հանգիստը զոհաբերել. այս դեպքում առաջարկը մեծանում է: Սա կոչվում է «փոխարինման էֆեկտ»:


Աշխատավարձի հետագա աճը հանգեցնում է «եկամտի էֆեկտի», այսինքն՝ բարձր եկամուտը խթանում է հանգիստը, այլ ոչ թե՝ աշխատանքը, որն այս դեպքում սկսում է դիտարկվել որպես ցածր կատեգորիայի ապրանք: Դրա համար եկամտի աճի հետ մեկտեղ առաջարկը սկսում է կրճատվել:

Առաջարկի և պահանջարկի կորերի հատման կետում գտնվում է աշխատավարձի հավասարակշռված մակարդակը: Աշխատավարձի տվյալ մակարդակի դեպքում տնտեսության մեջ լրիվ զբաղվածություն է հաստատվում:

Եթե աշխատավարձը հավասար է  $W_1$ , ապա պահանջարկը գերակշռում է առաջարկը և ձեռնարկությունում աշխատողների պակաս է զգացվում:

Աշխատուժ ներգրավելու նպատակով ձեռնարկատերերը կբարձրացնեն աշխատավարձը: Այս դեպքում շատ մարդիկ կձգտեն աշխատանք ստանալ (շարժում առաջարկի կորով):

Բայց բարձր աշխատավարձը կստիպի աշխատատերերին վարձել քիչ աշխատողներ (շարժում պահանջարկի կորով):



Պժանկար 21. Հավասարակշռություն աշխատանքի շուկայում

Եթե աշխատավարձը հաստատվի  $W_2$  մակարդակի վրա, ապա առաջարկը կգերակշռի պահանջարկը:

Այս դեպքում ձեռներեցները ցածր աշխատավարձով շատ աշխատողներ կարող են ներգրավել: Աշխատել ցանկացողների քանակը կնվազի (շարժում առաջարկի կորով):

Բացի այդ, ձեռներեցները ցածր աշխատավարձով կարող են ավելի շատ աշխատող վարձել (շարժում պահանջարկի կորով): Այս դեպքում աշխատավարձը կհաստատվի  $W_0$  մակարդակի վրա. ձեռներեցները կլրացնեն ազատ աշխատատեղերը, իսկ աշխատանք ստանալու ցանկություն ունեցողները աշխատանք կգտնեն: Աշխատանքի առաջարկի և պահանջարկի միջև հավասարակշռություն կսահմանվի (E):

Ոչ կատարյալ մրցակցության պայմաններում աշխատանքի շուկայի վրա ներգործում են արհմիություններն ու կառավարությունը:

### Հարց 3. Աշխատավարձ. էությունը, տեսակները

Աշխատանքը, ինչպես արտադրության մյուս գործոնները, բերում է եկամուտ, որը կոչվում է աշխատավարձ: Աշխատավարձը հանդես է գալիս որպես վարձատրություն՝ կատարած աշխատանքի համար: Այդ անհերքելի ճշմարտությունն ընդունվում է բոլոր հեղինակների կողմից: Այս հարցում միասնականությունը սրանով ավարտվում է, և սկսվում են տարբերությունները:

---

Մարքսիստական հայեցակետ. աշխատավարձը վարձատրություն է ոչ թե աշխատանքի դիմաց, այլ՝ աշխատուժի: Աշխատանքը, հանդես գալով որպես արժեքի աղբյուր, ինքը արժեք չունի: Երկրորդ՝ վարձատրվում է ոչ թե աշխատանքի արդյունքն ամբողջությամբ, այլ միայն անհրաժեշտ արդյունքը:

Չետևություն. աշխատավարձը աշխատուժի արժեքի և գնի ձևն է:

Նորդասական կարծիքը սկզբունքորեն այլ է: Առաջին՝ աշխատավարձը դիտարկվում է որպես աշխատանքի գին, երկրորդ՝ հետաքրքրողը ոչ թե աշխատավարձի էությունն է, այլ նրա մակարդակը, որը որոշվում է առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ:

Առաջարկի և պահանջարկի հավասարության դեպքում ձևավորվում է աշխատավարձի հավասարակշռված մակարդակը: Պահանջարկի աճը հանգեցնում է աշխատավարձի աճի: Պահանջարկի անկումը նվազեցնում է աշխատավարձի մակարդակը:

Իր հերթին, աշխատանքի պահանջարկը որոշվում է սահմանային արդյունքի աճով. եթե աշխատանքի սահմանային արդյունքն ավելի մեծ է մյուս գործոնների սահմանային արդյունքից, ապա աշխատանքի պահանջարկը կմեծանա:

Տարբերում են անվանական և իրական աշխատավարձ կատեգորիաները:

Անվանական աշխատավարձն այն գումարն է, որը ստանում է աշխատողը իր աշխատանքի դիմաց:

Իրական աշխատավարձը չափվում է կենսական բարիքների և ծառայությունների ծավալով, որը կարելի է ձեռք բերել անվանական աշխատավարձի գումարով: Իրական աշխատավարձն ուղղակի կախվածության մեջ է անվանական աշխատավարձից և հակառակ կախվածության մեջ՝ գների մակարդակից: Աշխատավարձը հանդես է գալիս երկու ձևով՝ գործավարձային և ժամանակավարձային:

Ժամանակավարձի դեպքում աշխատավարձի չափը պայմանավորված է աշխատանքի տևողությամբ:

Գործավարձայինի դեպքում աշխատավարձն ուղղակի կախվածության մեջ է թողարկված արտադրանքի քանակից: Դրա չափը որոշվում է միավոր արտադրանքի վարձաչափը բազմապատկելով թողարկված արտադրանքի քանակով:

Չիմնական ձևերից բացի, կիրառվում են աշխատավարձի այլ համակարգեր՝ գործավարձապարզևատրական, գործավարձապրոգրեսիվ, բազմագործոնային և այլն:

---

Աշխատավարձի մակարդակի և դինամիկայի վրա, շուկայի կոնյունկտուրայից բացի, մեծ ազդեցություն են ունենում ռեսուրսների (բնական, աշխատանքային, տեխնոլոգիական) առկայությունը, տնտեսության վիճակը և այլն:

Շուկայական տնտեսության մեջ աշխատավարձի մակարդակի վրա մեծ ազդեցություն են թողնում արհմիությունները:

Սովորաբար գրականության մեջ նշվում է աշխատավարձի վրա ներգործելու 4 միջոց.

1. աշխատանքի առաջարկի սահմանափակումը, որը ձեռք է բերվում աշխատօրվա կրճատման, աշխատանքի ինտենսիվության լիմիտավորման և այլ ճանապարհներով,

2. ձեռներեցների վրա ճնշում գործադրելը՝ կոլեկտիվ պայմանագրեր կնքելիս,

3. աշխատատար արտադրությունների զարգացմանն աջակցելը,

4. պայքար արտադրության մոնոպոլացման դեմ:

Հայտնի է, որ մոնոպոլիաները գները բարձրացնում են ի հաշիվ արտադրության կրճատման, ինչը բացասաբար է անդրադառնում աշխատավարձի մակարդակի վրա:

Գոյություն ունի նաև նվազագույն աշխատավարձ հասկացությունը: Այն սահմանվում է պետության կողմից օրենսդրորեն և դրանից ցածր գործատուն իրավունք չունի վարձատրել աշխատողին: ՀՀ-ում նվազագույն աշխատավարձը 2013թ. հունվարի 1-ից պաշտոնապես կազմում է 35.000 դրամ:

#### **Հարց 4. Ջբաղվածություն և գործազրկություն**

Աշխատանքի շուկայում անհավասարակշռությունը, որպես կանոն, խրոնիկական բնույթ է կրում: Այդ իսկ պատճառով զբաղվածության հարցերով զբաղվում են բոլոր տնտեսական դպրոցները:

Անգլիացի հոգևորական Թ. Մալթուսը ձևակերպեց ազգաբնակչության օրենքը, համաձայն որի՝ սպառման առարկաների արտադրությունն աճում է թվաքանակական պրոգրեսիայով, իսկ ազգաբնակչության քանակը՝ երկրաչափական պրոգրեսիայով: Այս կախվածության մեջ Մալթուսը տեսնում էր գործազրկության պատճառը և արդարացնում ազգաբնակչության թվաքանակի կարգավորման «բնական» մեթոդները՝ պատերազմները, համաճարակները, բնական աղետները:

Դասական քաղաքատնտեսությունը տնտեսությունը համարում էր ինքնակարգավորվող համակարգ և գտնում էր, որ այնտեղ գոյություն չունի հարկադրական գործազրկություն: Իսկ կամավոր գործազրկության պատ-

---

ճառն այն է, որ աշխատողը չի ձգտում ցածր աշխատավարձի դիմաց աշխատել և փնտրում է մեկ այլ աշխատանք:

Ջբաղվածության ժամանակակից տեսության հիմնադիրն է Քեյնսը: Նա պնդում է, որ.

- ազատ մրցակցային տնտեսությունը ինքնակարգավորվող համակարգ չէ,

- տնտեսական հավասարակշռությունը չի երաշխավորում լրիվ զբաղվածություն:

Ներկայումս աճում է դասական գաղափարների կողմնակիցների թիվը (նոր դասական ուղղություն), որոնք գտնում են, որ պետք է գոյություն ունենա գործազրկության «բնական մակարդակ», իսկ դրանից ազատվելն անհնար է:

Բնակչության զբաղվածությունը մակրոէկոնոմիկայի կարևորագույն ցուցանիշներից է:

Ջբաղվածությունն ասելով՝ հասկանում ենք աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակը, որն ապահովված է աշխատանքով:

Ազգաբնակչության աշխատունակ տարիքի այն մասը, որը աշխատանք է փնտրում, կոչվում են գործազուրկներ:

Ջբաղվածների և գործազուրկների ընդհանուր թվաքանակը կազմում են աշխատանքային ռեսուրսները:

Ակնհայտ է այն իրավիճակը, որ ամբողջ աշխատունակ բնակչությունը զբաղված չէ: Դրա համար կան օբյեկտիվ պատճառներ:

Առաջինը՝ մարդիկ միշտ տեղափոխվում են մի բնակավայրից մյուսը, մեկ աշխատատեղից մյուսը: Սա կոչվում է ֆրիկցիոն գործազրկություն: Ֆրիկցիոն գործազրկությունը կապված է աշխատուժի անհրաժեշտ շարժի հետ:

Երկրորդը՝ արտադրության մեջ տեխնոլոգիական փոփոխությունները կառուցվածքային փոփոխություններ են առաջացնում աշխատուժի պահանջարկի մեջ: Աշխատատեղերի նոր կառուցվածքին չի համապատասխանում աշխատուժի կառուցվածքը, ինչը բերում է աշխատուժի մի մասի դուրսմղմանը արտադրապրոցեսից: Կառուցվածքային գործազրկությունն առաջանում է աշխատատեղերի և աշխատուժի կառուցվածքների անհամապատասխանությունից:

Ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկություններն անխուսափելի են, դրա համար էլ բնակչության զբաղվածությունն այս պայմաններում կոչվում է լրիվ: Այսինքն՝ լրիվ զբաղվածությունը չի նշանակում գործազրկության իսպառ բացակայություն:

Գոյություն ունի նաև պարբերաշրջանային գործազրկություն: Պարբերաշրջանային գործազրկությունը տնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացած գործազրկությունն է:

Լրիվ զբաղվածության դեպքում գործազրկության մակարդակը կոչվում է «բնական»: Ըստ Օուկենի օրենքի՝ գործազրկության մակարդակի 1%-ով գերազանցումը բնական մակարդակից հանգեցնում է ՀԱԱ-ի 2,5%-ի չափով նվազման ներուժային ՀԱԱ-ից: Գործազրկության հետևանքով հասարակության կրած տնտեսական վնասը չափվում է ՀԱԱ<sub>պ</sub>-ՀԱԱ<sub>հ</sub> տարբերության մեծությամբ, որտեղ ՀԱԱ<sub>պ</sub>-ը պոտենցիալ համախառն արդյունքն է, իսկ ՀԱԱ<sub>հ</sub>-ն իրական համախառն արդյունքն է: Ենթադրենք՝ երկրում բնական գործազրկության մակարդակը կազմում է 5%, իսկ նրա փաստացի մակարդակը՝ 8%: Ընդունենք՝ Օուկենի գործակիցը հավասար է 2,5: Այդ դեպքում փաստացի ՀԱԱ-ն պոտենցիալից պակաս կստացվի (8% - 5%) x 2,5 = 7,5%: Այսպիսով՝ երկիրը կրում է վնաս՝ 7,5%-ի չափով:

ՀԱԱ<sub>պ</sub>-ը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ՀԱԱ_{պ} = ՀԱԱ_{հ} + \frac{ՀԱԱ_{հ} \times \left( \frac{\text{գործազրկության փաստացի մակարդակ}}{\text{գործազրկության բնական մակարդակ}} \right) \times 2,5}{100}$$

Գործազրկության մակարդակը բնութագրվում է նորմայով:

$$\text{Գործազրկության նորման} = \frac{\text{գործազուրկների թվաքանակ}}{\text{աշխատուժի թվաքանակ}} \times 100\%$$

Գործազրկությունն ունի տնտեսական և սոցիալական հետևանքներ.

1. տեղի է ունենում ՀԱԱ ծավալների կրճատում,
  2. տեղի է ունենում գործազրկության ծախքերի անհավասարաչափ բաշխում բնակչության տարբեր սոցիալական խմբերի միջև,
  3. աշխատողները աստիճանաբար կորցնում են իրենց որակավորումը: Զբաղվածության, հետևաբար և գործազրկության կարգավորումը իրականացվում է 3 ուղղությամբ.
    1. նոր աշխատատեղերի ստեղծումը, կադրերի վերաորակավորումը,
    2. աշխատանքի ձևուն շուկայի ձևավորման խթանումը, աշխատանքային հարաբերությունների իրական կարգավորումը,
    3. գործազուրկների սոցիալական ապահովումը:
- Գործազրկության բնական մակարդակի դեպքում խոսում են արդյունավետ զբաղվածության մասին:

## Համառոտ եզրակացություններ

1. Աշխատանքն արտադրության գործոններից մեկն է: Աշխատանք կրողը, այսինքն՝ աշխատուժը, կոչվում է մարդկային գործոն:

2. Աշխատանքի շուկան տնտեսական մեխանիզմների, նորմերի և ինստիտուտների համակարգ է, որն ապահովում է աշխատուժի վերարտադրությունը և աշխատանքի օգտագործումը:

3. Աշխատանքի պահանջարկը կախված է տնտեսության կառուցվածքից և զարգացածության աստիճանից, արտադրության մյուս գործոնների առկայությունից, աշխատուժի որակից, արտադրական և անձնական սպառման ապրանքների և ծառայությունների նկատմամբ եղած պահանջարկի մեծությունից:

4. Աշխատանքի առաջարկը կախված է աշխատունակ բնակչության թվից, աշխատողների որակավորումից, աշխատանքային օրվա տևողությունից, և այլն:

5. Աշխատավարձը հանդես է գալիս որպես վարձատրություն՝ կատարած աշխատանքի համար:

6. Անվանական աշխատավարձն այն գումարն է, որը ստանում է աշխատողը իր աշխատանքի դիմաց:

7. Իրական աշխատավարձը չափվում է կենսական բարիքների և ծառայությունների ծավալով, որը կարելի է ձեռք բերել անվանական աշխատավարձի գումարով:

8. Աշխատավարձը հանդես է գալիս երկու ձևով՝ գործավարձային և ժամանակավարձային: Ժամանակավարձի դեպքում աշխատավարձի չափը պայմանավորված է աշխատանքի տևողությամբ: Գործավարձայինի դեպքում աշխատավարձն ուղղակի կախվածության մեջ է թողարկված արտադրանքի քանակից:

9. Զբաղվածությունն ասելով՝ հասկանում ենք աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակը, որն ապահովված է աշխատանքով: Ազգաբնակչության աշխատունակ տարիքի այն մասը, որը աշխատանք է փնտրում, կոչվում են գործազուրկներ: Զբաղվածների և գործազուրկների ընդհանուր թվաքանակը կազմում են աշխատանքային ռեսուրսները:

10. Լրիվ զբաղվածության դեպքում գործազրկության մակարդակը կոչվում է «բնական»: Ըստ Օուկենի օրենքի՝ գործազրկության մակարդակի 1%-ով գերազանցումը բնական մակարդակից հանգեցնում է ՀԱԱ-ի 2,5%-ի չափով նվազման ներուժային ՀԱԱ-ից:

---

### **Ինքնաստուգման հարցեր**

1. Ի՞նչ է աշխատանքը:
2. Ի՞նչ է աշխատանքի շուկան:
3. Ի՞նչ է աշխատանքի առաջարկը, և ի՞նչ գործոններ են ազդում դրա վրա:
4. Ի՞նչ է աշխատանքի պահանջարկը, և ի՞նչ գործոններ են ազդում դրա վրա:
5. Ի՞նչ է աշխատավարձը:
6. Աշխատավարձի ի՞նչ տեսակներ կան:
7. Ի՞նչ է նվազագույն աշխատավարձը:
8. Ի՞նչ է զբաղվածությունը:
9. Ի՞նչ է գործազրկությունը:
10. Գործազրկության ի՞նչ տեսակներ կան:
11. Ի՞նչ է ցույց տալիս Օուկենի օրենքը:
12. Ի՞նչ բացասական հետևանքներ ունի գործազրկությունը:

---

## ԹԵՄԱ 11. ԿԱՊԻՏԱԼԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ներկայացնել կապիտալի էությունը, դրա կուտակումը և դրամական կապիտալի շուկան:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

ա. բացատրել կապիտալի էությունը և դրա տարբեր մեկնաբանությունները,

բ. ներկայացնել կապիտալի շրջապտույտի տնտեսական բովանդակությունը և պտույտի էությունը,

գ. ներկայացնել հիմնական և շրջանառու կապիտալը, հիմնական կապիտալի մաշվածությունը,

դ. պարզաբանել փոխատվական տոկոսի էությունը,

ե. ներկայացնել արժեթղթերի էությունն ու տեսակները:

### Չարց 1. Կապիտալ. էությունը և տարբեր մեկնաբանությունները

Տարբեր տնտեսագիտական դպրոցներ տարբեր ձևով են մեկնաբանում կապիտալը: Առավել կարևորը երեքն են՝

- իրային կամ նատուրալիստական հայեցակետ,
- դրամական կամ մոնետարիստական հայեցակետ,
- «մարդկային կապիտալի» տեսություն:

Ըստ նատուրալիստական հայեցակետի՝ կապիտալը դիտարկվում է որպես արտադրության միջոց կամ իրացման համար նախատեսված ապրանք:

Այսպես, Ա. Սմիթը կապիտալը դիտարկում է որպես կուտակված իրեր, Դ. Ռիկարդոն՝ որպես արտադրության միջոցներ: Մարշալի տեսության մեջ կապիտալը քննարկվում է որպես արտադրության նախադրյալ կազմող իրերի համախմբություն: Ջ. Քլարկը ենթադրում է, որ կապիտալը արտադրողական բարիքների պաշարն է, որն աշխատանքի հետ մեկտեղ կազմում է արտադրության հավերժական սկզբնապատճառը: Պ. Սամուելսոնը կապիտալը բնորոշում է որպես խոշոր ֆաբրիկաների արտադրական կառույցներ, պատրաստի արտադրանքի և կիսաֆաբրիկատների պաշարներ:

---

Նմանօրինակ մոտեցում են ցուցաբերում նաև ժամանակակից արևմտյան շատ տնտեսագետներ:

Այսպես, Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Դյուրին կապիտալին է վերագրում այն ամենը, ինչ «օգտակար դեր է խաղում արտադրական գործընթացը կազմակերպելիս», այսինքն՝ արտադրության միջոցները, օգտակար հանածոները, սպառման առարկաներն ու աշխատուժը:

Մոնետարիզմի տեսանկյունից կապիտալը տոկոս բերող գումար է:

Կապիտալի դրամական ձևի «բացարձակացումը» սկիզբ է առնում դեռևս մերկանտիլիզմից: Բայց 18-19-րդ դարերում դրամական հայեցակետը երկրորդ պլան մղվեց դասական դպրոցի կողմից: Փողի և վարկի նկատմամբ հետաքրքրության վերածննդի հարցում մեծ դեր խաղաց Ջ. Մ. Քեյնսի տեսությունը: Հետագայում տարբերակում տեղի ունեցավ Քեյնսի կողմնակիցների շարքերում: Մոնետարիզմի ներկայացուցիչների մեծամասնությունը ներկա փուլում ելնում է այն բանից, որ կապիտալը փողն է կամ դրան փոխարինողը՝ վարկային փողը: Բայց մյուսները կապիտալը կապում են եկամտի ստացման հետ:

«Մարդկային կապիտալի տեսությունը» առաջացավ 20-րդ դարի 60-ական թվականներին՝ մարդկային գործունի ազդեցության մեծացման արդյունքում:

Կապիտալը կարելի է դիտարկել որպես նրա բոլոր տարրերի անընդհատ շարժ:

Միայն շարժման մեջ է փողը վերածվում կապիտալի:

Կապիտալը ինքնաճող արժեք է:

Այս երեք պահերն են բնութագրում կապիտալի էությունը:

Գործունեություն կազմակերպելու համար ֆիրման պետք է ելակետային կապիտալ ունենա:

Ելակետային կապիտալը սկզբնական շրջանում ներդրված կապիտալն է՝ գումարած արտադրության ընթացիկ ծախսերը:

Այս ծախսերի ծածկման աղբյուր կարող են ծառայել և՛ ներքին, և՛ արտաքին միջոցները:

Ներքին միջոցներն են.

1. շահույթից ձևավորված խնայողությունները,
2. ամորտիզացիոն հատկացումները,

---

3. բաժնետոմսերի վաճառքից ստացված գումարները:

Արտաքին միջոցներն են՝ բանկային և առևտրային վարկը: Դրանց բաժին է ընկնում ձեռնարկության ֆինանսների 40%-ը: Վարկերը լինում են երկարաժամկետ և կարճաժամկետ: Վերջիններս վերադարձվում են մեկ տարվա ընթացքում: Կարճաժամկետ փոխառություններն օգտագործվում են ամենօրյա ծախսերը հոգալու համար, օրինակ՝ աշխատավարձի, հունքի և այլն:

Երկարաժամկետ փոխառություններն օգտագործվում են ինվեստիցիոն (ներդրումային) ապրանքների գնումների համար:

Կարճաժամկետ փոխառությունների տեսակներն են.

- առևտրական վարկ, որը մի ֆիրման տրամադրում է մյուսին,
- ֆինանսական ինստիտուտների փոխառություններ (բանկեր և այլն),
- ներդրողների փոխառություններ (հիմնականում բնակչություն)՝

բաժնետոմսերի և պարտատոմսերի վաճառքի միջոցով:


## **Հարց 2. Հիմնական և շրջանառու կապիտալ, դրանց շրջապտույտը և ամորտիզացիան**

Յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսությունը իրենից ներկայացնում է մի կողմից՝ առանձնացված, մյուս կողմից՝ փոխադարձորեն միմյանցից կախված ֆիրմաների ամբողջություն, որոնք անհատական վերարտադրություն են իրականացնում:

Անհատական վերարտադրությունը արտադրության գործոնների միացման անընդհատ կրկնվող գործընթացն է՝ ապրանքներ արտադրելու և եկամուտներ ստանալու նպատակով:

Վերարտադրության ելակետը կապիտալի շրջապտույտն է: Կապիտալի շրջապտույտը արտադրության գործոնների արժեքի շարժն է արտադրության և շրջանառության ոլորտներում, որի ընթացքում անցնում է երեք հաջորդական փուլերով և ընդունում արտադրական, դրամական և ապրանքային ձևեր:

Արտադրական պարբերաշրջանի փուլը.



որտեղ՝  $\Phi$  - սկզբնական կապիտալն է (ավանսավորված փողն է),

$U$  - ապրանքն է,

$U_1$  - գնված արտադրության գործոններն են,

$U_2$  - աշխատուժն է,

Արտ - ապրանքների և ծառայությունների արտադրության գործընթացն է,

$U'$  - թողարկված արտադրանքն է,

$\Phi'$  - աճած նախասկզբնական ավանսավորված կապիտալն է:

Երեք փուլերից յուրաքանչյուրը որոշակի ֆունկցիա է կատարում.

- առաջին փուլում ձևավորվում են արտադրության պայմանները,

- երկրորդ փուլում իրականացվում է արտադրության պրոցես,

- երրորդ փուլում տեղի է ունենում թողարկված արտադրանքի իրացումը և շահույթի ստացումը:

Կապիտալի շրջապտույտը՝ դիտարկված որպես անընդհատ կրկնվող գործընթաց, կոչվում է կապիտալի պտույտ:

Շրջապտույտի և պտույտի միջև գոյություն ունի տարբերություն: Մեկ շրջապտույտի ընթացքում ֆիրմային է վերադարձվում ավանսավորված կապիտալի միայն մի մասը, իսկ պտույտի ընթացքում՝ ամբողջ ավանսավորված կապիտալը:

Կապիտալի պտույտը չափվում է ժամանակով և արագությամբ: Պտույտի ժամանակն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ռեսուրսները, անցնելով արտադրության և շրջանառության բազմաթիվ փուլերով, վերադառնում են ելակետային (դրամական) ձևին: Պտույտի ժամանակը բաղկացած է արտադրության և շրջանառության ժամանակներից:

Պտույտների թիվը որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

---

$$n = \frac{o}{t}$$

որտեղ՝  $n$  – պտույտների թիվն է տարվա ընթացքում,

$o$  – ընդունված ժամանակի միավորն է (1 տարի),

$t$  – տվյալ ռեսուրսների մեկ շրջապտույտի տևողությունն է:

Պտույտը կատարում է արտադրական կապիտալը (ըստ Մարքսի՝ արդյունաբերականը):

Արտադրական կապիտալը արտադրության գործոններն են՝ արտահայտված արժեքային ձևով:

Կապված նոր ստեղծված ապրանքի արժեքին օգտագործվող արտադրական կապիտալի արժեքի փոխանցման ձևի հետ՝ տարբերում են **հիմնական կապիտալ** և **շրջանառու կապիտալ** կատեգորիաները:

Հիմնական կապիտալը օգտագործվում է մի քանի արտադրական պարբերաշրջանների ընթացքում և իր արժեքը պատրաստի արտադրանքին փոխանցում է մաս-մաս՝ մաշվածքին համապատասխան: Բնահիրային տեսքով դրանք շենքերն են, հաստոցները, սարքավորումները և այլն:

Շրջանառու կապիտալն օգտագործվում է մեկ պարբերաշրջանի ընթացքում և իր արժեքը փոխանցում է պատրաստի արտադրանքին միանգամից ու ամբողջությամբ: Բնահիրային տեսքով իրենից ներկայացնում է հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ և այլն:

Հիմնական կապիտալի արժեքի փոխանցման գործընթացը կոչվում է ամորտիզացիա, իսկ փոխանցված գումարների ամբողջությունը՝ ամորտիզացիոն ֆոնդ:

Ամորտիզացիոն ֆոնդը նախատեսված է հիմնական կապիտալի տարբերի վերականգնման համար:

Հիմնական կապիտալը ենթարկում է ֆիզիկական և բարոյական մաշվածության: Ֆիզիկական մաշվածությունը նրա սպառարժեքի կորուստն է, երբ հիմնական կապիտալը արդեն ֆիզիկապես լրիվ մաշվել է, և այն պետք է փոխարինել նորով: Բարոյական մաշվածության դեպքում հիմնական կապիտալը դեռ ֆիզիկապես չի մաշվել, պիտանի է օգտագործման, սակայն գիտության և տեխնիկայի զարգացման շնորհիվ ստեղծվել են նոր, առավել ժամանակակից սարքավորումներ, որոնց օգտագործումն

---

ավելի նպատակահարմար է, և հին սարքավորումները դրանց դիմաց համարվում են բարոյապես մաշված:

Ֆիզիկական և բարոյական մաշվածքի հաշվարկը մեծ նշանակություն ունի ամորտիզացիայի նորմայի հաշվարկման համար:

Ամորտիզացիայի նորման որոշվում է տարեկան ամորտիզացիոն հատկացումների և հիմնական արտադրական կապիտալի միջին տարեկան արժեքի հարաբերությամբ՝ արտահայտված տոկոսներով: Այն ցույց է տալիս, թե քանի տարվա ընթացքում հիմնական կապիտալի արժեքը պետք է վերականգնվի:

ԳՏԱ-ի պայմաններում սարքավորման ծառայության ժամկետը կրճատվում է, որի պատճառով արագացված ամորտիզացիայի անհրաժեշտություն է առաջանում:

Հիմնական ֆոնդերի օգտագործման ընդհանրական ցուցանիշ է համարվում ֆոնդահատույցը (Ֆհ):

$$\text{Ֆհ} = \frac{\text{Աթ}}{\text{Հֆ}}, \text{ որտեղ՝}$$

- Ֆհ – ֆոնդահատույցն է,
- Աթ - թողարկված արտադրանքի արժեքն է,
- Հֆ – հիմնական արտադրական ֆոնդերի արժեքն է:

**Հարց 3. Տոկոսի էությունը, դինամիկան և գործոնները**

Արտադրության յուրաքանչյուր գործոն՝ հող, կապիտալ, աշխատանք, բերում է համապատասխան եկամուտ՝ ռենտա, տոկոս և աշխատավարձ:

Դիտարկենք տոկոսը:

Շուկայական էկոնոմիկան ենթադրում է վարկով տրված ցանկացած ռեսուրսի վճարումը՝ տոկոսով հանդերձ:

Մարքսյան տեսությունն այդ հարցը քննարկում է հետևյալ տրամաբանությամբ՝ փոխատվական կապիտալը մտնում է արտադրության պրոցես, որի հետևանքով բերում է շահույթ: Այդ շահույթի մի մասը փոխառուն յուրացնում է որպես ձեռնարկատիրական եկամուտ, իսկ մյուս մասը տալիս է փոխատուին՝ տոկոսի տեսքով:

---

Փոխատվության տրված կապիտալից ստացվող եկամտի և այդ կապիտալի մեծության հարաբերությունը, արտահայտված տոկոսներով, կոչվում է տոկոսի նորմա կամ տոկոսադրույք:

Օրինակ, փոխատվական կապիտալի մեծությունը 10000 դոլար է, իսկ դրանից ստացված տարեկան եկամուտը՝ 1000 դոլար, տոկոսադրույքը հավասար կլինի  $1000/10000 \times 100\% = 10\%$ :

Գործնականում տոկոս ասելիս սովորաբար հասկացվում է տոկոսի նորման կամ դրույքը:

Տարբերում են տոկոսի միջին նորմա, որը որոշվում է երկար ժամանակահատվածի համար, և շուկայական տոկոսադրույք, որը որոշվում է յուրաքանչյուր օրվա համար:

Տոկոսադրույքի վրա ազդում են՝

- կապիտալի մեծությունը,
- խնայողությունների ծավալը,
- կապիտալի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը:

Գոյություն ունեն անվանական և իրական տոկոսադրույք հասկացություններ:

Անվանական տոկոսադրույքն ընթացիկ շուկայական դրույքն է՝ առանց հաշվի առնելու ինֆլյացիայի տարեկան մակարդակը: Իրական տոկոսադրույքը անվանական տոկոսադրույքի և սպասվող (ենթադրվող) ինֆլյացիայի տեմպի տարբերությունն է: Օրինակ, եթե անվանական տոկոսադրույքը 10% է, իսկ սպասվող ինֆլյացիայի տեմպը 6% է, ապա իրական դրույքը կկազմի 4%:

Ամերիկացի տնտեսագետ Իրվինգ Ֆիշերն առաջ է քաշել անվանական և իրական տոկոսադրույքների կապին վերաբերող հիպոթեզ, որը ստացել է Ֆիշերի էֆեկտ անվանումը: Ըստ այդ հիպոթեզի՝ տոկոսի անվանական դրույքը փոխվում է այնպես, որ իրական դրույքը մնա անփոփոխ:

Մաթեմատիկորեն Ֆիշերի էֆեկտն ընդունում է հետևյալ տեսքը՝  $i = t + \pi^e$ , որտեղ՝  $i$ -ն տոկոսի անվանական դրույքն է,  $t$ -ն տոկոսի իրական դրույքն է, իսկ  $\pi^e$ -ն՝ սպասվող ինֆլյացիայի տեմպը՝ արտահայտված տոկոսներով:

Տոկոսադրույքի մեծության սահմանները կարող են տատանվել հետևյալ գործոնների ազդեցության ներքո՝

1. Ռիսկ. ինչքան մեծ է ռիսկը, այնքան բարձր է տոկոսադրույքը:
2. Ժամկետայնություն. երկարաժամկետ վարկերը տրվում են ավելի բարձր տոկոսով, քան կարճաժամկետը:

---

3. Վարկի չափը. որպես կանոն, փոքր վարկի տոկոսադրույքն ավելի բարձր է: Պատճառն այն է, որ և՛ մեծ, և՛ փոքր վարկի վարչական ծախսերը նույնն են:

4. Փոխատվական կապիտալի շուկայի մոնոպոլացման աստիճանը: Ինչքան բարձր է մոնոպոլացման աստիճանը, այնքան բարձր կլինի տոկոսադրույքը (այլ հավասար պայմաններում):

Գոյություն ունեն տոկոսադրույքի վրա ազդող այլ գործոններ՝ մրցակցությունը, հարկերը և այլն:

Տոկոսադրույքի դերը շատ մեծ է, քանի որ այն ազդում է արտադրության և մակարդակի, և՛ կառուցվածքի վրա:

1. Ցածր տոկոսադրույքը բերում է ինվեստիցիաների մեծացման և արտադրության ընդլայնման: Բարձր տոկոսադրույքը «ճնշում» է ինվեստիցիաները:


2. Տոկոսադրույքը ազդում է կապիտալի տեղաբաշխման վրա: Այն վերաբաշխում է կապիտալը ճյուղերի միջև՝ ըստ շահութաբերության:

Սահմանային օգտակարության տեսության կողմնակիցների կարծիքով՝ (ավստրիացի տնտեսագետ է. Բեն-Բավերկ) տոկոսն առաջանում է ժամանակի հոգեբանական նախընտրության արդյունքում: Մարդու համար բարիքների այժմեական արժեքը ավելի բարձր է, քան համանման բարիքների արժեքը ապագայում: Դա կապված է մարդու կարիքներն ու ցանկությունները տվյալ պահին բավարարելու հնարավորության, ինչպես նաև եղած ռեսուրսների խելամիտ տնօրինման շնորհիվ լրացուցիչ եկամուտ ստանալու՝ մարդու ցանկության հետ: Հենց այդ հնարավորությունն է դրդում մարդկանց պարտք անել և դրա դիմաց վճարել որոշակի գումար՝ տոկոսների տեսքով: Այսպիսով, տոկոսը ընթացիկ սպառումից հրաժարվելու դիմաց փոխհատուցումն է:

Կապիտալի զուտ արտադրողականության տեսությունը տոկոսի հարկը կապում է կապիտալի պահանջարկի հետ: Ձեռներեցը, որն օգտագործում է պարտք վերցրած կապիտալը, կարող է վճարել տոկոսներ, եթե դրա կիրառումը եղել է արդյունավետ: Սահմանային օգտակարության տեսությունն, իր հերթին, տոկոսի խնդիրը կապում է կապիտալի առաջարկի հետ: Իր կապիտալն ուրիշին օգտագործման տվող անձի համար այդ գործարքն իրապես երևում է ինչպես ընթացիկ պահանջումներինց հրաժարում, որն արժանի է տոկոսների տեսքով փոխհատուցմանը:

Ժամանակակից տնտեսագիտության տեսությունը տոկոսը մեկնաբանում է որպես տվյալ պահին ռեսուրսներ ունենալու պահանջարկի բավարարման դիմաց վճարվող արժեք՝ փոխանակ սպասելու այնքան, մինչև փող կվաստակեն և կկարողանան ձեռք բերել տվյալ ռեսուրսներ:

Տոկոսադրույքի որոշումը կարելի է կատարել պահանջարկի և առաջարկի տեսության հիման վրա: Կապիտալի պահանջարկի աճի և առաջարկի նվազման հետ կապված՝ տոկոսի մակարդակը բարձրանում է: Գրաֆիկորեն դա ցույց է տրված գծանկար 22-ում:



**Ներդրումային միջոցներ (վարկային կապիտալ)**

**Գծանկար 22. Հավասարակշռությունը կապիտալի շուկայում**

Առաջադրված գրաֆիկը թույլ է տալիս հասկանալ տոկոսի կատեգորիան՝ որպես յուրօրինակ հավասարակշռող գին ( $R_E$ ): E կետը կապիտալի պահանջարկի կորի (D) հատման կետն է կապիտալի առաջարկի կորին (S): Այստեղ տեղի է ունենում կապիտալի սահմանային արդյունավետության համընկնում ընձեռված հնարավորությունների սահմանային բացթողման հետ, վարկային կապիտալի պահանջարկն ու առաջարկը համընկնում են:

**Հայր 4. Արժեթղթերի եռությունը և տեսակները**

Արժեթղթերի շուկան ֆինանսական շուկայի այն ձևն է, որտեղ տեղի է ունենում թողարկված արժեթղթերի առք ու վաճառք:

ՀՀ-ում արժեթղթերի շուկան օրենքով սահմանված է որպես արժեթղթերի թողարկման, տեղաշարժման և շրջանառության առնչությամբ առաջացող փոխհարաբերությունների համակարգ:

*Արժեթուղթը իրավական ուժ ունեցող փաստաթուղթ է, որը վկայում է այն թողարկող և ձեռք բերող անձանց միջև գույքային կամ փոխառության առնչությամբ սահմանված փոխհարաբերությունների մասին:*

*Արժեթուղթը, սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս:*

Արժեթղթի փոխանցմամբ փոխանցվում են դրանով հավաստվող բոլոր իրավունքները:

---

Արժեթղթերի շուկան իրենից ներկայացնում է շրջանառության ոլորտի յուրահատուկ մասը, որի մեջ ներգրավված են արժեթղթերի հետևյալ տեսակները՝ բաժնետոմսերը, պարտատոմսերը, մուրհակները, չեկերը, կոնոսամենտները, բանկային վկայագրերը, երկակի պահեստային վկայագրերը, հասարակ պահեստային վկայագրերը, այլ արժեթղթեր (ֆորվարդներ, ֆյուչերսներ, օպցիոններ):

Պարտատոմսը և բաժնետոմսը ներդրումային (ինվեստիցիոն) արժեթղթեր են:

Չեկը, հասարակ մուրհակը և փոխանցելի մուրհակը (վճարագիրը) վճարային արժեթղթեր են:

Կոնոսամենտը, երկակի պահեստային վկայագիրը և հասարակ պահեստային վկայագիրը տիտղոսային արժեթղթեր են:

*Բաժնետոմս* է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ) բաժնետիրական ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը:

Բաժնետոմսերը կարող են լինել՝ ըստ ներկայացնողի կամ անվանական, ազատ շրջանառու կամ սահմանափակ շրջանառու, հասարակ կամ արտոնյալ:

*Պարտատոմսը* արժեթուղթ է, որը վավերացնում է ներդրողի կողմից կատարված դրամական միջոցների ներդրումը և պարտատոմս թողարկողի պարտավորությունները՝ կապված պարտատոմսի սեփականատիրոջը սահմանված ժամկետում գումարների կամ տոկոսադրույքների վճարման և ներդրված գումարի վերադարձման հետ, ինչպես նաև պարտատոմսի թողարկման որոշմամբ նախատեսված այլ պայմաններ:

*Պետական պարտատոմսը* արժեթուղթ է, որը վավերացնում է սեփականատիրոջ կողմից պետական բյուջե կատարած դրամական միջոցների ներդրումը և հաստատագրված եկամուտներ ստանալու իրավունքը: ՀՀ պետական պարտատոմսեր կարող են թողարկել միայն ՀՀ կառավարման մարմինները:

*Մուրհակ* է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է մուրհակ տվողի (հասարակ մուրհակ) կամ մուրհակուն նշված այլ վճարողի (փոխանցելի մուրհակ՝ վճարագիր) որևէ բանով չպայմանավորված պարտավորությունը՝ մուրհակուն նախատեսված ժամկետը լրանալիս որոշակի գումար վճարել մուրհակը տիրապետողին (մուրհակի տիրոջը):

*Չեկ* է համարվում այն արժեթուղթը, որը պարունակում է չեկ տվողի՝ որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ չեկը տիրապետողին վճարել դրանում նշված գումարը:

---

*Կոնոսամենտ* է կոչվում ապրանքի տնօրինման վերաբերյալ փաստաթուղթը, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը տնօրինելու կոնոսամենտում նշված բեռը և փոխադրելուց հետո ստանալու այն:

*Բանկային վկայագիր* (բանկային գրքույկ, բանկային սերտիֆիկատ) է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է ավանդի գումարը և ավանդատուի իրավունքը՝ սահմանված ժամկետի ավարտից հետո վկայագիր տված բանկում կամ այդ բանկի ցանկացած մասնաճյուղում ստանալ ավանդի գումարը և դրանից տոկոսներ: Բանկային վկայագիրը կարող է լինել՝ ըստ ներկայացնողի կամ անվանական:

*Երկակի պահեստային վկայագիր* է համարվում օրդերային այն արժեթուղթը, որը հավաստում է ապրանքային պահեստի կողմից ապրանքն ի պահ ընդունելը և բաղկացած է երկու մասից՝ պահեստային վկայագրից և գրավային վկայագրից (վարանտից):

*Հասարակ պահեստային վկայագիր* է համարվում ըստ ներկայացնողի այն արժեթուղթը, որը հավաստում է ապրանքային պահեստի կողմից ապրանքն ի պահ ընդունելը:

Այլ արժեթղթեր են հանդիսանում ֆյուչերսային, ֆորվարդային ու օպցիոն պայմանագրերը, որոնք կոչվում են ածանցյալ ֆինանսական գործիքներ:

*Ֆորվարդային պայմանագիրը* համաձայնագիր է, որով մի կողմը պարտավորվում է (սովորաբար որոշակի վճարի դիմաց) սահմանված ժամկետներում, սահմանված քանակով, գործարքի կնքման պահին շուկայում ձևավորված գնով մյուս կողմից ձեռք բերել կամ նրան վաճառել որևէ ապրանք, այդ թվում՝ արժեթուղթ կամ արժույթ: Դրանք սովորաբար կնքվում են բորսայից դուրս:

*Ֆյուչերսային պայմանագիրը* համաձայնագիր է, որով մի կողմը պարտավորվում է (սովորաբար որոշակի վճարի դիմաց) սահմանված ժամկետներում, սահմանված քանակով և սահմանված գնով մյուս կողմից ձեռք բերել կամ նրան վաճառել որևէ ապրանք, այդ թվում՝ արժեթուղթ կամ արժույթ: Դրանք կնքվում և շրջանառություն են կատարում բորսաներում:

*Օպցիոնը* համաձայնագիր է, որով մի կողմը (սովորաբար որոշակի վճարի դիմաց) մյուս կողմին իրավունք է տալիս սահմանված ժամկետներում ձեռք բերել կամ վաճառել սահմանված քանակով որևէ ապրանք, արժեթուղթ և արժույթ, այդ թվում՝ ֆյուչերսային և ֆորվարդային պայմանագրեր: Դրանք սովորաբար կնքվում են բորսայից դուրս:

Արժեթղթերի շուկայում մասնակցում են հետևյալ սուբյեկտները՝

ա/ Արժեթղթեր թողարկողը իրավաբանական անձ է (էմիտենտ), որը արժեթղթերը շրջանառության մեջ է բաց թողնում իր անունից և պարտավորություն է կրում այդ արժեթղթերը ձեռքբերողների առջև:

---

բ/ Ներդրողը (ինվեստորը) ֆիզիկական անձ է կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող սուբյեկտ, որը հանդիսանում է արժեթղթերի սեփականատեր կամ նրա կողմից լիազորված անձ:

Արժեթղթերի շուկայի կազմակերպչական կառույց է ֆոնդային բորսան՝ սահմանափակ պատասխանատվությամբ կամ բաժնետիրական ընկերության ձևով հիմնադրված, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկություն է, որը սահմանված որոշակի տեղում և ժամկետներում, իր կողմից հաստատված կանոններով, կազմակերպում է արժեթղթով հրապարակային սակարկություններ և կատարում արժեթղթերի գնանշում:

ՀՀ-ում արժեթղթերի առուժախն իրականացվում է ազատ գներով՝ արժեթղթերի շուկայի կանոններին համապատասխան:

Արժեթղթերի շուկան լինում է 2 տեսակ.

- 1) առաջնային,
- 2) երկրորդային:

Առաջնային շուկայում էմիտենտը վաճառում է արժեթղթերի նոր թողարկումները և ստանում դրանց համար անհրաժեշտ դրամական միջոցները:

Այդպիսի արժեթղթերը անմիջապես ձեռք են բերում նախնական ներդրողները:

Երկրորդային շուկան բաղկացած է հաջորդող ներդրողներից, որոնց միջև կատարվում է արժեթղթերի վերաբաշխում:

Ջարգացած երկրներում, որպես կանոն, գործում են մի քանի ֆոնդային բորսաներ, որտեղ արժեթղթերի առուժախով զբաղվում են մակլերները, բրոքերները և դիլերները.

ա) Մակլերը մոտեցնում է գործարքի մասնակիցներին, բայց ինքը ինքնուրույն գործարքներ չի կնքում և ստանում է միջնորդավարձ արժեթղթեր՝ գնորդից և իրացնողից:

բ) Բրոքերը արժեթղթերի առանձին տեսակների նեղ մասնագետ է, որն անմիջականորեն նպաստում է առևտրային գործարքին: Դրա համար նա ստանում է որոշակի վճար (կողմերի համաձայնությամբ):

գ) Դիլերը գնում է արժեթղթեր իր անունով և իր հաշվին, հետո վերավաճառում է դրանք: Այդ վերավաճառման դրամամուտքը նրա շահույթն է:

Արժեթղթերի շուկայի բովանդակությունը արտահայտվում է նրա գործառնությունների միջոցով:

Այդ գործառնություններն են՝

1. խնայողությունների և ազատ դրամական միջոցների կենտրոնացումը և արտադրության ֆինանսավորումը,
2. կապիտալ միջոցների արդյունավետ օգտագործումը՝ դրանց բաշխման և վերաբաշխման միջոցով,

---

3. կապիտալի ազատ հոսքի ապահովումը մեկ ճյուղից մյուսը՝ ըստ պահանջարկի և առաջարկի փոփոխության,

4. արժեթղթերի օգտագործումը պետության ձեռքին կարևոր գործիք է ոչ միայն բյուջեի դեֆիցիտ վերացնելու համար, այլև ռազմավարական նշանակություն ունեցող արտադրությունները խթանելու համար,

5. տեղեկատվական ֆունկցիան:

Արժեթղթերի շուկան յուրատեսակ բարոմետր է ծառայում տնտեսավարող սուբյեկտների համար՝ իրենց միջոցներն ավելի արդյունավետ օգտագործելու առումով:

Արժեթղթերի շուկայում կողմնորոշվելու համար կարևոր դերակատարություն ունեն արժեթղթերի ֆոնդային ինդեքսները: Արժեթղթերի ֆոնդային ինդեքսը որոշելու համար հիմք են ընդունվում մի շարք խոշոր միավորումների արժեթղթերի կուրսերը:

Այսպես, օրինակ՝ աշխարհում ամենախոշորներից մեկը համարվող Նյու Յորքի ֆոնդային բորսան արժեթղթերի ինդեքսը հաշվարկելիս հաշվի է առնում 30 առաջատար արդյունաբերական կորպորացիաների, 20 առաջատար տրանսպորտի և կապի, 15 կոմունալ ծառայությունների միավորումների արժեթղթերի կուրսը:

Ի վերջո, քանի որ այդ խոշոր միավորումներն են հիմնականում ապահովում տվյալ տնտեսական համակարգի կայունությունը, ուստի արժեթղթերի կուրսերի տատանումները գնահատվում են ըստ այդ կորպորացիաների արժեթղթերի կուրսի տատանումների: Փաստորեն դրանք յուրատեսակ արժեչափ կան բարոմետր են՝ ճիշտ կողմնորոշվելու համար:

Ամենահին ինդեքսը Դուու-Ջոնսի ինդեքսն է, որը հաշվարկվում է 1884 թվականից:

### **Համառոտ եզրակացություններ**

1. Կապիտալը դիտարկվում է որպես արտադրության միջոց կամ իրացման համար նախատեսված ապրանք:

2. Կապիտալը տոկոս բերող գումար է:

3. Կապիտալի շրջապտույտը արտադրության գործոնների արժեքի շարժն է արտադրության և շրջանառության ոլորտներում, որի ընթացքում անցնում է երեք հաջորդական փուլերով և ընդունում արտադրական, դրամական և ապրանքային ձևեր:

4. Հիմնական կապիտալն օգտագործվում է մի քանի արտադրական պարբերաշրջանների ընթացքում և իր արժեքը պատրաստի արտադրանքին փոխանցում է մաս-մաս՝ մաշվածքին համապատասխան: Բնափրային տեսքով դրանք շենքերն են, հաստոցները, սարքավորումները և այլն:

5. Շրջանառու կապիտալը օգտագործվում է մեկ պարբերաշրջանի ընթացքում և իր արժեքը փոխանցում է պատրաստի արտադրանքին միանգամից ու ամբողջությամբ: Բնահրայինն իրենից ներկայացնում է հունք, նյութեր, կիսաֆաբրիկատներ և այլն:

6. Հիմնական կապիտալի արժեքի փոխանցման գործընթացը կոչվում է ամորտիզացիա, իսկ փոխանցված գումարների ամբողջությունը՝ ամորտիզացիոն ֆոնդ:

7. Հիմնական կապիտալը ենթարկում է ֆիզիկական և բարոյական մաշվածության: Ֆիզիկական մաշվածությունը դրա սպառարժեքի կորուստն է:

8. Ամորտիզացիայի նորման որոշվում է տարեկան ամորտիզացիոն հատկացումների և հիմնական արտադրական կապիտալի միջին տարեկան արժեքի հարաբերությամբ՝ արտահայտված տոկոսներով: Այն ցույց է տալիս, թե քանի տարվա ընթացքում հիմնական կապիտալի արժեքը պետք է վերականգնվի:

9. Անվանական տոկոսադրույքն ընթացիկ շուկայական դրույքն է՝ առանց հաշվի առնելու ինֆլյացիայի տարեկան մակարդակը: Իրական տոկոսադրույքը անվանական տոկոսադրույքի և սպասվող (ենթադրվող) ինֆլյացիայի տեմպի տարբերությունն է:

10. Արժեթուղթը իրավական ուժ ունեցող փաստաթուղթ է, որը վկայում է այն թողարկող և ձեռք բերող անձանց միջև գույքային կամ փոխառության առնչությամբ սահմանված փոխհարաբերությունների մասին: Արժեթուղթը, սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս:

11. Արժեթղթերի շուկան իրենից ներկայացնում է շրջանառության ոլորտի յուրահատուկ մասը, որի մեջ ներգրավված են արժեթղթերի հետևյալ տեսակները՝ բաժնետոմսերը, պարտատոմսերը, մուրհակները, չեկերը, կոնոսամենտները, բանկային վկայագրերը, երկակի պահեստային վկայագրերը, հասարակ պահեստային վկայագրերը, այլ արժեթղթեր (ֆորվարդներ, ֆյուչերսներ, օպցիոններ):

### ***Ինքնաստուգման հարցեր***

1. *Ի՞նչ է կապիտալը: Կապիտալի ի՞նչ մեկնաբանություններ կան:*
2. *Ինչպե՞ս է իրականացվում կապիտալի շրջապտույտը:*
3. *Ինչպե՞ս է որոշվում պտույտների թիվը:*
4. *Ո՞րն է հիմնական և շրջանառու կապիտալների տարբերությունը:*
5. *Ի՞նչ է ամորտիզացիան:*
6. *Ինչպե՞ս է հաշվարկվում ամորտիզացիայի նորման:*

- 
7. Ի՞նչ է ֆոնդահատույցը, և ինչպե՞ս է այն հաշվարկվում:
  8. Ի՞նչ է տոկոսը:
  9. Ինչպե՞ս է որոշվում տոկոսադրույթը:
  10. Ո՞րն է անվանական և իրական տոկոսադրույթների միջև եղած տարբերությունը:
  11. Ո՞րն է Ֆիշերի էֆեկտը:
  12. Ի՞նչ գործոններ են ազդում տոկոսադրույթի մեծության վրա:
  13. Ինչպե՞ս է ձևավորվում հավասարակշռությունը կապիտալի շուկայում:
  14. Ի՞նչ է արժեթուղթը:
  15. Արժեթղթերի ի՞նչ տեսակներ կան:
  16. Ի՞նչ է բաժնետոմսը և պարտատոմսը:
  17. Ի՞նչ է մուրհակը և չեկը:
  18. Որո՞նք են ֆինանսական ածանցյալ գործիքները:

## ԹԵՄԱ 12. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՇՈՒԿԱ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ներկայացնել հողային ռեսուրսների շուկան և հողային ռենտան:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

ա. ներկայացնել հողային ռեսուրսների էությունը և առանձնահատկությունները,

բ. ներկայացնել հողի առաջարկի սահմանափակությունը,

գ. բացատրել հողային ռենտայի և հողի գնի էությունը:

### Հարց 1. Հողային ռեսուրսների առաջարկի սահմանափակությունը Հողային ռենտա

Հողը արտադրության անմիջական գործոն է (գյուղատնտեսության և արդյունահանող արդյունաբերության մեջ) կամ էլ օգտագործվում է որպես տարածք արտադրական, վարչական, հասարակական, բնակելի և այլ շենքերի, տրանսպորտային և այլ հաղորդակցությունների տեղադրման համար և այլն:

Հողը և նրա ընդերքը, լինելով արտադրության գործոն, բերում են եկամուտ, որը կոչվում է ռենտա: Հողը՝ որպես արտադրության գործոն, ունի որոշակի առանձնահատկություններ: Ի տարբերություն մյուս գործոնների (աշխատանք և կապիտալ), որոնք ազատ վերարտադրելի են, կարող են մեծանալ ի պատասխան աճող պահանջարկի, հողը արտադրության՝ ազատորեն վերարտադրվող գործոն չէ:


Ժամանակակից աշխարհում արտադրության չվերարտադրվող գործոնը դառնում է ավելի նշանակալի ու ազդեցիկ: Այժմ այդպիսի գործոն է ամբողջ բնական միջավայրը, ինչը, ամբողջությամբ վերցրած, համաշխարհային տնտեսության վերարտադրության կարևոր պայման է: Ընդ որում, բնական միջավայրն իր շատ դրսևորումներում դեռ նոր է սկսում լայնորեն ներառվել ինչպես առանձին, այնպես էլ հասարակական ամբողջ կապիտալի վերարտադրության վրա ազդեցություն ունեցող իրական տնտեսական հարաբերությունների մեջ: Հենց հողի սահմանափակությունն ու դրա նկատմամբ բացարձակ ոչ ձկուն առաջարկը գյուղատնտեսության մեջ գնագոյացման առանձնահատկությունների կարևորագույն պատճառներից են: Իհարկե, շատ երկար ժամանակահատվածում հողի առաջարկը կարող է մեծանալ՝ ի պատասխան գյուղատնտեսական պիտանի հողահանդերի նկատմամբ աճող պահանջարկի՝ դրանց նվաճման ճանապարհով (ծովափնյա, տայգայի կամ տրոպիկական անտառների, սարահարթերի հատվածներում):

Սակայն կարճ կամ երկար ժամանակահատվածում, ինչքան էլ որ բարձր լինի պահանջարկը, օրինակ՝ սևահողերի կամ օգտակար հանածոներով հարուստ խամ հողերի նկատմամբ, այդպիսի որակի հողերի առաջարկը մեծացնել ուղղակի հնարավոր չէ:

Հողային ռեսուրսների մյուս առանձնահատկությունը դրանց անշարժ բնույթն է: Հողատերը չի կարող հողակտորը տեղափոխել գյուղատնտեսական արտադրանքի իրացման շուկային՝ քաղաքին, մայրաքաղաքին մոտ, որպեսզի քիչ տրանսպորտային ծախսումներով ստանա շատ եկամուտ:

Շուկայական տնտեսական հարաբերությունների գլխավոր առանձնահատկությունը գյուղատնտեսության մեջ հողային ռենտայի գոյությունն է: Հողասեփականատերերը հողը վարձակալության են տալիս վարձակալ ձեռնարկատերերին և դրա օգտագործման դիմաց ստանում են որոշակի վարձ, որը կոչվում է ռենտա: Այսպես՝ եթե հողի սեփականատերը հողը հանձնում է վարձավճարով, ապա վարձակալը վճարում է նրան վարձակալական վճար, որն ընդգրկում է հողային ռենտան և հողի վրա գտնվող շինություններից օգտվելու վճարը: Իսկ վարձակալը ստանում է միջին շահույթ այն կապիտալից, ինչն ինքը ներդրել է տնտեսության մեջ: Հողային ռենտան՝ որպես գործոնային եկամուտ, կարող է դիտարկվել սահմանային արդյունքի հայեցակարգի հիմքի վրա, որը նորդասական ուղղության մոտեցումն է:

Նրանց պատկերացումները բխում են սահմանային ծախսերի գաղափարից: Դիտարկենք այն դեպքը, երբ հողի սեփականատերը ինքն է վարում տնտեսությունը (գծանկար 23):



Գծանկար 23. Ստեղծված արդյունքում աշխատավարձի և հողային ռենտայի մեծությունը

Գծանկարից երևում է, որ ֆերմերը (ինքն էլ հենց հողի սեփականատերն է) բանվորներ կվարձի մինչև  $L_1$  կետը, այսինքն՝ մինչև վերջին վարձվող բանվորի սահմանային արդյունքը չհավասարվի աշխատավարձի մակարդակին: Բոլոր աշխատողների աշխատավարձը որոշվում է  $OW_1EL_1$  մակերեսով: Մնացած՝  $W_1DE$  մակերեսը ցույց է տալիս հողային ռենտայի մեծությունը: Ըստ նորդասական ուղղության՝ ռենտայի չափը որոշվում է «մնացորդային եղանակով», երբ նոր ստեղծված արդյունքի ընդհանուր արժեքից հանում են աշխատավարձի մեծությունը: Մասնավոր սեփականության իրավունքից ելնելով՝ ռենտան ստանում է հողի սեփականատերը:


Այժմ որոշենք ռենտայի մեծությունն այն դեպքում, երբ հողը չի պատկանում ֆերմերին. վերջինս վարձով է այն օգտագործում:

Նորդասականները ելնում են այն դրույթից, որ յուրաքանչյուր արտադրության գործոնի գին սահմանվում է առաջարկի և պահանջարկի հավասարակշռության կետում (գծանկար 24):

Պարզ է, որ հողի առաջարկը ճկուն չէ: Դրա համար էլ հողի առաջարկի կորը՝  $SQ_1$ -ը, ուղղահայաց գիծ է ներկայացնում:  $DD$ -ն հողի պահանջարկի կորն է,  $E$ -ն՝ ռենտայի այն մակարդակը, որը հավասարակշռում է հողի առաջարկն ու պահանջարկը:

Եթե վարձավճարը (ռենտան) բարձր լինի  $E$  կետից, ապա հողի առաջարկը կգերազանցի դրա պահանջարկը, հողասեփականատերերը դժվարությամբ հողը վարձով կտան, ինչի արդյունքում էլ նրանք կիջեցնեն վարձավճարը:

Եթե վարձավճարի մակարդակը նվազի ( $E$ -ից ցածր), ապա հողի պահանջարկը կգերազանցի դրա առաջարկը: Այս դեպքում ռենտան կբարձրանա:



Գծանկար 24. Հավասարակշռությունը հողի շուկայում

---

Նորդասականներին, ի տարբերություն Մարքսի, հետաքրքրում է ոչ թե այն, թե ով է ստեղծում ռենտան, այլ այն, թե ինչպես է որոշվում դրա մակարդակը:

Նրանք այդ հարցի ուսումնասիրության արդյունքում անում են 2 հետևություն՝

1. Ռենտայի մակարդակը ուղղակի կախվածության մեջ է գտնվում հողի առաջարկի ոչ ճկունությունից:

2. Ռենտայի մակարդակը կախված է վերջնական արտադրանքի պահանջարկից: Եթե, օրինակ, ցորենի գինը նվազի, կնվազի նաև այն հողի պահանջարկը, որտեղ դա աճեցվում է: Հետևաբար՝ կնվազի վարձակալական վճարի դրույթը: Հնարավոր է նաև հակառակ երևույթը:

Ըստ բնական բերրիության աստիճանի՝ հողերը լինում են երեք կարգի. բարձր, միջին և ցածր բերրիությամբ օժտված:

Հողի այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ բնական բերրիությունը և որոշակի աշխարհագրական տեղադիրքը, կապիտալի իշխանությանը ենթակա չեն: Հողի շատ պարամետրեր, ինչպես նաև տեղանքի կլիմայական և բնական պայմանները, դարերի ընթացքում մնում են համեմատաբար անփոփոխ:

Միաժամանակ գյուղատնտեսական մթերքների նկատմամբ պահանջ-մուծքները մշտապես աճում են բնակչության քանակի ավելացմանը զուգընթաց:

Ուստի անհնարին է գյուղատնտեսական արտադրությունը կենտրոնացնել միայն միջին և լավագույն հողակտորների վրա: Եվ եթե արտադրված արտադրանքի համար ապահովված է վճարունակ պահանջարկ, ապա նշանակում է՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության գների ձևավորումը կարգավորող հասարակայնորեն նորմալ պայմաններն են ըստ բերրիության կամ տեղադրության վատագույն հողերի պայմանները:

Բնականաբար, հարց է առաջանում՝ ինչո՞ւ է գյուղատնտեսության մեջ արտադրության հասարակական գինը պայմանավորված վատագույն, այլ ոչ թե միջին կամ լավագույն հողակտորներում գյուղատնտեսական մթերքների արտադրության ձևավորված գնով: Հենց այն պատճառով, որ հողը սահմանափակ է, և միայն լավագույն ու միջին հողակտորների մշակումից ստացված բերքը չի կարող բավարարել հասարակության պահանջմուծքները: Իսկ եթե պահանջարկը գերազանցում է առաջարկը, ապա շուկայական գինը բարձրանում է և կարող է նույնիսկ գերազանցել վատագույն հողակտորից ստացված արդյունքի գինը, ուստի վատագույն հողերի մշակումը կդառնա ձեռնտու: Ի վերջո, միջին և լավագույն հողերում տնտեսությունը վարող վարձակալները ստանում են լրացուցիչ շահույթ, ինչը վատագույն հողամասերում արտադրության գնի (արտադրու-

---

թյան ծախսեր՝ գումարած միջին շահույթ) և միջին ու լավագույն հողամասերում արտադրության անհատական գնի տարբերությունն է: Այդ լրացուցիչ շահույթը կրում է ոչ թե ժամանակավոր, այլ շատ թե քիչ մշտական բնույթ և կազմում է դիֆերենցիալ հողային ռենտայի հիմքը: Դա հողի սեփականատերերին հանձնելուց հետո կազմավորում է դիֆերենցիալ ռենտա I:

Հասարակության զարգացմանը զուգընթաց, գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպվում է էլ ավելի ինտենսիվ ուղիով, որը ենթադրում է միևնույն հողային տարածքի վրա կապիտալի լրացուցիչ ներդրումներ, նոր, ժամանակակից բարձր արտադրողականությամբ օժտված մեքենաների կիրառում, մեխորացիայի և հողերի բարելավման այլ եղանակների վրա ծախսեր, ինչը հնարավորություն է տալիս բարձրացնելու հողի տնտեսական կամ արհեստական բերրիությունը: Պետք է նշել, որ հողամասերի տարբերակումը, ըստ տնտեսական բերրիության հատկանիշների, առանձնանում է ըստ բնական բերրիության տարբերակումից: Խոսքն այն մասին է, որ կապիտալի լրացուցիչ ներդրումներն, ըստ բնական բերրիության, միատեսակ հողակտորում կարող են ունենալ աշխատանքի տարբեր արտադրողականություն, հետևաբար՝ տարբեր արդյունք, այստեղից էլ՝ այդ հողամասերի օգտագործումից ստացվող հասույթի և շահույթի չափերի մեջ տարբերությունը: Լրացուցիչ շահույթը, որն առաջանում է կապիտալի նոր ներդրումների հետևանքով և վարձակալ ձեռնարկատերերի կողմից փոխանցվում է հողի սեփականատերերին, կազմավորում է դիֆերենցիալ ռենտա 2-րդը:

## **Հարց 2. Հողի գնի էությունը**

Շուկայական տնտեսության պայմաններում հողը ոչ միայն վարձակալության, այլև առք ու վաճառքի առարկա է: Հողը գնվում և վաճառվում է որպես կապիտալային ակտիվ: Հողը գնվում է ինչպես գյուղատնտեսական արդյունքների արտադրության և բնական հանածոների արտահանման, այնպես էլ արտադրական ու բնակելի շենքերի, կառույցների, ճանապարհների և այլնի շինարարության համար:

Իսկ ինչո՞վ է որոշվում հողի գինը: Չէ՞ որ նա արժեք չունի, քանի որ մարդկային աշխատանքի արգասիք չէ:

Շուկայական հարաբերությունների պայմաններում ամեն ինչ դառնում է առք ու վաճառքի օբյեկտ, և առաջանում է ապրանքների հատուկ մի շարք, որոնց գները կախված են ոչ թե արժեքից, այլ այն եկամտից, որը տեղը ստանում է դրանց օգտագործումից:

Մարքսյան տնտեսագիտությունն այդպիսի ապրանքների գներն անվանում է իռացիոնալ: Հողը նույնպես ունի իռացիոնալ գին: Հողասեփականատերը հողը կվաճառի միայն այն դեպքում, եթե վաճառքից ստացված գումարը բանկ դնելով՝ տոկոսի ձևով կստանա ոչ պակաս եկամուտ, քան այդ հողամասից ստացած ռենտան է: Այլ խոսքով՝ հողի գինը կապիտալացված ռենտա է:

Այսպիսով՝ եթե հողը դիտարկվում է որպես կապիտալային բարիք, որն ապահովում է եկամուտների հոսք, ապա հասկանալի է, որ հողի գինը կախված է երկու մեծություններից.

1. հողային ռենտայի չափերից (գումարից), որը կարելի է ստանալ՝ դառնալով տվյալ հողամասի սեփականատերը,

2. փոխատվական կապիտալի տոկոսադրույքի մակարդակից:

Հողակտորի գնորդը ձգտում է այն ձեռք բերել ոչ թե հանուն հողի՝ որպես այդպիսին, այլ հանուն ռենտայի՝ այն հաստատուն ամենամյա եկամտի, որն ապահովում է այդ հողը: Դրանով իսկ, փաստորեն, գնվում է կանոնավոր կերպով եկամուտ ստանալու իրավունքը՝ անորոշ և երկարատև ժամանակի համար: Այլ հավասար պայմաններում հենց ռենտայի մեծությունն է որոշում հողի գինը: Այն ուղիղ համեմատական է ռենտայի չափին (գումարին) և հակադարձ համեմատական՝ փոխատվական տոկոսի նորմային: Հողի գնի բանաձևը հետևյալն է.

$$A = \frac{R}{S} \cdot 100\%$$

որտեղ՝  $R$  -ը ռենտան է,  $S$ -ը՝ փոխատվական տոկոսի նորման,  $A$ -ն՝ հողի գինը:

Օրինակ, եթե տարեկան ռենտայի գումարը հավասար է 30 000 դոլարի, փոխատվական տոկոսի նորման 5 % է, ապա հողի գինը հավասար է՝

$$\frac{300}{5\%} \cdot 100\% = 60000 \text{ դոլար:}$$

Տնտեսական տարբեր դպրոցների հայացքներն այս հարցում գրեթե համընկնում են:

Ընդհանուր առմամբ, հողի գինը համաշխարհային տնտեսության մեջ աճման միտում ունի, որը հաճախ ընդհատվում է տնտեսական ճգնաժամերի ժամանակաշրջանում:

Դա կապված է ոչ այնքան փոխատվական կապիտալի նորմայի դինամիկայի հետ, որքան՝ ռենտայի մեծացման հետ: Եկամուտն առանձնապես արագ աճում է քաղաքային հողակտորներից: Մենաշնորհային ռենտան այն հողամասերից, որտեղ արտաջրվում են եզակի արդյունքներ, կամ արդյունահանվում են հազվագյուտ օգտակար հանածոներ, նույնպես նպաստում է այդ հողամասերի գնի արագ աճին:

---

Հողի՝ որպես կապիտալային ակտիվի գինն օգնում է ավելի լավ հասկանալ ապրանքների և արտադրության գործոնների բազմաթիվ շուկաներից մեկի էությունը, որոնք գործում են նորմալ շուկայական տնտեսությունում: Հնարավոր չէ վարչահրամայական համակարգից անցնել շուկայականին, եթե արգելվի հողի շուկայի գործողությունը, հողի առքուվաճառքը, գրավադրումը և այլն: Մեր երկրում հողի ազատ շուկայական շրջանառության վրա դրված արգելքը ամենևին էլ չի խանգարել դրա առքուվաճառքին, բայց ոչ բացահայտ, այլ թաքնված ձևով է իրականացվել գյուղական վայրերում տների, ամառանոցների վաճառքի հետ միաժամանակ: Սա նշանակում է, որ պետությունը զրկվել է բյուջեի եկամուտների զգալի մասից: Շուկայական հարաբերությունների օրինական ձևակերպումը՝ կապված հողի առքուվաճառքի հետ, անհրաժեշտ պայման է տնտեսական խոր բարեփոխումների հաջողության համար:

### Համառոտ եզրակացություններ

1. Հողը արտադրության անմիջական գործոն է (գյուղատնտեսության և արդյունահանող արդյունաբերության մեջ) կամ էլ օգտագործվում է որպես տարածք արտադրական, վարչական, հասարակական, բնակելի և այլ շենքերի, տրանսպորտային և այլ հաղորդակցությունների տեղադրման համար և այլն:

2. Հողը և նրա ընդերքը, լինելով արտադրության գործոն, բերում են եկամուտ, որը կոչվում է ռենտա:

3. Հողի գինը կախված է երկու մեծություններից՝ հողային ռենտայի չափերից (գումարից), որը կարելի է ստանալ՝ դառնալով տվյալ հողամասի սեփականատերը և փոխատվական կապիտալի տոկոսադրույքի մակարդակից:

### *Ինքնաստուգման հարցեր*

1. Ի՞նչ առանձնահատկություններ ունի հողը՝ որպես արտադրության գործոն:
2. Ի՞նչ է հողային ռենտան, և ինչպե՞ս է այն ձևավորվում:
3. Ի՞նչ է դիֆերենցիալ ռենտան, և ինչպե՞ս է այն կազմավորվում:
4. Ինչպե՞ս է որոշվում հողի գինը:

---

### ԹԵՄԱ 13. ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ներկայացնել ձեռնարկատիրական գործունեության էությունը և դերը շուկայական տնտեսությունում:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

ա. ներկայացնել ձեռնարկատիրական գործունեության էությունը,

բ. բացատրել ձեռնարկատիրական ռիսկի էությունը,

գ. պարզաբանել կազմակերպությունների կազմակերպարավական ձևերը,

դ. ներկայացնել առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները:

#### **Չարց 1. Ձեռներեցության էությունը, տեսակները. ձեռնարկատիրական ռիսկ**

Ձեռներեցության ակունքները գնում են դարերի խորք: Սակայն այն շուկայի անհրաժեշտ տարր դարձավ միայն կապիտալիզմի զարգացման օրոք:

Սմիթը ձեռներեցին բնութագրում էր որպես շահույթ ստանալու նպատակով ռիսկի դիմող սեփականատիրոջ:

Ամեն մի տնտեսական գործունեություն ձեռներեցություն չի համարվում: Ձեռներեցություն է համարվում միայն այն գործունեությունը, որը կապված է ռիսկի, պատասխանատվության, նախաձեռնության, ակտիվ գործունեության հետ: Այս բոլորը միասին կազմում են ձեռներեցության հատկանիշները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը ձևակերպված է այսպես. «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

Ձեռնարկատիրական գործունեության էությունը ճիշտ ըմբռնելու հարցում կարևոր է ձեռնարկատիրության սուբյեկտի և օբյեկտի սահմանումը:

Ձեռներեցության սուբյեկտներ կարող են լինել անհատները, բաժնետիրական ընկերությունները, կոոպերատիվները, պետությունը:

Ձեռներեցության օբյեկտ են արտադրության գործոնները, որոնց արդյունավետ օգտագործումը, առավելագույն շահույթ ստանալու նպատակով, ձեռներեցության հիմնական բովանդակությունն է:

Կախված գործունեության բնույթից՝ տարբերում են ձեռներեցության տարբեր տեսակներ:

Արտադրական ձեռներեցությունը գործունեության այն տեսակն է, որի դեպքում իրականացվում է ապրանքների, ծառայությունների, տեղեկա-

---

սովորյալ արտադրություն: Այս դեպքում հիմնական գործառույթը արտադրականն է:

Առևտրական ձեռներեցությունը կապված չէ արտադրության հետ, այլ հիմնված է ապրանքների և ծառայությունների վերավաճառքի վրա: Առևտրական շահույթը գոյանում է գնման գնի և վաճառքի գնի տարբերությունից: Եթե այդ գործարքն իրականացվում է օրենքի սահմաններում, ապա սպեկուլյացիա չի համարվում:

Ֆինանսական ձեռներեցությունը առևտրական գործունեության տարատեսակ է: Առք ու վաճառքի օբյեկտ են արժույթը, արժեթղթերը և այլն:

Միջնորդական ձեռներեցության խնդիրն է՝ միացնել որևէ գործարքի իրականացման հարցում շահագրգռված կողմերին և ստանալ եկամուտ՝ միջնորդավարձի ձևով:

Ապահովագրական ձեռներեցությունը ֆինանսական ձեռներեցության մի տեսակ է, որի դերում ձեռներեցը ստանում է ապահովագրական մուծումներ, ինչը վերադարձնում է միայն պատահարների դեպքում: Մուծումների մնացած մասը կազմում է ձեռնարկատիրական եկամուտը:

Ինչպես երևում է, ձեռներեցության բոլոր տեսակներն ուղղված են շահույթի ստացմանը: Բայց դրա համար անհրաժեշտ է սովորել ռացիոնալ օգտագործել սահմանափակ ռեսուրսները:

Ռեսուրսների տարբեր համակցությունների ճիշտ ընտրությունը ձեռներեցի գործունեության կարևոր մասն է: Ըստ Շումպետերի՝ դրանք դրսևորվում են 5 ուղղություններով.

1. նոր բարիքի ստեղծում կամ հին բարիքի ստեղծում՝ նոր, ավելի բարձր որակով,
2. արտադրության նոր մեթոդի ներդրում,
3. վաճառահանման նոր շուկաների յուրացում,
4. հումքի կամ կիսաֆաբրիկատի ստացման նոր աղբյուրներ,
5. արտադրության վերակառուցման իրականացում:

Ժամանակի յուրաքանչյուր նոր փուլում կարող են նոր համակցություններ առաջ գալ:

Ձեռներեցության այդ հատկությունը նկատեց Ժ. Բ. Սեյը, որը լրացրեց Սմիթի ձեռներեցության բնորոշումը, այն է՝ արտադրության գործոններ միավորող տնտեսական գործակալ:

Ձեռնարկատիրական գործունեությունը կապված չէ սեփականության որևէ մեկ ձևի հետ (մասնավոր, կոլեկտիվ, հասարակական), հնարավոր են դրանց տարբեր համակցություններ:

Դա նշանակում է, որ ձեռներեց լինելու համար պարտադիր չէ կիրառվող կապիտալի սեփականատեր լինելու հանգամանքը: Կարելի է օգտագործել վարձու կապիտալը: Բայց փոխատվական կապիտալը ենթակա է

վերադարձման՝ որոշակի տոկոսներով: Այդ իսկ պատճառով նրա կիրառման տնտեսական ռիսկը մեծանում է:

Ռիսկը ձեռնարկատիրական գործունեության կարևոր հատկանիշն է:

Ռիսկը վնասի հավանականությունն է:

Տարբերում են ռիսկի մի քանի տեսակ՝ արտադրական, առևտրական, ֆինանսական, վարկային և տոկոսային:

Գոյություն ունի կարծիք, որ ռիսկի թույլատրելի մակարդակը հակադարձ համեմատական է այդ գործունեությանը մասնակցող անձանց քանակին:

Որպես կանոն, ռիսկը ապահովագրվում է ապահովագրական ձեռներեցությամբ զբաղվող կազմակերպություններում:

Ռիսկը կարելի է չափել տարբեր մեթոդներով.

- վիճակագրական, որի դեպքում ուսումնասիրվում է նախկինում պատճառված վնասների վիճակագրությունը, և համապատասխան հետևություններ են արվում,

- փորձագիտական, որի դեպքում հաշվի է առնվում փորձառու մասնագետների կարծիքը,

- հաշվարկավերլուծական, որը հիմնված է մաթեմատիկական մեթոդների վրա:

Տնտեսագետները ռիսկից ստացվող օգտակարությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով՝  $E(U) = \sum U_i \pi_i$ , որտեղ՝

$E(U)$  –  $G$ ՝ ընդհանուր սպասվող օգտակարությունն է,

$U_i$  –  $G$ ՝  $i$ -րդ ելքի օգտակարությունն է,

$\pi_i$  –  $G$ ՝  $i$ -րդ ելքի հավանականությունն է:

Այսպիսով, ռիսկ ասելով հասկացվում է այնպիսի իրավիճակ, երբ, իմանալով յուրաքանչյուր հնարավոր ելքի հավանականությունը, այնուամենայնիվ, հնարավոր չէ կանխագուշակել վերջնական արդյունքը:

Մարդկանց հատուկ է ռիսկի հանդեպ տարբեր վերաբերմունք:

Տնտեսագիտության տեսության մեջ ընդունված է առանձնացնել՝

1. ռիսկի հանդեպ չեզոքներ,
2. ռիսկի սիրահարներ,
3. ռիսկի հակառակորդներ:

Ձեռներեցությունը անհնար է առանց նորարարության: Դրա հետ կապված՝ տարբերում են ձեռնարկատիրական վարքագծի երկու մոդել՝ դասական և ինովացիոն:

Առաջինի էությունն այն է, որ ձեռներեցը ձգտում է կազմակերպել իր գործունեությունն այնպես, որ առկա ռեսուրսներից առավելագույն եկամուտ ստանա:

---

Երկրորդ մոդելը հիմնված է ոչ միայն առկա ռեսուրսների օգտագործման, այլ նաև նոր, արտաքին ռեսուրսների օգտագործման հնարավորության վրա:

Ըստ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են՝

1. գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը.

2. փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը.

3. միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

Փոքր և միջին ձեռնարկությունների մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրանց հետևյալ առավելությունները.

1. միջոցների արդյունավետ օգտագործումը,
2. կառուցվածքային փոփոխություններին ու արտաքին բացասական ազդակներին արագ հարմարվելը,
3. ճկունությունը,
4. ֆինանսական խնդիրների լուծումը,
5. օրենսդրական բազայի խնդիրները:

## **Հարց 2. Ձեռնարկությունների կազմակերպարավական ձևերը**

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող»:

---

Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ:

Իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

Առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով:

Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

Ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ձևերով:

Տնտեսական ընկերակցություններ և ընկերություններ են համարվում իրենց հիմնադիրների (մասնակիցների)՝ բաժնեմասերի բաժանված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ունեցող առևտրային կազմակերպությունները:

Տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել լիակատար ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության (կոմանդիտային ընկերակցության) ձևով:

Տնտեսական ընկերությունները կարող են ստեղծվել սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կամ բաժնետիրական ընկերության ձևով:

Լիակատար ընկերակցությունների մասնակիցներ ու վստահության վրա հիմնված ընկերակցությունների լիակատար ընկերներ կարող են լինել միայն անհատ ձեռնարկատերերը եւ (կամ) առևտրային կազմակերպությունները:

Տնտեսական ընկերությունների մասնակիցներ ու վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատուներ կարող են լինել քաղաքացիները եւ իրավաբանական անձինք: Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք չունեն հանդես գալ որպես տնտեսական ընկերակցությունների ու ընկերությունների մասնակիցներ:

Տնտեսական ընկերակցության կամ ընկերության գույքում ներդրված ավանդը կարող է լինել դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ գույքային իրավունքներ, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ:

---

Տնտեսական ընկերակցության կամ ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

1. մասնակցել ընկերակցության կամ ընկերության գործերի կառավարմանը,

2. տեղեկատվություն ստանալ ընկերակցության կամ ընկերության գործունեության մասին և կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ նրա հաշվապահական գրքերին ու այլ փաստաթղթերին,

3. մասնակցել շահույթի բաշխմանը,

4. ընկերակցության կամ ընկերության լուծարվելու դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը:

Տնտեսական ընկերակցությունների կամ ընկերությունների մասնակիցները պարտավոր են՝

1. ավանդներ ներդնել կանոնադրությամբ նախատեսված կարգով, չափերով, եղանակներով եւ ժամկետներում,

2. չիրապարակել ընկերակցության կամ ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկատվությունը:

**Լիակատար** է համարվում այն ընկերակցությունը, որի մասնակիցները (լիակատար ընկերներ), կանոնադրությանը համապատասխան, ընկերակցության անունից զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ եւ իրենց պատկանող գույքով պատասխանատվություն են կրում նրա պարտավորությունների համար:

Անձը կարող է լինել միայն մեկ լիակատար ընկերակցության մասնակից:

Լիակատար ընկերակցությունը կառավարվում է բոլոր մասնակիցների ընդհանուր համաձայնությամբ: Լիակատար ընկերակցության յուրաքանչյուր մասնակից ունի մեկ ձայն:

Լիակատար ընկերակցության շահույթը և վնասները բաշխվում են նրա մասնակիցների միջեւ ընկերակցության բաժնեհավաք կապիտալում նրանց բաժնեմասերին համամասնորեն, եթե այլ բան նախատեսված չէ կանոնադրությամբ կամ մասնակիցների համաձայնությամբ: Լիակատար ընկերակցության մասնակիցներն իրենց գույքով համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում ընկերակցության պարտավորությունների համար:

**Վստահության վրա հիմնված ընկերակցություն** (կոմանդիտ ընկերակցություն) է համարվում այն ընկերակցությունը, որում ընկերակցության անունից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և իրենց գույքով ընկերակցության պարտավորությունների համար պատասխանատվություն կրող մասնակիցների (լիակատար ընկերներ) հետ միասին կան մեկ կամ մի քանի մասնակից ավանդատուներ (կոմանդիտիստներ),

---

որոնք իրենց ներդրած ավանդների գումարների սահմաններում կրում են ընկերակցության գործունեության հետ կապված վնասների ռիսկը և չեն մասնակցում ընկերակցության իրականացրած ձեռնարկատիրական գործունեությանը:

Անձը կարող է լիակատար ընկեր լինել միայն վստահության վրա հիմնված մեկ ընկերակցությունում: Լիակատար ընկերակցության մասնակիցը չի կարող լիակատար ընկեր լինել վստահության վրա հիմնված ընկերակցությունում:

Վստահության վրա հիմնված ընկերակցության լիակատար ընկերը չի կարող լինել լիակատար ընկերակցության մասնակից:

Վստահության վրա հիմնված ընկերակցությունը կառավարում են լիակատար ընկերները: Ավանդատուներն իրավունք չունեն մասնակցել վստահության վրա հիմնված ընկերակցության կառավարմանը և գործերի վարմանը, առանց լիազորագրի հանդես գալ նրա անունից: Նրանք իրավունք չունեն վիճարկել ընկերակցության կառավարման և գործերի վարման հետ կապված լիակատար ընկերների գործողությունները: Վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատուն պարտավոր է ավանդ ներդնել բաժնեհավաք կապիտալում: Ավանդի ներդրումը հավաստվում է ընկերակցության կողմից ավանդատուին տրվող՝ մասնակցության մասին վկայականով:

Վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատուն իրավունք ունի ստանալ ընկերակցության շահույթի մասը, որը կանոնադրությամբ նախատեսված կարգով հասնում է բաժնեհավաք կապիտալում ունեցած նրա բաժնեմասին, ծանոթանալ ընկերակցության տարեկան հաշվետվություններին եւ հաշվեկշիռներին:

**Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն** է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում ստեղծվում է գործադիր մարմին (կոլեգիալ և (կամ) միանձնյա), որն ընթացիկ ղեկավարություն է իրականացնում նրա գործունեության նկատմամբ և հաշվետու է նրա մասնակիցների ընդհանուր ժողովին: Ընկերության կառավարման

---

միանձնյա մարմնի կազմում կարող են ընտրվել նաև ընկերությանը չմասնակցող անձինք:

**Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն** է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Նման ընկերության մասնակիցները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում իրենց գույքով՝ ընկերության կանոնադրությամբ բոլորի համար միանման որոշված իրենց ավանդների արժեքի բազմապատիկի չափով:

Մասնակիցներից մեկի սնանկության դեպքում ընկերության պարտավորությունների համար նրա պատասխանատվությունը մյուս մասնակիցների միջև բաշխվում է նրանց ավանդներին համամասնորեն, եթե պատասխանատվության բաշխման այլ կարգ նախատեսված չէ ընկերության կանոնադրությամբ:

**Բաժնետիրական ընկերություն** է համարվում այն ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի:

Բաժնետոմսեր թողարկելու իրավունք ունեն միայն բաժնետիրական ընկերությունները:

Բաժնետիրական ընկերության մասնակիցները (բաժնետերերը) պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Բաժնետիրական ընկերությունը կարող է ստեղծվել մեկ անձի կողմից կամ կազմված լինել մեկ անձից՝ մեկ բաժնետիրոջ կողմից ընկերության բոլոր բաժնետոմսերը ձեռք բերելու դեպքում:

Բաժնետիրական ընկերությունը, որի մասնակիցներն առանց մյուս բաժնետերերի համաձայնության կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը, համարվում է բաց բաժնետիրական ընկերություն: Բաժնետիրական ընկերությունը, որի բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա հիմնադիրների կամ նախապես որոշված այլ անձանց միջև, համարվում է փակ բաժնետիրական ընկերություն:

Բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի թողարկել արտոնյալ բաժնետոմսեր, որոնք դրանց տերերին երաշխավորում են շահութաբաժիններ ստանալ, որպես կանոն, բաժնետոմսերի անվանական արժեքից որոշված տոկոսներով՝ անկախ բաժնետիրական ընկերության տնտեսական գործունեության արդյունքից, ինչպես նաև մյուս բաժնետերերի համեմատությամբ նախապատվության իրավունքով ստանալ բաժնետիրական ընկերության լուծարումից հետո մնացած գույքի մասը և նման բաժնետոմսերի թողարկման պայմաններով նախատեսված այլ իրավունքներ:

---

Արտոնյալ բաժնետոմսերը դրանց տերերին իրավունք չեն տալիս մասնակցել բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը, եթե այլ բան նախատեսված չէ կանոնադրությամբ:

Արտոնյալ բաժնետոմսերի բաժինը չպետք է գերազանցի բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ընդհանուր ծավալի քսանհինգ տոկոսը:

**Կոոպերատիվ** է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայալճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական եւ այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը:

**Հասարակական միավորումներ** են համարվում քաղաքացիների կամավոր միավորումները, որոնք օրենքով սահմանված կարգով միավորվել են իրենց շահերի ընդհանրության հիման վրա՝ հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու համար:

Հիմնադիրների (մասնակիցների)՝ հասարակական միավորմանը հանձնած գույքը հասարակական միավորման սեփականությունն է: Հասարակական միավորումն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների համար:

Հասարակական միավորումների մասնակիցներն այդ կազմակերպություններին որպես սեփականություն հանձնած գույքի՝ ներառյալ անդամավճարների նկատմամբ իրավունքներ չեն պահպանում: Նրանք պատասխանատու չեն հասարակական միավորումների պարտավորությունների, իսկ նշված կազմակերպությունները՝ իրենց մասնակիցների պարտավորությունների համար:

Հասարակական միավորումը լուծարվելու դեպքում նրա գույքը ծառայեցվում է հասարակական միավորման կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ եթե դա անհնար է, ապա փոխանցվում է պետական բյուջե:

**Հիմնադրամ** է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադիրների (հիմնադրի)՝ հիմնադրամին հանձնած գույքը հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

Հիմնադրամը պարտավոր է ամեն տարի հաշվետվություն հրապարակել իր գույքի օգտագործման մասին:

---

Հիմնադիրները պատասխանատու չեն իրենց ստեղծած հիմնադրամի պարտավորությունների, իսկ հիմնադրամը՝ իր հիմնադիրների պարտավորությունների համար:

Առևտրային կազմակերպությունները, իրենց ձեռնարկատիրական գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր գույքային շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակներով, կարող են ստեղծել միություններ:

Ոչ առևտրային կազմակերպությունները ևս, իրենց գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակներով կարող են ստեղծել միություններ:

**Միության** մասնակիցները պահպանում են իրենց ինքնուրույնությունը և իրավաբանական անձի իրավունքները:

Հիմնադիրների (մասնակիցների) կողմից միությանը հանձնված գույքը միության սեփականությունն է: Միությունն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

Միությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար: Միության մասնակիցները կանոնադրությամբ սահմանված չափով եւ կարգով սուբսիդիար պատասխանատվություն են կրում միության պարտավորությունների համար:

### **Համառոտ եզրակացություններ**

1. Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

2. Ըստ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտները, բացառությամբ վարկային, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունների, գրավատների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, խաղատների և շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող սուբյեկտների, ինչպես նաև դուստր և կախյալ տնտեսական ընկերությունների դասակարգվում են չորս խմբի՝ գերփոքր, փոքր, միջին և խոշոր:

3. «Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային եւ անձնական ոչ գույ-

---

քային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող»:

4. Իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

5. Առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով:

6. Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

7. Ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ձևերով:

8. Տնտեսական ընկերակցություններ եւ ընկերություններ են համարվում իրենց հիմնադիրների (մասնակիցների)՝ բաժնեմասերի բաժանված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ունեցող առևտրային կազմակերպությունները:

9. Տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել լիակատար ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության (կոմանդիտային ընկերակցություն) ձևով:

10. Տնտեսական ընկերությունները կարող են ստեղծվել սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կամ բաժնետիրական ընկերության ձևով:

### ***Ինքնաստուգման հարցեր***

- 1. Ի՞նչ է ձեռներեցությունը, և որո՞նք են դրա օբյեկտներն ու սուբյեկտները:*
- 2. Ձեռներեցության ի՞նչ տեսակներ կան:*
- 3. Ի՞նչ է ռիսկը, և ինչպե՞ս է որոշվում ռիսկից ստացվող օգտակարությունը:*
- 4. Ի՞նչ է իրավաբանական անձը:*
- 5. Ո՞ր կազմակերպություններն են համարվում գերփոքր, փոքր և միջին:*
- 6. Որո՞նք են առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները:*
- 7. Որո՞նք են տնտեսական ընկերությունները:*

- 
8. Որո՞նք են տնտեսական ընկերակցությունները:
  9. Ի՞նչ է լիակատար ընկերակցությունը:
  10. Ի՞նչ է կոմանդիտային ընկերակցությունը:
  11. Ի՞նչ է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:
  12. Ի՞նչ է բաժնետիրական ընկերությունը:
  13. Ի՞նչ է լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունը:
  14. Ի՞նչ է հիմնադրամը:
  15. Ի՞նչ է հասարակական կազմակերպությունը:
  16. Ի՞նչ է կոոպերատիվը:
  17. Ի՞նչ է իրավաբանական անձանց միությունը:

---

## ԹԵՄԱ 14. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ, ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* պարզաբանել շուկայական եկամուտների ձևավորման և բախշման սկզբունքները:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

- ա. մեկանաբանել եկամուտ հասկացությունը,
- բ. ներկայացնել եկամուտների տեսակները,
- գ. ներկայացնել եկամուտների բաշխման սկզբունքները,
- դ. պարզաբանել Լորենցի կորի կառուցման և Ջինիի գործակցի հաշվարկման սկզբունքները:

### Չարց 1. Բնակչության եկամուտներ. էությունը, տեսակները

Մարդկանց բարեկեցության մակարդակը բնութագրվում է նրանց եկամուտների ծավալով: Բնակչության եկամուտները դրամական միջոցների և նյութական բարիքների գումարն է, որը ստացվում է հասարակական արտադրության մեջ, տնային տնտեսություններում կամ որևէ այլ գործունեության արդյունքում, որոշակի ժամանակահատվածում:

Բնակչության եկամուտների մեջ մտնում են աշխատավարձը, ձեռնարկատիրական եկամուտը, բաժնետոմսերից ստացված դիվիդենտները (շահույթը), բանկում ներդրված խնայողությունների տոկոսները, անշարժ գույքի վարձակալությունից ստացված գումարը և այլն: Ձեռնարկությունների եկամուտների աղբյուրներն են շահույթը, տոկոսը կամ ռենտան (կախված ձեռնարկության տիպից):

Եկամուտների չափն է որոշում մեր հնարավորությունները՝ որոշակի սնունդ, հագուստ ձեռքբերելու, կրթություն ստանալու, բժշկական ծառայություններից օգտվելու, թատրոն հաճախելու համար և այլն:

Բնակչության եկամուտները ստորաբաժանվում են դրամականի, բնեղենի, անվանականի, իրականի:

Բնակչության դրամական եկամուտներն իրենց մեջ ներառում են բոլոր դրամական մուտքերը աշխատավարձի տեսքով, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների, կենսաթոշակի, տարբեր նպաստների, սեփականությունից ստացված եկամուտների՝ տոկոսի, դիվիդենտի, ռենտայի տեսքով, ապրանքների վաճառքից ստացված եկամուտների, զանազան ծառայություններից ստացված եկամուտների տեսքով և այլն:

Բնեղեն (բնափրային) եկամուտներն իրենց մեջ ներառում են տնային տնտեսություններում արտադրված արդյունքը, որը նախատեսված է սե-

---

փական սպառման համար, ինչպես նաև հասարակական արտադրությունում ստացված արդյունքները:

Անվանական եկամուտը բնութագրվում է ստացված գումարի քանակով, իսկ իրականը՝ այն ապրանքների և ծառայությունների քանակով, որը կարելի է գնել այդ գումարով: Ինչքան բարձր են գները, այնքան ցածր է իրական եկամուտը և հակառակը: Իրական եկամուտը չափվում է գների ինդեքսի միջոցով:

Գների ինդեքսը ստացվում է՝ տվյալ տարվա «սպառողական զամբյուղի» գինը հարաբերելով բազիսային տարվա համանման զամբյուղի գնին: Տարբերվում են ռաջիոնալ և նվազագույն «սպառողական զամբյուղներ»:

Բնակչության այն մասը, որի եկամուտները ցածր են նվազագույն «զամբյուղից», բնորոշում են որպես «աղքատության եզրից այն կողմ» ապրողներ: «Աղքատության սահմանից դուրս» գտնվող բնակչության թվաքանակը համարվում է կյանքի մակարդակի ցուցանիշ: Բնակչության կենսամակարդակը նյութական բարիքների սպառման մակարդակն է (բնակչության ապահովվածությունը արդյունաբերական ապրանքներով, սպառման առարկաներով, բնակարաններով և այլն):

Ավելի բարդ ցուցանիշ է կյանքի որակը: Այն իր մեջ կենսամակարդակից բացի ընդգրկում է նաև աշխատանքի անվտանգությունը, մշակույթի զարգացման մակարդակը, ֆիզիկական զարգացումը և այլն:

Կենսամակարդակի գնահատման ցուցանիշները ժամանակի ընթացքում փոփոխության են ենթարկվում. այն մակարդակը, որը 30-40 տարի առաջ համարվում էր բարձր, այսօր կարող է դասվել «աղքատության եզրին»:

## **Չարց 2. Լորենցի կորի և Ջինիի գործակցի եությունը**

Առանձնացնում են եկամուտների բաշխման հետևյալ հիմնական սկզբունքները.

1. Հավասարեցված բաշխումը, երբ հասարակության բոլոր անդամները ստանում են հավասար եկամուտներ: Այսպիսի սկզբունքը բնորոշ է նախնադարյան համայնական և կոմունիստական արտադրատեղանակներին:

2. Եկամուտների շուկայական բաշխումը ենթադրում է, որ արտադրության գործոնի (հողի, աշխատանքի, կապիտալի) տերը ստանում է եկամուտ՝ իր գործոնին համապատասխան տնտեսական արդյունավետությամբ:


3. Բաշխումն ըստ կուտակած ունեցվածքի (հարստության) արտահայտվում է այն կուտակողի կողմից ստացվող լրացուցիչ եկամուտների

ստացումով, և փոխանցում է ժառանգաբար ինչ-որ սեփականություն (հող, ձեռնարկություններ, տներ, արժեթղթեր և այլ ունեցվածք):

Եկամուտների անհավասարաչափ բաշխման երևույթը ներկայացնելու համար օգտագործվում է Լորենցի կորը (գծանկար 25):

Չորիզոնական գծի վրա նշված են բնակչության խմբերը, իսկ ուղղահայաց գծի վրա՝ այդ խմբերի կողմից ստացվող եկամուտների բաժինը՝ տոկոսով: Եթե գոյություն ունենար բացարձակ հավասարություն, ապա 20%-ը կստանար ԱԵ-ի 20%-ը, 30%՝ ԱԵ-ի 30%-ը և այլն: Կառաջանար OA գիծը, որը ցույց է տալիս բացարձակ հավասարաչափ բաշխում:

OCA կորը ցույց է տալիս եկամուտների անհավասարաչափ բաշխումը և կոչվում է Լորենցի կոր: Ինչքան ցածր է գտնվում այդ կորը OA գծից, այնքան մեծ է եկամուտների անհավասարաչափ բաշխումը: Եկամուտների տարբերակման աստիճանը որոշվում է Ջինիի գործակցի միջոցով: Ինչքան մեծ է այդ գործակիցը, այնքան մեծ է շեղվածությունը իդեալական բաշխվածությունից: Այս գործակիցը հաշվարկվում է OCA և OAB մակերեսների հարաբերակցությամբ:



Գծանկար 25. Լորենցի կորը

Պետության սոցիալական միջոցառումները մեղմում են եկամուտների անհավասարաչափ (առաջնային) բաշխումը:

Տնտեսագիտության մեջ գոյություն ունի պետության սոցիալական ծրագրերին երկու մոտեցում՝ «սոցիալական» և «շուկայական»: Առաջին մոտեցումը գտնում է, որ պետությունը յուրաքանչյուր անհատի համար պետք է ապահովի նորմալ մակարդակի եկամուտ: Այս դեպքում օգնություն պետք է ցուցաբերվի միայն նրանց, ովքեր դրա կարիքն ունեն: Երկրորդ մոտեցումը

հիմնված է այն գաղափարի վրա, որ պետության խնդիրը ոչ թե եկամուտների երաշխավորումն է, այլ՝ եկամուտների բարձրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Առաջին մոտեցումը հիմնված է սոցիալական արդարության սկզբունքի, իսկ երկրորդը՝ տնտեսական արդյունավետության սկզբունքի վրա: Հնարավոր է այս երկու սկզբունքների զուգորդումը:

### **Համառոտ եզրակացություններ**

1. Բնակչության եկամուտները դրամական միջոցների և նյութական բարիքների գումարն է, որը ստացվում է հասարակական արտադրության մեջ, տնային տնտեսություններում կամ որևէ այլ գործունեության արդյունքում որոշակի ժամանակահատվածում:

2. Բնակչության եկամուտների մեջ մտնում են աշխատավարձը, ձեռնարկատիրական եկամուտը, բաժնետոմսերից ստացված դիվիդենտները (շահույթը), բանկում ներդրված խնայողությունների տոկոսները, անշարժ գույքի վարձակալությունից ստացված գումարը և այլն:

3. Անվանական եկամուտը բնութագրվում է ստացված գումարի, իսկ իրականը՝ այն ապրանքների և ծառայությունների քանակով, որը կարելի է գնել այդ գումարով: Ինչքան բարձր են գները, այնքան ցածր է իրական եկամուտը և հակառակը:

4. Եկամուտների անհավասարաչափ բաշխման երևույթը ներկայացնելու համար օգտագործվում է Լորենցի կորը:

5. Եկամուտների տարբերակման աստիճանը որոշվում է Ջինիի գործակցի միջոցով: Ինչքան մեծ է այդ գործակիցը, այնքան մեծ է շեղվածությունը իդեալական բաշխվածությունից:

#### ***Ինքնաստուգման հարցեր***

1. *Ի՞նչ է եկամուտը:*
2. *Եկամտի ի՞նչ տեսակներ կան:*
3. *Ի՞նչ տարբերություն կա անվանական և իրական եկամուտ հասկացությունների միջև:*
4. *Որո՞նք են եկամտի բաշխման սկզբունքները:*
5. *Ի՞նչ է ցույց տալիս Լորենցի կորը:*
6. *Ի՞նչ է ցույց տալիս Ջինիի գործակիցը:*
7. *Պետության սոցիալական միջոցառումների ի՞նչ մոտեցումներ կան:*

---

## ԹԵՄԱ 15. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆՆԵՐ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* բնութագրել մակրոտնտեսության հիմնախնդիրները:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

ա. ներկայացնել մակրոտնտեսության էությունը և ցուցանիշները,

բ. մեկնաբանել մակրոտնտեսական հիմնախնդիրները,

գ. ներկայացնել մակրոտնտեսության պարբերաշրջանի պատճառները,

դ. ներկայացնել մակրոտնտեսության կարգավորման էությունը և մեխանիզմը,

ե. մեկնաբանել պետության կայունացնող քաղաքականության էությունը և նպատակները:

### Չարգ 1. Մակրոտնտեսական ցուցանիշները

Ինչպես գիտենք, արտադրության պրոցեսի անընդհատ վերսկսումը կոչվում է վերարտադրություն: Այն ենթադրում է անձնական և արտադրական սպառման, հասարակական արդյունքի անընդհատ ստեղծում, արտադրական հնարավորությունների օգտագործում և զարգացում, սեփականության հարաբերությունների վերսկսում: Տարբերում են պարզ վերարտադրություն՝ արտադրության վերսկսումը նույն տեխնիկական բազայով և նույն ծավալով, և ընդլայնված վերարտադրություն, որը բնորոշվում է արտադրության և սպառման մեծացմամբ:

Վերարտադրության հիմնական խնդիրն այն հաշվեկշռումն է, որը ենթադրում է արտադրության և սպառման համապատասխանության ապահովումը ծախսերին և եկամուտներին: Այս խնդիրն առաջանում է ցանկացած տնտեսական համակարգի համար: Շուկայական տնտեսությունում այն արտահայտվում է համախառն ազգային արդյունքի իրացման խնդրում, երբ պահանջվում է հասարակությունում առաջարկի և պահանջարկի հստակ համաչափություն սահմանել՝ արժեքային և բնամթերային տեսքով:

Վերարտադրության հիմնական ցուցանիշը համախառն ազգային արդյունքն է (ՋԱԱ): Այն արտահայտում է հասարակության տնտեսական բարե-

---

կեցությունը և որոշվում է որպես երկրի վերջնական արդյունքի շուկայական արժեք՝ ժամանակի որոշակի հատվածում, որպես կանոն՝ 1 տարում:

Վերջնական արդյունքն այն ապրանքներն ու ծառայություններն են, որոնք գնվում են սպառման համար, այլ ոչ թե հետագա մշակման ու վերանշակման:

ՀԱԱ-ում (Gross National Product՝ GNP) հաշվի են առնվում այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք արտադրվել են միայն տվյալ երկրի քաղաքացիների կողմից՝ ինչպես իրենց հայրենիքում, այնպես էլ արտասահմանում:

**ՀԱԱ-ն առաջին** հերթին բնութագրվում է նրանով, որ արտահայտում է ընթացիկ արտադրությունը՝ անկախ նրանից, թե արդյոք ողջ արտադրանքն է վաճառվել, թե՞ դրա մի մասը պահեստավորվել է:

**Երկրորդ**, ՀԱԱ ծառայում է որպես դրամական ցուցանիշ, քանի որ բնամթերային տեսքով հնարավոր չէ որոշել արտադրության ծավալի դինամիկան:

**Երրորդ**, կրկնակի հաշվարկից խուսափելու համար ՀԱԱ-ում ներառում են միայն յուրաքանչյուր ֆիրմայի կողմից ստեղծված ավելացված արժեքը: Ավելացված արժեքն արտադրանքի շուկայական արժեքն է կամ գինը՝ հանած ֆիրմայի արտադրության ծախսերը:

**Չորրորդ**, ՀԱԱ-ն ներառում է ամորտիզացիոն հատկացումները, որը զուևար է՝ նախատեսված արտադրության պրոցեսում օգտագործվող մեքենաների և սարքավորումների մաշվածքը փոխհատուցելու համար:

**Հինգերորդ**, ՀԱԱ-ն բացառում է ոչ արտադրական գործարքները, որոնք չեն արտահայտում ընթացիկ արտադրության ծավալը մեկ տարվա ընթացքում: Դրանց վերաբերում են զուևտ ֆինանսական գործարքները (տրանսֆերտային վճարումներ, արժեթղթերի առք ու վաճառք և այլն), տնային տնտեսություններում արտադրված և սպառված բարիքները, օգտագործված իրերի վաճառքը: Տրանսֆերտային վճարները պետության կողմից բնակչությանը տրվող վճարներն են՝ սոցիալական ապահովագրության, գործազրկության, տարբեր տեսակի թոշակների և նպաստների համար, հարազատների կողմից նվիրատվությունները, ուսանողներին տնից տրվող սուբսիդիաները և այլն:

---

**Վեցերորդ,** ՀԱԱ-ում չեն ներառվում հասարակությանը վնաս պատճառող որոշ շուկայական գործարքներ (թմրանյութերի վաճառքը, վարձու մարդասպանների ծառայությունները):

ՀԱԱ-ի որոշակի վերափոխությունն իրենից ներկայացնում է **համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)**, որն ընդգրկում է արտադրական գործունեության արդյունքները տվյալ երկրի տարածքում՝ անկախ ֆիրմաների ազգային պատկանելությունից և աշխատողի քաղաքացիությունից: ՄԱԿ-ի վիճակագրական ծառայությունը խորհուրդ է տալիս օգտագործել ՀՆԱ-ն՝ որպես ազգային հաշիվների համակարգի հիմնական ցուցանիշ:

Համախառն ներքին արդյունքը՝ ՀՆԱ-ն (Gross Domestic Product՝ GDP), իրենից ներկայացնում է ՀԱԱ-ի բարեփոխված ցուցանիշը և հավասար է տվյալ երկրի քաղաքացիների և օտարերկրյա արտադրողների արտադրած ապրանքների և ծառայությունների գների գումարին՝ մեկ տարվա կտրվածքով:

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) բնութագրում է երկրի տնտեսությունում արտադրված ապրանքների ու ծառայությունների արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման համար:

ՀՆԱ-ն հաշվարկվում է երեք եղանակով՝ արտադրական, եկամուտների օգտագործման (ծախսային) և եկամուտների ձևավորման:

*Արտադրական եղանակով* ՀՆԱ-ն ստացվում է որպես տնտեսությունում ապրանքների և ծառայությունների ողջ թողարկման և միջանկյալ սպառման տարբերություն կամ որպես տնտեսությունում ստեղծված ավելացված արժեքի հանրագումար: Ընդ որում, ըստ գործունեության տեսակների ավելացված արժեքի ծավալները հաշվարկվում են հիմնական գներով, որոնք չեն ներառում արտադրանքի հարկերը, սակայն ներառում են արտադրանքի սուբսիդիաները:

Շուկայական գներով ՀՆԱ-ի հաշվարկման համար անհրաժեշտ է ավելացնել արտադրանքի զուտ հարկերը:

*Եկամուտների օգտագործման* եղանակով հաշվարկված ՀՆԱ-ն ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման ծախսերի, համախառն կուտակման և զուտ արտահանման հանրագումարն է:

*Ըստ եկամուտների աղբյուրների՝* ՀՆԱ-ի ձևավորումն արտացոլում է անմիջապես արտադրական գործընթացին մասնակցող միավորների, ինչպես նաև պետական հիմնարկների ու տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացած սկզբնական եկամուտները: Այս հաշվարկներում համախառն շահույթը (համախառն խառը եկամուտը) հանդիսանում է հաշվեկշռող հողված և որոշվում է որպես արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի, շուկայական գներով և աշխատողների աշխատանքի վարձատրության ու արտադրության ու ներմուծման զուտ հարկերի տարբերություն:

Եթե ՀՆԱ-ին գումարենք արտերկրում գործող տվյալ երկրի քաղաքացիների եկամուտները և հանենք տվյալ երկրում աշխատող օտարերկրացիների եկամուտները, ապա կստանանք ՀԱԱ-ն: Շատ երկրների համար այդ տարբերությունը  $\pm 1\%$  է:

ՀԱԱ-ն ներառում է.

1. բնակչության կողմից կատարվող ծախսերն ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար կամ սպառողական ծախսերը՝ C (consumption spending),

2. մասնավոր արտադրական ինվեստիցիաները՝ I (Investition),

3. պետության կողմից կատարվող ծախսերն ապրանքների արտադրության և գնման համար՝ G (Government),

4. զուտ արտահանում, արտահանման և ներմուծման տարբերությունը՝ NX:

$$\text{ՀԱԱ} = \text{C} + \text{I} + \text{G} + \text{NX}$$

ՀՆԱ-ից և ՀԱԱ-ից բացի՝ վերարտադրության կարևորագույն ցուցանիշներ են զուտ ազգային արդյունքը (ՋԱԱ), ազգային եկամուտը (ԱԵ) և անձնական եկամուտը:

ՋԱԱ-ն օգտագործվում է արտադրության ծավալի առավել ճշգրիտ բնութագրման համար: ՋԱԱ-ը, ինչպես և ՀԱԱ-ը, ստեղծվում է նյութական արտադրության և ծառայությունների մատուցման ոլորտում: ՋԱԱ-ը հավասար է ՀԱԱ-ին՝ հանած ամորտիզացիան:

ԱԵ-ը, որպես կանոն, 1 տարում հասարակությունում ստեղծված նոր արժեքն է, որը ներկայացված է սպառման առարկաների և կապիտալի

---

այն մասով, որն ուղղվում է ընդլայնված վերարտադրությանը: ԱԵ-ը երկրի տնտեսական զարգացման ընդհանրացնող ցուցանիշ է:

Անձնական եկամուտն անհատների և ընտանիքների կողմից ստացվող համախառն եկամուտն է՝ մինչև պետությանը հարկերի վճարումը: Հարկերի վճարումից հետո մնացող եկամուտը տնօրինվող անձնական եկամուտն է: Այս ցուցանիշի օգնությամբ չափվում է առանձին քաղաքացիների և ընտանիքների կողմից սպառման և խնայողության համար օգտագործվող եկամուտների մեծությունը:

Տարբերում են անվանական և իրական ՀԱԱ հասկացությունները: Անվանական ՀԱԱ-ն ընթացիկ գներով արտահայտված ցուցանիշ է: ՀԱԱ-ն՝ արտահայտված որևէ տարվա (ընդունված որպես բազային) կայուն գներով, կոչվում է իրական ՀԱԱ:

Իրական ՀԱԱ-ի ցուցանիշի օգնությամբ չափվում է տարբեր տարիներին արտադրության ընդհանուր ծավալը՝ համարելով, որ բազային տարվանից սկսած՝ գների մակարդակն անփոփոխ է: Այսպիսով, իրական ՀԱԱ-ն, անվանական ՀԱԱ-ի համեմատությամբ, տնտեսական գործունեության բնութագրման առավել ճշգրիտ ցուցանիշ է:

Անվանական ՀԱԱ-ի հարաբերությունը իրական ՀԱԱ-ին ցույց է տալիս դրա ավելացումը գների աճի հաշվին և կոչվում է ՀԱԱ-ի դեֆլյատոր: Այն վերացնում է բոլոր գնային (ինֆլյացիոն) աղավաղումները ՀԱԱ-ի մեծության մեջ:

$$\text{ՀԱԱ դեֆլյատոր} = \frac{\text{տվյալ տարվա գների մակարդակ}}{\text{բազային տարվա գների մակարդակ}} \cdot 100$$

ՀԱԱ-ի անվանական և իրական հասկացությունների հիմնական տարբերություններն ավելի պատկերավոր ըմբռնելու համար օգտվենք աղյուսակ 6-ից:

	Անվանական ՀԱԱ	Իրական ՀԱԱ
հաշվարկվում է	տվյալ տարվա ընթացիկ գնով	բազիսային տարվա անհիռիդս գնով
արտացոլում է փոփոխությունները	Ինչպես ՀԱԱ-ի ֆիզիկական ծավալի, այնպես էլ գների մակարդակի փոփոխությունները	Սխան ՀԱԱ-ի ֆիզիկական ծավալի փոփոխությունները
օրինակ՝ տարեկան 13% գների աճի դեպքում	120 դրամական միավոր	120 ———— = 106,2 դ.մ 1,13

Բերված օրինակում դեֆլատորը հավասար է 1.13-ի: Իրական ՀԱԱ-ն հավասար է անվանական ՀԱԱ-ի և դեֆլատորի հարաբերությանը:

Առավել տարածված է սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ): Այն չափում է անհատի, ընտանիքի կողմից գնվող սովորական բարիքների գների փոփոխությունը:

ՍԳԻ-ի և ՀԱԱ-ի դեֆլատորի հիմնական տարբերությունն այն է, որ վերջինս, բացի սպառողական ապրանքների գներից, ներառում է նաև ինվեստիցիոն ապրանքների գները, կառավարության կողմից գնվող ապրանքների ու ծառայությունների գները, որոնք վաճառվում են համաշխարհային շուկայում:

Ազգային հաշիվների համակարգի ցուցանիշների փոխկապվածությունը ցույց է տրված աղյուսակ 7-ում:



---

տալի տեղաշարժի միջոցով: Սրանք, այսպես կոչված, արդյունաբերական պարբերաշրջաններն են, որոնք հետազոտվել են Մարքսի և ժուզյարի կողմից: Պայմանականորեն սրանք կարելի է անվանել միջին տևողության պարբերաշրջաններ: Հիմնական կապիտալի մասսայական նորոգումը հանգեցնում է տնտեսության աշխուժացման:

3. Շինարարական կամ Կուզնեցի պարբերաշրջաններ, որոնք տևում են 15-25 տարի, և պայմանավորված են ներգաղթյալների հոսքով ու շինարարական փոփոխություններով:

4. Արտադրության տեխնոլոգիական մեկ մեթոդից մյուսին անցնելու հետ կապված շեղումներ: Այս անցումը հանգեցնում է արտադրության բոլոր բաղադրամասերի փոփոխման և պահանջում է շատ ավելի երկար ժամանակաշրջան՝ 40-60 տարի: Նման պարբերաշրջանները հետազոտել է ռուս տնտեսագետ Կոնդրատևը և անվանել է «երկար ալիքների տեսություն»:

XX դարում այս տեսությունը զարգացրին Շումպետերը, Կուզնեցը, Կլարկը, Միտչելը և ուրիշները: Հավասարակշռության խախտման երկրորդ և երրորդ ձևերի միջև ընդհանուրն այն է, որ դրանք կապված են արտադրության տեխնոլոգիայի հետ:

Տարբերությունն այն է, որ միջին տևողության պարբերաշրջանները կապված են մեքենաների ծառայության ժամկետի հետ: Տեխնոլոգիական մեկ մեթոդի ընթացքում կարող են փոփոխվել տեխնիկայի մի քանի սերունդներ և դրանց կհամապատասխանեն իրենց պարբերաշրջանները: Բայց, ի վերջո ավարտվում է տեխնիկայի կատարելագործման ժամանակը, և սկսվում է նոր տեխնոլոգիաների դարաշրջանը, նոր կոնդրատևյան պարբերաշրջանը:

Տնտեսագիտության մեջ տարբեր ձևով են մեկնաբանում պարբերաշրջանների պատճառները.

- նորդասական ուղղությունը պարբերաշրջանները դիտարկում է որպես պահանջարկի և առաջարկի անհամապատասխանության պատահական, անցողիկ երևույթ,

- թերսպառման տեսությունը տնտեսական ճգնաժամերը բացատրում էր աշխատավորական մասսաների աղքատությամբ,

- XIX դարի վերջին առաջարկվեց պարբերաշրջանի դրամավարկային հայեցակետը, ըստ որի՝ ճգնաժամը փողի առաջարկի և պահանջարկի խախտման արդյունք է,

- մարքսիզմը ճգնաժամի պատճառը փնտրում է կապիտալիզմի հակասությունների մեջ, մասնավորապես՝ արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր կապիտալիստական բնույթի միջև,

---

– քայնասականությունը շեղման պատճառը բացատրում էր շուկայական մեխանիզմի թուլությամբ և կողմ էր պետական միջամտությանը:

Ժամանակակից տնտեսագիտության մեջ գոյություն ունի պարբերաշրջանների առաջացման գործոնային բացատրության 3 մոտեցում՝

- էկզոգեն,
- էնդոգեն,
- մեկի և մյուսի սինթեզով:

Էկզոգեն գործոնները տնտեսական համակարգից դուրս տեղի ունեցող երևույթներն են: Դրանցից են գիտական մեծ հայտնագործությունները, բնակչության միգրացիան, քաղաքական իրավիճակը և այլն: Ազգաբնակչության աճի հետևանքով բարձրանում է արտադրության և զբաղվածության մակարդակը և հանգեցնում բումի: Թվաքանակի նվազումը հակառակ արդյունք է տալիս: Տեխնոլոգիայի արմատական փոփոխությունները հանգեցնում են գործարար ակտիվության աշխուժացման: Քաղաքական իրավիճակները տարբեր ձևով են ազդում գործարար ակտիվության վրա: Օրինակ՝ II համաշխարհային պատերազմը ԱՄՆ-ին դրդեց վերազինվել, և 30-ական թվականների դեպրեսիան փոխարինվեց հետպատերազմյան աշխուժացմամբ: Զինված ուժեր ունենալու արգելքը պատերազմից հետո նպաստեց ճապոնիայի տնտեսության ինվեստավորմանը և «ճապոնական հրաշքին»:

Երկրորդ մոտեցման մեջ կարևորվում է ներքին գործոնների ուսումնասիրումը: Ներքին գործոնները համակարգի ներսում ընթացող երևույթներն են:

Դրանք են՝ սպառումը, ինվեստիցիաները, կառավարության գործունեությունը.

1. Սպառման ազդեցությունը. ֆիրմաները ձգտում են սպառողներին ապահովել այն ամենով, ինչի կարիքը նրանք զգում են: Արդյունքում սպառողական ծախսերն աճում են, արտադրությունն ընդլայնվում է, գործազրկությունն էլ կրճատվում: Տնտեսությունը մտնում է վերելքի փուլ:

2. Ինվեստիցիաների ազդեցությունը. ինվեստիցիաները հանգեցնում են նոր աշխատատեղերի ստեղծման, մեծացնում են գնողունակ պահանջարկը:

3. Կառավարության գործունեության ազդեցությունը. սա իրականացվում է 2 ճանապարհով՝ ֆիսկալ և դրամավարկային քաղաքականությամբ: Երրորդ մոտեցումը սինթեզում է առաջին երկուսը: Այս հայեցակետի հեղինակները գտնում են, որ արտաքին գործոնները պարբերաշրջանի առաջացման սկզբնապատճառ են, իսկ ներքին գործոնները որոշում են տատանման չափերը:

---

Ժամանակակից տեսությունը կապված է գործարար պարբերաշրջանի Սամուելսոն-Յիքսի մոդելի հետ: Այս մոդելում պարբերաշրջանը դիտարկվում է որպես ԱԵ-ի սպառման և կուտակման ներգործության արդյունք: Դրանց կապը կայուն է և բնութագրվում է բազմարկչի և արքսելերատորի միջոցով: Սամուելսոնը և Յիքսը գտնում են, որ արքսելերատորի և բազմարկչի սկզբունքների միացումը հանգեցնում է տնտեսական պարբերաշրջանի առաջացման:

Ենթադրենք՝ էկոնոմիկան շարժվում է դեպի լրիվ զբաղվածություն. ՀԱԱ-ն մեծանում է, արտադրանքի իրացումը աստիճանաբար աճում է: Արքսելերատորի սկզբունքի համաձայն՝ արտադրանքի իրացման բարձր մակարդակն առաջացնում է ինվեստիցիաների աճ: Իսկ բազմարկչի շնորհիվ ինվեստիցիաների աճը, իր հերթին նպաստում է ՀԱԱ հետագա աճին: Այս դեպքում տնտեսությունը գտնվում է վերելքի փուլում: Հնարավոր է նաև հակառակ իրավիճակ:

Հետևություն՝ արքսելերատորի սկզբունքը բացահայտում է եկամտի և ինվեստիցիաների կապը, որի փոփոխությունը կարող է առաջացնել տնտեսական զարգացման 3 տարբերակ.

- անընդհատ աճ,
- անհավասար աճ,
- տատանումներ, ներառյալ անկումը:


Անկումը տեղի է ունենում այն դեպքում, երբ զուտ կապիտալ ներդրումների մեծությունը բացասական մեծություն է:

### **Չափ 3. Տնտեսական պարբերաշրջանի փուլերը**

Տնտեսական պարբերաշրջանը (ցիկլը) բնութագրվում է գործարար ակտիվության պարբերական վերելքներով ու անկումներով:

Պարբերաշրջանն իրենից ներկայացնում է տնտեսական ակտիվության տարբեր ցուցանիշների՝ ՀԱԱ-ի տեմպերի, իրացման ընդհանուր ծավալի, գների ընդհանուր մակարդակի, գործազրկության մակարդակի և այլնի տատանումներ:

Պարբերաշրջանի հիմնական հատկությունը ՀԱԱ աճի տեմպի տատանումն է ժամանակի մեջ, երբ տնտեսական համակարգն անցնում է չորս հաջորդական փուլերով. աշխուժացում, վերելք, բում և անկում:



**Գծանկար 26. Տնտեսական պարբերաշրջանի փուլերը**

A-առավելագույն անկման կետ:

ը-վերելքի բարձրագույն կետ:

Անկման փուլի բնութագրիչներն են:

- Կրճատվում են արտադրական ինվեստիցիաները:
- Նվազում է աշխատանքի պահանջարկը:
- Ապրանքային գների անկում է տեղի ունենում:
- Շահույթի կտրուկ նվազում է զգացվում, նվազում է տոկոսադրույքը:

Անկման փուլում տարբերում են տնտեսության ռեցեսիոն և դեպրեսիոն վիճակները:


Ռեցեսիան ազգային արտադրության ծավալի կրճատումն է, որը տևում է 6 ամիս և ավելի:

Դեպրեսիան ազգային արտադրության ծավալի կրճատումն է, որն ուղեկցվում է գործազրկության բարձր մակարդակով և տևում է մի քանի տարի:

Վերելքի փուլում նշված գործընթացները տեղի են ունենում ճիշտ հակառակ ուղղությամբ:

Բունը բնութագրվում է գործարար ակտիվության բարձրագույն կետով: Տնտեսությունը գտնվում է իր հնարավորությունների սահմանում: Ինվեստիցիաներն ու սպառողական գնումները շատ մեծ են: Աճում է ապրանքների և ծառայությունների պահանջարկը, ինչը հանգեցնում է գների աճի: Վերանում են պաշարները, մեծանում է աշխատանքի պահանջարկը, և այս ամենը ձևավորում է պայմաններ գործարար ակտիվության հաջորդ փուլի՝ անկման համար:

Մակրոտնտեսական անկայունության գլխավոր դրսևորումներ համարվող արտադրության անկումների, գործազրկության և ինֆլյացիայի փոփոխությունները անկման և վերելքի փուլում կարելի է ներկայացնել հետևյալ կերպ (գծանկար 27)։




**Գծանկար 27. Տնտեսական պարբերաշրջանի փուլերի բնութագրումը**

Տնտեսության անկման փուլում արտադրության անկումը տրամաբանորեն առաջացնում է գործազրկության աճ, եկամուտների, ծախսումների և ամբողջական պահանջարկի կրճատում, որի արդյունքում գներն իջնում են: Իսկ երբ արտադրությունը վերելք է ապրում, պատկերն այլ է. գործազրկությունն աստիճանաբար նվազում է, եկամուտները սկսում են աճել, մեծանում են ամբողջական ծախսերը, պահանջարկը, արդյունքում՝ նաև գները (ինֆլյացիա):

Ցանկացած տնտեսական ճգնաժամ արտահայտվում է վերարտադրության խիստ խախտմամբ: Այս դեպքում հնարավոր է այնպիսի մի իրավիճակ, երբ արտադրությունը գերազանցում է գնողունակ պահանջարկի մակարդակը կամ հակառակը: Առաջին դեպքում առկա է գերարտադրության ճգնաժամ, իսկ երկրորդ դեպքում՝ թերարտադրություն:

Տնտեսական կամ գործնական պարբերաշրջանի տեսության մեջ ընդունված է տարբերել պարբերաշրջան և տրենդ հասկացությունները: Եթե մենք դիտարկենք որևէ երկրի մակրոտնտեսական զարգացման ցուցանիշները շատ թե քիչ շարունակական ժամանակահատվածում, ապա կհայտնաբերենք, որ անկախ տնտեսական տատանումներից՝ անկումներից և վերելքներից, որոնք հաջորդում են միմյանց որոշ կոնկրետ ժամանակահատվածը մեկ, երկիրը հասնում է տնտեսական զարգացածության որոշակի մակարդակի: Արտացոլենք այն գրաֆիկի վրա:

Իրական ՉԱԱ - ի  
ցիկլային  
տատանումները  
(F) և տրենդը (T)



**Գծանկար 28.** Իրական ՉԱԱ -ի պարբերաշրջանային տատանումները և տրենդը

Միացնենք հետազոտության սկզբի ( $t_1$ ) և վերջի ( $t_n$ ) կետերը, որոնք արտահայտում են իրական ՉԱԱ-ի մեծությունները, ապա կստանանք T ուղիղը, ինչն ընդունված է անվանել տրենդ (trend-միտում): Տրենդը սովորաբար արքսիսների առանցքի նկատմամբ որոշակի անկյան տակ դեպի վեր բարձրացող ուղիղ է, որը ցույց է տալիս տվյալ երկրի ՉԱԱ-ի հեռանկարային կանխորոշումը:

Ալիքաձև գիծը (F) ցույց է տալիս գործնական ակտիվության տատանումները տրենդի ուղղի շուրջ: F գիծը արտացոլում է ՉԱԱ-ի մակարդակի տատանումները՝ պայմանավորված տնտեսական պարբերաշրջանների առկայությամբ:

Հատուկ ուշադրություն դարձնենք շրջման վերին «բուն» (b, f) և ստորին (d, h) կետերին: Վերին և ստորին երկու հարևան կետերի միջև եղած հեռավորությունը նշանակում է պարբերաշրջանի շարունակականությունը, օրինակ՝ bf - ի կամ dh - ի հեռավորությունը: Շրջման կետերից օրդինատների առանցքին զուգահեռ տարված գծերի երկարությունները մինչև տրենդի գծին հատվելը, օրինակ՝ bb' և dd', որոշում են պարբերաշրջանային տատանումների ամպլիտուդը:

Առաջին տնտեսական ճգնաժամը սկսվել է 1825 թ. Անգլիայում: 1857թ. տեղի ունեցավ առաջին համաշխարհային ճգնաժամը: 90-ական թվականներին բնորոշ էին կառուցվածքային ճգնաժամերը. նավթային, էներգետիկ, հումքային, արժութային:

Կառուցվածքային ճգնաժամերը մեծ ազդեցություն են թողնում արդյունաբերական արտադրության ընդհանուր վիճակի վրա, փոփոխում են պարբերաշրջանային զարգացման ավանդական պատկերը:

---

Պարբերաշրջանային զարգացումն ունի իր առանձնահատկությունները գյուղատնտեսության մեջ: Ագրարային ճգնաժամի դրսևորման հիմնական ձևերն են՝ գյուղատնտեսական մթերքների չիրացվող ծավալների աճ, դրանց գնի անկում, արտադրության ծավալների կրճատում, գործազրկության աճ, աշխատավարձի անկում: Ի տարբերություն արդյունաբերական ճգնաժամերի՝ գյուղատնտեսական ճգնաժամերը տևում են ավելի երկար, քայքայիչ բնույթ են կրում և չունեն պարբերաշրջանային բնույթ:

Ջարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրները մշակել են գերարտադրության ճգնաժամի դեմ պայքարի մեթոդներ: Հիմնական դերը պատկանում է ֆիսկալ և մոնետար քաղաքականություններին: Հակաճգնաժամային քաղաքականության կարևորագույն միջոցառումները բունի փուլում հետևյալներն են՝

1. դրամավարկային քաղաքականություն. տոկոսադրույքի բարձրացում, բաց շուկայում պարտատոմսերի վաճառք,
2. ֆիսկալ քաղաքականություն. գնումների կրճատում և հարկերի բարձրացում,
3. աշխատավարձի քաղաքականություն, աշխատավարձի նվազեցում,
4. պետական ինվեստիցիաների քաղաքականություն, պետական շինարարության սառեցում:

Դեպրեսիաների փուլում իրականացվող կարևորագույն հակաճգնաժամային միջոցառումներն են՝

1. դրամավարկային քաղաքականություն. տոկոսադրույքի իջեցում, պարտատոմսերի գնում,
2. ֆիսկալ քաղաքականություն, պետական գնումների աճ, հարկերի նվազեցում,
3. աշխատավարձի քաղաքականություն, աշխատավարձի բարձրացում,
4. պետական ինվեստիցիաների քաղաքականություն:

### ***Հետևություններ***

1. վերելքի փուլում պետությունը վարում է գործարար ակտիվության զսպման քաղաքականություն,

2. անկման փուլում խթանվում է գործարար ակտիվությունը:

Շնորհիվ հակաճգնաժամային քաղաքականության և տնտեսության կարգավորման մշակված միջոցառումների՝ ժամանակակից շուկայական տնտեսությունը զուրկ է վառ արտահայտված պարբերաշրջանների փուլերից:

---

#### **Հարց 4. Պետության դերը տնտեսական պարբերաշրջանների կարգավորման գործում. պետության կայունացնող քաղաքականությունը**

Պետության կայունացնող քաղաքականությունը մակրոտնտեսական քաղաքականության միջոցառումների ամբողջությունն է, որը միտված է տնտեսության կայունացմանը լրիվ զբաղվածության կամ պոտենցիալ կրճատման՝ բացթողնման մակարդակում:

Տնտեսության գործերին պետության միջամտության ձևերը (հնարները) մակրոտնտեսական անկայունության պայմաններում բավական շատ են: Սակայն գործարար ակտիվության մակարդակի վրա ներգործելու ընդհանուր սկզբունքները հանգում են հետևյալ դրույթներին. տնտեսական անկման պայմաններում կառավարությունը պետք է վարի խթանող քաղաքականություն, իսկ վերելքի պայմաններում՝ զսպող մակրոտնտեսական քաղաքականություն՝ ձգտելով թույլ չտալ տնտեսության «գերտաքացում» (ինֆլյացիոն ճեղքում):

Այսպիսով՝ կայունացնող քաղաքականությունը ներկայացնում է «հակագործողությունների» ամբողջություն՝ գործուն ակտիվության մակարդակի համեմատությամբ, որը զսպող դեր է խաղում վերելքի և խթանող դեր՝ տնտեսության անկումների ժամանակ:

Սակայն ինչպե՞ս է իմանում կառավարությունը, թե տնտեսությունը միջնաժամկետ պարբերաշրջանի որ փուլում է գտնվում: Այդ նպատակով կառավարությունն օգտագործում է տնտեսական իրավիճակի փոփոխությունների բազմատեսակ ցուցանիշների մասին տվյալներ, որոնք տրամադրվում են պաշտոնական վիճակագրական ծառայությունների, գիտահետազոտական կենտրոնների կողմից և այլն: Մակրոտնտեսական փոփոխություններն ընդունված է ստորաբաժանել պրոցիկլիկ՝ ցիկլին նախորդող, հակացիկլիկ և աջիկլիկ տեսակների՝ կախված այն բանից, թե ինչպիսի փոփոխությունների են ենթարկվում հիշյալ ցուցանիշները տնտեսական կամ գործարար պարբերաշրջանների տարբեր փուլերում:

Պրոցիկլիկ փոփոխություններն աճում են աշխուժացման և վերելքի, իսկ նվազում են ճգնաժամի և դեպրեսիայի կրճատման ժամանակ (արդյունաբերական արտադրության ծավալը, բիզնեսի շահույթը, կարճաժամկետ տոկոսադրույքները, դրամական զանգվածի ծավալը և այլն):

Հակացիկլիկ փոփոխություններն աճում են ճգնաժամի ու լճացման և նվազում են աշխուժացման ու վերելքի ժամանակ (գործազրկության մակարդակը, սնանկացման քանակը տնտեսության իրական և ֆինանսական հատվածում, ապրանքանյութական պաշարները):

Աջիկլիկ փոփոխությունները կարելի է բնութագրել որպես պարբերաշրջանի փուլերի օրինաչափություններից դուրս:

---

Սակայն գործուն կայունացման քաղաքականության համար կարևոր է իմանալ, թե մակրոտնտեսական ցուցանիշներից որո՞նք են նախանշում ճգնաժամի սկիզբը:

Այդ առումով, մակրոտնտեսական փոփոխականները կարելի է ստորաբաժանել գերազանցող (առաջ անցող) և ուշացող ցուցանիշների: Օրինակ՝ ապրանքանյութական պաշարների ծավալը սկսում է աճել, իսկ բաժնետոմսերի գները և արտադրական կարողությունների բեռնման (օգտագործման) մակարդակը նվազում է ավելի շուտ, քան վրա կհասնի ճգնաժամը:

Հենց այս ցուցանիշների փոփոխություններն էլ հակառակ ուղղությամբ սկսում են ավելի շուտ, քան վրա կհասնի վերելքի փուլը: Այսպիսով՝ գերազանցող ցուցանիշներն ահազանգում են սպասվելիք (գալիք) անկումների և վերելքների մասին:

Ընդհակառակը՝ ուշացող ցուցանիշներն իրենց դիմամիկայուն (շարժընթացում) հետ են մնում պարբերաշրջանի փուլային կետերից: Գործազրկության մակարդակը, օրինակ, իր առավելագույնին հասնում է քիչ ավելի ուշ, քան տնտեսությունը հասնում է իր ցածրակետին՝ «հատակին»:

Արժանահավատ վիճակագրությունը և կառավարության ճիշտ գործողությունները, որոնք կարող են գրագետ կերպով մեկնաբանել գերազանցող և ուշացող ցուցանիշները, շատ բանով պայմանավորում են կայունացնող միջոցառումների հաջողությունը:

Չափազանց պարզեցնելով հարցը՝ դա կարելի է բացատրել հետևյալ կերպ: Արդյոք հաջողվո՞ւմ է կառավարությանը խթանել տնտեսության զարգացումը պարբերաշրջանի հենց այն փուլում, երբ տեղի է ունենում անկումը և զսպել այն գործարար ակտիվության ճիշտ գերլարման (գերշիկացման) պահին:

Կայունացնող քաղաքականությունը կարելի է համեմատել շարժվող թիրախի վրա նշանառության հետ: Կառավարության ներգործության օբյեկտը (թիրախը՝ երկրի տնտեսությունն է) ամբողջ ժամանակ գտնվում է շարժման մեջ, ու վրիպելու վտանգ կա: Իսկ եթե այդպես է, ապա կայունացնող քաղաքականությանն ուղղված բոլոր միջոցառումները կդառնան ապարդյուն կամ նույնիսկ՝ վնասակար: Այս առթիվ տնտեսագետները բանավիճում են ընդհուպ՝ մինչև օրս: Չնայած կայունացման քաղաքականության բարդությանը, այն իրականացվում է շուկայական տնտեսություն վարող բոլոր երկրներում, ունենալով, բնականաբար, տարբերություններ՝ կապված այն բանի հետ, թե որն է «տնտեսության ազգային մոդելը»:

Սակայն տնտեսության պարբերաշրջանային զարգացման ընդհանուր օրինաչափությունների իմացությունը միանգամայն անհրաժեշտ նախա-

---

դրյալ է արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականություն վարելու համար յուրաքանչյուր երկրում՝ նրա կառավարության կողմից:

### **Համառոտ եզրակացություններ**

1. Համախառն ազգային արդյունքն արտահայտում է հասարակության տնտեսական բարեկեցությունը և որոշվում է որպես երկրի վերջնական արդյունքի շուկայական արժեք՝ ժամանակի որոշակի հատվածում, որպես կանոն, 1 տարում:

2. Համախառն ներքին արդյունքը՝ ՀՆԱ-ն (Gross Domestic Product՝ GDP), իրենից ներկայացնում է ՀԱԱ-ի բարեփոխված ցուցանիշը և հավասար է տվյալ երկրի քաղաքացիների և օտարերկրյա արտադրողների արտադրած ապրանքների և ծառայությունների գների գումարին՝ մեկ տարվա կտրվածքով:

3. ԱԵ-ն, որպես կանոն, 1 տարում հասարակությունում ստեղծված նոր արժեքն է, որը ներկայացված է սպառման առարկաների և կապիտալի այն մասով, որն ուղղվում է ընդլայնված վերարտադրությանը: ԱԵ-ը երկրի տնտեսական զարգացման ընդհանրացնող ցուցանիշ է:

4. Անձնական եկամուտը անհատների և ընտանիքների կողմից ստացվող համախառն եկամուտն է՝ մինչև պետությանը հարկերի վճարումը: Հարկերի վճարումից հետո մնացող եկամուտը տնօրինվող անձնական եկամուտն է: Այս ցուցանիշի օգնությամբ չափվում է առանձին քաղաքացիների և ընտանիքների կողմից սպառման և խնայողության համար օգտագործվող եկամուտների մեծությունը:

5. Անվանական ՀԱԱ-ն ընթացիկ գներով արտահայտված ցուցանիշ է: ՀԱԱ-ն՝ արտահայտված որևէ տարվա (ընդունված որպես բազային) կայուն գներով, կոչվում է իրական ՀԱԱ:

6. Պարբերաշրջայնությունը ենթադրում է տնտեսության շեղում հավասարակշռությունից, որի վերականգնումը պահանջում է որոշակի ժամանակ:

7. Պարբերաշրջանն իրենից ներկայացնում է տնտեսական ակտիվության տարբեր ցուցանիշների՝ ՀԱԱ-ի տեմպերի, իրացման ընդհանուր ծավալի, գների ընդհանուր մակարդակի, գործազրկության մակարդակի և այլնի տատանումներ:

8. Պարբերաշրջանի հիմնական հատկությունը ՀԱԱ աճի տեմպի տատանումն է ժամանակի մեջ, երբ տնտեսական համակարգն անցնում է չորս հաջորդական փուլերով. աշխուժացում, վերելք, բում և անկում:

9. Պետության կայունացնող քաղաքականությունը մակրոտնտեսական քաղաքականության միջոցառումների ամբողջություն է, որը միտված

---

է տնտեսության կայունացմանը լրիվ զբաղվածության կամ պոտենցիալ կրճատման՝ բացթողնման մակարդակում:

***Ինքնաստուգման հարցեր***

- 1. Մակրոտնտեսական ի՞նչ ցուցանիշներ գիտեք:*
- 2. Ի՞նչ է ՀԱԱ-ն:*
- 3. Ի՞նչ է ՀՆԱ-ն:*
- 4. Ի՞նչ է ԱԵ-ն:*
- 5. Ինչպե՞ս է որոշվում ՀՆԱ-ն:*
- 6. Ի՞նչ է տնտեսական պարբերաշրջանը:*
- 7. Որո՞նք են տնտեսական պարբերաշրջանի փուլերը:*
- 8. Որո՞նք են տնտեսական պարբերաշրջանների պատճառները:*
- 9. Տնտեսական պարբերաշրջանների ի՞նչ տեսակներ կան:*
- 10. Ի՞նչ է իրենից ներկայացնում պետության կայունացնող քաղաքականությունը:*

---

**ԹԵՍԱ 16. ԻՆՖԼՅԱՑԻԱ. ԷՆՈՒԹՅՈՒՆԸ, ՁԵՎԵՐԸ, ՊԱՏՏԱՌՆԵՐՆ ՈՒ  
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ներկայացնել ինֆլացիայի՝ արժե-  
գրկման պատճառները և հետևանքները:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

- ա. մեկնաբանել փողի գնողունակություն հասկացությունը,
- բ. ներկայացնել ինֆլացիայի և դեֆլացիայի էությունը,
- գ. բացահայտել ինֆլացիայի պատճառները,
- դ. ներկայացնել ինֆլացիայի տեսակները,
- ե. ներկայացնել ինֆլացիայի հաշվարկման կարգը,
- զ. ներկայացնել ինֆլացիայի կառավարման առանձնահատկություն-  
ները,
- է. բացատրել պետության հակաինֆլացիոն միջոցառումների էությունը,
- ը. ներկայացնել գործազրկության և ինֆլացիայի միջև գոյություն  
ունեցող կախվածությունը:

**Հարց 1. Ինֆլացիայի էությունը, տեսակները և պատճառները**

Ինֆլացիան սահմանվում է որպես արժույթի գնողունակության նվա-  
զում, որը սովորաբար արտահայտվում է ապրանքների և ծառայություն-  
ների գների ընդհանուր աճով:

Բայց ժամանակակից պայմաններում ինֆլացիոն հարաբերություննե-  
րը բարդացել են. խզվել է կախվածությունը ոսկու և թղթադրամի միջև,  
խախտվել են դրամաշրջանառության ավանդական օրենքները, և ձև-  
վորվում են նորերը. ինֆլացիան ձեռք է բերել ինտերնացիոնալ բնույթ:  
Պատճառներից մեկն այն է, որ շատ երկրներ ինվեստիցիաների խթան-  
ման և տնտեսության աշխուժացման միակ ճանապարհը տեսան դրամա-  
կան զանգվածի ավելացման մեջ:

Դրա համար էլ ինֆլացիայի բարձր տեմպերը կապված են նախ և  
առաջ դրամական զանգվածի ավելացման հետ:

Արդյունքում փողը արժեզրկվում է, գներն՝ աճում, և որպես հետևանք,  
խախտվում են տնտեսական համամասնությունները: Հաշվի առնելով վե-  
րը ասվածը՝ կարելի է ենթադրել, որ ժամանակակից ինֆլացիան առա-  
ջարկի և պահանջարկի անհավասարակշռությունն է, որն արտահայտ-  
վում է գների աճի մեջ:

Ինֆլացիան լինում է բաց և ճնշված: Առաջինն արտահայտվում է գնե-  
րի բարձրացման մեջ, իսկ երկրորդը՝ ապրանքների անհետացման:

Ծնշված ինֆլյացիայի պայմաններում գները կարգավորվում են պետության կողմից, դրա համար էլ պահանջարկի մեծացման դեպքում գինը չի բարձրանում, և առաջանում է դեֆիցիտ: Ապրանքներ ձեռք բերելու համար սպառողները ստիպված բարձր գին են առաջարկում առևտրականներին, և հսկա գումարներ են սկսում կենտրոնանալ առևտրում՝ շրջանցելով արտադրությունը: Որպես հետևանք՝ արտադրությունն ընդլայնելու խթանը կորցնում են արտադրողները:

Բաց ինֆլյացիայի դասակարգման համար կիրառվում է մի քանի չափանիշ.

1. գների աճի տեմպը,
2. գների աճի անհամամասնությունը տարբեր ապրանքատեսակների գծով,

3. ինֆլյացիոն սպասումները:

**Առաջին** չափանիշի համաձայն՝ առանձնացնում են չափավոր ինֆլյացիա (գների աճը տարեկան կտրվածքով կազմում է մինչև 10%), քառաբազմ (մի քանի հարյուր տոկոս) և հիպերինֆլյացիա, երբ գների տարեկան աճը կազմում է 1000%, և ամբողջությամբ փլուզվում է դրամաշրջանառության համակարգը:

**Երկրորդ** չափանիշի տեսանկյունից առանձնանում են հաշվեկշռված և ոչ հաշվեկշռված ինֆլյացիա: Հաշվեկշռված ինֆլյացիայի դեպքում տարբեր ապրանքների գները միմյանց նկատմամբ հարաբերականորեն կայուն են, իսկ ոչ հաշվեկշռված ինֆլյացիայի դեպքում տարբեր ապրանքների գներ միմյանց նկատմամբ անընդհատ փոփոխվում են:

**Յրորորդ** չափանիշի համաձայն՝ առանձնացնում են սպասվող և չսպասվող ինֆլյացիա: Սպասվելիության գործոնը ազդում է ինֆլյացիայի հետևանքի վրա: Տարբերում են առաջարկի և պահանջարկի ինֆլյացիա: Պահանջարկի ինֆլյացիայի դեպքում հավասարակշռության խախտման պատճառը պահանջարկի փոփոխությունն է: Այդպիսի իրավիճակ է ստեղծվում լրիվ զբաղվածության պայմաններում, երբ աճում է աշխատավարձը, առաջանում է ավելցուկային պահանջարկ, և որպես հետևանք՝ գների աճ:

Առաջարկի ինֆլյացիան կոչվում է նաև ծախքերի ինֆլյացիա, քանի որ գները աճում են՝ կապված հունքի, էներգիայի և այլ գների աճի հետ:

Ընդունված է համարել, որ արտադրության ծախսերի աճի և տնտեսության անհամաչափ զարգացման աղբյուր են հանդիսանում երեք գործոններ:


1. **Պետությունը:** Նրա ծախքերը մեծանում են վարկաֆինանսական մեխանիզմի միջոցով:

2. **Արհմիությունները:** Նրանք պահանջում են աշխատավարձի բարձրացում, ինչը բերում է ծախքերի մեծացմանը, հետևաբար գների աճին:

3. **Խոշոր ֆիրմաները:** Նրանք մոնոպոլ գներ են սահմանում և դրանով նպաստում ինֆլյացիային:

Համաշխարհային տնտեսագիտական գրականության մեջ այս երեք գործոններն անվանում են ինֆլյացիայի հիմնական պատճառներ:

Ինֆլյացիան, որը ուղեկցվում է արտադրության ստագնացիայով (տնտեսական աճի երկարատև դադար), գործազրկության բարձր մակարդակով և գների մակարդակի միաժամանակյա բարձրացումով, կոչվում է ստագֆլյացիա:



Ինֆլյացիայի և տնտեսության քայքայման դեպքում անխուսափելի են դրամական համակարգի ամբողջական կամ մասնակի բարեփոխումները, որոնցից առավել կարևոր են հետևյալ մեթոդները.

1. դեֆլյացիան (դրամական զանգվածի կրճատում՝ շրջանառությունից ավելորդ դրամանիշերը հանելու ճանապարհով),

2. դենոմինացիան (գրոները ջնջելու մեթոդ), երբ հին դրամանիշերը փոխարինվում են նորերով (դրանց արժեքի 10, 100, 1000 անգամ ավելացմամբ),

3. դևալվացիան, երբ դրամական միավորի ոսկու պարունակությունը պակասեցվում է, կամ ազգային արժույթի կուրսն իջեցվում է ոսկու, արծաթի և արտարժույթի նկատմամբ,

4. ռևալվացիան, որը դևալվացիայի հակառակ գործընթացն է, և կիրառվում է փողի ինֆլյացիոն արժեզրկումից հետո դրանց գնողունակության վերականգնման համար,

5. գրոյականացում (նուլիֆիկացիա) կամ փողի բոլորովին արժեզրկում, որի դեպքում արժեզրկված դրամանիշերը հայտարարվում են չեղյալ, և շրջանառության մեջ են մտցվում նորերը:

## Հարց 2. Գնաճի հաշվարկման և կառավարման առանձնահատկությունները ՀՀ-ում

ՀՀ-ում գնաճի մակարդակը չափվում է սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) միջոցով, որն արտացոլում է սպառողական զանբյուլի արժեքի փոփոխությունը: ՀՀ-ում ՍԳԻ-ն հաշվարկվում է Լասպերեյսի ինդեքսային բանաձևի օգնությամբ:

$$CPI^t = \frac{\sum_{i=1}^K p_i^0 q_i^0 \frac{p_i^t}{p_i^0}}{\sum_{i=1}^K p_i^0 q_i^0}$$

որտեղ  $p_i^0, p_i^1$ -ն  $i$ -րդ ապրանքի կամ ծառայության գների մակարդակն է համապատասխանաբար բազիսային և ընթացիկ ժամանակահատվածում,  $q_i^0$ -ն  $i$ -րդ ապրանքի սպառման ծավալը բազիսային ժամանակահատվածում,

$K$ -ն սպառողական զանբյուլում ընդգրկված ապրանքների և ծառայությունների քանակը, որը ՀՀ դեպքում հավասար է 470:

2012թ.-ի դեկտեմբերին 2011թ.-ի դեկտեմբերի համեմատ գնաճը Հայաստանում կազմել է 3.2%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 3%, ոչ պարենային ապրանքներինը՝ 5.7%, ծառայությունների սակագներինը՝ 2.1%:

Ինչպես նշեցինք, գնաճը չափվում է սպառողական գների ինդեքսի միջոցով, որը սպառողական զանբյուլի մեջ ընդգրկված ապրանքների և ծառայությունների իրենց համապատասխան կշիռներով կշռված գների միջին մեծությունն է: 2006թ. ապրիլից ԱՎԾ-ն գնաճը հաշվարկում է նոր սպառողական զանբյուլի հիման վրա, որը նախկին 400 անուն ապրանք-ծառայությունների փոխարեն այժմ ներառում է 470-ը, որոնց գները պարբերաբար գրանցվում են շուկայում և իրենց կշիռն համապատասխան ներառվում են սպառողական գների ինդեքսում: Պարենային ապրանքների կշիռը ՀՀ սպառողական զանբյուլում ներկայումս կազմում է շուրջ 54%, ոչ պարենային ապրանքներինը՝ շուրջ 16%, իսկ ծառայություններինը՝ շուրջ 30%: Հայաստանում սպառողական զանբյուլի կազմի և կառուցվածքի վերանայումը տեղի է ունենում 5 տարին մեկ անգամ՝ հաշվի առնելով բնակչության եկամուտների և սպառման կառուցվածքի փոփոխությունը: Վերջին անգամ նման վերանայում տեղի է ունեցել 2006թ.վականին:

ՀՀ-ում գնաճի կառավարումն իրականացնում է Կենտրոնական բանկը, որի հիմնական խնդիրը երկրում գների կայունության ապահովումն է:

---

ԿԲ-ն, գների կայունության ապահովման նպատակով մշակում, հաստատում և իրականացնում է *դրամավարկային քաղաքականության ծրագիրը*: Յուրաքանչյուր եռամսյակի առաջին շաբաթվա ընթացքում ԿԲ կանխատեսող խումբը ԿԲ խորհրդի քննարկմանն է ներկայացնում տվյալ եռամսյակի գնաճի կանխատեսումները, նպատակային ցուցանիշից այդ կանխատեսումների միջև շեղումը վերացնելուն ուղղված դվք-ի ուղղությունները: ԿԲ խորհուրդը յուրաքանչյուր ամսվա սկզբին որոշում է ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի մակարդակը, իսկ յուրաքանչյուր եռամսյակ՝ տվյալ եռամսյակի դվք-ի ուղղությունները:

Դրամավարկային քաղաքականությունը փողի առաջարկի կամ փողի գնի (տոկոսադրույքի) կարգավորման գործընթացն է: Դրամավարկային քաղաքականության միջոցով իրագործվում են այնպիսի նպատակներ, որոնք ուղղված են կայուն տնտեսական աճի և մակրոտնտեսական կայունության ապահովմանը: Որպես այդպիսի նպատակ, համաձայն ՀՀ Սահմանադրության 83.3-րդ հոդվածի և «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, ՀՀ ԿԲ-ի համար սահմանված է գների կայունության ապահովումը: Այս նպատակն իրագործելու համար ԿԲ-ն Կառավարության հետ համատեղ, սահմանում է գնաճի նպատակային թիրախը, որը, համաձայն «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, ամրագրվում է «Կառավարության միջնաժամկետ ծախսերի ծրագրում»: Ինչպես աշխարհի գրեթե բոլոր երկրների կենտրոնական բանկերը, ՀՀ կենտրոնական բանկը ևս նպատակ է հետապնդում ապահովել գների կայունությունը: Գների կայունությունը մակրոտնտեսական կայունության կամ տնտեսական գործունեության համար կայուն պայմանների ստեղծման հիմնական նախադրյալներից է: Գների կայունության ապահովմամբ ԿԲ-ն նպաստում է երկարաժամկետ հատվածում բարձր տնտեսական աճին, հետևաբար բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Գների այն մակարդակը, որը տվյալ երկրի տնտեսության առանձնահատկություններից էլնելով՝ առավել համապատասխանում է գների կայունության վերոնշյալ սահմանմանը, ընտրվում է որպես գնաճի նպատակային մակարդակ կամ գնաճի թիրախ: 2007 թվականից սկսած ՀՀ-ում որպես գնաճի նպատակային թիրախ է սահմանվել 4%-ը՝  $\pm 1.5\%$  տատանումների թուլատրելի միջակայքով: Գնաճի նպատակային մակարդակը սահմանվում է Կենտրոնական բանկի կողմից՝ Կառավարության հետ համատեղ:

Գնաճի նպատակադրումն իրենից ներկայացնում է գնաճի նպատակային ցուցանիշի սահմանում, գնաճի կանխատեսում նույն ժամանակահատվածի համար, այնուհետև նպատակաուղղված քաղաքականության իրականացում նպատակային և կանխատեսված ցուցանիշների միջև շեղումը վերաց-

նելու համար: Գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո դրամավարկային քաղաքականությունն իրականացվում է հետևյալ ճանապարհով: Եթե ԿԲ-ն գնահատում է, որ կանխատեսվող գնաճը շեղվում է նպատակային թիրախից, ապա սկսում է փոփոխել դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքը, ինչն էլ դրամավարկային քաղաքականության ազդեցության փոխանցման մեխանիզմի միջոցով նվազեցնում է միջանկյալ նպատակի՝ կանխատեսված գնաճի, շեղումը գնաճի նպատակային թիրախից: Դրամավարկային քաղաքականության փոխանցման մեխանիզմներն այն ուղիներն են, որոնց միջոցով դրամավարկային քաղաքականությունը ազդում է ձեռնարկությունների, սպառողների և ֆինանսական միջնորդների տնտեսական գործունեություն իրականացնելու որոշումների՝ հետևաբար տնտեսական ակտիվության և գների վրա: Կարճաժամկետ տոկոսադրույքների փոփոխությունը, որը տեղի է ունենում ԿԲ դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառման միջոցով (հիմնականում կարճաժամկետ ռեպո գործառույթներ), որոշակի ժամանակահատվածում արտացոլվում է այլ տոկոսադրույքների վարքագծում: Իսկ վերջիններս նախևառաջ հանդիսանալով փոխառության ծախս՝ իրենց ազդեցությունն են ունենում համախառն պահանջարկի վրա՝ սպառման և ներդրումների փոփոխությունների հետևանքով: Տոկոսադրույքներն ազդեցություն ունեն նաև տնտեսության վարկավորման ծավալների և ձեռնարկությունների կողմից ֆինանսական միջոցների ձեռքբերման հնարավորության վրա: Մասնավորապես՝ տոկոսադրույքների աճը մեծացնում է ռիսկային նախագծերի ֆինանսավորման տեսակարար կշիռը, որը հանգեցնում է չվերադարձվող վարկերի աճի, բանկերի կողմից լրացուցիչ վերահսկողական ծախսերի իրականացման և արդյունքում՝ վարկավորման ծավալների կրճատման:

### **Հարց 3. Ինֆլյացիայի հետևանքները**

Ինֆլյացիայի հետևանքները միանշանակ չեն:

Քեյնսն ապացուցում է, որ չափավոր ինֆլյացիան օգտակար է տնտեսության համար, քանի որ դրամական զանգվածի աճը խթանում է գործարար ակտիվությունը, նպաստում է տնտեսական աճին:

Դրամի ավելցուկային թողարկումը հանգեցնում է հետևյալ բացասական հետևանքներին՝

- անրակայված մեծության եկամուտ ստացող մարդկանց տնտեսական վիճակը խիստ վատթարանում է,
- տեղի է ունենում բնակչության դրամական միջոցների թաքնված բռնագրավում պետության կողմից,

- կապիտալը դուրս է մղվում արտադրության ոլորտից՝ ներթափանցելով շրջանառության ոլորտ:

- տեղի է ունենում դրամական կապիտալի արտահոսք արտերկիր:

Հակաինֆլյացիոն միջոցառումները ենթադրում են՝

1. հարմարեցում ինֆլյացիային,


2. դրա լիկվիդացումը:

Ադապտացիոն (հարմարեցվող) միջոցառումների թվին են դասվում եկամուտների ինդեքսացիան և գների մակարդակի վերահսկողությունը:

Լիկվիդացիոն մեթոդը ինֆլյացիայի ակտիվ իջեցման մարտավարությունն է տնտեսական անկման և գործազրկության աճի միջոցով: Այս դեպքում տնտեսական և սոցիալական ծախսերը շատ մեծ են: Բայց արդյունքները շատ ավելի էֆեկտիվ են, քան ադապտացիոն քաղաքականության արդյունքները:

#### Հարց 4. Կապը ինֆլյացիայի և գործազրկության միջև

Պրակտիկայում երկրների մեծամասնությունն ինֆլյացիայի հետ պայքարի «փոխզիջման» ճանապարհ է ընտրում: Այս միջոցառման հիմքում ընկած է այն գաղափարը, որ գոյություն ունի հակադարձ կախվածություն ինֆլյացիայի և գործազրկության միջև: Գործազրկության բարձր մակարդակի դեպքում ինֆլյացիան ցածր է, և ընդհակառակը: Այսինքն՝ պետությունը պետք է ընտրի՝ կա՛մ գործազրկություն, կա՛մ ինֆլյացիա: Անվանական աշխատավարձի փոփոխության և գործազրկության միջև կապի բացահայտման առաջին փորձը կատարեց Ա. Ֆիլիպսը 1958 թվականին: Նա եկավ այն եզրակացության, որ գործազրկության կրճատումն ուղեկցվում է անվանական աշխատավարձի և գների աճով: Այդ փոխկախվածությունը գրաֆիկորեն ունի հետևյալ տեսքը և կոչվում է ֆիլիպսի կոր:



Գծանկար 29. Կապը ինֆլյացիայի և գործազրկության միջև

Գործազրկության մակարդակը, %

Այդ կախվածությունը ունի հետևյալ բանաձևի տեսքը.

$$W = f\left(\frac{D - S}{S}\right) = f(u),$$

որտեղ՝  $W$ -ն՝ աշխատավարձի դրույքաչափերի փոփոխության արագությունն է,

$D$  - ն և  $S$  - ը՝ աշխատանքի պահանջարկն ու առաջարկն են,

$U$  - ն՝ աշխատուժի ընդհանուր թվաքանակում գործազուրկների բաժինն է:

Այնուհանդերձ, փորձը ցույց տվեց, որ Ֆիլիպսի եզրահանգումը ճիշտ է միայն կարճ ժամանակահատվածի համար: Երկար ժամանակահատվածի (5 - 10 և ավելի տարիների) համար, նույնիսկ զբաղվածության ցածր մակարդակը չի փրկում ինֆլյացիայի աճից, ինչը հրահրում են արհմիություններն ու ֆիրմաները՝ բարձրացնելով աշխատավարձն ու գները:

Վիճակագրության տվյալները վկայում են, որ տարվա ընթացքում ինֆլյացիայի մակարդակի 1%-ով իջեցումը հանգեցնում է գործազրկության բնական մակարդակի 2%-ով ավել աճի: Ինֆլյացիայի նվազման համար գործազրկության աճով վճարելու գաղափարի հետ ոչ բոլոր տնտեսագետներն են համաձայն: Դեռևս այդ պրոբլեմը չունի միասնաբար ընդունված լուծում:

### Համառոտ եզրակացություններ

1. Գնաճը սահմանվում է որպես արժույթի գնողունակության նվազում, որը սովորաբար արտահայտվում է ապրանքների և ծառայությունների գների ընդհանուր աճով:

2. Ինֆլյացիան, որ ուղեկցվում է արտադրության ստագնացիայով (տնտեսական աճի երկարատև դադար), գործազրկության բարձր մակարդակով և գների մակարդակի միաժամանակյա բարձրացումով, կոչվում է ստագֆլյացիա:

3. ՀՀ-ում գնաճի մակարդակը չափվում է սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) միջոցով, որն արտացոլում է սպառողական զանբյուղի արժեքի փոփոխությունը:

4. ՀՀ-ում գնաճի կառավարումն իրականացնում է Կենտրոնական բանկը, որի հիմնական խնդիրը երկրում գների կայունությունն ապահովելն է: ԿԲ-ն, գների կայունության ապահովման նպատակով մշակում, հաստատում և իրականացնում է *դրամավարկային քաղաքականության ժրագիրը*:

---

**Ինքնաստուգման հարցեր**

1. Ի՞նչ է ինֆլացիան:
2. Ինֆլացիայի ի՞նչ տեսակներ կան:
3. Ի՞նչ է ստագֆլացիան:
4. Ինչպե՞ս են հաշվարկում ինֆլացիան:
5. Ինչպե՞ս են կառավարում ինֆլացիան:
6. Ի՞նչ հետևանքներ է թողնում ինֆլացիան:
7. Հակաինֆլացիոն ի՞նչ միջոցառումներ կան:
8. Ի՞նչ կապ կա ինֆլացիայի և գործազրկության միջև:

**ԹԵՄԱ 17. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԷՆԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ՍՈՂԵԼՆԵՐԸ**

*Թեմայի հիմնական նպատակն է՝ մեկնաբանել տնտեսական աճը:*

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*


- ա. ներկայացնել տնտեսական աճի էությունը,
- բ. ներկայացնել տնտեսական աճի դրական և բացասական կողմերը,
- գ. բացատրել տնտեսական աճի տեսակները,
- դ. ներկայացնել տնտեսական աճի աղբյուրները:

**Չարդ 1. Տնտեսական աճի էությունը**

Ժամանակակից հասարակության կարևորագույն նպատակներից մեկը տնտեսական աճն է, այսինքն՝ հասարակական արտադրության ինչպես քանակական ավելացումը, այնպես էլ՝ որակի բարձրացումը: Տնտեսական աճը տնտեսական կարևորագույն հիմնախնդիր է, որը ծառայած է բոլոր երկրների առջև: Ըստ դրա դինամիկայի դատում են տվյալ երկրի տնտեսության զարգացման, կենսամակարդակի, ռեսուրսների սահմանափակման հիմնախնդրի լուծման մասին:

Տնտեսական աճն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր (աղյուսակ 8):

**Աղյուսակ 8. Տնտեսական աճի առավելություններն ու թերությունները**



Ձանգվածային արտադրության և ինդուստրացման բուռն աճը երբեմն առաջ է բերում շրջակա միջավայրի աղտոտվածություն, կանաչ տարածքների ոչնչացում, չվերարտադրվող ռեսուրսների (ածուխ, նավթ) սպառում, քաղաքների գերբնակեցվածություն և ընդարձակում, աշխատուժի և աշխատանքի փոխարինման հաճախակի վերաորակավորման անհրաժեշտություն, հոգնածություն, աշխատանքային ու հոգեկան գերծանրաբեռնվածություն և այլն:

Տնտեսական աճն ունի նաև իր դրական կողմերը: Տնտեսության առաջընթացի և զարգացման շնորհիվ աճում են արտադրության ծավալները, հասարակական հարստությունը և երկրի հեղինակությունը, ավելանում է ազատ ժամանակը, բարձրանում է մարդկանց կրթական և մշակութային մակարդակը, արտադրությունն ավտոմատացվում է, բարելավվում են աշխատանքի պայմանները և այլն:

Տնտեսական աճի առավել պարզ որոշումը և հաշվարկումը կապված է ազգային հաշիվների կարևորագույն ցուցանիշների ՀՆԱ-ի (կամ ՀԱԱ-ի) հետ, իրական, այսինքն՝ ինֆլացիայի ազդեցությունից զերծ արտահայտությամբ:

Այսպիսով, տնտեսական աճը կարելի է սահմանել որպես ՀՆԱ-ի (կամ ՀԱԱ-ի) իրական ծավալի փոփոխության արագություն՝ որոշակի ժամանակահատվածում:

Տնտեսական աճը չափվում է տարեկան աճի տեմպերով (%), որը կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝

$$y = \frac{y_t}{y_{t-1}} \cdot 100\% , \text{ որտեղ}$$

$y$  – ը ՀՆԱ-ի աճի տեմպն է,

$y_t$  –  $t$  ը ՀՆԱ-ի իրական մեծությունն է հաշվետու տարում,

$y_{t-1}$  –  $t-1$  ը բազիսային տարվա ՀՆԱ-ի մեծությունն է:

ՀՆԱ-ի հավելածի տեմպ ցուցանիշ հասկացության տակ հասկացվում է ընթացիկ և նախորդ ժամանակահատվածի իրական ՀՆԱ-ի տարբերության հարաբերությունը նախորդ ժամանակահատվածի իրական ՀՆԱ-ին՝ արտահայտած տոկոսներով:

Բանաձևով կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝

$$y = \left[ \frac{y_t - y_{t-1}}{y_{t-1}} \right] \cdot 100\% = \frac{\Delta y_t}{y_{t-1}} \cdot 100\% = \left[ \frac{y_t}{y_{t-1}} - \frac{y_{t-1}}{y_{t-1}} \right] \cdot 100\% = \frac{y_t}{y_{t-1}} \cdot 100\% - 100\%$$

Օրինակ, եթե մեր երկրի իրական ՀՆԱ-ն կազմել է 2100 պ.մ.՝ նախորդ տարվա 2000 պ.մ. դիմաց, ապա հավելաճի տարեկան տեմպը հավասար է 5%.

$$y = \left[ \frac{2100 - 2000}{2000} \right] \cdot 100\%$$

Այս ցուցանիշը հնարավորություն է տալիս գաղափար կազմել տնտեսական զարգացման արագության մասին ամբողջ երկրի մասշտաբով:

Սակայն հաճախ կարևոր է իմանալ, թե տնտեսության աճն ինչ կերպ է անդրադառնում մարդկանց կենսամակարդակի վրա: Բավարար՞ է արդյոք այդ աճը, եթե նկատի ունենք նաև բնակչության թվաքանակի հնարավոր աճը: Այս նպատակներով կիրառվում է երկրորդ մեթոդը՝ ՀԱԱ-ի, ՀՆԱ-ի ավելացման աստիճանի հաշվարկումը բնակչության մեկ շնչի հաշվով: Այսպես, վերը նշված օրինակում բնակչության քանակը (թվերը բնականաբար պայմանական են) աճել է, ենթադրենք՝ 100-ից մինչև 105 մարդ, ապա (ՀՆԱ-ի 5%-անոց աճի տարբերությամբ) ՀՆԱ-ի ցուցանիշը բնակչության ամեն մի շնչին չի փոխվի. առաջին տարում եղել է 20 պ.մ. (2000:100), երկրորդ տարում էլ կլինի նույնը (2100:105): Պարզվում է, որ ՀՆԱ-ի ընդհանուր ծավալի 5%-անոց աճը (առաջին մեթոդ) տվյալ իրավիճակում բավարար չէ, քանի որ ըստ բնակչության մեկ շնչի հաշվարկման (երկրորդ մեթոդ)՝ այն ՀՆԱ-ի գրոյական աճի վերածվեց: Այստեղից շատ կարևոր եզրակացություն կարելի է կատարել. բնակչության բարեկեցությունը բարձրացնելու համար երկրի տնտեսական աճը պետք է գերազանցի բնակչության թվաքանակի աճին:

Այդ կապակցությամբ քննարկվում է այն հարցը, թե ո՞ր տեմպերն են առավել ձեռնտու: Հնարավոր տարբերակներն են՝

- ա. բարձր տեմպերը,
  - բ. գրոյական տեմպը,
  - գ. բացասական տեմպը,
  - դ. օպտիմալ տեմպը:
- Դիտարկենք դրանք:

Առաջին հայացքից թվում է, թե ձեռնտու է աճի բարձր տեմպը: Բայց պետք է հաշվի առնել թողարկվող արտադրանքի որակը: Կարևոր է նաև արտադրանքի աճի կառուցվածքը, քանի որ ռազմական արտադրանքի աճը սպառման առարկաների նվազման պայմաններում, բացասաբար է անդրադառնում կենսամակարդակի վրա:

Տնտեսական աճի գրոյական տեմպը միշտ չէ, որ բացասական բնույթ է կրում: Եթե նվազում է նյութատարությունը, և խնայվում են արտադրական գործոնները, ապա դա վատ չէ: Օգտակար է գրոյական աճը ռազմական ծախսերի ոլորտում:

---

Բացասական տեմպը վկայում է ազգային տնտեսության ճգնաժամի մասին: Դրա պատճառներից կարող են լինել տնտեսության ոչ ռացիոնալ կառուցվածքը, ռազմական արտադրության բարձր տեսակարար կշիռը, ցածր ֆոնդահատույցը, տնտեսական կապերի խզումը, անցումային փուլի դժվարությունները:

Օպտիմալ տեմպերը չեն կարող լինել կան բարձր, կան ցածր: Դրանք պետք է ապահովեն մակրոտնտեսական հավասարակշռություն:

## **Չարք 2. Տնտեսական աճի տեսակները, գործոնները և մոդելները**

Տարբերում են տնտեսական աճի 3 տեսակ՝ էքստենսիվ, ինտենսիվ և խառը (իրական):

Էքստենսիվ աճը ազգային արդյունքի աճն է՝ ի հաշիվ արտադրության լրացուցիչ գործոնների ներգրավման:

Ինտենսիվ աճը ազգային արդյունքի աճն է՝ ի հաշիվ տեխնիկայի և տեխնոլոգիայի կատարելագործման:

Իրական կյանքում գոյություն չունի տնտեսական աճի այս կամ այն տիպը: Դրանք միահյուսված են: Խառը (իրական) տնտեսական աճը արտադրական հզորությունների աճն է՝ ի հաշիվ արտադրության գործոնների քանակի փոփոխության և տեխնիկայի ու տեխնոլոգիայի կատարելագործման:

Տնտեսական աճը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնցից կարևորներն են առաջարկի, պահանջարկի և բաշխման գործոնները: Առաջարկի գործոններին են վերագրվում.

- բնական ռեսուրսների քանակն ու որակը,
- աշխատունակ բնակչության քանակն ու որակը,
- հիմնական կապիտալի առկայությունը,
- տեխնոլոգիայի մակարդակը:

Որքան բարձր են այս ցուցանիշները, այնքան մեծ են տնտեսական աճի հեռանկարները:

Պահանջարկի գործոններից են ամբողջական պահանջարկը մեծացնող գործոնները.

- աշխատավարձը,
- պետության ֆիսկալ քաղաքականությունը,
- խնայողության սահմանային հակումը:

Առաջին գործոնը բնական ռեսուրսներն են:

Բավականաչափ հողային, հանքային, ջրային, անտառային և այլ ռեսուրսներ ունենալը, բնականաբար, նպաստում է երկրի տնտեսական զար-

---

գացմանը: Բայց սա միայն նրա ներուժն է, որը ինքնին չի երաշխավորում բարձր տնտեսական աճ: Որպեսզի համոզվենք, որ ասվածը ճիշտ է, բավական է համեմատել արագ թափով զարգացող ճապոնիան (դրա սահմանափակ բնական ռեսուրսներով) հարուստ Ռուսաստանի հետ, որը շարունակաբար հետ է մնում առաջավոր երկրներից: Նշանակում է, որ կարևոր են ոչ միայն բնական ռեսուրսների առատությունը և բարձր որակը, այլև այն, թե ինչ չափով ռացիոնալ և արդյունավետ են դրանք օգտագործվում մարդկանց կողմից: Հին ժամանակներում, դեռևս 19-րդ դարում Բոկլը նշել է. «Հարուստ երկրներ են համարվել այն երկրները, որոնց բնությունը եղել է առավել հարուստ, այժմ հարուստ են համարվում այն երկրները, որտեղ մարդն առավել գործունյա է»:

Ահա ինչու այսօր առանցքային դեր են խաղում աշխատանքային ռեսուրսները կամ «մարդկային կապիտալը»: Դրանք բազմակողմանիորեն են ազդում տնտեսության աճի վրա՝ զբաղվածության մակարդակի, կրթության որակի և աշխատուժի մասնագիտական պատրաստության, դրանց արդյունավետ կիրառման, աշխատողների ջանասիրության, ճշտապահության, պատասխանատվության և նրանց աշխատանքի արտադրողականության մակարդակի միջոցով:

Հատուկ առանձնացնենք **գիտելիքի** գործոնը: «Գիտելիքներն առաջընթացի վառելանյութն են» (Տոֆֆլեր), այսինքն՝ տնտեսական աճի գլխավոր շարժիչ ուժերից մեկը: Նոր նյութերի, մեքենաների, տեխնոլոգիաների հայտնագործումը, կատարելագործումը, մշակումները, արտադրության կազմակերպման և ղեկավարման առաջավոր ձևերի ներգրավումը գիտատեխնիկական մակարդակի արգասիք են:

Տնտեսության մեջ գիտելիքներ ստեղծում և կիրառում են բարձր որակավորում ունեցող մասնագետները, գիտնականները, փորձագետները, մենեջերները, տեխնոլոգները և ուրիշներ: Նրանք ներկայացնում են հասարակության ինտելեկտուալ ընտրանին: Այդ է պատճառը, որ շրջահայաց պետությունները վաղուց գիտակցելով, որ խելքը ավելի կարևոր է, քան մկանները, համառորեն զարգացնում են կրթության, գիտության, տեխնիկայի ոլորտները՝ իրենց ստեղծագործական ուժը զարգացնելու հետ մեկտեղ՝ իրենց կողմը գրավել ողջ աշխարհի ինտելեկտուալներին: 20-րդ դարում Արևմուտքում ինտելեկտուալների հետ կապված էին շատ հայտնի, այսպես կոչված՝ տեխնոկրատական տեսությունները, որոնց էությունն այն է, որ սոցիալական կյանքում հասարակության մեջ գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիայի և հենց բարիքների արտադրության դերի բարձրացման պայմաններում էլ ավելի մեծ իշխանություն էին ձեռք բերում տեխնոկրատները:

Չորրորդ գործոնը հիմնական կապիտալն է, այսինքն՝ հասարակության արտադրական կարողությունները: Տնտեսական աճի համար կարևոր են

---

ներդրումների կանոնավոր ավելացումը, կապիտալի կուտակումը և վերականգնումը, ակտիվ ֆոնդերի բաժնի բարձրացումը, ժամանակակից առավել արտադրողական տեխնիկայի կիրառումը: Երբ տնտեսության մեջ գերակշռում են հնացած ֆոնդերը, ապա դրանցից դժվար է սպասել բարձր հատույց և կայուն աճ:

Դիմամիկ զարգացման հաջորդ, ոչ պակաս կարևոր գործոն է տնտեսության կառուցվածքը: Այն պետք է լինի արդյունավետ, առաջադիմական, տնտեսական ոլորտների ընտրության և ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխմամբ, պետք է ընդունակ լինի արագ արձագանքել ժամանակի մարտահրավերներին և մարդկանց պահանջմունքների փոփոխությանը:

Օրինակ, ժամանակակից ինտենսիվ տնտեսությանը բնորոշ են այնպիսի կառուցվածքային տեղաշարժեր, ինչպիսիք են՝ ողջ ժողովրդական տնտեսության արդիականացումը որոշող գիտատարողունակ ճյուղերի առաջնային զարգացումը, էներգիայի և հումքի արտադրության դանդաղեցումը, որը կապված է դրանց մշակման գործընթացի կատարելագործման, ինչպես նաև առավել արդյունավետ և խնայողաբար օգտագործման հետ, աշխատանքային ռեսուրսների վերաբաշխումը բուռն բարգավաճող ծառայությունների ոլորտի օգտին (նյութական արտադրության մեջ զբաղվածության կրճատման հաշվին դրա էֆեկտիվության բարձրացման շնորհիվ):

Կառուցվածքային տեղաշարժերում (ինչպես ամեն ինչում) կարևոր է ծայրահեղության մեջ չընկնել՝ թույլատրելով մասնավորապես, «հոլանդական հիվանդությունը»: Ինչպե՞ս այն հասկանալ: «Հոլանդական հիվանդությունը» տնտեսության մեջ այնպիսի իրավիճակ է, որի դեպքում այս կամ այն բարձր եկամտաբեր և բուռն ծաղկող նոր ճյուղն իրեն է ձգում ռեսուրսները՝ դրանով իսկ թուլացնելով տնտեսության մյուս ճյուղերին: 1970 թթ. նման իրավիճակ ստեղծվեց Նիդեռլանդներում, երբ հյուսիս-ծովային գազի արդյունահանման արագ ընդլայնումն արդյունաբերության ազգային ճյուղերում առաջացրեց արտադրանքի արտադրության և արտահանման կրճատում:

Արտադրության վրա մեծ ազդեցություն է ցուցաբերում ամբողջական պահանջարկը: Թույլ պահանջարկի դեպքում ձեռնարկատերերը շահագրգռված չեն ընդլայնելու իրենց արտադրությունը: Այդ պատճառով ամբողջական պահանջարկի բարձր մակարդակը խթանում է տնտեսական աճը, և հակառակը:

Կարևոր գործոն է նաև տնտեսական համակարգերի տեսակը: Շատ երկրների պատմական փորձն ակնհայտորեն ցույց է տալիս, որ շուկայական համակարգերն ավելի արդյունավետ են, քան կենտրոնացված տնտեսական

---

համակարգերը: Այդ պատճառով այն ապահովում է նաև ավելի բարձր տնտեսական աճ:

Սոցիալ-քաղաքական գործոնները կազմում են վերջին խումբը: Տնտեսության հաստատուն աճին նպաստում են բիզնեսը խրախուսող օրենքների պահպանումը, իրավապահ մարմինների և բյուրոկրատների ամենաթողութայան, կոռուպցիայի և գողության նկատմամբ հասարակության անհանդուրժողականությունը, մրցակցության հանդեպ մարդկանց առողջ հարաբերությունը, կործանարար գործադուլներից խուսափումը, ողջամիտ վերաբերմունքը երկրում խաղաղության, դեմոկրատիայի, քաղաքացիների ազատության և իրավունքների երաշխավորվածության նկատմամբ:

Ռեսուրսների բաշխումը պետք է իրականացվի լավագույն ձևով, ինչը կնպաստի տնտեսական աճի բարձրացմանը:

Աճի գործոններով պայմանավորված առաջարկվում են տնտեսական աճի մոդելներ: Դրանք երկուսն են՝ բազմագործոնային և երկգործոնային:

Բազմագործոնային մոդելը ենթադրում է նշված բոլոր գործոնների ազդեցությունն աճի վրա: Այս բոլոր գործոնների փոխներգործության մասին ընդհանուր պատկերացում է տալիս արտադրական հնարավորությունների կորը: Այն ցույց է տալիս, թե ինչ ձևով է արտադրության գործոնների տարբեր համակցությունը ազդում թողարկվող արտադրանքի ծավալի վրա:

Երկգործոնային մոդելն ընդգրկում է միայն աշխատանքը և կապիտալը: Ամերիկացի տնտեսագետ Դենիսոնի տվյալներով՝ արտադրանքի ծավալի աճի 2/3-ն ապահովվում է աշխատանքի արտադրողականության (կապիտալի) աճի, իսկ 1/3-ը՝ աշխատանքային ծախսումների (աշխատանք):

Հնարավոր է երկգործոնային մոդելի կառուցման 2 տարբերակ. առաջինում հաշվի չի առնվում ԳՏԱ-ն, իսկ երկրորդում այն հաշվի է առնվում: Եթե ԳՏԱ-ն բացակայում է, ապա կապիտալի աստիճանական կուտակումը կհանգեցնի արտադրողականության և տնտեսական աճի նվազման: ԳՏԱ պայմաններում կապիտալը և աշխատանքն ավելի արդյունավետ են և հանգեցնում են ինվեստիցիաների աճին:

Ներդրումները կարող են տարբեր ձևով ազդել տնտեսական աճի վրա: Մի դեպքում դրանք հանգեցնում են աշխատանքային ծախսումների կրճատման և կապիտալ ծախսումների աճին: Մեկ այլ դեպքում կրճատում են կապիտալի կիրառությունը ավելի մեծ չափով, քան աշխատանքի կիրառությունը: Սրանք կոչվում են կապիտալախնայող ինվեստիցիաներ: Աշխատանքի և կապիտալի հավասար խնայողության դեպքում ինվեստիցիաները կոչվում են չեզոք (նեյտրալ):

---

## Համառոտ եզրակացություններ

1. Տնտեսական աճը կարելի է սահմանել որպես ՀՆԱ-ի (կամ ՀԱԱ-ի) իրական ծավալի փոփոխության արագությունը՝ որոշակի ժամանակահատվածում:

2. Տարբերում են տնտեսական աճի 3 տեսակ՝ էքստենսիվ, ինտենսիվ և խառը (իրական): Էքստենսիվ աճն ազգային արդյունքի աճն է՝ ի հաշիվ արտադրության լրացուցիչ գործոնների ներգրավման: Ինտենսիվ աճը ազգային արդյունքի աճն է՝ ի հաշիվ տեխնիկայի և տեխնոլոգիայի կատարելագործման: Խառը (իրական) տնտեսական աճը արտադրական հզորությունների աճն է՝ ի հաշիվ արտադրության գործոնների քանակի փոփոխության և տեխնիկայի ու տեխնոլոգիայի կատարելագործման:

3. Տնտեսական աճը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնցից կարևորներն են առաջարկի, պահանջարկի և բաշխման գործոնները:

4. Աճի գործոններով պայմանավորված առաջարկվում են տնտեսական աճի 2 մոդելներ՝ բազմագործոնային և երկգործոնային:

### ***Ինքնաստուգման հարցեր***

- 1. Ի՞նչ է տնտեսական աճը: Ինչպե՞ս է այն հաշվարկվում:*
- 2. Տնտեսական աճի ի՞նչ տեսակներ կան:*
- 3. Որո՞նք են տնտեսական աճի գործոնները:*
- 4. Որո՞նք են տնտեսական աճի առաջարկի գործոնները:*
- 5. Որո՞նք են տնտեսական աճի պահանջարկի գործոնները:*
- 6. Որո՞նք են տնտեսական աճի մոդելները:*

---

## ԹԵՄԱ 18. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ներկայացնել ֆինանսական և բյուջետային համակարգերը:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

- ա. ներկայացնել ֆինանսական համակարգի էությունը և տարրերը,
- բ. մեկնաբանել հարկերի տնտեսագիտական էությունը,
- գ. սահմանել հարկային համակարգի տարրերը և հարկի վճարման եղանակները,
- դ. ներկայացնել հարկերի տեսակները,
- ե. բացատրել, թե ինչպես են ձևավորվում և ծախսվում պետական բյուջեի եկամուտները,
- զ. բացատրել, թե ինչպես են դասակարգվում պետական բյուջեի ծախսերը,
- է. ներկայացնել պետական պարտքի էությունը և տեսակները:

### Հարց 1. Ֆինանսական համակարգի էությունը և կառուցվածքը

Պրամական միջոցների օգտագործման հետ կապված հարաբերությունները՝ պետության, իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև, ու դրա իրականացմանն անհրաժեշտ համապատասխան հաստատությունները, վերցրած մեկ ամբողջության մեջ, կազմում են ֆինանսական համակարգը: Ֆինանսական համակարգի կողմից իրականացվող քաղաքականությունը կոչվում է ֆինանսական քաղաքականություն:

Ներկայումս ՀՀ պետական ֆինանսական քաղաքականությունը հիմնականում ուղղված է տնտեսության կայունության ապահովմանը, պետական բյուջեի պակասուրդի կրճատմանը և տնտեսության աճի նախադրյալների ստեղծմանը:

Ֆինանսները կատարում են մի շարք գործառույթներ.

1. **կուտակման**, որը դրամական միջոցների հավաքագրումը, կուտակումը և պետության գոյության համար նյութական բազայի ստեղծումն է,
2. **կարգավորվող**, որը խթանում է տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը և կարգավորում հասարակական արտադրությունը,
3. **բաշխման**՝ ձևավորված դրամական միջոցները և դրանց օգտագործումը տեղի է ունենում պետական բյուջեի և սոցիալական ապահովագրական ֆոնդի բաշխման միջոցով,
4. **վերահսկիչ**, որն իրականացնում է հարկերի հավաքագրման և նպատակային օգտագործման ճշտության ապահովում:

---

Ֆինանսական հարաբերությունների սուբյեկտներն են՝ պետությունը, ֆիրմաները, տարբեր միավորումները, հիմնադրամները, հասարակական կազմակերպությունները և անհատ քաղաքացիները:

Շուկայական տնտեսության պայմաններում երկրներում ֆինանսական համակարգը բաղկացած է հետևյալ օղակներից.

1. պետական բյուջե,
2. արտաբյուջետային ֆոնդեր,
3. պետական վարկ,
4. ֆինանսական միջնորդների ֆինանսներ,
5. կազմակերպությունների (ձեռնարկությունների) ֆինանսներ,
6. տնային տնտեսությունների ֆինանսներ:

Առաջին երեքը ներկայացնում են կենտրոնացված ֆինանսները: Դրանց ռեսուրսներն ուղղվում են մակրոտնտեսական բնույթի խնդիրների, մասնավորապես՝ տնտեսության կայունացմանն ու զարգացմանը, ինչպես նաև սոցիալական խնդիրների լուծմանը:

Կազմակերպությունների (ձեռնարկությունների) ֆինանսները, ինչպես նաև ապահովագրական ֆոնդերը, իրենցից ներկայացնում են ապակենտրոնացված ֆինանսներ և օգտագործվում են միկրոտնտեսական մակարդակում տնտեսության զարգացման, կարգավորման ու սոցիալական խնդիրների լուծման նպատակով:

## **Չարդ 2. Պետական բյուջեի էությունը և կառուցվածքը. պետական պարտք**

Պետական բյուջեն պետական ֆինանսների կարևոր օղակն է: Դրա օգնությամբ իրականացվում է ՀԱԱ-ի բաշխումն ու վերաբաշխումը ոլորտների և ճյուղերի միջև:

Բյուջեն եկամուտների և ծախսերի հաշվեկշիռն է:

Յուրաքանչյուր տարի երկրի կառավարության կողմից կազմված բյուջեի նախագիծը քննարկվում է երկրի բարձրագույն օրենսդիր մարմնում (ՀՀ-ում՝ Ազգային ժողովում), որի հաստատումից ու ընդունումից հետո ստանում է օրենքի ուժ:

Պետական բյուջեն՝ որպես պետության ֆինանսական պլան, բաղկացած է եկամտային և ծախսային գլխավոր մասերից, որոնք իրենց հերթին կազմված են բազմաթիվ ու բազմաբնույթ տարբեր նշանակության հոդվածներից: Ջարգացած Արևմտյան Եվրոպայի երկրներում բյուջետային եկամուտների կազմն ու կառուցվածքն ունեն համարյա միևնույն տեսքը:

Եկամուտների կառուցվածքում հարկերը կազմում են ընդհանուր եկամուտների 75-78 տոկոսը, սեփականության պետական հատվածից ստաց-

վող հարկային մուտքերը՝ 5-8 տոկոսը, արտաբյուջետային ֆոնդերից ստացվող մուծումները՝ 10-12 տոկոսը:

Այդ երկրներում պետական բյուջեի ծախսային մասի ամենամեծ հոդվածն առողջապահությանը, կրթությանը, սոցիալական նպատակներին ուղղվող միջոցներն են, ինչպես նաև տեղական բյուջեներին տրվող սուբսիդիաները, որոնց ընդհանուր բաժինը տատանվում է 40-50 տոկոսի սահմաններում:

ՀՀ պետական բյուջեն, ըստ «Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, կկազմի՝

	Գումարը (հազար դրամներով)
1. Եկամուտների գծով	1,031,586,642.8
2. Ծախսերի գծով	1,151,375,837.6
3. Դեֆիցիտը (պակասուրդը)	119,789,194.8

Պետական բյուջեի եկամուտները կունենան հետևյալ տեսքը.

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	Գումարը (հազար դրամներով)
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1,031,586,642.8</b>
այդ թվում՝	
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	992,903,260.3
Պաշտոնական դրամաշնորհներ	16,413,399.5
Այլ եկամուտներ	22,269,983.0

Բյուջեի ծախսերը բազմազան են, ինչը պայմանավորված է տնտեսական և սոցիալական կյանքում պետության ակտիվ դերով և ընդհանրապես պետության բնույթով ու գործառույթներով:

Պետական բյուջեի միջոցով ֆինանսավորվում են պետական նշանակության ծրագրերն ու ծախսերը, որոնք 2013թ. կունենան այսպիսի պատկեր.

*ՀՀ պետական բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման խմբերի*

Բաժին		Գումարը (հազար դրամներով)
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	<b>1,151,375,837.6</b>
	այդ թվում	
01	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	207,897,696.6
02	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	184,601,073.8
03	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	72,244,442.2
04	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	132,077,424.0
05	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	5,353,765.8
06	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	24,946,136.9
07	ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ	70,235,440.1
08	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	17,964,991.6
09	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	108,254,783.2
10	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	303,156,639.9
11	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՅՈՒՍԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	24,643,443.5

**2013թ. պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանը կուղղվեն հետևյալ միջոցները՝**

<b>ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ</b>	<b>Գումարը (հազար դրամներով)</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>119,789,194.8</b>
այդ թվում՝	
Ա. Ներքին աղբյուրներ	55,154,745.7
Բ. Արտաքին աղբյուրներ	64,634,449.1

Ըստ «Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ ԿԲ - ն, դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումներ ընդունելիս պետք է առաջնորդվի 12 - ամսյա գնաճի 4 +/- 1.5 տոկոս թիրախով:

Պետական բյուջեի եկամտային մասի կատարումը ցանկացած երկրի տնտեսության կայունության և զարգացման ապահովման գրավականն է: Հակառակ դեպքում առաջանում է բյուջեի պակասուրդ, այսինքն՝ ծախսերը գերազանցում են եկամուտները:

Բյուջեի պակասուրդի ծածկումը պարտադիր պայման է յուրաքանչյուր երկրի համար: Գործնականում պակասուրդը ծածկվում է պետական արժեթղթերի վաճառքի ճանապարհով, ինչը հանգեցնում է պետության ներքին պարտքի առաջացման՝ արտաքին փոխառությունների կամ էլ թղթադրամի էմիսիայի միջոցով: Հայաստանի Հանրապետությունում բյուջեի պակասուրդի ծածկման համար օգտագործվում են պետական կարճաժամկետ պարտատոմսեր, պետական սեփականության մասնավորեցումից ստացված միջոցները և արտաքին փոխատվությունները:

Բյուջեի պակասուրդի պատճառներն են՝

1. տնտեսության ճգնաժամի արդյունքում եկամուտների նվազումը,
2. հարկերի նվազումը,
3. բյուջետային ծախսերի մեծացումը,
4. ֆինանսատնտեսական ոչ ճիշտ քաղաքականությունը:

Բյուջեի պակասուրդի կրճատման ուղիներն են՝

1. կոնվերսիան, այսինքն՝ պետական պարտքի ծախսերը կրճատելու նպատակով անցյալում թողարկված պետական փոխառության պայմանների փոփոխության, տոկոսի իջեցման կամ մարման ժամկետի փոփոխություն,

2. անցում ֆինանսավորումից դեպի վարկավորում,
3. դրտացիաների աստիճանական վերացում,
4. ծախսերի կրճատում,
5. հարկային համակարգի բարեփոխումներ,
6. տեղական բյուջեի դերի մեծացում:

Գոյություն ունի բյուջեի պակասուրդի ծածկման 3 ավանդական միջոց՝

1. պետական պարտատոմսերի թողարկում,
2. հարկային բեռի մեծացում,
3. փողի էմիսիա:

Պետական բյուջեի դեֆիցիտը ծածկելու համար հիմնական աղբյուր են համարվում պետական կարճաժամկետ փոխառությունները, որոնց միջոցով պետությունը հավաքագրում է բանկային համակարգում, ֆիրմաներում և բնակչության մոտ եղած ազատ դրամական միջոցները, և այդ

---

դեպքում պետությունը հանդիսանում է որպես վարկատու շուկայում և դրանով ազդում է այդ շուկայում առաջարկի և պահանջարկի հարաբերակցության վրա: Դա կարող է առաջ բերել տոկոսադրույքի բարձրացում, ինչն էլ իր հերթին վատթարացնում է կապիտալ ներդրումների ընդհանուր վիճակը, և տեղի է ունենում ներդրողների ինչ-որ մասի յուրատեսակ արտանդում, որը տնտեսագիտության մեջ ստացել է *«արտամղման էֆեկտ»* անունը, ինչը նվազեցնում է ֆիսկալ քաղաքականության խթանող դերը:

Անհրաժեշտ է նշել, որ արտամղման էֆեկտը տեղի է ունենում միայն կառուցվածքային դեֆիցիտի դեպքում: Պարբերաշրջանային դեֆիցիտի ժամանակ այդ էֆեկտը չի գործում, քանի որ տնտեսական անկման պայմաններում փողի նկատմամբ պահանջարկը նվազում է, ինչը բերում է տոկոսադրույքների իջեցմանը: Այնքանով, որքանով կենտրոնական բանկի և ֆինանսական շուկաների ռեակցիան մեծ կլինի վարկերի «խստացմանը», այդ չափով էլ բարձր կլինի նշված էֆեկտը: Ամբողջությամբ արտամղման էֆեկտի գործողության մասշտաբները և ինտենսիվությունը՝ մասնավոր ներդրողներին շուկայից դուրս մղելը, պայմանավորված է մի շարք գործոններով.

- ✓ խնայողությունների մեծություն,
- ✓ տնտեսավարող սուբյեկտների ինֆլյացիոն սպասումներ,
- ✓ կառավարության կողմից անցկացվող դրամավարկային քաղաքականության բնույթ,
- ✓ արժուքային կուրսերի փոփոխման դինամիկա և այլն:

Ահա ինչու բյուջետային դեֆիցիտի ազդեցությունն ինվեստիցիոն (ներդրումային) ակտիվության վրա, տնտեսության մեջ, չի կարող միանշանակ կանխատեսելի լինել:

Բյուջեի պակասուրդի աճը հանգեցնում է պետական պարտքի մեծացմանը:

Պետական պարտքը որոշակի ժամանակահատվածում գոյացած բյուջետային պակասուրդների հանրագումարն է:

Պետական պարտքը կարող է լինել արտաքին և ներքին:

Արտաքին պետական պարտքը պետության պարտքն է այլ պետություններին և միջազգային ֆինանսական կազմակերպություններին: Այն բացասական նշանակություն ունի, քանի որ բեռ է հաջորդ սերունդների համար:

Ներքին պարտքը պետության պարտքն է տվյալ երկրի քաղաքացիներին:

Պետական պարտքն ունի բացասական հետևանքներ: Դրանք են՝

1. Ներքին պարտքի մարումը տոկոսների վճարման ճանապարհով, որը մեծացնում է եկամուտների անհավասարաչափ բաշխումը:

2. Հարկերի բարձրացումը տոկոսներ վճարելու համար կարող է խոչընդոտել տնտեսության զարգացումը:

3. Տնտեսության վրա բացասաբար է ազդում այն վիճակը, երբ պետությունը կապիտալի շուկայում վարկ է վերցնում տոկոսներ վճարելու համար: Այս դեպքում կրճատվում են կապիտալ ներդրումները:

4. Պետական պարտքի առկայությունը լարվածություն է ստեղծում երկրի ներսում, անվստահություն է առաջացնում պետության նկատմամբ:

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների՝ ՀՀ պետական պարտքը (ներքին և արտաքին) 31.12.2012թ. դրությամբ կազմել է 1763.195 մլրդ. դրամ, որից՝ ներքին պարտքը՝ 254.676 մլրդ. դրամ, իսկ արտաքինը՝ 1508.519 մլրդ. դրամ, կամ 3737.844 մլն. ԱՄՆ դոլար:

ՀՀ ներքին պետական պարտքի կառուցվածքը ներկայացվում է ստորև.

	<i>մլն դրամ</i>	
	31.12.2011թ.	31.12.2012թ.
<b>Ներքին պետական պարտք, ընդամենը</b>	<b>216 208.8</b>	<b>254 676.1</b>
<i>այդ թվում՝</i>		
Պետական կարճաժամկետ պարտատուներ	32 951.0	37 426.6
Միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատուներ	111 200.6	128 821.3
Երկարաժամկետ արժեկտրոնային պարտատուներ	65 046.0	82 714.7
Խնայողական պարտատուներ	838.9	870.6
Ներգրավված վարկի ծավալը	6 172.3	4 843.0

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ունի հետևյալ տեսքը.

**ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ վարկառուների**

	31.12.2011թ.		31.12.2012թ.		2012թ.դեկտեմբերի 30-ի դրությամբ տվյալները 2011թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ տվյալների նկատմամբ, %
	մլն ԱՄՆ դոլար	ընդամենի նկատմամբ, %	մլն ԱՄՆ դոլար	ընդամենի նկատմամբ, %	
<b>Արտաքին պետական պարտք, ընդամենը</b>	<b>3 568.197</b>	<b>100.0</b>	<b>3 737.844</b>	<b>100.0</b>	<b>104.8</b>
<i>այդ թվում՝</i>					
<b>ՀՀ կառավարության պարտք</b>	<b>2 950.865</b>	<b>82.7</b>	<b>3 143.229</b>	<b>84.1</b>	<b>106.5</b>
բազմակողմանի վարկային ծրագրեր	1 918.579	53.8	2 125.803	56.9	110.8
երկկողմանի վարկային ծրագրեր	1 032.286	28.9	1 017.426	27.2	98.6
<b>ՀՀ կենտրոնական բանկի պարտք</b>	<b>617.331</b>	<b>17.3</b>	<b>594.614</b>	<b>15.9</b>	<b>96.3</b>
բազմակողմանի վարկային ծրագրեր	556.845	15.6	512.969	13.7	92.1
երկկողմանի վարկային ծրագրեր	60.487	1.7	81.645	2.2	135.0

**ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների**

	Արտաքին պետական պարտք, ընդամենը	31.12.2011թ.		31.12.2012թ.		2012թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ տվյալները 2011թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ տվյալների նկատմամբ, %
		մլն ԱՄՆ դոլար	ընդամենի նկատմամբ, %	մլն ԱՄՆ դոլար	ընդամենի նկատմամբ, %	
		3 568.197	100.0	3 737.844	100.0	104.8
<b>1</b>	<b>Բազմակողմանի վարկային ծրագրեր</b>	<b>2 475.424</b>	<b>69.4</b>	<b>2 638.773</b>	<b>70.6</b>	<b>106.6</b>
1.1	Համաշխարհային բանկ	1 336.852	37.5	1 470.243	39.3	110.0
1.1.1	Զարգացման միջազգային ընկերակցություն	1 186.241	33.2	1 234.375	33.0	104.1
1.1.2	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ	150.611	4.2	235.868	6.3	156.6
1.2	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ	13.651	0.4	14.259	0.4	104.5
1.3	Եվրոպական ներդրումային բանկ	3.878	0.1	6.594	0.2	170.0
1.4	Գլոբ. Զարգացման միջազգային հիմնադրամ	66.309	1.9	67.268	1.8	101.4
1.5	Նալթ արդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) միջազգային զարգացման հիմնադրամ	28.333	0.8	30.681	0.8	108.3
1.6	Ասիական զարգացման բանկ	165.329	4.6	187.912	5.0	113.7
1.7	Արժույթի միջազգային հիմնադրամ	827.460	23.2	776.092	20.8	93.8
1.8	Եվրամիություն	33.613	0.9	85.722	2.3	255.0
<b>2</b>	<b>Երկկողմանի վարկային ծրագրեր</b>	<b>1 092.773</b>	<b>30.6</b>	<b>1 099.071</b>	<b>29.4</b>	<b>100.6</b>
2.1	ԱՄՆ	31.138	0.9	29.251	0.8	93.9
2.2	Գերմանիա	155.048	4.3	193.137	5.2	124.6
2.3	Ֆրանսիա	4.088	0.1	4.014	0.1	98.2
2.4	Ճապոնիա	397.207	11.1	355.920	9.5	89.6
2.5	Ռուսաստանի Դաշնություն	500.000	14.0	500.000	13.4	100.0
2.6	Լեռն-Դուբի օտոստան	3.075	0.1	3.895	0.1	126.7
	հիմնադրամ					
2.7	ԿԲՄ բանկ	2.217	0.1	4.164	0.1	187.8
2.8	Ավստրիա (Բայֆազն բանկ)	-	-	8.691	0.2	-

**Չափ 3. Հարկերի սոցիալ-տնտեսական էությունը. Հարկադրման սկզբունքներն ու ձևերը. Լաֆֆերի կորը**

Տնտեսության դինամիկ զարգացման վրա էական ազդեցություն են թողնում ոչ միայն պետական բյուջեի ծախսային, այլև եկամտային մեխանիզմները: Տարբեր մակարդակների բյուջեների եկամուտների հիմնական աղբյուրը հարկերն են: Հենց դրանով էլ պայմանավորված է պետության առաջնային շահագրգռվածությունը՝ ձևավորել և իրականացնել համապատասխան հարկային քաղաքականություն և համակարգ:

Ըստ «Հարկերի մասին ՀՀ օրենքի» 3-րդ հոդվածի՝ «Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկներից, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերից, ներկայացուցչություններ»

---

րից), հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում»:

Այս ձևակերպման մեջ տրված է հարկի թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ իրավաբանական էությունը:

Սոցիալ-տնտեսական էությունը այն է, որ հարկը տնտեսավարող սուբյեկտների եկամուտների որոշակի մասի յուրացումն է պետության և նրա տեղական մարմինների կողմից՝ համապետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով: Իրավաբանական էությունն այն է, որ դա պարտադիր, անհատույց վճար է՝ նախատեսված կարգով, չափերով և ժամկետներով:

Ցանկացած երկիր չի կարող առանց հարկերի գանձման կատարել պետության առջև դրված տնտեսական, սոցիալական, քաղաքական և հատկապես պաշտպանական գործառույթները: Միաժամանակ, հարկերը կատարում են նոր ստեղծված արժեքների, եկամուտների բաշխումը, մյուս կողմից էլ խթանում տնտեսության այս կամ այն ճյուղի զարգացումը: Պետության կողմից կիրառվող հարկային քաղաքականությունը առաջին հերթին պետք է խթանի արտադրության զարգացումը, նպաստի դրա արդյունավետության բարձրացմանը, բնակչության կենսամակարդակի և սոցիալական դրության բարելավմանը:

Դեռևս իր ժամանակին Ադամ Սմիթը անդրադարձել է հարկային ճիշտ քաղաքականության իրականացման հարցին և նշել հետևյալ սկզբունքները.

1. Հարկի վճարումն անխուսափելի է, հետևաբար անհրաժեշտ է որոշել դրա ճիշտ չափը, թույլ չտալով քմահաճ վերաբերմունք:

2. Պետության հպատակը պետության պահպանման համար պարտավոր է հարկ վճարել իր ստացած եկամուտներից, քանի որ օգտվում է պետության հովանավորությունից և պաշտպանությունից:

3. Յուրաքանչյուր հարկ պետք է գանձվի այն ժամանակ և այն եղանակով, որը հարմար է հարկ վճարողին:

4. Յուրաքանչյուր հարկ պետք է լինի չափավոր, որպեսզի ծանր բեռ չլինի հարկատուի համար:

Տնտեսական կյանքում հարկերը կատարում են հետևյալ գործառույթները.

1. պետության ֆինսկալ գործառույթը, այսինքն՝ պետությունը հարկերից հավաքված միջոցների հաշվին իրականացնում է պետական ծախսերի ֆինանսավորումը:

2. սոցիալական գործառույթ, այսինքն՝ պետությունը ելնելով հարկատուի վճարունակությունից, որոշում է հարկի գումարի չափը և համապատասխան դրա՝ կիրառում է հարկադրման համամասնական կարգը,

3. պետական կարգավորման գործառույթ, որը հանդես է գալիս հետևյալ հիմնախնդիրներով՝

- ա) Հարկադրման համակարգի սահմանում և կարգավորում,
- բ) Հարկային դրույքների սահմանում և դիֆերենցում,
- գ) Հարկային արտոնությունների սահմանում:

Հարկային քաղաքականությունը պետք է լինի ճկուն, որպեսզի, ելնելով պետության ֆիսկալ գործառույթներից, հնարավոր առավելագույն չափով հարկային գումարներ հավաքագրի պետական բյուջե, իրականացնի հարկերի իջեցում տնտեսության խթանման նպատակով, որը հետագայում հնարավորություն կտա ընդլայնել հարկային բազան: Ահա թե ինչու այդ կապակցությամբ Ջ. Մ. Քեյնսը հուշել է հետևյալ պարզ միտքը, որ ճգնաժամերի ժամանակ հարկերը պետք է կրճատվեն, իսկ վերելքի ժամանակ՝ աճեն: Հետևաբար, հարկերը չպետք է դիտել որպես միայն եկամտի աղբյուր, այլև տնտեսական առաջընթացի և մարդկանց կենսամակարդակի բարձրացման գործոն:

Ցանկացած հարկային համակարգ պարտադիր պարունակում է հետևյալ տարրերը.

1. Ո՞վ է հանդիսանում հարկ վճարողը, այսինքն՝ հարկի սուբյեկտը (ձեռնարկություն, կազմակերպություն, միավորում, աշխատող, ժառանգորդ):

2. Ո՞րն է հարկադրման օբյեկտը (եկամուտ, ապրանք, ժառանգություն, ունեցվածք):

3. Ի՞նչ աղբյուրից է վճարվում հարկը (աշխատավարձ, շահույթ, եկամուտ, շահաբաժին և այլն):

4. Ի՞նչ միավորներ են ընդունվում հարկի ժամանակ (օր. 1 հա, 25 հազ. դրամ աշխատավարձ, 100 հազ. դրամ շահույթ և այլն):

5. Հարկադրույք, որով որոշվում է հարկման օբյեկտից գանձվող հարկի չափը:

Երկրների մեծ մասում գործնականում կիրառվում են հարկի վճարման 3 եղանակ՝

- 1. կադաստրային,
- 2. աղբյուրի մոտ,
- 3. ըստ դեկլարացիայի կամ հայտարարագրի:

Ըստ առաջինի՝ պետք է կազմել շրջանների կադաստրային քարտեզներ, որոնցում արտահայտվի հողի արգավանդությունը, հանքահորերի հարստության աստիճանը: «Աղբյուրի» մոտ հարկը գանձվում է նախքան հարկատուի կողմից եկամտի ստացումը: Այդ եղանակը կիրառվում է ձեռնարկություններում, հիմնարկություններում աշխատողի աշխատավարձից եկամտահարկի գանձման ժամանակ (հաշվապահությունը մինչև աշ-

---

խատավարձի վճարումը դրանից հանում է հարկահասույթը և փոխան-  
ցում պետական բյուջե): Երրորդի դեպքում հարկատուն լրացնում է  
սպասվելիք տարեկան համախառն եկամտի չափի մասին հայտարարա-  
գիր և այն ներկայացնում հարկային տեսչություն:

Հարկերը լինում են ուղղակի և անուղղակի: Ուղղակի հարկերը գանձվում  
են հարկատուի եկամուտներից և ունեցվածքից: Դրա աղբյուրներն են աշ-  
խատավարձը, շահույթը, տոկոսը, ռենտան և վարկատուի ունեցվածքը:

Անուղղակի հարկերը սահմանվում են ապրանքների գների և ծառայու-  
թյունների սակագների վրա՝ որպես հավելում:

Հարկի դրույթը հարկի կարևոր տարրն է, որը որոշվում է հարկման  
օբյեկտի միավորից գանձվող հարկի մեծությամբ: Տարբերվում են սահ-  
մանային, միջին, զրոյական և արտոնյալ հարկադրույթներ:

Հարկի սահմանային դրույթաչափը եկամտի աճից գանձվող լրացուցիչ  
հարկի մեծությունն է:

Միջին հարկադրույթն ընդհանուր հարկաչափի հարաբերությունն է  
հարկադրվող եկամտի մեծությանը:

Հարկային արտոնությունները հարկադրույթների իջեցումն է առանձին  
ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ համար՝ կախված նրանց  
արտադրության ոլորտից, բնույթից և այլն:

Հարկադրույթի և եկամտի միջև եղած հարաբերակցության հատկանի-  
շից ելնելով տարբերում են՝

– պրոգրեսիվ հարկ, որի դեպքում հարկի միջին դրույթը մեծանում է  
եկամտի աճին զուգընթաց,

– ռեգրեսիվ հարկ, որի դեպքում միջին հարկադրույթը նվազում է եկա-  
մտի աճմանը զուգընթաց,

– համամասնական, որի դեպքում հարկի միջին դրույթը մնում է անփո-  
փոխ՝ անկախ եկամտի փոփոխությունից:

ՀՀ-ում սահմանված են հարկերի հետևյալ տեսակները՝

1. շահութահարկ,
2. եկամտային հարկ,
3. ակցիզային հարկ,
4. ավելացված արժեքի հարկ,
5. շրջանառության հարկ,
6. գույքահարկ,
7. հողի հարկ:

Գոյություն ունեն նաև մաքսային տուրք, պետական տուրք և հաստա-  
տագրված վճարներ: Մաքսային տուրքը գանձվում է ներմուծվող և ար-  
տահանվող ապրանքների արժեքից: Պետական տուրքը պետական բազ-  
մապիսի ծառայություններից օգտվելու համար է: Օր.՝ անձնագիր ստա-

նալու, մեքենան գրանցելու, իրավաբանական ծառայություններից օգտվելու և այլն: Հաստատագրված վճարները նախատեսված են, օր.՝ բնական պաշարների օգտագործման համար, որոնք նախապես որոշվում և ամրագրվում են պետության կողմից:

Ուղղակի հարկերն են՝

- եկամտային հարկը,
- շահութահարկը,
- հողի հարկը,
- գույքահարկը:


Անուղղակի հարկերն են՝

- ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ),
- ակցիզային հարկը,

Պետք է նշել, որ եկամտային հարկը գործում է 2013թ. հունվարի 1-ից, երբ ուժի մեջ մտավ 2010թ. ընդունված «եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը, որը փոխարինում է մինչ այդ գործող եկամտահարկին և պարտադիր սոցիալական ապահովության վճարներին:

Տնտեսագետների ուշադրության կենտրոնում է գտնվում այն հարցը, թե հարկադրույքը պետք է բա՞րձր լինի, թե՞ ցածր: Հարկային դրույքների և բյուջեի եկամուտների միջև գոյություն ունի հակադարձ կախվածություն, որը ուսումնասիրվել է ամերիկացի տնտեսագետ Արթուր Լաֆֆերը: Ըստ նրա՝ հարկային բարձր դրույքները կրճատում են ձեռնարկատերերի եկամուտները, զրկում նրանց կուտակումներ կատարելու և արտադրությունը ընդլայնելու հնարավորությունից:

Գրաֆիկորեն այն արտահայտվում է հետևյալ կերպ.



Գծանկար 30. Լաֆֆերի կորը

---

Հետևաբար բարձր դրույքները ստիպում են ձեռնարկատերերին կրճատել հարկման ենթակա օբյեկտների քանակը, զբաղվել սովորաբար տնտեսությամբ, որի պատճառով կրճատվում է բյուջե մտնող հարկերի գումարը:

Լաֆֆերի կորի համաձայն՝ հարկային եկամուտները N կետում (ավելի բարձր դրույքաչափի դեպքում) և K կետում (ավելի ցածր դրույքաչափի դեպքում) նույնն են:

Սակայն եթե N կետում հարկերի դրույքաչափը չի խթանում պահանջարկը, ապա K կետում, առկա հարկերի դրույքաչափերի դեպքում ստեղծվում են աշխատանքի, խնայողությունների և ներդրումների խթաններ՝ միևնույն ժամանակ նպաստելով արտադրության ընդլայնմանը և ՀՆԱ-ի աճին:

Լաֆֆերի կորը չի պատասխանում այն հարցին, թե հարկերի ո՞ր դրույքաչափերի դեպքում պետության հարկային եկամուտները կարող են առավելագույն լինել, քանի որ հարկերի այդ օպտիմալ դրույքաչափը տարբեր երկրների համար տարբեր է և կախված է մի շարք գործոններից՝ տվյալ երկրում վարվող հարկային քաղաքականությունից, տնտեսության պետական հատվածի չափերից ու կառուցվածքից և այլն:

### **Համառոտ եզրակացություններ**

1. Դրամական միջոցների օգտագործման հետ կապված հարաբերությունները՝ պետության, իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև և դրա իրականացման հետ անհրաժեշտ համապատասխան հաստատությունները, վերցրած մեկ ամբողջության մեջ, կազմում են ֆինանսական համակարգը: Ֆինանսական համակարգի կողմից իրականացվող քաղաքականությունը կոչվում է ֆինանսական քաղաքականություն:

2. Պետական բյուջեն պետական ֆինանսների կարևոր օղակն է: Բյուջեն եկամուտների և ծախսերի հաշվեկշիռն է:

3. Պետական բյուջեն՝ որպես պետության ֆինանսական պլան, բաղկացած է եկամտային և ծախսային գլխավոր մասերից, որոնք իրենց հերթին կազմված են բազմաթիվ ու բազմաբնույթ տարբեր նշանակության հոդվածներից:

4. Պետական պարտքը որոշակի ժամանակահատվածում գոյացած բյուջետային պակասուրդների հանրագումարն է: Պետական պարտքը կարող է լինել արտաքին և ներքին:

5. Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկներից, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերից, ներկա-

---

յացուցչություններից), հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում:

6. Հարկերը լինում են ուղղակի և անուղղակի: Ուղղակի հարկերը գանձվում են հարկատուի եկամուտներից և ունեցվածքից: Դրա աղբյուրներն են աշխատավարձը, շահույթը, տոկոսը, ռենտան և վարկատուի ունեցվածքը: Անուղղակի հարկերը սահմանվում են ապրանքների գների և ծառայությունների սակագների վրա՝ որպես հավելում:

***Ինքնաստուգման հարցեր***

- 1. Ի՞նչ է ֆինանսական համակարգը, և որո՞նք են դրա օղակները:*
- 2. Ի՞նչ է պետական բյուջեն:*
- 3. Ի՞նչ կառուցվածք ունի պետական բյուջեն:*
- 4. Ի՞նչ է պետական պարտքը:*
- 5. Ի՞նչ է հարկը:*
- 6. Հարկի ի՞նչ տեսակներ կան:*
- 7. Որո՞նք են հարկի վճարման եղանակները:*
- 8. Ի՞նչ է ցույց տալիս Լաֆֆերի կորը:*

## ԹԵՄԱ 19. ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ներկայացնել դրամավարկային համակարգը:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

- ա. ներկայացնել դրամաշրջանառության էությունը,
- բ. նկարագրել վարկային հարաբերությունների համակարգը,
- գ. ներկայացնել բանկային համակարգը,
- դ. ներկայացնել ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության իրականացման ուղղությունները,
- ե. ներկայացնել առևտրային բանկերի կողմից իրականացվող գործառնությունները:

### Հարց 1. Դրամական զանգվածը և դրա չափումը

Դրամական զանգվածը տնտեսության մեջ կանխիկ և անկանխիկ ձևերում գտնվող բոլոր դրամական միջոցների ամբողջությունն է, որոնք կատարում են վճարման, շրջանառության և կուտակման գործառնություններ:

Դրամական շուկայում, ինչպես ցանկացած այլ շուկայում, գոյություն ունի առաջարկ և պահանջարկ:

Փողի առաջարկ ասելով՝ հասկանում ենք շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածը, այսինքն՝ վճարամիջոցների ամբողջությունը:

Դրամական առաջարկի բնութագրման համար կիրառվում են դրամական ագրեգատներ՝  $M_1$ ,  $M_2$ ,  $M_3$  և  $L$ :

$M_1$ -ը ներառում է մետաղադրամը, թղթադրամը, ընթացիկ հաշիվներում գտնվող գումարները:

$M_2$  ագրեգատն ընդգրկում է  $M_1$ -ը և խնայդրամարկղներում գտնվող գումարներն ու ժանկետային ավանդները:

$M_3$  ագրեգատն ընդգրկում է  $M_2$ -ը և վարկային մասնագիտացված հաստատություններում գտնվող գումարներն ու հատուկ կուտակումները:

Գոյություն ունի նաև  $L$  ագրեգատ՝  $M_3$  գումարած արժեթղթեր,  $X$  ագրեգատ՝  $L$ ՝ գումարած արտարժույթ և այլն:

Դրամի առաջարկը հաշվարկվում է դրամական բազմարկչի միջոցով:

Դրամական բազմարկչի տնտեսագիտական բովանդակությունը առևտրային բանկերի կողմից ավելցուկային ռեզերվները որպես վարկային նոր ռեսուրսներ օգտագործելն է (monetary multiplier): Դրամական բազմարկչի գործակիցը որոշվում է նոր ավանդի և պարտադիր ռեզերվային նորմայի հարաբերությամբ:

Մակրոմակարդակում դրամական բազմարկիչը ցույց է տալիս, թե քանի անգամ կփոխվի դրամի զանգվածը դրամական բազայի փոփոխման դեպքում:

Դրամական բազմարկիչն օգտագործվում է դրամի առաջարկի կանխատեսման և դրամական զանգվածի կարգավորման համար: Այս գործընթացում կարևոր դերը պատկանում է կենտրոնական բանկին:

Դրամի գնողունակությունը ապրանքների և ծառայությունների այն զանգվածն է, որը կարելի է ձեռք բերել փողի միավորով: Փների մակարդակի բարձրացման դեպքում գնողունակությունը նվազում է, և հակառակը:

Դրամական շուկայի երկրորդ բաղադրամասը պահանջարկն է:

Գոյություն ունեն դրամի պահանջարկի վերլուծության տարբեր մոտեցումներ:

Մոնետարիզմը տնտեսագիտական հայեցակետ է, որը շրջանառության մեջ գտնվող դրամը համարում է մակրոտնտեսական վերլուծության հիմնական գործիք:

Մոնետարիզմի էությունը հանգում է երկու թեզի՝

1. տնտեսության մեջ դրամը կարևոր դեր է խաղում,
2. կենտրոնական բանկը կարող է ազդել դրամի առաջարկի վրա:

Մոնետարիզմը հիմնված է փողի քանակական տեսության վրա, որի արմատները գնում են XVII դ.:

Փողի քանակական տեսության շրջանակներում փողի պահանջարկը որոշվում էր Ի.Ֆիշերի բանաձևի միջոցով:

$$M*V=P*Q$$

որտեղ

M-շրջանառության մեջ փողի քանակն է,

V-փողի միավորի շրջանառության արագությունն է,

Q-հրացված ապրանքների ծավալն է,

P-ապրանքների և ծառայությունների գինն է:

Վերափոխելով հավասարումը՝ կստանանք՝

$$MD = \frac{P \times Q}{V}$$

որտեղ՝ MD-փողի պահանջարկն է:

Եթե ենթադրենք, որ բոլոր գործարքները հաշվի են առնված ՀԱԱ-ում, ապա կստանանք, որ  $P \times Q = ՀԱԱ$ :

Այստեղից՝  $MV = ՀԱԱ$ , հետևաբար  $MD = \frac{ՀԱԱ}{V}$

Փողի քանակական տեսության ժամանակակից մեկնաբանումը Ֆրիդմենի կողմից հաշվի է առնում ոչ միայն ամբողջ հասարակության պահան-

---

ջը դրամի նկատմամբ, այլև առանձին անհատի պահանջը, որը սահմանափակված է այդ անհատի մոտ եղած «ռեսուրսի պորտֆելով».

$MD = Pf(Rb, Re, p, h, y, u)$ ,

որտեղ՝

MD - փողի պահանջարկի մեծությունն է,

P - գների նակարդակն է,

Rb - անվանական տոկոսադրույքն է,

Re - բաժնետոմսերի կուրսն է,

p - տոկոսադրույքի փոփոխման տեմպն է,

h - մարդկային կապիտալի հարաբերությունն է հարստության այլ տեսակներին,

y - հարստության ընդհանուր ծավալն է,

u - ճաշակների և նախասիրությունների հնարավոր փոփոխությունն արտահայտող ցուցանիշ է:

ժամանակակից մոնետարիզմն ունի իր մրցակիցները՝ քեյնսականությունն ու նեոքեյնսականությունը:

Քեյնսականությունը փողի պահանջարկը փորձում է բացատրել ելնելով առանձին տնտեսական սուբյեկտի վարքագծից:

Քեյնսը առանձնացնում է տրանսակցիոն, սպեկուլյատիվ և նախազգուշական դրդապատճառները:

Կարևոր է նշել, որ սուբյեկտը միշտ չէ, որ կարողանում է ճիշտ որոշել, թե ինչ դրդապատճառներ են ընկած իր վարքագծի հիմքում:

Տրանսակցիոն պահանջարկը հիմնված է փողի՝ որպես վճարման միջոցի օգտագործման հարմարավետության վրա: Մարդիկ պահում են փողը գործարքներ (տրանսակցիաներ) կատարելու համար:

Նախազգուշական դրդապատճառն այն է, որ մարդիկ փողը պահում են չնախատեսված ծախսերը փակելու անհրաժեշտությունից ելնելով:

Սպեկուլյատիվ պահանջարկը պայմանավորված է ապագայում ֆինանսական ակտիվների շուկայական արժեքների կանխատեսման անհնարինությամբ:

Քեյնսը գտնում էր, որ փողի պահանջարկը կախված է անվանական ՀԱԱ-ից և տոկոսադրույքի նորմայից: Անվանական ՀԱԱ-ն ուղղակիորեն է ազդում փողի պահանջարկի վրա, իսկ տոկոսադրույքից փողի պահանջարկի կախվածությունը հակադարձ համեմատական է:

Մոնետարիզմի և քեյնսականության միջև առկա են հետևյալ հիմնական տարբերությունները.

Ի տարբերություն քեյնսականության, որը հիմնվում է պետության կարգավորիչ ֆունկցիայի վրա, մոնետարիստներն ավելի մոտ են դասական

---

դպրոցին և չեն հանդուրժում պետական միջամտությունը տնտեսական կյանքին:

Քեյնսականները փողին երկրորդական տեղ են հատկացնում: Մոնետարիստները գտնում են, որ հենց դրամաշրջանառությունն է որոշում արտադրության, զբաղվածության և գների մակարդակը:

Մոնետարիստները գտնում են, որ փողի շրջապտույտի արագությունը (V) կայուն է: Բայց եթե V-ն կայուն է, ապա ( $M \cdot V = P \cdot Q$ ) և ( $M \cdot V = \text{ՅԱԱ}$ )-ից հետևում է, որ փողի առաջարկի (M) և ՅԱԱ-ի միջև գոյություն ունի անմիջական կախվածություն:

Քեյնսականները գտնում են, որ փողի առաջարկի փոփոխությունը սկզբից հանգեցնում է տոկոսադրույքի փոփոխությանը, հետո՝ ինվեստիցիաների, և նոր՝ բազմարկչի միջոցով՝ ՅԱԱ-ի փոփոխությանը:

Մոնետարիստները գտնում են, որ պետությունը երկարաժամկետ քաղաքականության մեջ պետք է ապահովի դրամական զանգվածի անընդհատ աճ:

Քեյնսականները ենթադրում են, որ փողի առաջարկի մեծացումը հղի է ծանր հետևանքներով: Եթե դրամի առաջարկն աճում է, ապա պահանջարկը և տոկոսադրույքը կրճատվում են: Տոկոսադրույքը դադարում է արձագանքել փողի առաջարկին: Արդյունքում տնտեսությունն ընկնում է «լիկվիդային փակուղու» մեջ, և խախտվում է պատճառահետևանքային կապը ՅԱԱ-ի ծավալի և փողի քանակի միջև:

Այդ իսկ պատճառով քեյնսականները տնտեսության կայունացման հիմնական միջոց են համարում ֆիսկալ քաղաքականությունը:

Հարկ է նշել, որ և՛ մեկը, և՛ մյուսը աստիճանաբար հրաժարվում են իրենց ծայրահեղություններից, և ծագում է քեյնսական-նորդասական սինթեզը փողի տեսության մեջ, որը ներկայումս տնտեսագետների շրջանակներում գերիշխող տեղ է զբաղեցնում:

## **Չափ 2. Վարկի էությունը, գործառույթները և ձևերը**

Վարկը տնտեսական այնպիսի հարաբերություն է, որն առաջանում է արժեքը բնահրային և դրամական ձևով մեկ անձի, կազմակերպության, պետության կողմից վերադարձելիության ու վճարելիության սկզբունքով ուրիշին ժամանակավոր օգտագործման հանձնելու ընթացքում:

Վարկի դերն ու նշանակությունը շատ մեծ է, քանի որ դրա միջոցով լուծվում են տնտեսական համակարգի առջև ծառայած խնդիրները: Վարկի միջոցով հնարավոր է հաղթահարել դժվարությունները՝ կապված այն բանի հետ, որ մի ոլորտում հայտնվում են ազատ դրամական միջոցներ, իսկ մյուսում՝ նման միջոցների հանդեպ պահանջ: Վարկը կուտակում է

---

ազատված կապիտալը, դրանով էլ սպասարկում կապիտալի հոսքը, ինչն ապահովում է վերարտադրության նորմալ պրոցես: Վարկը նաև արագացնում է փողի շրջանառության պրոցեսը, ապահովում է ապահովագրական, ներդրումային հարաբերությունների իրականացումը և մեծ դեր է խաղում շուկայական հարաբերությունների կարգավորման գործում: Փոխառու կապիտալի աղբյուրներ են շրջանառությունից դուրս մնացած դրամական միջոցները՝ հիմնական կապիտալի վերականգնման համար նախատեսված միջոցները, հիմնական կապիտալի այն մասը, որն ազատ է՝ կապված ապրանքների վաճառքի և հումք-նյութերի գնման ժամանակի անհամապատասխանության հետ, գումարը, որը ժամանակավորապես ազատ է ապրանքների իրացումից նուտքերի և աշխատավարձի վճարման ժամանակահատվածում: Փոխառու կապիտալի աղբյուր է նաև մասնավոր հատվածի դրամական եկամուտներն ու խնայողությունները, ինչպես նաև պետության դրամական կուտակումները, որոնց չափերը որոշվում են պետական սեփականության մասշտաբներով և ՀԱԱ-ի մասնաբաժնով: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ազատ դրամական միջոցները, որոնք առաջանում են արդյունաբերական և առևտրային կապիտալի շրջապտույտի, մասնավոր հատվածի և պետական խնայողությունների հաշվին, ձևավորում են փոխառու միջոցների աղբյուրները, որոնք էլ կուտակվում են ֆինանսավարկային հիմնարկությունների շրջանակներում:

Վարկի գործառույթներն են՝

- բաշխողական (փոխառու միջոցների բաշխում վերադարձելիության հիմքի վրա),
- էմիսիոն (շրջանառության վարկային միջոցների ստեղծում և կանխիկ փողի փոխարինում),
- վերահսկողական (միջոցների արդյունավետ օգտագործման նկատմամբ վերահսկողություն):

Բանկերի վարկային գործառնությունները՝ նրանց ռիսկով իրականացվող ձեռնարկատիրական գործունեություն է, որի հիմնական եկամուտը վարկեր տրամադրելուց եկամուտ ստանալն է:

Վարկային իրավահարաբերությունների մասնակիցներն են՝ վարկատուները (բանկերը և այլ ֆինանսավարկային կազմակերպություններ), վարկառուները (քաղաքացիները, իրավաբանական անձինք, անհատ ձեռներեցները, օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք, ՀՀ-ը և համայնքները):

Վարկավորման գործընթացն իրականացվում է որոշակի սկզբունքների պահպանմամբ: Այդ սկզբունքներն են՝ վերադարձելիությունը, վճարելիությունը, ժամկետայնությունը, նպատակայնությունը և ապահովվածությունը:

---

նը: Այս սկզբունքներին կարելի է ավելացնել նաև վարկի տարբերակվածությունը և կառավարելիությունը:

*Վերադարձելիությունը* նշանակում է, որ տրամադրված փոխառու միջոցները պետք է վերադարձվեն վարկային պայմանագրում սահմանված ժամկետերում:

*Վճարելիությունը* ենթադրում է, որ վարկառուն փոխառությամբ վերցված գումարի ժամանակավոր օգտագործման համար բանկին պետք է կատարի որոշակի վճարումներ՝ տոկոսի ձևով:

*Ժամկետայնության* սկզբունքը նշանակում է, որ վարկերը տրամադրվում են որոշակի ժամկետով, որի ընթացքում վարկառուն կարող է օգտվել դրանից և ժամկետը լրանալիս պետք է վարկը վերադարձնի:

*Նպատակային վարկավորման* ժամանակ վարկը տրամադրվում է կոնկրետ նպատակով օգտագործելու համար, որը ներկայացվում է վարկառուի կողմից, և նա պարտավորվում է ստացված փոխառու ֆինանսական միջոցներն օգտագործել այդ նպատակի իրագործման համար:

*Վարկի ապահովվածությունը* նշանակում է, որ բանկը պետք է ունենա վարկը նարելու երկրորդ աղբյուրը, եթե ֆինանսական վիճակի վատթարացման կամ այլ պատճառով վարկառուն չի կարողանում կամ չի ցանկանում կատարել վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Դա կարող է հանդես գալ գույքի, ապրանքանյութական արժեքների գրավի, երաշխիքի կամ այլ անձի երաշխավորության ձևով:

*Տարբերակվածության սկզբունքը* նշանակում է, որ բանկերը հաճախորդների նկատմամբ ցուցաբերում են ոչ միանման մոտեցում վարկերի տրամադրման հարցում: Վարկերը պետք է տրամադրվեն միայն այն ձեռնարկատերերին, որոնք իրենց գործունեությամբ, ֆինանսական արդյունքներով և տրամադրված երաշխիքներով կարող են ապահովել վարկի ժամանակին մարումը և հաշվարկված տոկոսների վճարումը:

*Կառավարելիությունը* (վերահսկելիությունը) ենթադրում է բանկի վարկային ստորաբաժանման կողմից վարկավորման գործընթացի վերահսկում (մոնիտորինգ):

Վարկերը դասակարգվում են ըստ տարբեր հատկանիշների: Դրանք են.

- ըստ վարկառուների խմբերի՝ այլ բանկերին (միջբանկային վարկեր), այլ ֆինանսավարկային կազմակերպություններին, կառավարությունը, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին, ֆիզիկական անձանց,

- ըստ վարկի օգտագործման նպատակի՝ սպառողական, արտադրական ֆոնդերի ավելացման և վերակառուցման, հիպոթեքային, գյուղատնտեսական և այլն,

- ըստ մարման ժամկետի՝ կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ,
- ըստ ապահովվածության առկայության և բնույթի՝ չապահովված, ապահովված (գրավով, երաշխիքով, երաշխավորությամբ),
- ըստ ռիսկի աստիճանի՝ ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի, անհուսալի,
- ըստ տնտեսության ճյուղերի՝ տնտեսության տարբեր ճյուղերի (օրինակ՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և այլն),
- ըստ տոկոսադրույքների տեսակների՝ հաստատուն տոկոսադրույքով, փոփոխվող տոկոսադրույքով, խառը տոկոսադրույքով,
- ըստ տոկոսադրույքների հաշվարկման եղանակների՝ տարեկան տոկոսադրույքով, պարզ տոկոսադրույքով, բարդ տոկոսադրույքով, զեղչադրույքով,
- ըստ վարկերի չափերի՝ խոշոր, միջին, փոքր,
- ըստ վարկավորման եղանակի՝ իրային և դրամական: Իրային վարկի դեպքում վարկի օբյեկտ են հանդիսանում ինվեստիցիոն, սպառողական, նյութական, հունքային ապրանքատեսակները: Դրամական վարկի օբյեկտ են՝ դրամական կապիտալը, արժեթղթերը, պարտատոմսերը, մուրհակները և այլն:
  - Վարկերի տրամադրման կարգը բաղկացած է հետևյալ բաժիններից՝
    - վարկառուի և վարկավորման նպատակների ուսումնասիրություն,
    - վարկառուի ֆինանսական վիճակի գնահատում՝ բանկ ներկայացվող փաստաթղթերի հիման վրա,
    - վարկային ռիսկի գնահատում,
    - վարկերի տրամադրման և մարման կարգ,
    - վարկերի օգտագործման և մարման նկատմամբ հսկողություն,
    - վարկերի վերադարձման ապահովվածություն:

### **Չարդ 3. Բանկային համակարգի կառուցվածքն ու գործառույթները**

Ժամանակակից շուկայական տնտեսությունում վարկաբանկային համակարգը բաղկացած է երեք հանգույցից՝ կենտրոնական բանկ, առևտրական բանկեր և մասնագիտացված ֆինանսավարկային ինստիտուտներ, որոնք կոչված են կարգավորել տնտեսությունը՝ շրջանառության մեջ գտնվող դրամի քանակի փոփոխման միջոցով:

Յուրաքանչյուր մակարդակում իրականացվում են համապատասխան գործառույթներ:

---

1. Դրամատնտեսական գործառույթը (աշխատանք ավանդատուների միջոցների հետ, պահպանման գործարքներ, վարկի տրամադրում, խորհրդատվություն և այլն) իրականացնում են վարկային ինստիտուտները (բանկերը):

2. Կարգավորող գործառույթը (տոկոսադրույքի սահմանում, ռեզերվային նորմայի սահմանում) իրականացնում են կենտրոնական բանկն ու վերահսկողության մարմինները:

3. Կանոնակարգող գործառույթը (վերահսկողությունը մասնավոր բանկերի նկատմամբ) իրականացվում է կենտրոնական բանկի և ֆինանսների նախարարության կողմից:

Ըստ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը (այդ թվում՝ դուստր բանկերը), նրանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, գործառական գրասենյակները (կետերը), ինչպես նաև օտարերկրյա բանկերի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները:

Բանկային համակարգի առաջին մակարդակը ներկայացված է կենտրոնական բանկով (ԿԲ): Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկի գործառույթն է գների կայունության ապահովմանն ուղղված միջոցների ձեռնարկումը: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

Կենտրոնական բանկի խնդիրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,

բ) գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը,

գ) Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը,

դ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը,

ե) արժեթղթերում ներդրողների պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության ու զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,

զ) ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Իր խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը,

ա) իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը,

բ) հանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն,

գ) լիցենզավորում է բանկերը, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց, կարգավորում և վերահսկում է դրանց գործունեությունը,

դ) որպես վերջին աստանի վարկատու վարկեր է տրամադրում բանկերին,

ե) կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգի, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների, որոնք բանկ չեն, գործունեությունը,

զ) տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները,

է) իրականացնում է դրամավարկային և ֆինանսական համակարգի վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը,

ը) իրականացնում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, համակարգումն ու վերլուծությունը, տեղեկությունների փոխանակումը և տրամադրումը ներպետական իրավասու մարմիններին և միջազգային կազմակերպություններին, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ պետությունների իրավասու մարմիններին:

#### **Հարց 4. Կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության իրականացման գործիքները**

ԿԲ - ի դրամավարկային քաղաքականության գործիքներն են.

1. ԿԲ-ի կողմից առևտրային և մասնագիտացված բանկերի պարտադիր պահուստների նորմաների փոփոխությունը: ԿԲ-ը սահմանում է բան-

---

կերի կողմից ներգրավված ցպահանջ, ժամկետային և խնայողական ավանդների և այլ պարտավորությունների դիմաց ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուստների չափը, պահուստավորման և պահուստավորված միջոցների օգտագործման կարգը: Այս գործիքի միջոցով ԿԲ-ն ազդում է բանկերի կանխիկ դրամի ռեսուրսների և վարկային հնարավորությունների վրա:

2. Դիսկոնտային (վերահաշվառման) և վերաֆինանսավորման քաղաքականության իրականացումը: ԿԲ-ը, որպես վերջին ատյանի վարկատու, կարող է իր կողմից սահմանված կարգով վեց ամիս մարման ժամկետը չգերազանցող վարկեր տրամադրել բանկերին: ՀՀ բանկային համակարգի՝ ամբողջությամբ վերցրած միասնականությունը և սահունությունը պահպանելու նպատակով ԿԲ-ը կարող է տրամադրել վեց ամսից ավելի ժամկետ ունեցող վարկեր, որոնց մարման ժամկետը չի կարող գերազանցել հինգ տարին: ԿԲ-ի կողմից բանկերին տրամադրվող վարկերը պետք է ապահովված լինեն՝ պետական արժեթղթերով; ոչ ավելի, քան ինը ամիս մարման ժամկետ ունեցող հուսալի չեկերով և մուրհակներով: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ այլ արժեթղթերով:

3. ԿԲ-ի կողմից իրականացվող գործառնությունները բաց շուկայում: ԿԲ-ը դժք իրականացնելու նպատակով կարող է ֆինանսական շուկայում ձեռքբերել և օտարել ինչպես պետական, այնպես էլ հուսալի այլ արժեթղթեր: Ելնելով իր հիմնական խնդրից՝ ԿԲ-ը բաց շուկայական գործառնություններ իրականացնելու նպատակով կարող է թողարկել կարճաժամկետ՝ մինչև մեկ տարի մարման ժամկետով արժեթղթեր՝ կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով:

Այսպիսով՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը տոկոսի այն նորման է, որով ԿԲ-ն կարճաժամկետ վարկեր է տրամադրում առևտրային բանկերին: Բանկերը ստացված միջոցները տրամադրում են իրենց հաճախորդներին ավելի բարձր տոկոսով: Եթե ԿԲ-ն բարձրացնի վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ապա առևտրային բանկերը ևս կբարձրացնեն իրենց տոկոսադրույքը: Այսպիսով, ԿԲ-ն ազդում է տնտեսության վրա՝ վարելով «էժան» կամ «թանկ» փողերի քաղաքականություն:

Դրամական զանգվածի կառավարումն իրականացվում է պարտադիր պահուստաֆոնդի նորմայի սահմանման միջոցով: Դրա մեծության իջեցման դեպքում առևտրային բանկերի վարկ տրամադրելու հնարավորությունն ընդլայնվում է, և դրամական զանգվածը մեծանում է:

Պարտադիր պահուստի նորմատիվի բարձրացման դեպքում փողի առաջարկը կրճատվում է, տոկոսադրույքը բարձրանում է, փողը դառնում է «թանկ»: Պահուստի ստեղծման քաղաքականությունը դրամավարկային քաղաքականության ամենակոշտ գործիքն է:

Փողի քանակի կառավարումն իրականացվում է «գործարքներ բաց շուկայում» սկզբունքի միջոցով, երբ ԿԲ-ն իրականացնում է արժեթղթերի առք ու վաճառք: Եթե ԿԲ-ը վաճառում է արժեթղթեր, ապա փոխարենը դրամական միջոցներ է ստանում, շրջանառության մեջ դրամի քանակը պակասում է, տոկոսադրույքը բարձրանում է, և փողերը նորից «թանկանում» են: Եթե ԿԲ-ն գնում է արժեթղթեր, դա բերում է տոկոսադրույքի նվազման և փողի «էժանացման»:

Փողի էժանացումը խթանում է տնտեսության մեջ վարկերի, ամբողջական ծախսերի և ինվեստիցիաների ավելացումը, ուղղված է արտադրության «աշխուժացմանը» և զբաղվածության բարձրացմանը: Իսկ փողի թանկացումը, հակառակը, կրճատում է վարկերը և ինվեստիցիաները՝ դրանով իսկ իջեցնելով ապրանքային պահանջարկը և ճնշելով ինֆլյացիան:

Ինչպես երևում է աղյուսակից, փողի առաջարկն ավելանում է հետևյալ հանգամանքների միջոցով՝

1. բանկերից, այլ ձեռնարկություններից և բնակչությունից պետական պարտատոմսերի գնումները պետության կողմից (արդյունքում շրջանառության մեջ մտնում է «ավելցուկային» փող),

2. առևտրային բանկերի դրամային ռեզերվների սահմանված նորմաների նվազում (արդյունքում աճում են դրանց վարկային ռեսուրսները),

3. հաշվեդրույքների իջեցում, ըստ որի՝ կենտրոնական բանկը վարկավորում է առևտրային բանկերին (արդյունքում վերջիններս կենտրոնական բանկից ավելի շատ են վերցնում էժանացած վարկեր, և դրանք արդեն ցածր տոկոսով իրենք են տալիս ֆիրմաներին և բնակչությանը):

***Աղյուսակ 9. Էժան և թանկ փողի քաղաքականությունների համեմատական բնութագրերը.***

Էժան փողի քաղաքականություն	Թանկ փողի քաղաքականություն
<ul style="list-style-type: none"> <li>• տնտեսական ռեսուրսների թերի օգտագործման դեմ</li> <li>• արտադրության անկման դեմ</li> <li>• գործազրկության ավելացման դեմ</li> </ul>	<p style="text-align: center;">աճող ինֆլյացիայի դեմ</p>

<p>փողի առաջարկի ավելացումը հետևյալ հանգամանքների միջոցով.</p> <ul style="list-style-type: none"> <li>• բանկերից ու բնակչությունից պետպարտատոմսերի գնումները,</li> <li>• պետության կողմից փողի «ավելացուկի գոյացում»,</li> <li>• առևտրային բանկերի ռեզերվային կապիտալի նորմաների նվազում,</li> <li>• հաշվեդրույքների իջեցում,</li> </ul>	<p>փողի առաջարկի կրճատում փոխառությունների վաճառք բանկերին և բնակչությանը,</p> <ul style="list-style-type: none"> <li>• առևտրային բանկերի պահուստային նորմայի աճ,</li> <li>• հաշվարկային դրույքի բարձրացում,</li> <li>• բանկերի վարկային հնարավորությունների կրճատում</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>• վարկերի առաջարկն աճում է, դրանք դառնում են էժան և մատչելի,</li> <li>• ինվեստիցիաները, ամբողջական ծախսերը և ապրանքային պահանջարկն ավելանում է,</li> <li>• արտադրությունը և</li> <li>• զբաղվածությունը աճում է</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• վարկերի փոխատվության տոկոսը աճում է, դրանց մատչելիությունն իջնում է,</li> <li>• ինվեստիցիաները, ամբողջական ծախսերը և ապրանքային առաջարկը կրճատվում է</li> <li>• գները և ինֆլյացիան նվազում են</li> </ul>

Իր հերթին փողի առաջարկի կրճատումը ապահովվում է հակադիր միջոցներով. (1) պետությունը վաճառում է իր պարտատոմսերը, (2) ավելացնում է բանկային ռեզերվի նորման և (3) բարձրացնում է հաշվեդրույքները: Դրանով իսկ բանկերի վարկային հնարավորությունները սահմանափակվում են, վարկերի փոխատվության տոկոսն աճում է, դրանց մատչելիությունն իջնում է, տնտեսությունում ինվեստիցիաները և ամբողջական ծախսերը կրճատվում են, ապրանքների և ծառայությունների նկատմամբ ամբողջական պահանջարկն իջնում է, իսկ գները և ինֆլյացիան՝ իջնում:

## Հարց 5. Առևտրային բանկերի էությունը և գործառնությունները

Վարկային համակարգի երկրորդ մակարդակը ներկայացված է առևտրային բանկերով, որոնք աշխատում են անմիջապես հաճախորդների՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ:

Բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիաների հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը, և ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով:

Առանց Կենտրոնական բանկի կողմից տրված բանկային գործունեության լիցենզիայի Հայաստանի Հանրապետության տարածքում բանկային գործունեություն իրականացնելն արգելվում է:

Ըստ կատարվող գործարքների բնույթի՝ բանկերը կարող են լինել կամ ունիվերսալ, կամ էլ մասնագիտացված:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, դրանց մասնաճյուղերը, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող են՝

1. ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.
2. տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.
3. տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).
4. բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թրթակցային հաշիվներ.
5. մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.
6. թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, նման այլ գործառնություններ կատարել.
7. ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնել.
8. մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).
9. գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ.

10. գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.

11. իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).

12. ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարտեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

13. մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն.

14. ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն:

Առևտրային բանկերը մեծ դեր են խաղում դրամական զանգվածի կառավարման հարցում, քանի որ.

– կենտրոնացնում են ժամանակավորապես ազատ դրամական միջոցները,

– վարկեր են տրամադրում,

– վարկային փողեր են ստեղծում,

– արժեթղթեր են թողարկում:

Դրամական միջոցների ներգրավումն ու տեղաբաշխումն իրականացվում է ակտիվ և պասիվ գործառնությունների միջոցով:


Ակտիվ գործառնությունը վարկի տրամադրումն է, որից բանկը տոկոս է ստանում:

Պասիվ գործառնություններն են դրամական միջոցների հավաքագումը, որի դիմաց բանկը տոկոսներ է վճարում: Այս գործառնությունների գումարների տարբերությունը կազմում է առևտրական բանկերի ստացած շահույթի հիմնական աղբյուրը: Բանկային շահույթի նորման որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$\text{Բանկային շահույթի նորման} = \frac{\text{Բանկի համախառն եկամուտ} - \text{Բանկային գործի վարման հետ կապված ծախսեր}}{\text{Բանկի սեփական կապիտալ}} \cdot 100\%$$

Ինչպե՞ս են բանկերը փող ստեղծում:

Բանկերը փող են «ստեղծում» այն ժամանակ, երբ նրանք ընդունում են ավանդները և, դրանցից հանելով պահանջվող պարտադիր պահուստների քանակը, մնացած դեպոզիտային մասսան օգտագործում են փոխատվություններ տալու համար: Տնտեսությունում նման օպերացիաների բազմաթիվ կրկնությունների արդյունքում տեղի է ունենում այսպես կոչվող վարկային էքսպանսիա, և ձևավորվում է «նոր» (լրացուցիչ) փող: Փողի առաջարկի ավելացման այս մուլտիպլիկացիոն մեխանիզմը կարելի է դիտարկել հետևյալ օրինակի վրա (գծանկար 31):



Գծանկար 31. Ինչպես են բանկերն ավելացնում փողի առաջարկը

Ենթադրենք, որ առաջին բանկում 100 պ.մ.-ի ավանդ է ներդրվել, և կենտրոնական բանկի կողմից սահմանված պահուստային կապիտալի նորման հավասար է 20%: Այդ ժամանակ պարտադիր պահուստային պահանջները 20 պ.մ.-ի չափերով (100 պ.մ.-ից 20%) կատարելուց հետո, բանկը 80 պ.մ.-ի փոխատվություն կտա (100-20), ինչ-որ մեկի կողմից ստացված այդ փոխատվությունը տարբեր հաշիվներ վճարելու արդյունքում, երկրորդ բանկում վերածվում է ավանդի: Վերջինս 16 պ.մ.-ի (20% 80 պ.մ.-ից) պահուստ հանելով՝ 64 պ.մ.-ի (80-16) վարկ կտա: Այս դրամային մասսան, տրամաբանորեն համապատասխանաբար անցնելով իր ողջ հաշվարկավճարային ուղին, ավանդ կդառնա արդեն երրորդ բանկում: Եվ այսպես շարունակ, մինչև բանկից բանկ անցնելու դեպքում «մարվող» սկզբնական գումարն անմնացորդ չմարվի բանկային հաշիվներում:

Նման «շղթայական ռեակցիայի» արդյունքում սկզբնական փողը բազմապատիկ ձևով աճում է: Նույնիսկ մեր կարծ օրինակում «նոր» փողի գումարը կազմում է ոչ ավել, ոչ պակաս՝ 144 պ.մ. (80+64): Դրամային մասսայի աճի առավելագույն գործակիցը, կամ, ինչպես դրան անվանում են, դրամական մուլտիպլիկատորը, հանդիսանում է ռեզերվային կապիտալի հակադարձ նորմայի մեծություն:

Այսպես, մեր օրինակում այն հավասար է 5-ի (քանի որ պահանջվող ռեզերվային նորման հավասար է 20%, իսկ մասնաբաժնով՝ 1/5): Այսինքն՝

---

առաջին բանկի կողմից թողարկված 80 պ.մ. վարկային դրամը վերջին հաշվով կարող են ստեղծել 400 պ.մ.-ի (80x5) «նոր» փող՝ դրամով իսկ ավելացնելով ընդհանուր դրամային մասսան մինչև 500 պ.մ. (100+400): Վարկա-դրամային մուլտիպլիկացիայի այսպիսի բանկային էֆեկտը պետությունը հաշվի է առնում իր դրամային քաղաքականությունում, քանի որ այն կարող է ինֆլյացիա առաջացնել, երբ էկոնոմիկան աշխատում է բոլոր ռեսուրսների ամբողջ զբաղվածությամբ: Բանկերը, մեծ շահույթի հետևից ընկած, կարող են ուշադրություն չդարձնել տնտեսական կոնյուկտուրայի չափազանցմանը և տան ավելցուկային վարկեր: Արդյունքում ապրանքների և ծառայությունների նկատմամբ եղած աճող պահանջարկը գերազանցում է ամենաբարձր կետը, իսկ գները բարձրանում են: Իրադարձությունների նման զարգացման դեմ պետության հնարավոր միջոցառումների հետ է կապված «էժան» և «թանկ» փողերի յուրահատուկ քաղաքականությունը:

Վարկային համակարգի երրորդ մակարդակը ներկայացված է մասնագիտացված ֆինանսավարկային ինստիտուտներով՝ կենսաթոշակային ֆոնդը, ապահովագրական ընկերությունները, ինվեստիցիոն և հիփոթեկային ընկերությունները և այլն: Նրանք կենտրոնացնում են հսկայական դրամական միջոցներ և կարողանում են ազդել դրամավարկային քաղաքականության վրա:

Տնտեսության նորմալ գործունեության համար կարևոր է, որ բանկային համակարգը լինի կայուն:

Բանկային համակարգի կայունությունը խախտող գործոններն են.

- ազգային արժույթի կուրսի անկայունությունը,
- ԿԲ-ի անհաջող դրամավարկային քաղաքականությունը,
- ոչ խելամիտ ֆիսկալ քաղաքականությունը,
- դեպոզիտների ապահովագրման համակարգի բացակայությունը:

Դրամավարկային համակարգի կայունացման մեթոդներն են.

- բանկային օրենսդրության կատարելագործումը,
- նվազագույն բանկային ռեզերվների և հաշվարկային տոկոսադրույքի նորմաների համաձայնեցումը,
- բանկային ծառայությունների նոր ձևերի զարգացումը և վարկային շուկայի տարողունակության կարգավորումը:

### **Համառոտ եզրակացություններ**

1. Դրամական զանգվածը տնտեսության մեջ կանխիկ և անկանխիկ ձևերում գտնվող բոլոր դրամական միջոցների ամբողջությունն է, որոնք կատարում են վճարման, շրջանառության և կուտակման գործառույթներ:

---

2. Վարկը տնտեսական այնպիսի հարաբերություն է, որն առաջանում է արժեքը բնաիրային և դրամական ձևով մեկ անձի, կազմակերպության, պետության կողմից վերադարձելիության ու վճարելիության սկզբունքով ուրիշին ժամանակավոր օգտագործման հանձնելու ընթացքում:

3. Վարկավորման գործընթացն իրականացվում է որոշակի սկզբունքների պահպանմամբ՝ վերադարձելիություն, վճարելիություն, ժամկետայնություն, նպատակայնություն, ապահովվածություն, տարբերակվածություն և կառավարելիություն:

4. Հայաստանի Հանրապետության բանկային համակարգն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը (այդ թվում՝ դուստր բանկերը), նրանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, գործառնական գրասենյակները (կետերը), ինչպես նաև օտարերկրյա բանկերի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները:

5. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

6. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկի գործառույթն է հանդիսանում գների կայունության ապահովմանն ուղղված միջոցների ձեռնարկումը: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

7. Բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիաների հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

8. Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և (կամ) ներդրումներ կատարելու միջոցով:

### ***Ինքնաստուգման հարցեր***

1. *Ի՞նչ է դրամական զանգվածը:*
2. *Ինչպե՞ս են որոշվում փողի ագրեգատները:*
3. *Ի՞նչ է վարկը և որո՞նք են վարկի գործառույթները:*
4. *Որո՞նք են վարկավորման սկզբունքները:*

- 
5. Վարկերի ի՞նչ տեսակներ կան:
  6. Ինչպիսի՞ն է բանկային հանակարգի կառուցվածքը:
  7. Որո՞նք են ԿԲ-ի խնդիրները:
  8. Ի՞նչ գործիքներով է ԿԲ-ն իրականացնում դրամավարկային քաղաքականությունը:
  9. Ի՞նչ է իրենից ներկայացնում վերաֆինանսավորման տոկոսադրույքը:
  10. Ինչպե՞ս և ի՞նչ նպատակներով է ԿԲ-ն իրականացնում թանկ և էժան փողերի քաղաքականությունները:
  11. Ի՞նչ է առևտրային բանկը:
  12. Ի՞նչ գործառնություններ է իրականացնում առևտրային բանկը:
  13. Ինչպե՞ս են բանկերը փող ստեղծում:

## ԹԵՄԱ 20. ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

*Թեմայի հիմնական նպատակն է՝* ծանոթանալ համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալներին և կառուցվածքին:

*Թեմայի ուսումնասիրությունից հետո ուսանողը կկարողանա.*

- ա. բացատրել համաշխարհային տնտեսության էությունը,
- բ. պարզաբանել միջազգային առևտուրը և միջազգային արժույթային հարաբերությունները,
- գ. բնութագրել համաշխարհային ինտեգրացիան և գլոբալիզացիան:

### Հարց 1. Համաշխարհային տնտեսություն, բովանդակությունն ու կառուցվածքը

Համաշխարհային տնտեսությունը (մեզաէկոնոմիկա) գլոբալ էկոնոմիկան է, որը միավորում է ազգային տնտեսությունները մի համակարգի մեջ՝ աշխատանքի միջազգային բաժանման հիման վրա:

Համաշխարհային տնտեսության մեջ ձևավորվում են տնտեսական հարաբերություններ, որոնք դրսևորվում են հետևյալ ձևերով՝

- միջազգային առևտուր,
- կապիտալի արտահանում և միջազգային վարկ,
- միջազգային արժույթային հարաբերություններ,
- աշխատուժի միջազգային միգրացիա,
- միջազգային փոխանակություն գիտության և տեխնիկայի բնագավառում:

Միջազգային առևտուրը միջազգային տնտեսական հարաբերությունների այն ձևն է, որն արտահայտում է ապրանքների և ծառայությունների արտահանման հարաբերությունը:

Միջազգային առևտրային հարաբերությունների առաջացման պատճառներ են՝

- տնտեսական ռեսուրսներով տարբեր երկրների ապահովվածության մակարդակը,
- տարբեր երկրներում տարբեր տեխնոլոգիաների արդյունավետությունների տարբերությունները:

Միջազգային առևտրի նշանակությունը կայանում է հետևյալում՝

- ռեսուրսային բազայի սահմանափակության վերացումը,
- ներքին շուկայի տարողունակության մեծացումը և տնտեսական կապերի հաստատումը տարբեր երկրների հետ,

---

– արտադրության ազգային և ինտերնացիոնալ ծախքերի տարբերության հաշվին լրացուցիչ եկամտի ստացումը,

– արտադրության ծավալների ընդլայնումը՝ ի հաշիվ արտասահմանյան ռեսուրսների:

Միջազգային առևտրի ծավալը արտահայտվում է հետևյալ ցուցանիշների միջոցով՝ ապրանքների և ծառայությունների արտահանում, ներմուծում, զուտ արտահանում:

Նշված ցուցանիշներից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը ՀԱԱ-ում ցույց է տալիս դրանց դերը ազգային տնտեսության մեջ:

Միջազգային առևտրի շահավետությունը տարբեր տնտեսական դպրոցներ տարբեր ձևերով են գնահատում՝

– մերկանտիլիստները պաշտպանում էին ներմուծման գերազանցման սկզբունքը,

– Սմիթը գտնում էր, որ պետք է ներմուծել այն ապրանքները, որոնց արտադրությունը ավելի էժան է այլ երկրներում: Նրա տեսությունը գրականության մեջ ստացել է «բացարձակ առավելությունների տեսություն» անվանումը,

– Ռիկարդոն մշակեց «համեմատական առավելությունների» տեսությունը, որտեղ Սմիթի կոնցեպցիան ընդգրկվեց որպես մասնավոր դեպք, և ապացուցվեց, որ պետք է համեմատել ոչ թե բացարձակ էֆեկտը, այլ՝ հարաբերական էֆեկտը: Ըստ նրա՝ թողարկվող արտադրանքի ամբողջական ծավալը մեծ կլինի այն դեպքում, երբ յուրաքանչյուր ապրանք կարտադրվի այն երկրում, որտեղ նրա այլընտրանքային ծախքերը փոքր են:

Հետագայում Ռիկարդոյի տեսությունը զարգացրեցին Մարշալը և Միլլը:

Արտահանման և ներմուծման հարաբերակցությունը կարգավորվում է պետության կողմից՝ հովանավորչական քաղաքականության կամ ֆրիտրեյդերականության միջոցով:

Հովանավորչությունը ազգային էկոնոմիկայի պաշտպանությանն ուղղված քաղաքականությունն է:

Ֆրիտրեյդերականությունը ազատ առևտրի քաղաքականություն է:

Հովանավորչական քաղաքականությունը ունի հետևյալ ուղղությունները՝

– մաքսային հարկումը, որը նախատեսում է ներմուծման բարձր, և արտահանման ցածր դրույքաչափեր,

– ոչ տարիֆային խոչընդոտներ, քվոտաներ, լիցենզավորում, պետական մոնոպոլիա:

Քվոտավորումը առանձին ապրանքների արտահանման և ներմուծման վրա քվոտայի սահմանումն է:

---

Լիցենզավորումը արտաքին տնտեսական գործունեության իրավունքի ստացումն է ձեռնարկության կողմից:

Պետական մոնոպոլիան պետության բացառիկ իրավունքն է արտատնտեսական գործունեության որոշ ձևերի իրականացման ոլորտում:

Ազատ առևտրի գաղափարը առաջացել է XVIII դ. վերջում: XIX դ. այն դարձել է Անգլիայի պաշտոնական տնտեսական քաղաքականությունը: Դրա համար հիմք ծառայեց Ռիկարդոյի «համեմատական առավելությունների» տեսությունը:

Համեմատական առավելությունների տեսությունը զարգացրել են շվեդ տնտեսագետներ Է.Յեքշերը և Բ.Օլինը: Յեքշեր-Օլինի մոդելը միջազգային մասնագիտացման գործոնները կապում է ծախսերի հետ, որոնք որոշվում են արտադրության գործոնների՝ աշխատանքի և կապիտալի հարաբերակցությամբ: Գները կախված են այս կամ այն գործոնի հազվադեպությունից: Եթե երկիրը ունի համեմատաբար էժան աշխատուժ, ապա ավելի հարմար է, որ նա մասնագիտանա այն արտադրանքի առևտրի վրա, որը պահանջում է զգալի աշխատանքային ծախսումներ: Երկիրը, որն ունի կապիտալի ավելցուկ, արտահանում է կապիտալատար ապրանքներ:

Վ. Վ. Լեոնտևը, ուսումնասիրելով ԱՄՆ-ի արտահանման և ներմուծման կառուցվածքը, 1947թ. նկատեց հակասություն Յեքշեր-Օլինի մոդելում: Սինչև որոշ ժամանակ թվում էր, որ Ամերիկյան ունի առավելություն կապիտալում: Սակայն Լեոնտևը նկատեց, որ ԱՄՆ-ի արտահանման մեջ գերիշխում էին հարաբերականորեն ավելի աշխատատար ապրանքներ, իսկ ներմուծման մեջ՝ կապիտալատար: Այս արդյունքը կոչվեց Լեոնտևի պարադոքս: Լեոնտևի հետազոտությունները ցույց տվեցին, որ առևտրի կառուցվածքի վերլուծության ժամանակ աշխատանքի և կապիտալի ծախսումների կողքին պետք է հաշվի առնել նաև աշխատողների որակավորումը:

Ընթացիկ արտաքին տնտեսական իրավիճակը բնութագրող ցուցանիշ է համարվում վճարային հաշվեկշիռը:

Վճարային հաշվեկշիռը արտաքին աշխարհին կատարած վճարումների և այնտեղից ստացված վճարումների հարաբերակցությունն է որոշակի ժամանակահատվածի կտրվածքով: Վճարային հաշվեկշռի հիմքն է առևտրային հաշվեկշիռը:

Առևտրային հաշվեկշիռը ապրանքների արտահանման և ներմուծման հարաբերակցությունն է: Դրա հիմքում ընկած են մաքսային վիճակագրության տվյալները:

Կապիտալի արտահանումը կապիտալի մի մասի դուրս մղումն է ազգային շրջանառությունից և նրա ներդրումը այլ երկրների տնտեսության մեջ տարբեր եղանակներով:

---

Կապիտալի արտահանման նպատակը ավելի մեծ շահույթի ստացումն է՝ ի հաշիվ այլ երկրների առավելությունների:

Կապիտալի արտահանման ձևերից են ձեռնարկատիրական և վարկային արտահանումը: Ձեռնարկատիրական կապիտալը արտահանվում է սեփական արտադրություն կազմակերպելու (ուղղակի ինվեստիցիաներ) կամ այլ կազմակերպությունների մեջ ներդնելու համար (պորտֆելային ինվեստիցիաներ): Վարկային կապիտալը արտահանվում է վարկի, փոխառությունների տեսքով:

Կապիտալի արտահանման հետևանքները միանշանակ չեն: Մի կողմից այն նպաստում է ընդունող երկրի զարգացմանը: Մյուս կողմից արտասահմանյան կապիտալին ձեռնտու է երկրի հումքային զարգացման ուղղվածությունը:

Կապիտալի արտահանման և այլ երկրներում ձեռնարկությունների ստեղծման արդյունքում տեղի է ունենում կապիտալի միջազգայնացում և ստեղծվում են կորպորացիաներ:

Վերազգային ձեռնարկության բնորոշ գծերն են՝

- ունի դուստր ձեռնարկություններ երկու և ավելի երկրներում,
- ունի որոշումների ընդունման այնպիսի համակարգ, որը թույլ է տալիս քաղաքականություն իրականացնել մի կամ մի քանի կենտրոններից,
- վերազգային կորպորացիաները ստեղծում են այնպիսի կապ դուստր ձեռնարկությունների միջև, որ նրանցից յուրաքանչյուրը ազդեցություն ունի մյուսի վրա:

Վերազգային կորպորացիաները փոփոխում են միջազգային առևտրի կառուցվածքը:

Կապիտալի արտահանման ժամանակակից առանձնահատկություններն են՝

- արտադրողական կապիտալի արտահանման աճը ուղղակի ինվեստիցիաների միջոցով,
- կապիտալի արտահանումը առավելապես զարգացած երկրների կողմից,
- զարգացող երկրների՝ որպես կապիտալ արտահանողների դերի աճը:

Աշխատուժի միջազգային միգրացիան աշխատունակ տարիքի բնակչության տեղաշարժն է ազգային տնտեսության սահմաններից դուրս:

Միգրացիայի պատճառները լինում են տնտեսական և արտատնտեսական: Տնտեսական պատճառներն են աշխատուժի պահանջարկի կրճատումը, առաջարկի աճը, բարձր որակավորում ունեցող աշխատողների պահանջարկի աճը արտասահմանում, տարբերությունները աշխատավարձի մակարդակներում և այլն: Արտատնտեսական պատճառներն են՝

---

ժողովրդագրական, քաղաքական, կրոնական, ազգային, մշակութային, ընտանեկան և այլ պատճառներ:

## **Չարդ 2. Միջազգային արժութային համակարգը. եությունը, կառուցվածքը, էվոլյուցիան**

**Արժությը** երկրի դրամական միավորն է, որն օգտագործվում է միջազգային ֆինանսական հաշվարկներում, ինչպես նաև միջազգային հաշվարկային արժութային միավորները:

Ցանկացած արժությ ունի իր գինը՝ արտահայտված մեկ այլ երկրի դրամական միավորով: Այդ գինն էլ իրենից ներկայացնում է արժությի փոխարժեքը:

Երբ որևէ երկրի արժությի արտաքին պաշտոնական փոխարժեքը իջել է, ապա ընդունված է ասել, որ այդ արժությն արժեզրկվել է: Իսկ արժությի արտաքին պաշտոնական փոխարժեքի աճը կոչվում է արժեվորում:

Գոյություն ունեն արժութային փոխարժեքի 2 տեսակի համակարգեր՝ ճկուն կամ լողացող, երբ արժությների փոխանակման արժեքները որոշվում են առաջարկով և պահանջարկով, հաստատագրված՝ երբ փոխարժեքը որոշվում է նախօրոք և որոշակի ժամանակահատվածում փոփոխման ենթակա չէ: Այդ համակարգի դեպքում պետությունը խոչընդոտում է արժութային փոխարժեքի փոփոխությունները:

Ճկուն փոխարժեքի համակարգում կարելի է առանձնացնել երկու կարևոր ենթադասեր՝ ազատ տատանվող համակարգ և կարգավորվող տատանումներով համակարգ: Ազատ տատանվող փոխարժեքը միայն առաջարկով և պահանջարկով որոշվող փոխարժեքն է, առանց կառավարության որևէ միջամտության: Կարգավորվող տատանումներով համակարգում կառավարությունը փոխարժեքի շուկային միջամտում է փոխարժեքի վրա ազդելու նպատակով:

Գնողունակության պարիտետը համեմատվող երկրների արժությների հարաբերակցությունն է՝ հաշվարկված այդ երկրներում արտադրված ապրանքների և ծառայությունների գների հարաբերակցությամբ: Արժությների այդպիսի համեմատությունը ըստ դրանց գնողունակության ցույց է տալիս, թե ինչ քանակության ազգային արժությ է պահանջվում ամեն երկրում ապրանքներ և ծառայություններ գնելու համար: Գնողունակության պարիտետի հիմնական որոշիչ մասը կազմում է սննդի, հագուստի, բնակարանի և կոմունալ ծառայությունների գները:

Տարբերում են անվանական և իրական արժութային փոխարժեք հասկացությունները:

Անվանական վայրուտային փոխարժեքը երկու վայրուտաների միջև փոխարժեքն է, ազգային վայրուտայի միավորի գինը՝ արտահայտված արտասահմանյան վայրուտայի միավորով՝  $En=Cf/Cd$ : Իրական վայրուտային փոխարժեքը անվանական վայրուտային փոխարժեքն է՝ հաշվի առնելով ազգային երկրում և այն երկրում գների մակարդակների փոփոխությունը, որի վայրուտայով գնանշվում է ազգային վայրուտան՝  $Er=En \times Pf/Pd$ : Վայրուտային փոխարժեք ասելով հասկանում են հենց անվանական վայրուտային փոխարժեքը:

Վայրուտայի կուրսի վրա ազդում են մի շարք գործոններ.

1. Սպառողների ճաշակի փոփոխությունը,
2. Ակտիվ առևտրային քաղաքականությունը,
3. Ներմուծվող ապրանքների պահանջարկի առաձգականությունը,
4. Եկամտի փոփոխությունը,
5. Արժեզրկումը,
6. Փոխանակման կուրսերի նկատմամբ որոշակի կանխատեսումները,
7. Իրական տոկոսադրույքի մեծությունը,
8. Միջազգային հաշվարկներում վայրուտայի օգտագործման չափը,
9. Միջազգային վճարումների արագությունը, և այլն:

ՀՀ կենտրոնական բանկի արժութային քաղաքականությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության արժութային պահուստների արդյունավետ կառավարման միջոցով ՀՀ դրամի հուսալիության ու միջազգային հեղինակության բարձրացմանը, ընթացիկ արժութային գործառնությունների և կապիտալի շարժի, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ իրավատնտեսական դաշտի ստեղծմանը: Այդ նպատակների իրականացման համար հայտարարվել է համապատասխան արժութային ռեժիմ, մշակվել են արժութային համակարգի գործունեության սկզբունքները և սահմանվել օրենսդրական կարգավորման շրջանակները:

**Արժութային ռեժիմ:** ՀՀ կենտրոնական բանկը վարում է ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն, ինչը համահունչ է ազատականացված կապիտալի հաշվի գործարքների և անկախ դրամավարկային քաղաքականության իրականացման սկզբունքներին: Կենտրոնական բանկի միջամտությունը արժութային շուկային իրականացվում է՝ ելնելով դրամավարկային քաղաքականության նպատակներից: Շուկայում ձևավորված փոխարժեքների հիման վրա Կենտրոնական բանկը հրապարակում է արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքները:

---

Արժուքային կարգավորման դաշտը ներառում է Հայաստանի Հանրապետությունում արժուքային գործարքների կնքման կարգն ու պայմանները, արժուքային արժեքների տնօրինման, տիրապետման և օգտագործման դեպքերը, կարգն ու պայմանները, ինչպես նաև ՀՀ-ում արժուքային կարգավորման ու վերահսկողության հետ կապված այլ հարաբերությունները:

ՀՀ տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների վճարումների, գույքի գնահատման և աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դրամական (փողային) գնանշումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով: ՀՀ տարածքում ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դիմաց փողային վճարումները, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տուկոսավճարները և իրավունքի կամ արտոնության իրականացման կամ տրամադրման դիմաց տրվող հատուցումները ապահովագրավճարներն և ապահովագրական հատուցումները, ընդունվում են ՀՀ դրամով:

Ազատականացված է ինչպես վճարային համակարգի, այնպես էլ ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից հաճախորդների սպասարկման հետ կապված արժուքային գործառնությունների իրականացումը: ՀՀ տարածքում գործող բանկերը, դրանց մասնաճյուղերը, ինչպես նաև ոչ ռեզիդենտ բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերը կարող են սպասարկել միջազգային պրակտիկայում ընդունված բոլոր տեսակի հաշիվները: Նման սկզբունք է գործում նաև ռեզիդենտների կողմից օտարերկրյա բանկերում միջազգային բանկային պրակտիկայում կիրառվող հաշիվների բացման ոլորտում:

Առանց սահմանափակումների իրականացվում է մինչև 15 եվրոյի համարժեք կանխիկ արտարժույթի և արտարժույթով արտահայտված արժեթղթերի ներմուծումը: Նշված գումարից ավելի ներմուծելու դեպքում պահանջվում է մաքսային հայտարարագրում: Թույլատրվում է առանց որևէ փաստաթղթի ՀՀ-ից արտահանել արտարժույթով արտահայտված արժեթղթեր և մինչև 5 մլն կանխիկ դրամ կամ դրան համարժեք կանխիկ արտարժույթ՝ բանկային տոմսերի, գանձատան թղթադրամների և մետաղադրամների տեսքով: Նշված գումարը գերազանցելու դեպքում կանխիկ դրամի կամ արտարժույթի արտահանումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ բանկային փոխանցումների միջոցով, իսկ արժեթղթերի արտահանումը՝ մաքսային հայտարարագրման պայմանով:

Ազատականացված են նաև կապիտալի շարժի հետ կապված գործառնությունները (ուղղակի և պորտֆելային ներդրումները, անշարժ գույքի նկատմամբ սեփականության և այլ իրավունքների ձեռքբերման վճար-

---

ների փոխանցումները, երկարաժամկետ (180 օրվանից ավելի) ֆինանսական միջոցներով գործառնությունների իրականացումը): Սակայն Կենտրոնական բանկը ֆինանսական համակարգի կայունության պահպանման, հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, վիճակագրական կամ տնտեսական ռիսկերի կանխարգելման և վիճակագրական նպատակներով կարող է սահմանել կապիտալի շարժի ու ֆինանսական արժութային գործարքների իրականացման կարգ ու պայմաններ:

Այսպիսով, յուրաքանչյուր երկիր ունի իր սեփական արժութային համակարգը՝ հիմնված ազգային օրենսդրության վրա:

Ազգային արժութային համակարգերի հիման վրա ձևավորվում է միջազգային արժութային համակարգը:

Արժութային համակարգը իրենից ներկայացնում է արտաքին շուկաներում կենտրոնական, էմիսիոն բանկերի գործունեությունը կարգավորող նորմերի և օրենքների ամբողջություն:

Միջազգային արժութային համակարգը անցել է զարգացման երեք փուլ՝

- XIX–ից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը,
- 30 թվ-ից մինչև 70-ական թվ-ը,
- 70 թվականից առ այսօր:

Առաջին երկու փուլերում այն հիմնված էր ոսկյա ստանդարտի վրա, երբ օրենսդրությամբ որոշվում էր ազգային արժույթի ոսկյա պարունակությունը, և բանկերը ազատ փոխանակում էին բանկնոտները ոսկով: Երրորդ փուլում լուծարվեց ոսկու փոխանակումը բանկնոտներով:

Կոլեկտիվ արժութային միավորները տարածում ստացան միջազգային արժութային համակարգի ճգնաժամի արդյունքում: Ոսկու փոխարեն հանդես եկան համաշխարհային հաշվարկային փողերը՝ որպես ազգային արժույթների կուրսերի համադրման միջոց: Դրանք չեն թողարկվում բանկնոտների կամ մետաղադրամի տեսքով, այլ գրվում են միայն հաշիվներում (book money): Դրանց կուրսը հաստատվում է հիմնադիր-երկրների կողմից, որոնք ձգտում են վերածել դրանք միջազգային փողերի, այսինքն դեղքների: Քանի որ ազգային արժույթները կորցրել են կապը ոսկու հետ, ապա վերջինս այլևս համընդհանուր վճարամիջոցի գործառույթ չի կատարում: Սա նշանակում է ոսկու դեմոնետարիզացիա, այսինքն ոսկին վեր է ածվում սովորական ապրանքի, որի գինը որոշվում է առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ: Բայց, այնուամենայնիվ, ոսկու իրացվելիությունը շարունակում է բարձր մնալ:

Ազգային արժույթների փոխանակումը և հաշվարկները պետությունների միջև իրականացվում են արժութային կուրսի հիման վրա:

---

Ոսկե ստանդարտի ժամանակ արժույթի կուրսը կայուն էր: Այն հիմնված էր ոսկու պարիտետի (լատիներեն *paritas* – հավասարություն) վրա: Ոսկու չափման միավոր էր ունցիան, որը հավասար է 31,1 գ.: Եթե, օրինակ, անգլիական ֆունտ ստեռլինգի բովանդակությունը կազմում էր 1/4 ունցիա ոսկի, իսկ ԱՄՆ դոլարինը՝ 1/20, ապա նրանց արտարժութային կուրսը կազմում էր 1:5, այսինքն 1 ֆունտ ստեռլինգը հավասար է 5 դոլարի:

Փոխարժեքի լողացող կուրսը որոշվում է ոչ թե ոսկով, այլ՝ արժույթի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ: Իսկ արժույթի առաջարկի և պահանջարկի վրա ազդում են և՛ ներքին, և՛ արտաքին տնտեսական հարաբերությունները՝ ազգային եկամուտը, արտադրության ծախքերը, ազգային արժույթի իրական գնողու-նակությունը, ինֆլացիան, վստահութունը ազգային դրամի նկատմամբ միջազգային շուկայում և այլն:

Միջազգային հարաբերությունների մեջ ազգային տնտեսության ընդգրկման համար կարևոր է, որ ազգային արժույթը փոխարկելի լինի:

Արժույթի փոխարկելիությունը տարբեր միջազգային հաշվարկներում ազգային դրամի ազատ օգտագործվելու հատկությունն է:

Տարբերում են ազատ փոխարկվող (ԱՓԱ) և չփոխարկվող արժույթներ:

ԱՓԱ-ն միջնորդավորում է միջազգային հաշվարկները, այսինքն համաշխարհային փողի ֆունկցիա է կատարում: Ներկա փուլում ԱՓԱ են համարվում ԱՄՆ դոլարը, ֆունտ ստեռլինգը, եվրոն, ճապոնական իենը, շվեյցարական ֆրանկը:

Երկրների մեծամասնությունն ունի մասնակի ԱՓԱ:

Զփոխարկվող են այն երկրների արժույթները, որոնց կառավարությունը կոշտ միջոցներ է կիրառում ազգային և արտասահմանյան արժույթների ներմուծման և արտահանման ոլորտում: Դրանց թվին են դասվում զարգացող երկրների արժույթները:

Միջազգային արժութային համակարգի գործունեությունը իրականացվում է միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից, որոնց թվին են դասվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ), Զարգացման միջազգային ասոցիացիան (ԶՄԱ) և այլն:

### **Չարք 3. Միջազգային տնտեսական ինտեգրացիա**

Ինտեգրացիա նշանակում է մասերի ամբողջականացում, միացում:

*Տնտեսական ինտեգրացիան տնտեսական զարգացման մակարդակներով միմյանց մոտ կանգնած երկրների ազգային տնտեսությունների մերձեցման, միջազգայնացման այնպիսի գործընթաց է, որն ուղղված է*

---

*մասնակից երկրների միջև տնտեսական համաձայնեցված փոխադարձ գործողությունների իրականացմանը:*

Միջազգային տնտեսական ինտեգրացիայի նախադրյալներն են՝ շուկայական զարգացման մակարդակների համեմատելիությունը, երկրների միջև պատմականորեն ձևավորված ավանդական տնտեսական կապերը, երկրների միջև հիմնախնդիրների ընդհանրությունը և այլն:

Տնտեսական ինտեգրացիայի հիմքում ընկած՝ աշխատանքի միջազգային բաժանումը:

Ինտեգրացիոն գործընթացները միկրո մակարդակով տեղի են ունենում սահմանակից երկրների ձեռնարկությունների միջև տնտեսական փոխադարձ պայմանագրերի կնքման, ինչպես նաև արտասահմանյան երկրներում իրենց մասնաճյուղերի ստեղծման ճանապարհով, իսկ միջպետական մակարդակով՝ պետությունների միջև տնտեսական քաղաքականությունների համաձայնեցման միջոցով: Միջպետական մակարդակով կարգավորումը նպատակ ունի տվյալ տարածքում ապահովել ապրանքների և արտադրության գործոնների ազատ շարժը, համաձայնեցնել և իրականացնել մասնակից երկրների տնտեսական, գիտատեխնիկական, ֆինանսական, արժույթային, սոցիալական, արտաքին և ռազմական քաղաքականությունները: Ահա թե ինչու, նման կարգավորումը ենթադրում է երկրների միջև ստեղծել տնտեսական այնպիսի միավորումներ, որոնք պետք է ունենան միասնական արժույթ, ենթակառուցվածք, ընդհանուր ֆինանսական ֆոնդեր և միջազգային կամ միջպետական կառավարման մարմիններ:

ՄՏՀ-ների օբյեկտներն են ինչպես ապրանքները և ծառայությունները, այնպես էլ բոլոր տեսակի արտադրական ռեսուրսները, որոնք միաժամանակ հանդես են գալիս որպես միջազգային արտադրական և գիտատեխնիկական համագործակցության և փոխանակման օբյեկտներ:

ՄՏՀ-ների սուբյեկտներ են տնտեսական առանձնացված կողմերը, որոնք իրականացնում են միջազգային արտադրական և գիտատեխնիկական համագործակցություն, ապրանքների ծառայությունների փոխանակում:

ՄՏՀ-ները կապված են աշխարհում տեղի ունեցող գլոբալ գործընթացների հետ: Գլոբալացումն արտահայտվում է հասարակական կյանքի և գործունեության տարբեր ոլորտների, այդ թվում, տնտեսական, փոխադարձ կախվածության և ազդեցության ուժեղացման մեջ:

Տնտեսական ինտեգրացիան տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն է տալիս

- ազատ օգտվելու մասնակից երկրների արտադրական ռեսուրսներից,
- մասնակից երկրների ֆիրմաներին պաշտպանելու երրորդ երկրների ֆիրմաների մրցակցությունից,

---

• համատեղ ուժերով լուծելու առաջնահերթ այնպիսի խնդիրներ, որոնք կապված են գործազրկության նվազեցման, առողջապահական ցանցի զարգացման, սոցիալական ապահովության հետ:

Միջազգային տնտեսական ինտեգրացիայի ռազմավարությունը կարելի է իրականացնել հետևյալ ձևերով.

**1. ազատ առևտրի գոտի**, երբ մասնակից երկրները վերացնում են բոլոր մաքսային արգելքները՝ պահպանելով առանձին - առանձին մաքսային քաղաքականություն իրականացնելու իրավունքը,

**2. մաքսային միություն**, երբ համաձայնություն է ձեռք բերվում նաև երրորդ երկրների նկատմամբ միասնական մաքսատուրքեր կիրառելու մասին,

**3. ընդհանուր շուկա**, որի շրջանակներում ազատականացվում է արտադրության մյուս գործոնների՝ կապիտալի, բնակչության և տեխնոլոգիաների տեղաշարժը,

**4. տնտեսական միություն**, երբ համաձայնեցվում է տնտեսական կյանքի այլ ոլորտների գործունեությունը,

**5. լրիվ ինտեգրացիա**, որի դեպքում տեղի է ունենում արժույթային, հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականությունների միասնականացում:

Գլոբալացումը կարելի է բնութագրել որպես մեկ ամբողջության մեջ ազգային տնտեսությունների ինտեգրման գործընթաց, որն արտահայտվում է ապրանքների, մարդկանց, կապիտալի և տեղեկատվական միջավետական հոսքերի ինտենսիվացմամբ: Վերջինս իր հերթին ուղեկցվում է ազգային խոչընդոտների նվազեցմամբ, ներառյալ վերազգային կազմակերպությունների և հաստատությունների ձևավորմամբ, ինչպես նաև վերազգային կառույցների օգտին ազգային անկախության սահմանափակմամբ (իրավասությունների պատվիրակում): Նոր տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները խթանում են գլոբալացման գործընթացներին: Գլոբալացման իրական շարժիչ հանդիսանում վերազգային ընկերությունները, որոնք հսկայական դեր են խաղում միջազգային առևտրում և առաջադիմական տեխնոլոգիաների տարածման գործում:

### **Համառոտ եզրակացություններ**

1. Համաշխարհային տնտեսությունը (մեզանկյունմիկա) գլոբալ էկոնոմիկան է, որը միավորում է ազգային տնտեսությունները մի համակարգի մեջ՝ աշխատանքի միջազգային բաժանման հիման վրա:

---

2. Միջազգային առևտուրը միջազգային տնտեսական հարաբերությունների այն ձևն է, որն արտահայտում է ապրանքների և ծառայությունների արտահանման հարաբերությունը:

3. Վճարային հաշվեկշիռն արտաքին աշխարհին կատարած վճարումների և այնտեղից ստացված վճարումների հարաբերակցությունն է՝ որոշակի ժամանակահատվածի կտրվածքով: Վճարային հաշվեկշռի հիմքն է առևտրային հաշվեկշիռը: Առևտրային հաշվեկշիռն ապրանքների արտահանման և ներմուծման հարաբերակցությունն է:

4. Կապիտալի արտահանումը կապիտալի մի մասի դուրս մղումն է ազգային շրջանառությունից և դրա ներդրումը այլ երկրների տնտեսության մեջ տարբեր եղանակներով:

5. Աշխատուժի միջազգային միգրացիան աշխատունակ տարիքի բնակչության տեղաշարժն է ազգային տնտեսության սահմաններից դուրս:

6. Արժույթը երկրի դրամական միավորն է, որն օգտագործվում է միջազգային ֆինանսական հաշվարկներում, ինչպես նաև միջազգային հաշվարկային արժութային միավորները:

7. Գնողունակության պարիտետը համեմատվող երկրների արժույթների հարաբերակցությունն է՝ հաշվարկված այդ երկրներում արտադրված ապրանքների և ծառայությունների գների հարաբերակցությամբ:

8. Անվանական վալյուտային փոխարժեքը երկու վալյուտաների միջև փոխարժեքն է, ազգային վալյուտայի միավորի գինը՝ արտահայտված արտասահմանյան վալյուտայի միավորով:

9. Տնտեսական ինտեգրացիան տնտեսական զարգացման մակարդակներով միմյանց մոտ կանգնած երկրների ազգային տնտեսությունների մերձեցման, միջազգայնացման այնպիսի գործընթաց է, որն ուղղված է մասնակից երկրների միջև տնտեսական համաձայնեցված փոխադարձ գործողությունների իրականացմանը:

10. Գլոբալացումը կարելի է բնութագրել որպես մեկ ամբողջության մեջ ազգային տնտեսությունների ինտեգրման գործընթաց, որն արտահայտվում է ապրանքների, մարդկանց, կապիտալի և տեղեկատվական միջպետական հոսքերի ինտենսիվացմամբ:

---

### *Ինքնաստուգման հարցեր*

1. Ի՞նչ է արժույթը:
2. Ի՞նչ է փոխարժեքը:
3. Ո՞րն է հաստատագրված և լողացող փոխարժեքը:
4. Ինչպիսի՞ն է ՀՀ արժութային ռեժիմը:
5. Ի՞նչ է համաշխարհային տնտեսությունը:
6. Ի՞նչ է միջազգային առևտուրը:
7. Միջազգային առևտրի ի՞նչ տեսություններ կան:
8. Ի՞նչ է կապիտալի և աշխատուժի միջազգային շարժը:
9. Ո՞րն է հովանավորչական քաղաքականությունը:
10. Ո՞րն է ազատ առևտրի քաղաքականությունը:
11. Ի՞նչ է տնտեսական ինտեգրացիան:
12. Որո՞նք են տնտեսական ինտեգրացիայի նախադրյալները:
13. Միջազգային տնտեսական ինտեգրացիայի ռազմավարության ի՞նչ ծևեր կան:
14. Ի՞նչ է գլոբալացումը:

---

## ԹԵՍԵՐ

**1. *Տնտեսագիտությունը գիտություն է.***

- ❖ սահմանափակ տնտեսական ռեսուրսներով մարդկանց անսահմանափակ պահանջմուքների բավարարման առավել արդյունավետ եղանակների ընտրության մասին,
- ❖ մարդկանց անսահմանափակ պահանջմուքների մասին,
- ❖ տնտեսական օրենքների մասին:

**2. *Տնտեսագիտության գործառույթ չէ.***

- ❖ մեթոդաբանական,
- ❖ գիտաճանաչողական,
- ❖ տնտեսական,
- ❖ գործնական,
- ❖ կանխատեսման:

**3. *Գիտական վերացարկման մեթոդը ենթադրում է.***

- ❖ գլխավորի առանձնացում երկրորդականից,
- ❖ գրաֆիկների կազմում,
- ❖ երևույթների պատմական զարգացման ուսումնասիրություն:

**4. *Ինդուկցիան***

- ❖ շարժն է մասնավորից դեպի ընդհանուրը,
- ❖ շարժն է ընդհանուրից դեպի մասնավորը,
- ❖ շարժն է մասնավորից դեպի ընդհանուր և ընդհանուրից դեպի մասնավոր:

**5. *Պոզիտիվ վերլուծությունը ցույց է տալիս.***

- ❖ այն, ինչ որ կա,
- ❖ ինչ պետք է լինի,
- ❖ ինչու է այդպես:

**6. *Նորմատիվային վերլուծությունը ցույց է տալիս.***

- ❖ այն, ինչ որ կա,
- ❖ ինչ պետք է լինի,
- ❖ այն, ինչ որ չկա:

**7. *Տնտեսագիտական որ դպրոցի կարծիքով է հարստության աղբյուրը համարվել շրջանառության ոլորտը.***

- ❖ ֆիզիոկրատիզմ,
- ❖ քեյնսականություն,
- ❖ մերկանտիլիզմ,
- ❖ մոնետարիզմ:

**8. *Ըստ ֆիզիոկրատների.***

- ❖ հարստությունը ստեղծվում է դրամաշրջանառության ոլորտում,

- 
- ❖ հարստությունը ստեղծվում է առևտրի ոլորտում,
  - ❖ հարստությունը ստեղծվում է գյուղատնտեսության մեջ:
- 9. Ըստ դասական դպրոցի.**
- ❖ պետությունը պետք է միջամտի տնտեսության գործերին,
  - ❖ պետությունը չպետք է միջամտի տնտեսության գործերին:
- 10. Ըստ քեյնսականության.**
- ❖ պետությունը պետք է կարգավորի տնտեսությունը,
  - ❖ պետությունը չպետք է միջամտի տնտեսության գործերին:
- 11. Տնտեսական օրենքը.**
- ❖ տնտեսական գործընթացների և երևույթների միջև առավել էական, կայուն և մշտապես կրկնվող օբյեկտիվ փոխկախվածությունն ու պատճառահետևանքային կապերն են,
  - ❖ տնտեսական երևույթների ամբողջությունն է,
  - ❖ տնտեսական կատեգորիաների ամբողջությունն է:
- 12. Տնտեսական կատեգորիաները.**
- ❖ արտացոլում են տնտեսական երևույթների և գործընթացների էական հատկանիշները,
  - ❖ արտացոլում են առաջարկի և պահանջարկի փոխազդեցությունը,
  - ❖ արտացոլում են գնի և մրցակցության բնույթը:
- 13. Պահանջմունքը**
- ❖ մարդու ցանկությունն է,
  - ❖ որևէ բանի նկատմամբ եղած կարիքն է,
  - ❖ ապրանքների և ծառայությունների ամբողջությունն է:
- 14. Ֆիզիոլոգիական պահանջմունք չէ.**
- ❖ թատրոն գնալու պահանջմունքը,
  - ❖ սննդի պահանջմունքը,
  - ❖ հագուստի պահանջմունքը:
- 15. Տնտեսության հիմնահարց չէ.**
- ❖ ինչ արտադրել,
  - ❖ ինչպես արտադրել,
  - ❖ ինչու արտադրել,
  - ❖ ում համար արտադրել:
- 16. Տնտեսական համակարգի տեսակ չէ.**
- ❖ ընդհանուր տնտեսական համակարգ,
  - ❖ ավանդական տնտեսական համակարգ,
  - ❖ շուկայական տնտեսական համակարգ,
  - ❖ վարչահրամայական տնտեսական համակարգ:
- 17. Վարչահրամայական տնտեսությունը ենթադրում է.**
- ❖ մասնավոր սեփականություն,

- 
- ❖ ազատ ձեռներեցություն,
  - ❖ տնտեսական ռեսուրսների պետական սեփականություն,
  - ❖ ավանդույթների վրա հիմնված տնտեսություն:

**18. Միկրոտնտեսագիտությունը ուսումնասիրում է.**

- ❖ առանձին տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը,
- ❖ ազգային տնտեսության հիմնախնդիրները,
- ❖ գործազրկության և ինֆլյացիայի հիմնախնդիրները:

**19. Մակրոտնտեսագիտության հիմնախնդիրներ չեն.**

- ❖ արժեզրկումը,
- ❖ գործազրկությունը,
- ❖ տնտեսական աճը,
- ❖ ՀՆԱ-ն,
- ❖ առանձին ձեռնարկության ծախսերն ու շահույթը:

**20. Ապրանքը**

- ❖ աշխատանքի արդյունք է, որն ունի օգտակարություն և նախատեսված է փոխանակության համար,
- ❖ բնության կողմից տրված պարզևն է:

**21. Փողը**

- ❖ ապրանքերի ամբողջությունն է,
- ❖ փողը համընդհանուր համարժեքի գործառույթ կատարող յուրահատուկ ապրանք է,
- ❖ ոսկու և արծաթի համախմբությունն է:

**22. Փողի գործառույթ չէ.**

- ❖ արժեչափի,
- ❖ շրջանառության միջոցի,
- ❖ կուտակման,
- ❖ վճարման,
- ❖ սպառման միջոց:

**23. Տնտեսական ռեսուրսները.**

- ❖ անսահմանափակ են,
- ❖ անսպառ են,
- ❖ սահմանափակ են:

**24. Ֆինանսական ռեսուրս է.**

- ❖ դրամական միջոցները,
- ❖ տեղեկատվությունը,
- ❖ աշխատուժը,
- ❖ հողը:

**25. Արտադրության գործոն չէ.**

- ❖ հողը,

- 
- ❖ կապիտալը,
  - ❖ ապրանքները,
  - ❖ աշխատուժը:
- 26. Արտադրությունը**
- ❖ բարիքների փոխանակման գործընթացն է,
  - ❖ բարիքների ստեղծման գործընթացն է,
  - ❖ բարիքների սպառման գործընթացն է:
- 27. Պարզ վերարտադրությունը արտադրության կրկնումն է.**
- ❖ նույն չափով,
  - ❖ ավելի քիչ չափով,
  - ❖ ընդլայնված կերպով:
- 28. Տնտեսական արդյունավետությունը որոշվում է.**
- ❖ արտադրության վերջնական արդյունքից հանելով արտադրական գործոնների ծախսերը,
  - ❖ արտադրության վերջնական արդյունքը բաժանելով արտադրական գործոնների ծախսերին,
  - ❖ արտադրության վերջնական արդյունքին գումարելով արտադրական գործոնների ծախսերը:
- 29. Արտադրական հնարավորությունների կորը ցույց է տալիս.**
- ❖ ապրանքների արտադրության արդյունավետ տարբերակները առկա ռեսուրսների պայմաններում,
  - ❖ ապրանքների արտադրության անարդյունավետ տարբերակները առկա ռեսուրսների պայմաններում:
- 30. Շուկայի տարր չէ.**
- ❖ առաջարկ,
  - ❖ պահանջարկ,
  - ❖ գին,
  - ❖ մրցակցություն,
  - ❖ պահանջումը:
- 31. Շուկայի գործառույթ չէ.**
- ❖ բաշխման,
  - ❖ խթանող,
  - ❖ գնագոյացման,
  - ❖ տեղեկատվական,
  - ❖ մեթոդաբանական,
  - ❖ պլանավորման:
- 32. Շուկայի դրական կողմ է.**
- ❖ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը,

- ❖ շուկան չի նպաստում չվերարտադրվող ռեսուրսների պահպանմանը,
- ❖ չի երաշխավորում լրիվ զբաղվածություն և գների կայուն մակարդակ:

**33. Շուկայի ենթակառուցվածքի տարրերն են.**

- ❖ ապրանքային շուկա,
- ❖ աշխատանքային շուկա,
- ❖ ֆինանսական շուկա,
- ❖ ազգային շուկա,
- ❖ ներքին շուկա:

**34. Գնի գործառույթներից չէ.**

- ❖ կողմնորոշման,
- ❖ հավասարակշռության,
- ❖ հաշվառման,
- ❖ խթանման,
- ❖ պլանավորման:

**35. Մեծածախ գինը մանրածախ գնից**

- ❖ ցածր է,
- ❖ բարձր է:

**36. Օգտակարությունը.**

- ❖ ապրանքի ունակությունն է՝ բավարարելու մարդկային այս կամ այն պահանջմունքը,
- ❖ ապրանքների ամբողջությունն է,
- ❖ ապրանքների բնութագրիչների ամբողջությունն է:

**37. Սահմանային օգտակարությունը.**

- ❖ բոլոր ապրանքների սպառումից ստացված օգտակարությունն է,
- ❖ յուրաքանչյուր հաջորդ լրացուցիչ բարիքի սպառումից ստացված օգտակարությունն է,
- ❖ 2 բարիքների սպառումից ստացված օգտակարությունն է:

**38. Անտարբերության կորն արտահայտում է.**

- ❖ երկու այնպիսի արտադրատեսակների համակցություն, որոնք սպառողի համար տարբեր օգտակարություն ունեն,
- ❖ երկու այնպիսի արտադրատեսակների համակցություն, որոնք սպառողի համար միևնույն օգտակարությունն ունեն,
- ❖ երկու այնպիսի արտադրատեսակների համակցություն, որոնք սպառողի համար օգտակարություն չունեն:

**39. Հաստատումն ծախսերը.**

- ❖ կախված են թողարկվող արտադրանքի ծավալից,
- ❖ կախված չեն թողարկվող արտադրանքի ծավալից,

- 
- ❖ կախված են թողարկվող արտադրանքի գնից:
- 40. Փոփոխուն ծախքերն են.**
- ❖ վարձավճարներ,
  - ❖ վարչակառավարչական ծախսեր,
  - ❖ հունք, նյութերի ձեռքբերման ծախսեր,
  - ❖ բանվորների աշխատավարձ:
- 41. Ջուտ մոնոպոլիայի դեպքում.**
- ❖ շուկայում կա մեկ ֆիրմա,
  - ❖ շուկայում կան ֆիրմաների քիչ քանակություն,
  - ❖ կան շատ ֆիրմաներ:
- 42. Օլիգոպոլիայի դեպքում շուկա մուտքի արգելքները.**
- ❖ բարձր են,
  - ❖ ցածր են,
  - ❖ չկան:
- 43. Կատարյալ մրցակցության դեպքում գնի վրա հսկողությունը.**
- ❖ թույլ է,
  - ❖ ընդհանրապես չկա,
  - ❖ բացակայում է:
- 44. Պահանջարկը**
- ❖ ապրանքների և ծառայությունների այն քանակությունն է, որը գնորդը պատրաստ է ձեռք բերել տվյալ գնով և տվյալ պահին,
  - ❖ պահանջմունքների ամբողջությունն է,
  - ❖ հավասար է առաջարկին:
- 45. Առաջարկը**
- ❖ ապրանքների և ծառայությունների այն քանակն է, որը պատրաստ են վաճառել արտադրողները որոշակի գնով, որոշակի ծավալով, որոշակի ժամանակահատվածի ընթացքում,
  - ❖ արտադրության ողջ ծավալն է,
  - ❖ հավասար է պահանջարկին:
- 46. Հավասարակշռված գնի դեպքում**
- ❖ առաջարկը մեծ է պահանջարկից,
  - ❖ առաջարկը հավասար է պահանջարկին,
  - ❖ պահանջարկը մեծ է առաջարկից:
- 47. Աշխատանքի առաջարկ ներկայացնում են.**
- ❖ գործատուները,
  - ❖ մարդիկ, ովքեր ցանկանում են աշխատել,
  - ❖ արհմիությունները:
- 48. Աշխատանք գործոնի բերած եկամուտը.**
- ❖ աշխատավարձն է,

- 
- ❖ տոկոսն է,
  - ❖ ռենտան է:
- 49. Շրջանառու կապիտալ են համարվում.**
- ❖ շենքեր,
  - ❖ հաստոցներ,
  - ❖ հումք,
  - ❖ նյութեր,
  - ❖ կիսաֆաբրիկատներ:
- 50. Հիմնական կապիտալ են համարվում.**
- ❖ շենքեր,
  - ❖ հաստոցներ,
  - ❖ հումք,
  - ❖ նյութեր,
  - ❖ կիսաֆաբրիկատներ:
- 51. Հող գործոնի բերած եկամուտը կոչվում է.**
- ❖ տոկոս,
  - ❖ աշխատավարձ,
  - ❖ ռենտա,
  - ❖ շահույթ:
- 52. Արտադրական ձեռներեցությունը կապված է.**
- ❖ ապրանքների արտադրության հետ,
  - ❖ ապրանքների առքուվաճառքի հետ,
  - ❖ ապրանքների փոխանակման հետ:
- 53. Առևտրային կազմակերպություններն են.**
- ❖ բաժնետիրական ընկերությունները,
  - ❖ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները,
  - ❖ հիմնադրամները,
  - ❖ հասարակական կազմակերպությունները,
  - ❖ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունները,
  - ❖ լիակատար ընկերակցությունները,
  - ❖ վստահության վրա հիմնված ընկերակցությունները:
- 54. Ոչ առևտրային կազմակերպություններն են.**
- ❖ բաժնետիրական ընկերությունները,
  - ❖ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները,
  - ❖ հիմնադրամները,
  - ❖ հասարակական կազմակերպությունները,
  - ❖ իրավաբանական անձանց կազմակերպությունները,
  - ❖ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունները,
  - ❖ լիակատար ընկերակցությունները,

- 
- ❖ վստահության վրա հիմնված ընկերակցությունները:
- 55. Ինֆլացիան.**
- ❖ ապրանքների գների էժանացումն է,
  - ❖ ապրանքների անհետացումն է,
  - ❖ արժույթի գնողունակության անկումն է, որը սովորաբար արտահայտվում է ապրանքների և ծառայությունների գների ընդհանուր աճով:
- 56. Գների կայունության համար Կենտրոնական բանկը մշակում և իրականացնում է.**
- ❖ հարկաբյուջետային քաղաքականության ծրագիր,
  - ❖ դրամավարկային քաղաքականության ծրագիր,
  - ❖ հակացիկլային քաղաքականության ծրագիր:
- 57. Ըստ Ֆիլիպսի՝**
- ❖ գործազրկության բարձր մակարդակի դեպքում ինֆլացիան ցածր է,
  - ❖ գործազրկության բարձր մակարդակի դեպքում ինֆլացիան բարձր է,
  - ❖ գործազրկության բարձր մակարդակի դեպքում ինֆլացիան բացակայում է:
- 58. Անվանական եկամուտը բնութագրվում է.**
- ❖ ստացած գումարի քանակով,
  - ❖ ապրանքների քանակով, որը կարելի է գնել այդ գումարով:
- 59. Լորենցի կորը ցույց է տալիս.**
- ❖ եկամուտների հավասարաչափ բաշխումը,
  - ❖ եկամուտների անհավասարաչափ բաշխումը:
- 60. Ֆրիկցիոն գործազրկությունը պայմանավորված է.**
- ❖ աշխատուժի անհրաժեշտ շարժով,
  - ❖ տնտեսության ճգնաժամային իրավիճակներով,
  - ❖ արտադրության տեխնոլոգիայի փոփոխությամբ:
- 61. ԴՆԱ-ն**
- ❖ տվյալ երկրի քաղաքացիների և օտարերկրյա արտադրողների արտադրած ապրանքների և ծառայությունների գների գումարն է՝ մեկ տարվա կտրվածքով,
  - ❖ միայն տվյալ երկրի քաղաքացիների արտադրած ապրանքների և ծառայությունների գների գումարն է:
- 62. ԴՆԱ-ի հաշվարկման եղանակ չէ.**
- ❖ արտադրական,
  - ❖ եկամուտների օգտագործման կամ ծախսային,
  - ❖ եկամուտների ձևավորման,

- 
- ❖ ապրանքային:
- 63. *Տնտեսական պարբերաշրջանը բնութագրվում է.***
- ❖ գործարար ակտիվության պարբերական վերելքներով ու անկումներով,
  - ❖ գործարար ակտիվության վերելքներով,
  - ❖ գործարար ակտիվության անկումներով:
- 64. *Տնտեսության էքստենսիվ աճը ազգային արդյունքի աճն է՝ ի հաշիվ.***
- ❖ արտադրության լրացուցիչ գործոնների ներգրավման,
  - ❖ տեխնոլոգիայի կատարելագործման:
- 65. *Պետական բյուջեն***
- ❖ եկամուտների և ծախսերի հաշվեկշիռն է,
  - ❖ եկամուտների ամբողջությունն է,
  - ❖ եկամուտների և ծախսերի տարբերությունն է:
- 66. *Պետության ներքին պարտքը պարտքն է.***
- ❖ երկրի քաղաքացիներին,
  - ❖ միջազգային կազմակերպություններին,
  - ❖ այլ երկրներին:
- 67. *Հարկը***
- ❖ պարտադիր վճար է,
  - ❖ կամավոր վճար է:
- 68. *Անուղղակի հարկերն են.***
- ❖ շահութահարկ,
  - ❖ եկամտահարկ,
  - ❖ ավելացված արժեքի հարկ,
  - ❖ ակցիզային հարկ,
  - ❖ գույքահարկ,
  - ❖ հողի հարկ:
- 69. *Կենտրոնական բանկը.***
- ❖ մասնավոր բանկ է,
  - ❖ առևտրային բանկ է,
  - ❖ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:
- 70. *Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիք չէ.***
- ❖ պարտադիր պահուստային նորմաների սահմանումը,
  - ❖ վերաֆինանսավորման տոկոսադրույքը,
  - ❖ գործառնություններ բաց շուկայում,
  - ❖ հարկային բեռի նվազեցում,
  - ❖ ծախսային քաղաքականություն:
- 71. *Առևտրային բանկերին գործունեության լիցենզիա է տալիս.***

- 
- ❖ ՀՀ ԿԲ-ը,
  - ❖ ՀՀ կառավարությունը.
  - ❖ ՀՀ Ազգային ժողովը:
- 72. Առևտրային բանկերի ակտիվային գործառնություն է համարվում**
- ❖ ավանդներ ընդունելը,
  - ❖ վարկեր տրամադրելը:
- 73. Պետական բյուջեի եկամուտների ամենամեծ մասը կազմում են.**
- ❖ հարկային եկամուտները և պետական տուրքերը,
  - ❖ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները,
  - ❖ պաշտոնական դրամաշնորհները,
  - ❖ այլ եկամուտները:
- 74. ՊԲ-ի մասին օրենքն ընդունվում է.**
- ❖ յուրաքանչյուր տարի,
  - ❖ յուրաքանչյուր եռամսյակ,
  - ❖ յուրաքանչյուր 5 տարին 1 անգամ:
- 75. Բյուջեի պակասուրդը.**
- ❖ եկամուտների գերազանցումն է ծախսերին,
  - ❖ ծախսերի գերազանցումն է եկամուտներին:
- 76. Միջազգային առևտուրը**
- ❖ ապրանքների շարժն է,
  - ❖ աշխատուժի շարժն է,
  - ❖ կապիտալի շարժն է:
- 77. Ազատ առևտրի քաղաքականությունը ենթադրում է.**
- ❖ մաքսային հարկում,
  - ❖ քվոտաների սահմանում,
  - ❖ լիցենզավորում,
  - ❖ բոլոր տարբերակները սխալ են:
- 78. Անվանական արժույթային փոխարժեքը.**
- ❖ ազգային արժույթի միավորի գինն է՝ արտահայտված արտասահմանյան արժույթի միավորով,
  - ❖ ազգային արժույթի միավորի գինն է՝ հաշվի առնելով երկրում գների մակարդակը:
- 79. Ինտեգրացիա նշանակում է.**
- ❖ մասերի միացում,
  - ❖ մասերի անջատում,
  - ❖ 2-ն էլ սխալ են:
- 80. ՀՀ ԿԲ-ն վարում է.**
- ❖ ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն,
  - ❖ հաստատագրված փոխարժեքի քաղաքականություն:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	3
Թեմա 1. Տնտեսագիտության տեսության առարկան և հիմնախնդիր-ները .....	4
Հարց 1. Տնտեսագիտության առարկան, գործառույթները և մեթոդ-ները.....	4
Հարց 2. Տնտեսագիտության տեսության զարգացման հիմնական փուլերը.....	8
Հարց 3. Տնտեսական օրենքներ և տնտեսական կատեգորիաներ.....	13
Հարց 4. Տնտեսական պահանջմունքներ և շահեր.....	14
Հարց 5. Տնտեսության երեք հիմնահարցերը. ի՞նչ արտադրել, ինչպե՞ս արտադրել, ու՞մ համար արտադրել.....	20
Հարց 6. Տնտեսական համակարգերի տեսակները.....	22
Հարց 7. Միկրո և մակրո տնտեսագիտություն.....	26
Թեմա 2. Ապրանքադրամական հարաբերությունների հիմունքները	31
Հարց 1. Բնատնտեսային և ապրանքային արտադրության ծագման պայմանները, հիմնական գծերը և տեսակները.....	31
Հարց 2. Ապրանքը և դրա հատկությունները. արժեքի այլընտրան-քային տեսությունները.....	35
Հարց 3. Փողի ծագումը և էությունը.....	38
Հարց 4. Փողի գործառույթները.....	42
Թեմա 3. Արտադրության էությունը և գործոնները. արտադրական հնարավորությունների կոր.....	47
Հարց 1. Տնտեսական ռեսուրսները և դրանց տեսակները.....	47
Հարց 2. Արտադրության հիմնական գործոնները.....	48
Հարց 3. Հասարակական արտադրությունը և դրա փուլերը.....	50
Հարց 4. Արտադրական հնարավորությունների սահմանները.....	55
Թեմա 4. Շուկայական տնտեսություն.....	62
Հարց 1. Շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալները	

և շուկայի հիմնական տարրերը.....	62
Չարց 2. Շուկայի էությունը. շուկաների դասակարգումը.....	65
Չարց. 3. Շուկայի գործառույթները.....	67
Չարց 4. Շուկայի գործառնության սկզբունքները, շուկայի դրական և բացասական կողմերը.....	69
Չարց 5. Շուկայի ենթակառուցվածքի էությունը.....	71
Չարց 6. Սեփականություն հասկացությունը և դրա նշանակությունը տնտեսական համակարգում.....	73
Չարց 7. Շուկայական տնտեսության պետական կարգավորման ան- հրաժեշտությունը, նպատակը, մեթոդները և պետության գործա- ռույթները.....	77
Թեմա 5. Առաջարկի և պահանջարկի տեսություն.....	84
Չարց 1. Պահանջարկի էությունը.....	84
Չարց 2. Առաջարկի էությունը.....	88
Չարց 3. Շուկայական հավասարակշռություն.....	90
Չարց 4. Առաջարկի և պահանջարկի գնային ճկունություն.....	93
Թեմա 6. Գնի էությունը, ձևավորման մեխանիզմը և գործառույթնե- րը. գների համակարգը.....	98
Չարց 1. Գնի էությունը և գնագոյացման հիմնական սկզբունքները...	98
Չարց 2. Գնի գործառույթները.....	99
Չարց 3. Գների համակարգը.....	100
Թեմա 7. Սպառողական վարքագծի տեսությունը.....	103
Չարց 1. Օգտակարություն. էությունը և տեսակները.....	103
Չարց 2. Սպառողական վարքագիծ. անտարբերության կորերի Բյուջե- տային սահմանափակությունը և սպառողի հավասարակշռությունը	108
Չարց 3. Սպառողի և արտադրողի ավելցուկը.....	113
Թեմա 8. Արտադրության ծախսեր և շահույթ.....	115
Չարց 1. Ծախսերի էությունը, կառուցվածքը և դասակարգումը.....	115
Չարց 2. Շահույթի տնտեսագիտական էությունը և գործառույթները	118

Թեմա 9. Մրցակցությունը և դրա տարատեսակները. մրցակցություն և մոնոպոլիա.....	122
Հարց 1. Մրցակցությունը և դրա տարատեսակները.....	122
Հարց 2. Մոնոպոլիաների իշխանության աստիճանի որոշումը.....	125
Թեմա 10. Աշխատանքը որպես արտադրության գործոն.....	128
Հարց 1. Աշխատանքի էությունը.....	128
Հարց 2. Աշխատանքի շուկա. աշխատանքի առաջարկ և պահանջարկ.....	129
Հարց 3. Աշխատավարձ. էությունը, տեսակները.....	132
Հարց 4. Ջբաղվածություն և գործազրկություն.....	134
Թեմա 11. Կապիտալը որպես արտադրության գործոն.....	139
Հարց 1. Կապիտալ. էությունը և տարբեր մեկնաբանությունները.....	139
Հարց 2. Հիմնական և շրջանառու կապիտալ, դրանց շրջապտույտը և անորտիզացիան.....	141
Հարց 3. Տոկոսի էությունը, դիմամիկան և գործոնները.....	144
Հարց 4. Արժեթղթերի էությունը և տեսակները.....	147
Թեմա 12. Հողային ռեսուրսների շուկա և հողային ռենտա.....	154
Հարց 1. Հողային ռեսուրսների առաջարկի սահմանափակությունը Հողային ռենտա.....	154
Հարց 2. Հողի գնի էությունը.....	158
Թեմա 13. Ձեռներեցության տեսություն.....	161
Հարց 1. Ձեռներեցության էությունը, տեսակները. ձեռնարկատիրական ռիսկ.....	161
Հարց 2. Ձեռնարկությունների կազմակերպահրավական ձևերը.....	164
Թեմա 14. Բնակչության եկամուտները, դրանց վերաբաշխումը, պետության սոցիալական քաղաքականությունը.....	173
Հարց 1. Բնակչության եկամուտներ. էությունը, տեսակները.....	173
Հարց 2. Լորենցի կորի և Ջինիի գործակցի էությունը.....	174
Թեմա 15. Մակրոտնտեսական ցուցանիշներ. Տնտեսական պարբե-	

րաշրջաններ.....	177
Չարց 1. Մակրոտնտեսական ցուցանիշները.....	177
Չարց 2. Տնտեսության պարբերաշրջանային զարգացման էությունը, պատճառները, տեսակները.....	183
Չարց 3. Տնտեսական պարբերաշրջանի փուլերը.....	186
Չարց 4. Պետության դերը տնտեսական պարբերաշրջանների կարգավորման գործում. պետության կայունացնող քաղաքականությունը... Թեմա 16. Ինֆլյացիա. էությունը, ձևերը, պատճառներն ու հետևանքները.....	191 195
Չարց 1. Ինֆլյացիայի էությունը, տեսակները և պատճառները.....	195
Չարց 2. Գնաճի հաշվարկման և կառավարման առանձնահատկությունները ՉՉ-ում.....	198
Չարց 3. Ինֆլյացիայի հետևանքները.....	200
Չարց 4. Ինֆլյացիայի և գործազրկության միջև կապը.....	201
Թեմա 17. Տնտեսական աճի էությունը, գործոնները և մոդելները.....	204
Չարց 1. Տնտեսական աճի էությունը.....	204
Չարց 2. Տնտեսական աճի տեսակները, գործոնները և մոդելները....	207
Թեմա 18. Պետության ֆինանսական և հարկաբյուջետային համակարգը.....	212
Չարց 1. Ֆինանսական համակարգի էությունը և կառուցվածքը.....	212
Չարց 2. Պետական բյուջեի էությունը և կառուցվածքը. պետական պարտք.....	213
Չարց 3. Չարկերի սոցիալ-տնտեսական էությունը. հարկադրման սկզբունքներն ու ձևերը. Լաֆֆերի կորը.....	219
Թեմա 19. Դրամավարկային համակարգի էությունը և կառուցվածքը	226
Չարց 1. Դրամական զանգվածը և դրա չափումը.....	226
Չարց 2. Վարկի էությունը, գործառույթները և ձևերը.....	229
Չարց 3. Բանկային համակարգի կառուցվածքն ու գործառույթները	232
Չարց 4. Կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքա-	

---

կանության իրականացման գործիքները.....	234
Չարդ 5. Առևտրային բանկերի էությունը և գործառնությունները.....	238
Թեմա 20. Չամաշխարհային տնտեսություն.....	244
Չարդ 1. Չամաշխարհային տնտեսություն, բովանդակությունն ու կառուցվածքը.....	244
Չարդ 2. Միջազգային արժուբային համակարգը. էությունը, կառուցվածքը, էվոլյուցիան.....	248
Չարդ 3. Միջազգային տնտեսական ինտեգրացիա.....	252
ԹԵՄԵՐ.....	257

---

ՀՀ ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈւՍՈՒՑՄԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՌՈՒԲԻԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ  
ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

*Հրատարակչական աշխատանքները՝* Մարիամ Պետրոսյանի  
Աշխեն Այվազյանի  
Աստղիկ Միրզաթունյանի

*Սրբագրիչ՝* Գոհար Ամիրբեկյան

---

Ստորագրված է տպագրության 28.11. 2013 թ.: Ծավալը՝ 17 մամուլ:  
Ֆորմատ՝ 70/100  $\frac{1}{16}$ : Տպաքանակը՝ 100:  
«Կրթության ազգային ինստիտուտ», Երևան, Տիգրան Մեծի 67,  
հեռ.՝ 57 48 20: